

ԱԶԴԱԿ

25 Ապրիլ 2012

ԲԱՅԱՆԻԿ

97



ՀԱՅՈՒԹՈՒՄ



ՀԱՅՈՒԹՈՒՄ
ԱԿՏՈՐՆԵՐԻ
ՊԵՂԱԳՈՎՐԾ
1915-2012

ՀԱՅՈՒԹՈՒՄ

ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

ՄՈՒՏՏՔԻ ԽՕՍՔ

Մեծ եղեռնի 97-րդ տարելիցի առիթով թողարկուող «Ազդակ»-ի այս բացառիկ համարով ընթերցողներին են ներկայացւում նոր գիտելիք ու վերլուծութիւն հայ ժողովրդին պատուհասած մեծագոյն ողբերգութեան՝ ցեղասպանութեան մասին։ Այս համարը ներկայացւում է որպէս «Ազդակ» օրաթերթի եւ Յայոց ցեղասպանութեան թանգարան-հիմնարկի համատեղ թողարկում։

Սա կարեւոր ու շահեկան համագործակցութեան մի վկայութիւն է եւ համեստ ուղերձ առ այն, որ Յայաստանի Յանրապետութեան եւ աշխարհասփիւր հայութեան համադրուած ջանքերով կազմակերպուած տարաքնոյթ ձեռնարկներն ու նախաձեռնութիւնները ել աւելի են մեծացնելու անխուսափելի հատուցման տեսլականն ու մեր աննկուն ու աննահանջ դիրքորոշումը համայն հայութեանը յուզող պահանջատիրութեան ու արդարութեան վերականգնման հարցերի առնչութեամբ։

Յայոց ցեղասպանութեան թանգարան-հիմնարկը եւ Յայոց ցեղասպանութեան հարիւրամեայ տարելիցի լիբանանեան յանձնախումբը համատեղ ջանքերով արդէն կազմակերպել են մի քանի ուշագրաւ ձեռնարկներ, ներկայացնելով դրանք լիբանանահայ հանրութեանը։ Մօտ ապագայում նախատեսում է ել աւելի ընդլայնել այս համագործակցութիւնը՝ ձեռ-

Նարկներն ու դրանց արդիւնքները մատուցելով աւելի լայն լսարաններին: Ճատ շուտով աշխարհի բոլոր անկիւններում կրկին խօսելու ու քննարկելու նիւթ է դառնալու Յայոց ցեղասպանութեան հետեւանքներն ու դրանց վերացման անհրաժեշտութեան հետ կապուած հիմնախնդիրները: Յամայն հայութեան համար կարեւորագոյն խնդիր է այլեւս մեկ միասնական օրակարգով ու համադրուած ջանքերով հանդէս գալը, այսպիսով աւելի լսելի ու ընկալելի դառնալու, հետեւաբար նաեւ ցանկալի արդիւնքներ ապահովելու համար:

Թրքական ժխտողականութիւնը օրէցօր նոր դրսեւորումներ է ստանում եւ դա չի կարող չանհանգստացնել մեզ բոլորիս: Այս լրջագոյն մարտահրաւերին դիմագրաւելու եւ թուրքական շինծու ու կեղծ փաստարկներն ու հակափաստարկները ջախջախնելու համար քարոզչական ու ակադեմիական դաշտերում մեկ միասնական ճակատ յարդարելու անհրաժեշտութիւն է առաջացել:

Միով բանիւ պէտք է ճանապարհ հարթենք դէպի կատարեալ հատուցում եւ իրականացրած զագրելի ոճրագործութեան դատապարտում եւ դրա հետեւանքների վերացում:

«ԱՉԴԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ՐԱՅԿ ԴԵՄՈՅԵԱՆ

Յայոց ցեղասպանութեան
թանգարան-ինստիտուտի տևօրէն,
Յայոց ցեղասպանութեան հարիւրամեայ
տարելիցի միջոցառումները համակարգող
պետական յանձնաժողովի քարտուղար

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ ԸՆԴԱՌՎԱՇ՝

ՀԱՅ ԴԱՏԻ ՈՒՂՂՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՈՐ ՈՒՐՈՒԱԳԾՈՒՄՆԵՐ

Յայ դատի ուղղութիւններու ուրագծման որեւէ փորձ կ'ենթադրէ և այս իմանալ հայկական աշխարհի քաղաքական քարտեսը այսօր եւ իւրաքանչիւր միջավայրի մէջ տարուող աշխատանքներուն նպատակը, ռազմավարութիւնը եւ ընթացքը:

Յայ դատի խնդիրները այսօր հիմնականին մէջ ունին հետեւեալ ուղղութիւնները.-

Ա.- Յայ-թուրք յարաբերութիւնները

Բ.- Արցախի հիմնախնդիրը

Գ.- Զաւախահայութեան իրավիճակը

Արագին դասակարգումին մաս կը կազմեն անշուշտ Ցեղասպանութեան ճանաչման եւ նաեւ վերջերս հետզհետ շեշտուող հատուցման պահանջատիրութեան թղթածրարի պատրաստութիւնը:

Երկրորդ եւ երրորդ ուղղութիւններուն մասին ընդհանուր ակնարկ մը նետելէ ետք կերրունանք առաջին հիմնախնդիրին վրայ:

Մեր բոլոր վերլուծումներուն ընթացքին պետք է անդրադառնանք, որ Յայաստանի Յանրապետութիւնը կը շարունակէ ենթակուած մնալ ցամաքային շրջափակումներու:



ԹԵ՛ Թուրքիան եւ թԵ՛ Ազրպէյճանը իբրեւ ճնշամիջոց փակած են սահմանը Յայաստանի հետ. ցամաքային իբրեւ ելք Յայաստանի Յանրապետութիւնը այսօր ունի Վրաստանի եւ Իրանի սահմանը: Ամեն անգամ որ ռուսկրացական յարաբերութիւնները լարուին Յայաստանի տնտեսութիւնը անմիջական ժիշտական ազդեցութիւնը կ'ունենայ այդ լարուածութեան: Ռուս-Վրացական պատերազմի օրերուն մենք տեսանք թէ ի՞նչ հետեւանքներ ունեցաւ այդ ելքին փակումը Յայաստանի Յանրապետութեան համար: Կը մնայ իրանեան սահմանը. այստեղ պետք է նկատի ունենանք միջազգային քաղաքականութիւնը, որ կը հետապնդէ մեկուսացնել



Իրանը եւ ճնշումներ գործադրել անոր դեմ՝ հիվեական ծրագիրներու պատճառով:

Ահա այս դժուար պայմաններուն մեջ պետք է քննարկել Արցախեան հակամարտութեան լուծման բանակցութիւնները եւ շաւախահայութեան իրաւունքներուն պաշտպանութեան հարցը:

Արցախեան թղթածրարը այսօր յանձնուած է Եւրոպայի պահովութեան կազմակերպութեան, որպեսզի միջնորդի դեր ստանձնել եւ վարէ հայերուն եւ ազրպեյճանցիներուն միջեւ բանակցութիւնները: ԵԱՀԿ-ի Մինսկի խմբակը, որ ստանձնած է միջնորդական առաքելութիւնը, կը բաղկանայ երեք համանախագահե, որոնք կը ներկայացնեն Ռուսիան, Միացեալ Նահանգներն ու Ֆրանսան:

Ազրպեյճանը դժգոհ է բանակցային այս ձեւաչափեն եւ անվերջ ճիգի մեջ է հարցը տեղափոխելու Միացեալ Ազգերու կազմակերպութիւնը, յուսալով որ այստեղ թրքացեղ, թրքալեզու եւ իսլամ պետութիւնները կը դիրքորոշուին ի նպաստ իրեն:

Յայ-ազրպեյճանական միջնորդաւորուած բանակցութիւնները որեւէ համաձայնութեան չեն յանգած: Յամաձայնեցուած բաժինը հիմնականին մեջ զինադադարն է, որ անվերջ կը խախտուի ազրպեյճանական կողմէ: Յայկական կողմը կը շարունակէ յայտարարել, որ Լեռնային Ղարաբաղի Յանրապետութիւնը անկախ հանրապետութիւն է եւ չի կրնար վերադարձուիլ Ազրպեյճանին. բանակցելի բաժինը կը վերաբերի ազատագրուած միւս տա-

րածներուն: Իսկ Ազըրպեյճանը տարբեր ելքեր կը փորձէ գտնել վերատիրանալու համար Ղարաբաղին:

Յայ դատի աշխատանքներուն առաջադրանքը Արցախի ուղղութեամբ Լեռնային Ղարաբաղի Յանրապետութեան միջազգային ճանաչում ապահովելն է: Յետաքրքրական է նշել, որ առաջին պետութիւնը որ յայտարարեց թէ կը նախապատրաստուի

ընսարկել Արցախի ճանաչումը Ուրուկուելն է: Վյու Ուրուկուելը, որ հանդիսացաւ Յայոց ցեղասպանութիւնը պաշտօնապես ճանչցած առաջին պետութիւնը: Նման յայտարարութիւն կատարեց նաեւ Սլովաքիոյ կառավարութեան ներկայացուցիչը, որ այցելած էր Ստեֆանակերտ եւ յայտարարեց, որ Արցախը լաւագոյն ժողովրդավար երկիրներէն մէկն է:

Ինչ կը վերաբերի Զաւախիքին, Նկատի ունենալով զգուշաւոր քաղաքականութիւնը Վրաստանի հետ, Յայ դատի աշխատանքները կեղրուացած են շաւախահայութեան ինքնավարութեան վրայ եւ ոչ՝ անկախացումին: Վրաստանը դաշնակցային պետութեան վերածելը լուծում կրնայ բերել ներվրացական խնդիրներուն եւ ինքնավարութիւն կրնայ շնորհել ինչպէս տարբեր ազգաբնակչութիւններուն՝ այսպէս ալ հայերուն:

Յիմա գանք հիմնական նիւթին՝ հայ-թուրք յարաբերութիւններուն եւ Յայ Դատի աշխատանքներուն.

Յայ-թուրք յարաբերութիւնները ԱնգարաԵրեւան փրոթքքուային արձանագրութիւններէն ի վեր որեւէ հիմնական զարգացում չեն ապրած. պաշտօնական Երեւանը յայտարարած է եւ կը շարունակէ յայտարարել, որ ինք համաձայն է առանց նախապայմանի դիւնագիտական յարաբերութիւններ հաստատել Անգարայի հետ, մինչ մուրքիա կը շարունակէ կիրարկել իր նախապայմանային քաղաքականութիւնը:

Ի՞նչ են Թուրքիոյ նախապայմանները.-

Ա.- Հայաստանը պետք է հրաժարի Ցեղասպանութեան ճանաչման իր պահանջեն:

Բ.- Հայաստանը պետք է պաշտօնապես ճանչնայ Թուրքիոյ հողային ամբողջականութիւնը:

Գ.- Հայկական ուժերը պետք է հեռանան Ղարաբաղին:

Երեւան-Ալգարա ստորագրուած փրոթքով ներուն մեջ քողարկուած ծեւով կային այս երեք կետերը.-

Այդ արձանագրութիւններուն մեջ հայկական կողմը համաձայն կ'ըլլար.-

Ա.- Հայ եւ թուրք պատմաբաններու միացեալ յանձնախումբ մը ստեղծելու առաջարկին, ինչ որ խնդրոյ առարկայ կը դարձնէր Հայոց ցեղասպանութեան հրողութիւնը:

Բ.- Հայաստանը կը ճանչնար Թուրքիոյ տարածքային ամբողջականութիւնը, ինչ որ փաստօրէն Արեւմտահայաստանի պահանջատիրութենէն հրաժարումի համազօր քայլ եր:

Գ.- Հայաստանը ճանչնալով առնչուած կողմերու տարածքային ամբողջականութիւնները ճանչցած կ'ըլլար նաեւ Ազրպէճանի տարածքային ամբողջականութիւնը, ինչ որ կը հակասէր նաեւ Ղարաբաղի նկատմամբ հայութեան պահանջներուն:

Այս փրոթքովները այսօր սառեցուած են հայկական կողմէ: Թուրքիա կը շարունակէ իր խաղը կիրարկել մերթ խորհրդարանի օրակարգէն հանելով, մերթ ետ բերելով զանոնք խորհրդարանի օրակարգ: Յարաբերութիւնները սկսելու համար այս արձանագրութիւնները պետք է վաւերացուին երկու խորհրդարաններուն կողմէ: Մինչեւ այսօր անոնց ճակատագիրը յստակ չէ:

Կարեւոր է նշել Հայաստանի Հանրապետութեան նախագահին կատարած այս յայտարարութիւնը, որ կը խօսէր Ուկիսընի իրաւարար վճռին ներկայացուցած

այժմեական եւ իրաւական նշանակութեան մասին: Այս յայտարարութիւնը փաստօրէն կը հակասէ արձանագրութիւններու բովանդակութեան: Այս արդէն միացեալ Հայաստանի յայտարարութեան մասին յստակ ակնարկութիւն է պետական բարձրագոյն գործիչին կողմէ: Անոր հիման վրայ պետք է շարունակել պահանջել հայկական կողմին ստորագրութեան չեղեալ համարումը՝ մեզի համար ոչ նպաստաւոր այդ արձանագրութիւններէն:

Բայց հայ-թուրք յարաբերութիւնները միայն արձանագրութիւնները չեն: Ոչ պետական մակարդակի վրայ եւս գոյութիւն ունին յարաբերութիւններ հայերու եւ թուրքերու միշեւ: Կեդրոնանանք անոնցմէ երկու հիմնական երեւոյթներու վրայ.-

Ա.- Թուրքիոյ տարածքին ապրող հայութեան եւ թուրք հասարակութեան եւ մանաւանդ թուրք պետութեան հետ գոյութիւն ունեցող յարաբերութիւնները:

Բ.- Հայ եւ թուրք պատմագետներու միացեալ ըննարկումները: Այս պարագային, սակայն, թուրք պատմաբաններն են, որոնք կը ճանչնան Հայոց ցեղասպանութիւնը եւ կոչ կ'ընեն նաեւ Թուրքիոյ որ ինքն ալ իր կարգին ճանչնայ ցեղասպանութիւնը:

Քետաքրքրական է նշել, որ յատկապես պոլսահայութեան պարագային հետզհետք կը նկատուի որոշ համարձակութիւն ազգային փոքրամասնութեան իրաւունքները պաշտպանելու եւ պահանջելու առումով: Ազգային հիւանդանոցի կապուած կալուածնե-



րու եւ գինուորական կառավարութեան օրերուն բռնագրաւուած ինչքերու եւ համայնական սեփականութիւններու վերադարձի խնդիրը ընդիանուր այդ շրջածիրին մէջ կարելի է դիտարկել:

Այժմ կ'արժէ անդրադառնալ նաեւ Միացեալ Նահանգներու քոնկրետի թիւ 306 բանաձեւին մասին, որ հիմնական նոր ռազմավարութեան մը ուղին բացաւ Յայ դատի աշխատանքներուն մէջ.-

Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու տան քուեարկած թիւ 306 բանաձեւը Յայ դատի աշխատանքներու մարտավարական փոփոխութեան արգասիքը կարելի է համարել: Բանաձեւը, առանց Ցեղասպանութիւն բառեզրի օգտագործման, խորքին մէջ կը թեւակոխի ճանաչումի յաջորդ հանգրուանը՝ հատուցումներու մէկ կարեւոր բաժինը:

Ներկայացուցիչներու տունը առանց առաջադրուած բառեզրին շուրջ ծաւալոր բանավեճին, խորքին մէջ կ'անցնի ճանաչման բուն նպատակին եւ թուրքիային կը պահանջէ իրաւունքներու վերադարձ՝ բուն իրաւատիրոց:

Կը վերադառնակը հատուցումի բաժինին. Նախ՝ տառացիօրէն Ներկայացնենք թիւ 306 բանաձեւին հիմնական 4 կետերը.-

- Դադրեցնել թուրքիոյ մէջ բոլոր տեսակի կրօնական իրավականութիւնները:

- Վրտունել Եկեղեցիներուն իրականացնել կրօնական ծեսեր, մատուցել կրթական, ընկերային ծառայութիւններ՝ առանց սահմանափակումներու:

- Վերադարձնել քրիստոնեական Եկեղեցիները, կրօնական եւ կրթական կառոյցները, դպրոցները, յուշարձանները, սրբավայրերը եւ այլ աղօթատեղիներ, ինչպէս նաեւ շարժական գոյքը (արուեստի գործեր, ձեռագիրներ եւ այլն):

- Վրտունութիւն տալ քրիստոնեաներուն կատարել Եկեղեցիներու, աղօթատեղիներու, այլ սրբավայրերու եւ հիւանդանոցներու նորոգութեան աշխատանքներ:

Առաջին կետը ուշագրութիւն կը գրաւէ: Բանաձեւին որդեգրումը առաջին հայեացքով կը ծգէ այն տպաւորութիւնը, որ որոշումը, իր ընդհանուրին մէջ, կը վերաբերի քրիստոնեական կրօնի ազատութեան, ընդ որում հայկականին: Ուշադիր ընթերցումը առաջին կետին կը նախանշէ ինքնին, որ կը խօսուի բոլոր տեսակի կրօնական իրավականութիւններու վերջ տալու անհրաժեշտութեան մասին: «Բոլոր»-ը այստեղ իրավականութիւններու տարատեսակութեան չի վերաբերիր, այլ՝ կրօններուն: Իսկ բոլոր կրօններուն մէջ կը ներառուի հրեականը, ինչ որ մտածել կու տայ հրեական լոպիի մասնակցութեան, անուղղակի քաջալերանքին կամ առնուազն գործընթացը չարգելակելու մասին: Բանաձեւը բնականաբար հայկականին առընթեր վայելած է զօրակցութիւնը Երկրի թիւ 2 լոպիիստական խմբաւորումին՝ յունական քաղաքական գործունին: Ուրկէ կ'ընդգծուի ճշդուած մարտավարութեան Երկրորդ կարեւոր հանգամանք՝ **Լոպիիստական** ուժերու կուտակումի ապահովումը, իբրեւ կարեւոր նախադրեալ յաջողութեան հասնելու:

Կրօնական ազատութիւնը, Եկեղեցիներու նորոգութիւնը, սրբավայրերու արարողութիւններ կազմակերպելու իրաւունքը մարդկային իրաւունքի այնպիսի բաղադրատարեր են, որոնց առաջադրումն ու պահպանումը նախապէս այլ ուխտերով եւ համաձայնութիւններով վայելած են Միացեալ Նահանգնե-



րուն աշակցութիւնը. յաճախ ալ՝ անոր յառաջատար ներգրաւուածութիւնը նման փաստաթուղթերու ձեւաւրման մէջ: Մարտավարական երրորդ արդինաւետ մոտեցումը առաջադրուած միշավայրի կիրարկած արժեհամակարգի որդեգրումով՝ նմանատիպ բանաձեւի նախագիծերու ներկայացումին մէջ կը կայանայ:

Ներազգային առումով եւս տակաւ կը ձեւաւրուի ճանաչումն հատուցում հաւաքական աշխատանքի անցում կատարելու անհրաժեշտութիւնը: Յայաստանի Յանրապետութիւնը իր բարձրագոյն դեկավարութեան մակարդակով կը խօսի Սեւրի դաշնագիրի այժմեական եւ իրաւական կարեւորութիւն ներկայացուցած ըլլալու իրողութեան, արդարութեան վերականգնման եւ Ցեղասպանութեան հետեւանքներու վերացման մասին, մինչ սփիւռքը հետզհետէ պահանջատիրական հիմունքի վրայ կը շեշտէ հատուցումներու իրաւական թղթածրարին պատրաստութեան ալյետաձելիութիւնը: Այս ծիրին մէջ կարեւոր մեկնակետ կը համարուի սփիւռքի ազգային եւ հոգեւոր կերտոնին՝ Մեծի Տան Կիլիկիոյ կաթողիկոսութեան նախաձեռնած գիտաժողովին կազմակերպումը՝ միշազգային օրենքի հիման վրայ հատուցումներու իրաւագաղաքական պատրաստուածութեան ենթահողը նախագծելու համար:

Գալով ֆրանսական օրինագիծին, որուն շուրջ ելեւեները շատ էին, պէտք է նկատի ունենալ հետեւեալ իրողութիւնները.-

Ֆրանսական օրինագիծին Սահմանադրական խորհուրդ յղումին եւ վիճարկումի որոշումին առիթով քանի մը հարցումի պատասխան պէտք է յստականայ.-

ա.- Ի՞նչ իիմաւորումներով ժխտումի քրեականացումի աշխատանքներուն առաջին հանգրուանին, ֆրանսայի նախագահին միշամտութեամբ, օրինագիծին ծերակոյտին



կողմէ քննարկումը, աւելի ճիշդը՝ օրակարգի կետի վերածումը արգելակութեաւ:

բ.- Ի՞նչ են ճիշդ այս պատճառները, որոնք օրինագիծի քննարկման ընթացակարգի մեկնարկը ճշդեցին նախագահ Սարքոզիի պաշտօնավարութեան աւարտի նախօրեակին:

գ.- Նախագահ Սարքոզիի հակազդեցութիւնը, թէ հայկական օրինագիծի հակասահմանադրական հոչակման պարագային հակասահմանադրական պէտք է նկատել նաեւ իրեական օրենքը, իրաւական ի՞նչ հիմունքներ ունի: Այլ խօսքով՝ տրամաբանական հետեւութիւնը յստակ է, սակայն իրաւական գործընթացը պարզ չէ:

դ.- Նախագահ Սարքոզի կրնա՞ր չսպասել խորհուրդի անհրաժեշտ թիւի գոյացման՝ օրինագիծը Սահմանադրական խորհուրդ յղելու համար:

Ճիշդ է, որ նախագահ Սարքոզիի երեւանեաւ յայտարարութիւնները անսահմանադրական իրենց ուժգնութեամբ եւ տարողութեամբ: Ճիշդ է նաեւ, որ ֆրանսայի մէջ արձանագրուած գործընթացները այս ուղղութեամբ կը համոզէին, որ նախագահ Սարքոզին տէր է իր իրավարակային յանձնառութեան, այսուհանդերձ, այս բոլոր գործընթացներէն ետք օրինագիծին հակասահմանադրական յայտարարուիլը աւելիով կը խորացնէ հարցումներուն ետին գտնուող շարժիչ գործօնները բացայացելու տրամաբանութիւնը:

Պուայէի օրինագիծին ոչ սահմանադրական ըլլալը ի՞նչպէս կարելի պիտի ըլլայ հա-



մածայնեցնել արդին գործող եւ հրեական ողջակիզումին ժխտումը պատժելի դարձնող Կեսոյի օրենքին հետ:

Տակաւին, Պուայէի օրինագիծը չի խօսիր ուղղակի Յայոց ցեղասպանութեան մասին: Կը խօսի Ֆրանսայի ճանչցած ցեղասպանութիւններուն մասին: Ուրեմն, Նման օրինագիծ մը հակասահմանադրական նկատելը բնականաբար կը վերաբերի նաեւ հրեական ողջակիզումին, որուն մասին արդին օրենք կը գործ երկար ատենէ ի վեր:

Ծարունակենք տրամաբանութիւնը: Նման ժխտական մօտեցումնվ Սահմանադրական խորհուրդը փաստած եղաւ, որ ինք կը շարժի ո՛չ թէ իրաւական եւ սահմանադրական դիտանկիւններէ, այլ՝ բացառապես քաղաքական: Սահմանադրագետ պէտք չկայ ըլլալու՝ Եզրակացնելու համար, որ Ֆրանսան ինք կարիքը պիտի ունենայ իր պետադրաւական կառոյցներուն միշեւ աչքառու հակասութիւնները կարգաւորելու բարդ աշխատանքի մը:

Պէտք է արձանագրել, որ վիթխարի քարոզական գօտիներ ձեւաւորուեցան ոչ միայն Յայոց ցեղասպանութեան իրողութեան ընդգծումին տեսանկիւննեն, այլ մանաւանդ՝ Երոպայի մէջ Թուրքիոյ դիմագիծը շեշտելու առումով: Թրքական հակազդեցութիւնները ոչ միայն ամբոխային մակարդակի վրայ, այլ նաեւ պետական առումով խուժանավարի բնութագրում ստացան:

Չոյաժմ ա՛յս է միակ առաւելը Պուայէի օրինագիծին առիթով ծաւալած քննարկում-

ներուն:

Եզրակացնելու համար, պէտք է յատուկ ձեւով կեդրունանանք Մեծի Տանն Կիլիկիկոյ կաթողիկոսութեան կազմակերպած Յայոց ցեղասպանութիւնը՝ ճանաչումը հատուցում թեմայով միշազգային խորհրդաժողովին վրայ, որ համախմբեց միշազգային իրաւագիտութեան դէմքեր, միշազգային դատաւորներ, իրաւագետներ, որոնք իրենց գեկու-

ցումներով մեծապես օգտակար դարձան յառաջիկային հայութեան իրաւունքներու հատուցման թղթաձրարը պատրաստելու աշխատանքին: Կարեւոր է որ այդ պահանջները ըլլան միշազգային օրենքներու համաձայն, որոնց հիման վրայ կարելի ըլլայ միշազգային ատեաններու մէջ Յայ դատը հետապնդել:

Յստակ է, որ Յայոց ցեղասպանութեան հարիւրամեակի նախօրեակին, մենք ազգովին մեր պահանջներու իրաւական թղթաձրարին պատրաստութեան հանգրուանը թեւակոնելու սեմին ենք: Մեր իրաւունքները պաշտպանելու համար միշազգային օրենքներով զինուած քաղաքական աշխատանքներու կողքին, մենք միշազգային ատեաններու մէջ թուրքերու դէմ յանդիման գալու պատրաստ պէտք է ըլլանք ազգովին Յայոց ցեղասպանութեան հետեւանքները վերացընելու եւ ցեղասպանութեամբ մեր կորսնցուցած պատմական բոլոր իրաւունքները վերականգնելու համար:

Ո՞յս է մեր իիմասկան մարտահրաւերը Յայոց ցեղասպանութեան հարիւրամեակին ընդառաջ:

ՀԱՅԱՆ ԳԱՆՏԱՐԱՐԵԱՆ

ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔՆ ՈՒ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԴԱՏԸ ՈՂՋ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՄԵՆԱԾՆՈՐՀՆ ԵՆ

1 915-ի Ցեղասպանութենեն ասդին, ապրիլ 24-ը մեզի՝ հայութեան համար զգեցած է յատուկ իմաստ ու նկարագիր, զոր եթէ ուզենք սեղմել երկու բառի մէջ, կ'ունենանք ՀԱՅ ԴԱՏ հասկացութիւնը:

Մեր քաղաքական պայքարի դաշտին մէջ, այս երկու բառերը կը խորհրդանշեն այն բոլոր բաները, որոնք կ'արտայայտեն մեր իրաւունքները, իսկ երբ ԻՐԱԿՈՒԾ կ'ըսենք, մեր մտապատկերին մէջ գլխագիր տառերով կ'արձանագրուին Թուրքիոյ պետութեան գործած ահաւոր ոճիրին հետեւանքներուն դարմանումը՝ իր ամբողջական բովանդակութեամբ: Թուրքիոյ դեմ Յայ դատի հետապնդում կը նշանակէ՝

- Ցեղասպանութեան ճանաչում ոճրագործ պետութեան կողմէ, այսինքն՝ խոստովանիլ, թէ պատմական ոճիրը կատարած է, վերջ տալ մատներու-եւ պաշտպան դաշնակիցներու-ետին պահութելու անվաղորդայն վարմունքին,

- Յատուցում կատարել հայութեան ու Յայաստանին, այսինքն՝ հայութեան վերաբարձրնել այն հողերը, որոնք 1915-էն առաջ ալ բռնագրաւուած էին, ու յիշեալ անկիւնադարձին շարդերու ու բռնագաղթի հետեւանքով



դատարկուեցան դարաւոր բնիկներէն, ապա նաեւ նիւթական հատուցում կատարել բոլոր այն վնասներուն համար, որոնք հետեւանք են Ցեղասպանութեան: Այս պահանջը կ'ընդգրկէ աւելի քան մեկ ու կես միլիոն նահատակներու արեան գինը, դարերու ընթացքին մեր հայրենի հողերուն վրայ ստեղծագործուած ու ահա աւելի քան հարիւր տարիներէ ի վեր փոշիացւող ժառանգութեանց դիմաց փոխ-հատուցում, մեկ խօսքով, ամբողջական դարմանումը իթթիհատական ոճրագործ խմբակին «սխրագործութեանց» հետեւանքներուն:

- Մեր հողային իրաւունքներուն ծիրը չէ սահմանափակուած միայն Արեւմտեան Յայաստանով, հետեւաբար, երբ կ'ըսենք Յայ դատ ու հողային իրաւունք, չենք կրնար մտահան ընել այն բոլոր հողերը, որոնք պատմականորին Յայաստանի ու Յայ ժողովրդին կը

պատկանեին, եւ մինչեւ օրս չեն մտած Հայաստանի ու ազատագրեալ Արցախի սահմաններուն մէջ:

Հայութեան այս պահանջները ո՞չ ցնորդ են, ո՞չ ալ երեւակայածին կամ երազային. Թուրքիա ու զայն պաշտպանող-հովվանաւորողները կրնան նման որակումներ կատարել մեր արդար պահանջներուն մասին, մինչեւ իսկ քաղաքական ժամանակաւոր շահերով տարուած հայեր կրնան յայտարարել, որ պէտք է Թուրքիոյ պահանջած զիջումները կատարենք ու բանանք բարի դրացնութեան էջը, պատմութեան տիսուր էջերը դարձնենք: Սակայն պէտք է կրկին ու կրկին վերահաստատել եւ ուխտել, քաղաքական մեր կամքին մէջ օր աւուր ամրագրել, որ Թուրքիոյ հետ բարի դրացնութեան էջը չի կրնար բացուիլ Ոճիրին անհատոյց մնալով, ահաւոր վերքը բաց թողելով, միայն այսօրուան ու վաղուան հաշիւր ընելով՝ նիւթական շահեր հալածելով. որովհետեւ առանց արդարութեան՝ բարի դրացնութեան որեւէ հիմ կը մնայ իսախուր:

Այլ խօսքով, մենք պիտի ըըլլանք մեր Դատին հիմնաքարերը խախտողը, մեր քաղաքական հաւատամքին մէջն դուրս պիտի չձգենք Թուրքիային մեր բազմերես պահանջները, մինչեւ իսկ եթէ պատմական պահը երեկ, այսօր ու թերեւս մօտիկ ապագային ալ խուսանաւելու հարկադրանքին դիմաց դնէ մէզ: Ցեղասպանութեան ոճրագործներուն շանթահարման սխրանքները միայն մէկ արտայայտութիւնն էին արդար հատուցման մեր

պահանջին: Թուրքին մեր պահանջատիրութեան հաշիւներու տոմարը կը մնայ բաց, պիտի մնայ բաց, մինչեւ լիակատար հատուցում: Այս կամքն մեզ չեն կրնար հեռացնել ոչ հուրը, ոչ խարդաւանանքները, եւ ոչ ալ ինքնալքումով տարուած հայանունները...

Վերի մտածումները նորութիւն չեն, այս մասին մեր յանձնառութիւնը կը հաստատենք ու կը վերահաստատենք ամէն տարի, այս կամքն ու պահանջատիրութիւնը փոխանցելով նոր հասնող սերունդներուն, որոնք կուգան միանալու պահանջատիրական դրօշարշաւին:

Նորութիւն չէ, սակայն երբեմն շուքի մէջ մնացող իրականութիւն է, որ մեր Դատը (անցեալին ծանօթ՝ նաեւ Հայկական Հարց եզրով) չէ սկսած 1915-ի Ցեղասպանութեամբ եւ մեր իրաւունքներուն թղթածրարը չի սահմանափակուիր քսաներորդ դարու երկրորդ տասնամեակին տեղի ունեցած Մեծ Ոճիրին առնչուող հարցերով:

Որքան ալ համապարփակ ըլլան Թուրքիոյ դիմաց դրուած մեր պահանջները, Հայկական Հարց կամ Հայ դատ հասկացութիւնը կը վերաբերի իրաւունքի ու ժամանակի աւելի լայն տարածքի մը, որ իր մէջ կ'առնէ բոլոր այն տասնամեակները, երբ մեր ժողովուրդը հեռու պահուած էր իր տարրական իրաւունքներէն. այս դարաշրջանները, երբ հայութեան զլացուած են իր սեփական հողին վրայ ազատ ապրելու, ազատորեն ստեղծագործելու, աճելու եւ բազմաճիտ զարգացում ապրելու իրաւունքները. անոնք դրուած ըլլան մարդկային, քաղաքական թէ այլ խորագիրներու տակ:

Փաստորէն, տասնինսներորդ դարէն առաջ իսկ ծայր տուած պայքարը մօտաւորապէս 150-160 տարի ետք թերակոխեց անդառնալի Զարթօնքի



Եւ իրաւունքներու հետապնդման փուլը, իրեն հետ բերելով տաք ու պաղ ալիքներ, մեր ժողովուրդի կեանքին մէջ տարածելով արդարութեան եւ իրաւունքի այնպիսի գաղափարներ ու երանգներ, որոնք մինչեւ այսօր ալ կը մնան անսակարկելի առաջադրանքներ:

Եթէ արագ ակնարկով մը վերադառնանք մեր իրաւունքներու պաշտպանութեան ու հետապնդման սկզբնական փուլերուն, գոնէ ետ երթանք մինչեւ տասնիններորդ դարու երկրորդ կեսերը, պիտի յիշենք, որ Յայկական հարց ըսելով կը հասկցուեր գլխաւորաբար Օսմանեան կայսրութեան ենթակայ հայութեան մարդկային ու քաղաքացիական տարրական իրաւունքները, ըստ եռթեան՝ կեանքի ապահովութիւն, ինչքի ու ըստանիքի անվտանգութիւն, ապա նաեւ՝ քաղաքացիական որոշ իրաւունքներ, խտրականութեան ու անհաւասարութեան դարմանում եւ այլն: Ճիշդ է, որ Խորայէլ Օրիի օրերն սկսեալ, այսինքն՝ տասնեօթներորդ դարին ի վեր կար հայկական հողերու վրայ դարեր առաջ կորսուած անկախ պետութեան վերականգնումի ծգտումը, սակայն անկախ պետութեան քաղաքական առաջադրանքը ամրագրուեցաւ Յայաստանի Յանրապետութեան հաստատումն ետք, շուտով համալրելու համար Ազատ, Անկախ ու ՄԻԱՅՑԱԼ Յայաստանի քաղաքական հանգանակի տարագումով, առաջադրանք՝ որ մինչեւ օրս ալ ամուլ նստած է հայութեան, եւ ո՞չ միայն Դաշնակցութեան քաղաքական հաւատամքին մէջ:

Մեր ժողովուրդի մարդկային տարրական իրաւունքներուն հետապնդումն ու այդ նպատակով հետզհետէ ծաւալ եւ դիմագիծ ստացած պայքարը, չմոռնանք, իր հողին վրայ ապրող հայութեան մարդկային ու ազգային իրաւունքներուն հարցն էր նախ եւ առաջ: Այս գիծը անփոփոխ մնաց յաջորդ բոլոր փուլերուն, կարկինը տարածելով նաեւ ցարական



կայսրութեան տակ ճնշուած հայութեան վրայ: Եթէ միայն յիշատակենք, որ քսաներորդ դարու առաջին տարիներուն, երբ հայութեան ուսումնարաններուն ու Եկեղեցապատկան, այլ խօսքով՝ ազգային կալուածներուն վերեւ օր մըն ալ ռուսական «Դամոկլեան սուր» կախուեցաւ, նոյնինքն Խրիմեան Յարիկը, որ նախընթաց տասնամեակներուն դարձած էր Օսմանեան լուծին տակ կըած հայութեան ողևայարը շտկող առաջնորդներն մէկը, նոյն հաստատակամութեամբ պաշտպան կանգնեցաւ Արեւելեան Յայաստանի հայութեան մարդկային ու ազգային-մշակութային իրաւունքներուն:

Յայ դատ հասկացողութեան այսպիսի համապարփակ տարագում այսօր ալ գոյութիւն ունի, Թուրքիոյ Նկատմամբ մեր պահանջատիրութեան, Յայաստանի մէջ ապրող թէ աշխարհիվ մէկ տարածուած հայութեան քաղաքական, ազգային-մշակութային, քաղաքացիական ու մարդկային իրաւունքներու իրենսներով: Կրկնենք, սա նորութիւն չէ. թէեւ ապրիլ 24-ն ու Յեղասպանութեան հետեւանքներուն դարմանումը առհասարակ եղած են ու արդարօրեն կը մնան գերակշիռ, սակայն մեր բազմաճիւղ պայքարի «քարտես»-ին մէջ հին-այժմեական միւս գիծերը կարելի չէ աչքաթող ընել, որովհետեւ երբ Դատ կը հետապնդենք, ի վերջոյ չենք կրնար մտահան



ընել շարք մը նախադրեալներ ու հիմքեր, որոնք նոյնքան կարեւոր են մեր հայրենիքին ու ժողովուրդին գոյատեւման համար, որքան գրաւեալ հողերուն վերադարձն ու անտեսած հատուցման իրականացումը:

Թուելու կարգով ու հակիրճ բացատրականներով արձանագրենք մեր Դատին մէկ քանի երեսները, բացատրելու համար, թէ ինչ զսել կ'ուզենք համապարփակ Դատ բացատրութեամբ:

Կրկնենք. առասց մոռնալու կամ տկարացը-նելու թուրքիային մեր պահանջներուն թղթածրարը, այսօր մենք դեմ յանդիման ենք մեր ժողովուրդի այլ իրաւուքներուն նսեմացման ու տրորումին, ըլլա՛ աշխարհի ծանօթ պայմաններուն անհաճոյ պարտադրանքներուն բերումով, ըլլա՛ մեր իսկ ձեռքով «մեր ուսուցին կրակելու» արարքներով։ Նման վիճակներ կը դիմագրաւենք Հայաստանի վերանկախացած հանրապետութեան, որոշ չափով՝ Արցախի, ապա նաեւ Արտերկրի օճախ-ներուն մէջ։

● ՀԱՅԱՍՏԱՆԻ մէջ, մեր ժողովուրդի Դատին տեսանկիւնն, պայքար ունինք ստեղծուած այլանդակ կացութիւններուն դէմ։ Հայրենիք կերտելու փոխարէն, հայրենիքի քանդում տեղի կ'ունենայ բազմաթիւ ոլորտներու մէջ, իսկ այդ քանդումն բարձրացող փոշին կը մշուշէ անկումին ամբողջական պատկերը, քաղաքական բեմին վրայ գլխաւոր «զարգացում» ձգելով... ընտրական ինալ ու մասնակի շահերով մղում առած սահմանափակ շի-

նարարութիւնն ու անով ներկայացուող բարեփոխութիւննը։ Փոխանակ երկրի բոլոր շրջաններու զուգահեռ ու համաչափ զարգացման ծրագիրներ մշակելու եւ կիրարկելու, իշխանաւորներն ու քաղաքական բեմի դերակատարներուն մեծ մասը տարուած են «շուկայական» տրամաբանութեամբ, ինչ որ մեր հայրենիքը արագօրէն նետած է սակաւապետներու քմայթներու ենթակայ

կացութեան մէջ։ Սեփական հողին վրայ գործելու, զարգանալու եւ արմատաւորուելու հայութեան իրաւունքը խախտած է, անտեսած է այս դատը, ու ցանկալի հաւասարակշռութիւններ կորսուած են։ Երեւանը ռուսական, եւրոպական ու ամերիկեան ոստաններու մրցունակ դարձնելու մոլուցքով տարւած վերնախաւ մը ընթացք տուած է «զարգացում» այսպիսի հոլովոյթի մը, որ միւս քաղաքներն ու մասնաւանդ երկրագործութեան հիմք հանդիսացող ԳԻՒՇ դարձուցած են իմաստազուրկ ու արծեզրկած են զանոնք, մինչդեռ երկրի մը զարգացման, տնտեսական բարօրութեան ու համաչափ բարգաւաճման մէջ քաղաք-գիւղ գործակցութիւնը միշտ ալ կենսական եղած է (չկարծէք, որ այս տողերը Երեւանը զարգացումն եւ պահելու միտումով կ'արձանագրենք։ բացարձակապես ո՛չ, այլ կ'ուզենք լուսարձակի տակ բերել երկրի բոլոր շրջաններու բարգաւաճման տարրական իրաւունքը)։

Ընկերային արդարութիւն հասկացութիւնը քաղաքական խմբաւորումներու բերնին ծամոցը դարձած է, ու ժողովուրդը անոր կը սպասէ այս գորտին պէս, որուն աչքը դուրս կու գայ ջուր տեսնելէ առաջ։ Բայց... ո՛չ. ժողովուրդին աչքը դուրս չի գար գորտին պէս, այլ ժողովուրդին աչքը դէպի դուրս կը հայի. ժողովուրդը կը թողու հայրենիքը, սեփական տունն ու գիւղը, տարուելով այլօրինակ ցնորքներով, «Դուրսը ամեն բան լաւ է, Հայաստանի մէջ հաց չունինք այլեւ» սին տրա-

մարանութեան գերին դառնալով: Սեփական հայրենիքին մեջ ապրելու, ստեղծագործելու, աշխատելու եւ ապրուստ ապահովելու ԻՐԱԴՈՒԹԵԸ զրկուած են զանգուածներ. հայրենիքը դարձած է որոշ խալի մը մենաշորիք, եւ ինչպէս խորհրդային տարիներուն, ահա նաեւ այսօր, որոշ «ղեկավարներ» ստեղծած են «հաւատարիմ հետեւորդներու դասակարգեր», անոնց համար ստեղծելով սնամեջ բարօրութեան ու յղփացումի դրութիւն: Անդին, գիտնական ու արուեստագետ, մտաւորական, արհեստագետ ու աշխատող ճեղքեր հեւ ի հեւ մրցումի մեջ են հայրենալքումի ճամբուն վրայ: Խորհրդային տարիներու ապագայնացնող մթնոլորտը իր տեղը զիշած է այլանդակ համաշխարհայնացումին. ինչպէս Յայաստանի ճակատագրակից այլ երկիրներու ժողովուրդներ, նոյնպէս ալ հայրենաբնակ հայը նոր հագուստի պէս կը հագուի այս «գաղափարները», ըստ որոնց, պէտք է երթալ հոն՝ ուր կրնաս բարօր կեանք ու հաճելի ապրուստ ապահովել, անիկա ըլլայ Ռուսիա, Կեդրոնական Ասիոյ Երկիրներ, Երոպա, Ամերիկաներ, մինչեւ անգամ... Թուրքիա (որպէսզի օր մը ալ Թուրքիա սպառնայ, թէ իր հանդուրժողութիւնը կրնայ սպառիլ ու իր հոդերուն վրայ ապրուստ ճարելու եկած հայաստանցիները կրնայ արտաքսել...):

Ընկերային տարրական իրաւունքներէ զրկուած զանգուածը, ինչ խօսք, բնականաբար ու հետեւաբար կը զրկուի նաեւ քաղաքական-քաղաքացիական իրաւունքներէ: Յայրենիքի մը բնակիչին համար տարրական իրաւունքներու պատկերացումն ու փորձառութիւնը ճեղք բերելէ առաջ, անոր արդեն իսկ պարտադրուած է, դրամով կամ այլ միջոցներու ճամբով, քուէ տալու անոր, որ խոստումներով, կամ՝ ժամանակաւոր «քարիքներով» կը խոստանայ բաւարարել զինք: Եւ այս բոլորը կը կատարուին ժողովրդավարութեան



պիտակին տակ: Ժողովրդավարութիւնը, իսկական ժողովրդավարութիւնը, այսինքն՝ արդի աշխարհի մարդկութեան համար միայն բարիք խոստացող դրութիւնը կ'աղճատուի, կ'իմաստագրկուի, կը դառնայ ատելի խաղալիք, և ման ընկերվարութեան գաղափարներուն, որոնք անցեալ դարուն աղճատումի ենթարկուեցան համայնավարութեան անունին կապուելով, ու այսօր, մարդիկ չեն ուզեր ընկերվարութիւն անունը լսել, որովհետեւ զայս համազօր կը նկատեն համայնավարութեան ու անոր սխալ կիրարկումին:

Կհաւասիկ, այս ու և մանօրինակ որբերգութիւններու դիմաց, ու «գլխուն ճարը տեսնելու» բնական մղումով, Յայաստանի զաւակները գիտակցաբար կամ անգիտակցաբար կը լքեն իրենց տարրական իրաւունքները դատը, կը լքեն հայրենի հողերը, մինչդեռ անցեալ տասնամեակներուն ու դարերուն, նոյնքան ու աւելի դաժան ճնշումներու տակ ժողովուրդը դիմացած է ու տոկացած, վերապրած է սեփական հողի վրայ, ստեղծագործած է ու փորձած է բնակչութեան աճ ապահովել:

Այսօր, յաճախ դառնութեամբ կ'արձագանքները իրարու. ինչ դատի մասին է խօսքը, երբ Երկիրն ու բնակիչները կ'երթան դեպի նօսրացում, հողահաւաքի համար կենսական եղող բնակչութեան աճի փոխարեն, Յայաստանը տեղ կը բանայ հաւանական եկուորներու, եւ ահա մեր հայրենիքը, իր իսկ զաւակներուն ու «իմաստո՞ւն» վարիչներուն ճեղքով,



Վերստին կրնայ մտնել «Հայաստանը առանց Հայու» այս դաւադիր ծրագիրներուն ոլորտը, որ ատենօք դարբնուած էր օտար գերիշխողներու կողմէ:

●ԱՐՏԵՐԿՐԻ մէջ, հայութեան տարրական իրաւունքները այլապէս աղճատումի ու նօրացումի կ'ենթարկուին, մերթ «արտաքին» գործոններու ազդեցութեամբ, այսօրուան նորութեան՝ համաշխարհայնացումի ազդակներ խորագիրին տակ, սակայն նոյնքան մընալ մեր հաւաքական անտարբերութեան հետեւանքով, անուանական հայապահանումի եւ իրաւատիրութեան շապարին տակ:

Այս, արհամարհելի չեն այն խորշակները, որոնք պատճառ դարձան ու կը մնան՝ միջին արեւելեան մեր օճախներուն մաշումին, սակայն եկեք խոստովասինք, որ հայրենամերձ թէ հեռակայ օճախներ մէջ, ինքնալքումի «դրօշարշաւները» հետզհետէ ծաւալ կը ստանան մակերեսային յանձնառութիւններու անուան տակ: Չոս, մեր դատը արդէն կը ներկայանայ բոլորովին տարբեր խորագիրներու տակ, սակայն առանց անշատուելու մեր ամբողջական Դատէն, այսինքն՝ գոյատեւելու սեփական դիմագիծը պահպանելու եւ մանաւանդ բնական աճ ապահովելու մեր իրաւունքներն:

Մանրամասնենք. մեր մշակոյթին ու լեզին պահպանումը կարեւոր ու անսակարկելի մասնիկներն են մեր ամբողջական դատին, ու հոս արդէն թուրքի կամ ազերիի հարց չկայ, այլ կայ խարուսիկ «նորարարութիւն»-ներով

տարուելու, մենք զմեզ չքմեղելու, ողոքելու «տրամաբանութիւնը»: Տարուե տարի ու տասնամեակէ տասնամեակ, մեր ժողովուրդին լայն զանգուածը իր կապերը կը թուլացնէ մեր մշակոյթին ու լեզուին հետ, որոնք խորքին մէջ պորտակապ են ու երաշխիք՝ ՀԱՅուն գոյատեւման: Իսկ կարելի՞ է Դատի բաղկացուցիչ միւս մասնիկներուն մասին խօսիլ, եթէ ժողովուրդը մնայ այս

առումով նահանջի ու ինքնակրստեան ճամբուն մէջ:

Անմիջապէս ըսենք, որ այս ողբերգութեան անմասն չէ հայրենի հայութիւնը, սակայն հոն, տակաւին կայ հողին վրայ ըլլալու առաւելութիւնը, որքան ալ որ օտարաբանութիւններով ծանրաբեռնեալ ըլլան ղեկավարներու, նախարարներու, մտաւորականներու թէ հասարակ մահկանացուներու խօսակցական լեզուն (չենք արդարացներ, այլ՝ կը մատնաշենք իրողական վիճակն ու բաղդատականը):

Հայաստանի մէջ թէ Արտերկրի, բարձրագոյն մակարդակի վրայ մեր դատի այս երեսին նկատմամբ նախանձախնդրութիւնն ու ճիշդ գործելու առաջադրանքը ներկայ են, ո՛չ մէկ խօսք այդ մասին. սակայն ողբերգական իրականութիւնները կը դառնան աւելի գերակշռող, այս կալուածին մէջ դատը կը մատնուի հետեւողական նահանջի: Ու ահազանգող հարցումը անզամ մը եւս կը կրկնուի. ի՞նչ Դատի մասին է խօսքը, երբ հայութեան թուական պատկերը կը նահանջէ հայրենացումի ալիքներուն զուգահեռ...:

ՊԵ՞տք է կրկնել ու մրճահարել այս հարցումը, թէ՝ դուրսեն կատարուած կոտորածնե՞րը աւելի մեծ թիւվ զոհ պատճառած են մեզի, թէ դարերու, նաեւ վերջին մէկ-երկու դարերուն տեղի ունեցած մաշումը՝ օտարացումի, ծովումի ու նման նահանջներու ճամբու։ Ի վերջոյ, սեփական մշակոյթին ու լեզուի պահպանումն զրկուիլը, ինքնազրկումը

նոյնքան մտահոգիչ զարգացումներ չե՞ն արդեօք մեր Դատին դիտանկիւննեն:

Նման մտահոգութիւններ արտայայտելը, անոնց ձայնակից ըլլալը բաւարար չէ, աւելի կարեւոր՝ մեր Դատի արտաքին ու ներքին այս ոլորտներուն դիմաց դարմանողի, գործնական դարմանողի ընթացք որդեգրելն է կարեւորը:

Թուրքիոյ, Ազրպէյճանի ու, տակաւին, մեզմէ հող խլած որացիներու հանդէա պահանջատեր մնալն ու գործնական պայքարի միջոցները կենսական են, սակայն իրաւունք չունինք ջայլամի կեցուածք պահելու մեր Դատին «Ներքին» ոլորտներուն նկատմամբ, որովհետեւ Դատին հիմքն ու անոր հետապնդման ենթահողը՝ նոյնինքն ժՈՂՎՈՒՐԴՆ ու ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔՆ են:

Այս ըմբռնումը Շ ու պիտի մնայ մեր ազգային քաղաքականութեան ամենեն հիմնական ու կենսական գիծերուն մէկը: Յայրենի հողեն զանգուածին հեռացումը, Արտերկրի մէջ ծուլումի ու հայալքումի հոսանքներուն անսանձ մնալը նոյնքան ուժգին հարուածներ կու տան մեր ամբողջական իրաւունքներուն՝ Դատին, որքան, ըսենք, յայտարարութիւննը՝ թէ վերջ կու տանք ցեղասպանեն ու այլ բռնագրաւողներէ մեր իրաւունքներու հետապնդման երթին:

Եթէ ազատ, անկախ ու միացեալ Յայաստանը կը հանդիսանայ մեր քաղաքական առաջադրանքներուն գլխաւոր խորագիրը, իրաւունք չունինք արհամարհելու կամ լուսանցքի պատուհանեն դիտելու մեր Դատին «Ներքին» այն երեսները, որոնց հետապնդումն ու դարմանումը բացարձակապն կախեալ է մեզմէ, հայութեան բոլոր զաւակներէն, անոնք ըլլան պետական ու այլ պատասխանատուններ, ղեկավարներ, միութենականներ, ծնողներ ու նորահաս սերունդներ: Այս ծիրին մէջ, երեցին չափ կարեւոր է նորահասին ինքնագիտակցութեան ու յանձնառութեան խորացումը, որուն մէջ համաչափ կարեւոր են ծնողներուն, ընտանեկան հարազատներուն, դպրոցին ու կազմակերպութեանց, միութեանց-ազգային հաստա-

տութեանց դերը: Սեփական պատմութեան, մշակոյթին ու հայկականութեան իրաքանչիւր տարրին հետ հաղորդակցութիւնը, այդ բոլորին իրացումը կը կազմեն մեր Դատին հիմնական սիւները:

Միացեալ Յայաստանի տեսլականը կարելի չէ իրագործել այսօրուան պատագրեալ հողերը տկար թողելով, մեր ժողովուրդի բնական աճին նկատմամբ կրաւորական, անտարբեր մնալով, «լաւ հայ ըլլալու համար ԼԵԶՈՒԻՆ ու ՄՇԱԿՈՅԹԻՆ իրացումը երկրորդական են» յայտարարելով:

Ընդհակառակն, Յայաստանը պետք է վերածել հայրենադարձութեան իրերայաջորդ ալիքներու թիրախ, անոր սահմաններէն ներս պետք է իրականացնել քաղաքական-քաղաքացիական, ընկերային իրաւունքներու արդար բաշխում, որպէսզի վաղը, մօտիկ ապագային, արդարօրէն կարենանը յայտարարել, որ այսօրուան Յայաստանին հողը անբաւարար է մեր ժողովուրդին բնական աճին ու զարգացման, ստեղծագործական կարողութիւններուն կենսագործման համար, հետեւաբար, շօշափելի վերանորոգ հիմքեր ստեղծել մեր պատմական հողերուն պահանջատիրութեան համար:

Մեր Դատին, ամբողջական Դատին համապարփակ հետապնդումը միայն ու միայն մեզմէ կախեալ է, իսկ այդ ճամբուն վրայ, բոլորս իրարու լծակից ենք ու զօրակից: Միասնաբար ու փոխադարձ հանդուրժողութեան մշակոյթի վերականգնումով է, որ պիտի դարմանենք մօտիկ անցեալի ու այսօրուան թերութիւնները:

Որովհետեւ՝

Մեր ամբողջական իրաւունքները կ'ընդգրուեն ողջ հայութիւնը, հայրենի թէ տարասփիւր զանգուածները,

Որովհետեւ՝

Յայրենիքն ու անոր հողին վրայ, այսօրւան ու վաղուան հողերուն վրայ ազատ ու անկախ ապրելու, բարգաւաճելու եւ մշակոյթ կերտելու գործը բոլորիս մենաշնորհն է, եւ ոչ թէ «ընտրեալներու»:

Ս. ՄԱՅՍԵՐԵՃԵԱՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՏԵՆՉԵՐՈՒ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

Ազգը միաւորող մեծագոյն միութիւնը, ուր կը նոյնանան ու կը մեկտեղ- լին մեր ժողովուրդի հմացական, հոգեկան եւ բարոյական ողբերգութիւններու տագնապսերը ու ազգային տեսչերը 1915-ի Աղէտն է:

1915-ը վերապրած ու աղետը ողբացող հայրենապաշտ սերունդներէն ծնան իրապաշտ սերունդներ, որոնք հայրենիքի սերն ու գաղափարը տարացեցին ազգային ինքնութեան գործօններուն մէջ՝ Եկեղեցի, դպրոց ու կազմակերպութիւններ: Տասնամեակներով արձագանգեցին անթաղ նահատակներու աչքերուն մէջ քարացած վլէժի կանչին, Երգեցին կորուսալ հայրենիքի այրող կրակը՝ վառ պահելով նորահաս սերունդներու հոգիներուն մէջ երկրի սերն ու անոր վերադառնալու տեսչը:

Բայց ինչպէս կ'ըլլայ որ այդքան մորմորէն ու իրաւ ապրումներէն ժառանգենք այսքան թեթեւ բեր պարտականութիւններու, իսկ այսօր պատմութեան գիտութեան ծգտելու եւ պատմութիւնը խուզարկելու հրամայականը փոխարինած ըլլայ պարտուած ժողովուրդի հոգեբանութեան ու հալածուած այդ հոգեբանութենէն, փախչինք մեր ներկայէն: Իւրաքանչիւրը տարուած իր հացի տագնապէն կամ փոքր ու սին վեճերէ թաքնուած է իր պատերուն մէջ: Եկեղեցին՝ իր առաջնորդարանին, կուսակցականը՝ իր խորհրդարանին, ուսուցիչը՝ իր դասարանին, Յայստանը՝ նոր



ու դրամատիրական պետութիւն մը հիմնելու տագնապսերուն, սփիւռք՝ իր գաղութային առօրեային, տակաւին կաթողիկէն եւ բողոքականը կրօնական բազմատեսակ օտար հոսանքներէ առաջնորդուած հոգեվիճակներուն, կը սպառէն մեր հոգեկան կորովը վատնելով կարելիութիւնները:

Յրաւիրե՞լ այս բոլորը ազգային գիտակցութեան կամ ազգութեան իմաստին շուրջ եւ տալ նոր օրերու դերը, երբ անոնք առաւելաբար կը հասկան շուկայի ու թուաբանութեան լեզուն: Դիտի գիտակցին որ Ապրիլ 24-ը համահայկական ուխտի օր մը չէ միայն՝ դեպի Անթիլիասի Մայրավանք, դեպի Ծիծեռնակաբերդ, դեպի Ապրիլեան յուշակոթողներ, յանգելու համար մէկ վայրկեան յոտնկայս լուրթեան ու յախուռն ճառախօսութիւններու:

Ուխտին հաւատաւորութեան ու իրաւութեան կասկած չունինք: Ինչ որ կը մտահոգէ ու հարցականի տակ կը դնէ այդ արարողութիւններէն հաւաքած մեր հանգանակն է: Այդ

ուխտաւորութիւնները մեզի պիտի չտան միայն անթաղ մեռելսերու, կորսուած ու քանդուած հայրենիքի, մոխրացած քաղաքներու տիսուր պատկերը, այլ պիտի տան մտատեսութիւնը հայոց պատմութեան գիտութեան եւ անոր ամբողջ հարստութիւնը կազմող բովանդակութեան տարրերով՝ հմտութեան, թափանցիկութեան եւ դատողութեան մտասեւեռումով։ Այդ բոլորով պիտի կարողանայինք անցնող տասնամեակներուն արժեւորել՝ պատմութեան հետ զուգահեռ զարգացող միջազգային օրենքներու շնորհած վերանորոգման, սրբագրութեան կարելիութիւնները։ Փորձի, վարանումի ու խաբեութեան այս դարուն, պահաջատէր, խիզախն ու հայութեան մեջ ամուր խարսխուած հայը իր ձայնը միջազգային ատեաններուն մեջ, համաձայն մարդկային իրաւանց, միջազգային ոճրադատ ատեաններուն օրենքներուն, ուխտերուն եւ փրոթռողլներուն։ Ի վերջոյ այդ օրենքներով իսկ արժեւորելու մեր պատմութիւնը իր իսկական իմաստին մեջ։

Դժբախտաբար, պատմութիւնը մենք սորվեցանք իբրեւ հեքեաթ, ոչ իբրեւ գիտութիւն, առանց մեր սիրելի ուսուցիչներու նկատմամբ ապերախտ ըլլալու, առանց դառնութեան զգացումի, ցաւով ու ափսոսանքով կ'ըսենք այս, որովհետեւ կը շարունակուի սխալը։ Մեր ուսուցիչներուն կը պակսէր ու կը պակսի այսօր եւս բանասիրական, մասնագիտական գիտութիւնը, կարենալու համար նորահաս սերունդներուն մեջ ամրօթէ խարսխել գիտական պատրաստուածութիւնը, պատրաստած ըլլային վաղուան մեր պատմագետները, արհեստավարժ իրաւաբանները, օրենսգետները, եւ առարկայական փաստարկումներու տուեալներով գիտակից ու պահանջատէր հայը այսօր մեր դատը ներկայացներ միջազգային ատեաններու մեջ։

Միւս կողմէ, նորանկախ Հայաստանը պիտի ըլլար, աղքատացած ու

իրաւագրկուած հայ քաղաքացին նոր հայրենիքը եւ շարունակութիւնն ու ժառանգորդը Հայաստանի առաջին անկախ հանրապետութեան, միացեալ, ազատ եւ անկախ Հայաստանի տեսլականով։ Պատահեցաւ հակառակը։ Եղաւ դրամատիրական սկզբունքներով, ազատ շուկայի օրենքներով առաջնորդուող պետութիւն, դառնալով կամակատարը մեծ պետութեանց քաղաքական հաշուարկներուն։ Առաջնահերթութիւնը նկատելով իշխանութեան շահերը, դեկավարելով ազգը մոլական խորամանկութեան ու փտածութեան քաղաքանութեամբ։

Հարիւրամեակի սեմին բաւականին նօսր է դիւանագիտական, օրինական եւ պահանջատիրական մեր պակաժը, համակարգուած ու համատեղուած թղթածրարը Հայ դատին։ Դար մը ամբողջ ու տակաւին անճրկած թէ ուրկէ՝ պիտի քակել կծիկը։

Պարզ բաղդատական մը բաւարար է մեր պարտուղական հոգեբանութիւնը դրսեւորելու համար։ Երկրորդ համաշխարհային պատերազմին տակաւին դուրս չեկած՝ 1939-ին, Գերմանիոյ պարտադրուեցաւ ստեղծել հատուցման ձեւը վերադարձնելու Գերմանիային վախչած հրեաներուն ինչքերն ու դրամը։ Անոնք որոնք արդէն մահացած էին ու ժառանգներ չունեին, հատուցման պահանջը պիտի ըլլար հրեայ ժողովուրդի հաւաքական անունով։ Քետազային՝ 1945-ին, իսրայէլի առաջին նախագահ՝ Հայիմ Ուայզման պիտի





Ներկայացներ ողջակիզուած հրեայ ժողովուրդին անունով իբրեւ խրայելեան պետութեան կողմէ Ներկայացուած պետական պաշտօնական եւ օրինական պահանջ, նոյեմբեր 1945-ին, վերականգնելու, սրբագրելու, դարմանելու եւ ֆինանսաւորելու համար նացիական հալածանքներուն զոհ գացած հրեաներուն հարազատները, Խոալիոյ եւ Գերմանիոյ մէջ գտնուած կալուածները պիտի վերադարձուին՝ ստուգելէ Ետք փաստաթուղթերը, իսկ արուեստի, կրթական, մշակութային, կրօնական արժեք ունեցող ինչքերու բռնագրաւման համար հատուցում պիտի կատարին, եւ գումարները պիտի փոխանցուին հրեայ ժողովուրդին՝ Պաղեստին հաստառուելու համար:

Աւելի վերջ, Փարիզի **Պեփարասիոն քոն-ֆերանսին** որոշուեցաւ ծերերուն վնասից հատուցում տալ՝ փաստելէ Ետք թէ Եղած եւ կերրունացման ճամբարներու մէջ: Անոնք պիտի ստանային 3000- 25.000: Այսպեսով, հրեական 23 կազմակեպութիւններ կը ստանային 450 միլիոն եւ 50 միլիոն յատուկ ֆոնտ մը կը ստեղծուեր այս նպատակին համար: Նոյն նպատակով յաջորդական համաձայնագիրներ կը ստորագրուեին Գերմանիոյ կողմէ 1948-1965՝ բարտքելու եւ վճարելու ծախսերը երրորդ երկիր արտագաղթել փափաքող հրեաներուն: Յետեւաբար, այս բոլորը նկատի առած, Գերմանիան կը ստորագրեր Խրայելեան պետութեան 3000 միլիոն վնասուց հատուցում վճարելու պայմանագիրը: Առա-

ւել, անկախ այս բոլորին, 122 միլիոն կը վճարուեր՝ բժշկական փորձառկութեանց Եւթարկուածներու պարագաներուն եւ 57 միլիոն՝ ՄԱԿ-ի գաղթականներու իրաւաց յանձնաժողովին: Իսկ 1990-ին Արեւելեան Գերմանիան հրեական համաշխարհային քոնկրետին կը նուիրեր 100 միլիոն ՏՄ:

Գերմանիոյ Խրայելին յատկացուցած վնասուց հատուցման ընդհանուր

գումարը կը հասնի՝ 103 միլիառ ՏՄ-ի, անկախ Եւրոպական այլ պետութիւններու վճարած վնասուց հատուցումներին: Վերանորոգութիւններու Դաշնակցային Օրենքի հիման վրայ, որուն գումարը կը հասնի 977 միլիոն ՏՄ⁽¹⁾:

Չուգահե՞ռը մեր վնասներու արժեւորումին եւ հատուցման պահանջագրին՝ Ժիտում եւ գերո հատուցում:

Ո՞վ պիտի կատարէ հաշուարկը մեր պահանջներուն եւ ինչզ՞ և տակաւին հարիւր տարի Ետք կ'ուշանայ: Յիրաւի, կատարուած՝ Եցարդ արժեւորումը մեր կորուստներուն՝ մշակութային, տնտեսական, արուեստի եւ կալուածներու: Յայաստանի Յանրապետութիւնը պիտի որդեգրէ որպես ի՞ն դատը եւ հատուցման պահանջը ներկայացնէ միջազգային ատեան: Եւ կամ ե՞ որ սփիւրքի հայ դատի յանձնախումբերն ու Յայաստանի հանրապետութեան իրաւական մարմինները հաւաքան մէկ կազմի մէջ պիտի միաձուլեն ճիգերը եւ որպես մէկ ամբողջութիւն, մէկ ազգ եւ մէկ դատ համակարգուած ու ամբողջական կերպով ներկայացնեն հարցը միջազգային ատեան:

Թուրքը ոչ միայն յամաօրէն կը շարունակէ Ժիտել Յայոց ցեղասպանութիւնը, այլեւ հայատեացութիւնը յատուկ կերպով կը դասաւանդէ իր դպրոցներէն ներս եւ տարին աւելի քան 10-15 միլիոն պատանիներ, 14-16 տարեկան այդ թոյնը կ'ամբարեն իրենց հոգիներուն մէջ, որպես գիտութիւն, ճիշդ այս-

պես ինչպես թուաբանութիւն կամ այլ գիտութիւններ կը սորվին: Չարմանալի չէ ուրեմն, թէ տարուե տարի թուրքը աւելի մոլեզնօրէն կը թրքանայ ու կ'ատէ հայը ու կը մերժէ Հայոց ցեղասպանութիւնը: Իսկ վերջերս տևական ծաւալողական հեռանկարներով եւ Օսմանեան կայսրութեան **նութալիթեն** տարուած՝ Թուրքիան օրէ օր աւելի կը թափանցէ Միջին Արեւելեան քաղաքականօրէն երերուն երկիրներէն ներս, իբրեւ իրաւարար կամ միջնորդ հաշտութեան: Տևական ու մշակութային համաձայնագիրներու միջոցով հետզհետէ ինքինք կը տեղաւորէ միջին արեւելեան երկիրներու մէջ, մանաւանդ հոն ուր հայութեան ձայն ու ներկայութիւնը ինչեղ է, չեզոքացնելու համար առաջին հերթին, սփիւրքի հայութեան կարողականութիւնը:

Պահանջատիրութեան թղթածրարը Հայ դատի յանձնախումբեր եւ մարմիններ պէտք էր ցարդ հաշուարկած, ցուցակագրած, բանաձեւուած եւ պաշտօնական թղթածրարի վերածած ըլլային: Նախաձեռնութիւնը դարձեալ կու գայ Անթիլիասէն, Մեծի Տան Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա.-Էն իբրեւ իրաւատեր սփիւրքի հայութեան եւ օրինաւոր ժառանգորդը արեւելեան Հայաստանի կորսուած վանքերուն, Եկեղեցիներուն ու Եկեղեցապատկան կալուածներուն: Ան խիզախութիւնը կ'ունենայ նախաձեռնելու իր տեսակին մէջ անսախընթաց միջազգային համագումար մը, ուր միջազգային իրաւաբաններ, իրաւագետներ եւ դատախազեր կու գան ուսումնասիրելու Հայոց ցեղասպանութեան իրաւական հետեւանքները: Այս նախաձեռնութիւնը առնուազն սկիզբ մը կը դնէ Հայ դատ կոչուած եզրին, առնուազն գիտնալու համար թէ միջազգային ատեանի ո՞ր դուռը պիտի զարնել, ՄԱԿ-ի ո՞ր յանձնաժողովին, ո՞ր օրէնքի, ո՞ր յօդուածի համաձայն պաշտօնական հայց պիտի ներկայացնել: Վերը



եր կ'ըսէինք թէ հայոց պատմութեան բաւարար գիտութիւն չունինք, ահա այստե՛ղ կ'արտացոլայ մեր սսանկութիւնը կամ վիժումը շատ յստակ պատճառով՝ պահանջելու համար իրաւունք մը, պէտք է զայն լաւ, շատ լաւ ճանչնալ, իսկ մենք պատմութիւնը սորվեցանք իբրեւ հեքիաթ լոկ եւ ոչ՝ գիտութիւն, եւ հարիւրամեակի սեմին որքան խեղճ է մեր պաշարը, գիտութիւնը միջազգային իրաւագիտութեան եւ անոր հասնելու միջոցներուն մասին: Տակաւին չունինք ամբողջական թղթածրարը, ցուցակը մեր պահանջները բանաձեւող: Մի ըսէք թէ նման աղետ մը վերապրած ժողովուրդը ո՞չ միջոցը, ո՞չ ժամանակը եւ ո՞չ հոգեկան կորովը կ'ունենայ երկար ու դժուարին դատական հայցի մը ընթացքին մէջ մտնելու, տասնամեակներու ընթացքին կարելի եր շատ բան իրագործել՝ եթէ չըլլային մեզ պառակտող եւ սպառող ներքին սին ու փուճ վէճերը: Այսօր եւս վէճը թէ ո՞վ է պաշտօնական իրաւատերն ու պահանջատերը Հայ դատին՝ սփիւրքը՝ թէ Հայաստանի Հանրապետութիւնը, նոր սկիզբ մը կը դնէ մեր անսերդաշնակ եւ հատուածական մտայնութեան: Կրնայ քանի մը տասնամեակ եւս այս թեման մեզ սպառել, նկատի ունենալով որ Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանի նշանաբանը տակաւին չէ որդեգրած Հայաստանի Հանրապետութիւնը:

Առանց կիզակետելու ազգային գաղափարախօսութիւնը ազգային նպատակներու



շուրջ եւ առանց համաձուլելու ճիգերը Հայաստան եւ սփիւքը կը նպաստեն միայն ու միայն թուրքին շահերուն:

Եթե նկատի ունենանք նախքան 1915-ի ժամանակաշրջանը, երբ գոյութիւն չուներ այսօրուան հասկացողութեամբ սփիւքը, բայց գոյութիւն ուներ Հայաստանը, կը նշանակէ մեկ եր հայութիւնը եւ մեկ եր Հայաստանը, աղեսն եր որ բաժնեց մեզ: Ինչո՞ւ այդ աղետին սրբագրութիւնը եւ վերականգնումի ճանապարհը մեզ իրարմէ բաժնող կարմիր գիծը պիտի ըլլայ այսօր, եւ ոչ թէ մեզ աւելի ամրօրէն միացնող համազգային վլէժի ուխտը, խարսխուած մեր անշիրիմ պապերու արեան կանչին վրայ: Երբ նախընթաց մը գոյութիւն ունի, հրեական ողջակիզման հատուցման եղանակը, որ Եւրոպայի տարածքին հալածուած ու սպանուած հրեաներուն հատուցում կը շնորհեր եւ նորաստեղծ իսրայէլեան պետութիւնը կ'ըլլար օրինական պահանջատերը Գերմանիոյ եւ Եւրոպայի մէջ հալածուած հրեաներուն, ի՞նչը կ'արգիլէ մեր հանրապետութեան նման պահանջատիրութիւն մը բանաձեւելու: «Գործնական եւ իրապաշտ քաղաքականութի՞ւնը», որ կը պարպէ հայրենիքը իր ժողովուրդին եւ կը մաշին ազգային արժեքներն ու բարոյական սկզբունքները: Պիտի գիտակցի՞ն ի վերջոյ, որ ազգը եւ ազգութիւնը առեւտրական ձեռնարկութիւններ կամ ընկերոյին բարեկարգումներ չեն, այլ կը բխին մեր ժողովուրդի ծագումն ի վեր հարցուած ու բիւրեղացած ժառանգութենեն,

զոր կը բաժնենք միասին ու միասնաբար պարտաւոր ենք գուրգուրալու անոր վրայ, աւելի եւս հարստացնելու ու պահելու զայն ի գին ամեն զոհողութեան: Համազգային տեսչերն ու երազանքները կը յառնեն մեր պատմութեան եղեռնականորէն դաժան փորձանքներէն, եւ սերունդները իրենց պապերու պայծառ ոգիով արբեցած ու վահանուած անոր կրակով կ'ուխտեն

կերտել տեսիլը նահատակներուն ու իրականացնել ազգային իտեալները խարցսխուած հայ ոգիի անխորտակելի կրանիթեայ կամքին վրայ:

Ան կու գայ առասպելական Հայկի խիզախումեն,

Աւարայրի հերոսական զոհաբերումեն,
Մեր քանդուած Եկեղեցիներու զմբեթներէն
Մեր պապերու անբաղադրելի աճիւններէն,

Հայու անընկճելի կորովէն:

Հարիւրամեակը՝ համազգային տեսչերու համագումար, հանդէս մեր ժողովուրդի ահաւոր կոտորածին եւ նոր սկիզբ ազգային գիտակցութեան, մեր սրբազն երազի ճանապարհին անխափան եղթ, եւ դեռ՝

Անխորտակելի ու անժամանցելի պատգամ:

ՍԵՐԱ ՄԱՐԿՈՍԵԱՆ-ԽՏԸՉԵԱՆ

1.- Dinah L.Shelton, Genocide and Crime Against Humanity, 2005, Gale Cengage

«ՑՈՐՉԱՓ ՀԱՅ ԱԶԳԸ ԿԱՅ ԻՐ ՊԱՀԱՋՈՒՄՆԵՐՆ ԱԼ ՊԻՏԻ ՄՆԱՆ ԵՒ ՕՐ ԱՒՈՒՐ ԱՒԵԼԻ ԵՒՍ ՊԻՏԻ ԾԱՆՐԱՆԱՆ»

ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱԴ

Վարիլ է, փորձում եմ կրկին սեւեռուել մեր ազգի ողջ եռթիւնն ու ճակատագիրը խաթարած մեծ եղեռնագործութեան վրայ, կրկին խորանալ նրա դժոխային ծալքերի մէջ, հասկանալու թէ ինչո՞ւ 97 տարիներ ի վեր դեռ չենք կարողանում ազգովին միաւորուել մեր պահանջատիրութիւնը ազգային, պետական մտածորութիւն ու ծրագիր դարձնելու:

Մեր անկարողութեան ազդակները ոչ միայն արտաքին աշխարհից ե գալիս, ինչպէս սովոր ենք միշտ պաշտպանուել գոյութիւն ունեցող այդ արգելվելորով, այլ կարծում եմ ազգային հոգեբանութեան արգասիք ե:

Շուտով հարիւր տարին է բոլորելու մեր դէմ գործադրուած Ֆեղասպանութիւն, իսկ մենք դեռ շարունակում ենք սերունդներ կրթել առանց պահանջատիրութեան, դեռ մեզնից ամայացած մեր հողերի վրայ միայն եկեղեցիներ ու մատուռներ ենք փնտռում ու բաւարարում միայն նրանց շնչահեղձ, փլատակ գոյութեամբ, կարծես միայն ուխտատեղի են եղել մեզնից դատարկուած, մեր արիւնով ներկուած մեր բնակավայրերը, մեր դարաւոր տարածքներում չենք ապրել, այլ միայն որպէս աղօթավայր օգտագործել: Կարծես ոչ մեկ կենսագորութիւն է կերտուել,



ապրուել, կեանք առել այդ հողերում: Միթե՞ մեր յաջորդ սերունդներին ոչինչ ունենք կտակելիք, միթե՞ նրանք ել միայն վանք ու մատուռի մի չնչին մասի վերադարձով են գոհանալու եւ մեզ պէս մեր ազգային իրաւունք-պահանջը շարունակելու են տեսնել օտար տերութիւնների ողորմածութեան մէջ: Շարունակելու ենք մեզնից պահանջուող գործը փոխադրել նրանց ուսերին եւ ազգովին սեւեռուել միայն նրանց գործունեութեան վրայ: Միթե՞ հայի համար հայրենի դարաւոր հողը այդքանով է սահմանափակւում: Ե՞րբ ենք խօսելու մեր հողերի գոյների ու երանգների մասին, այստեղ սկիզբ առած կեանքերի մասին, որոնք դեռ ապրում են մեր մէջ, սնում են մեզ ու ստիպում են, որ չոգնենք մեր պայքարից, որ տէր դառնանք մեզնից խլուածին:

Մենք այս օրերին առաջինը կենտրոնանում ենք այդ վայրոագ եղեռնագործութեանը զոհ դարձած մեր մտաւորականների եղերական յօշոտման վրայ, որը այս ձգուած 97 տարիների ընթացքում դարձրել ենք մեր ժողովրդի արեւմտահայ հատուածի բնաշնչումը վառ պահող, մեր միլիոնաւոր զոհերի յիշատակը դեպի մեր պահանջատիրութիւնը մղող երբեք չմարող ջահ:

Ի՞նչ ենք յուշում, ի՞նչ ենք տեսնում նրանց



կացևահարուած, քարերով շախշախուած կեանքերի ըլդիհատման մէջ: Փնտռո՞ւմ ենք արդեօք այս հարցերի պատասխանը, որն այսօր դրուած է նաեւ մեր առջեւ: Փորձո՞ւմ ենք պատռել մեր հոգիներում արմատացած օտարավստահութիւնը եւ մեր ճակատագրի տևորինութիւնը մեր ձեռքը վերցնել: Չե՞նք կրկնում արդեօք այս սխալները, որոնց համար մինչեւ օրս մեղադրում ենք մեր ազգային գործիչներին թուրքի հանդեպ ունեցած նրանց հաւատի համար:

Իմ այս գրութեամբ, ուզում եմ կրկին անդրադառնալ ամենավայրագ միջոցով, կեանքից զրկուած հայապաշտ մէկ հայի կենսագրութեան մի քանի կարեւոր յիշատակումով, սթափեցնելու համար ոչ միայն այս մարդկանց, որոնք մեր դէմ գործուած եղեռնագործութեան մեջաւորութիւնը դեռ շարունակում են մեր մէջ փնտռել, ովքեր դեռ շանք չեն խնայում ոտևատակ տալով մեր իրաւունքները բարեկամանալ թուրքերի հետ:

Այս տարի մեր միլիոնաւոր զոհերի հետ լրանում է նաեւ Գ. Զօհրապի յօշուման 97-րդ տարին:

Ազգեալ տարի լրացաւ իր ծննդեան 150 տարին: Ստեղծագործող, որը մտաւ մեր պատմութեան մէջ որպէս Նորավեպի իշխան, որպէս երբեք դատ չկորցրած փաստաբան, որպէս ճարտար հետոր, որպէս ազդեցիկ երեսփոխան թուրք խորհրդարանում, որպէս իր ժողովրդին անսակարգ ծառայող, իր ժողովրդի ողբերգութիւնը կիսած հայ: Բայց ցաւալին այն է, որ մենք աւելի շատ նշում ենք ոչ թէ նրա ծննդեան, այլ ողբերգական մահը, որ-

պէս նուեր թուրք նենգ կառավարութիւնից, որի յաջողութեան համար այսքան աշխատանք ու եռանդ էր ներդրել նա:

Մինչեւ օրս շատերի համար անհականալի է այս մեծ հայասէրի գործունեութեան եւ հաւատամքի մանրամասները, անյայտ է նաեւ նրա անսակարգ նուիրուածութիւնը իր ազգին ու նրա հարցերին:

Այսօր միասին թերթենք նրա կենսագրութեան այն կարեւոր էջերը, որոնք աւելի մօտ են մեր այսօրուան իրավիճակներին:

1914 թ. օգոստոս 3-ին Բրիստորում, վարձած իր ամարանցում Գ. Զօհրապը հանդիպում է իր Վերջին տարիների մտերիմ ընկերներից յեղափոխականներ՝ Արմեն Գարոյի եւ Վարդգես Սերենկիլեասի հետ: Յիշեցնեմ, որ Թուրքիան դեռ պաշտօնապէս չէր յայտարարել իր Մուտքը պատերազմի մէջ եւ ժողովուրդ անտեղեակ էր, որ այդ ընթացքում թուրքերը գաղտնի բանակցում էին գերմանացիների հետ պատերազմի մէջ մտնելու համար: Այդ երեկոյ Զօհրապի եւ իր ընկերների խօսակցութեան իիմնական հարցն էր՝ «Եթէ Թուրքիան պատերազմի մէջ մտնայ, հայոց վիճակը պատերազմի միջոցին ի՞նչ պիտի ըլլայ»: Երեքով հարցարան էին կազմել եւ իւրաքանչիւրը իր կանխատեսումն էր գրել: Ըստ Արմեն Գարոյի «Պատերազմ պիտի ըլլայ, բայց շարդ չի պիտի ըլլայ»: Վարդգեսի ենթադրութեամբ՝ «Թուրք եւ ռուս պատերազմ չի պիտի ըլլայ եւ ոչ ալ ջարդ»: Իսկ Զօհրապը գրել է՝ «Սահմանագլխին կողմ Ռուսիոյ կողմը պիտի անցնին, միւս մասերուն մէջ մասնակի շարդերու եւ թալաններու պիտի ենթարկուին»: Յեղափոխական զոյց գործիչների յաւատեսութիւնը եւ գործող իշխանութեան խորհըրդարանի ամենաազդեցիկ անդամի՝ Զօհրապի, անեղեակութիւնը օրուայ եւ ծրագրուող ու հետագայում գործադրուող իրադարձութիւնների հանդեպ, այսօրուան չափանիշով դատելու դեպքում զարմացնում է մեզ, որը եւ մինչեւ օրս յանգեցնում է տարբեր վերլուծութետեւութիւնների, անսպառ քննադատութիւնների, նոյնիսկ լուրջ մեղադրանքների: Բայց այդ օրերի իրավիճակում քննելիս, գա-

լիս հաստատում է, թէ թուրքերը որքան գաղտնի են գործել:

Զօհրապի 1914 թ. դեկտեմբեր 4/17 գրառումներից մեկը այդ է հաստատում՝ «ճաւիտ պէյ, առաջին անգամ ըլլալով, ըսաւ մեզի, որ եւրոպական պատերազմին յայտարարութենքն քիչ ետք թուրք դակիճը յանձն առած է մասնակցելու պատերազմին յօգուտ Գերմանիոյ: Այս յանձնառումը կատարուած, լմսցած էր առանց դակիճին (խորհրդարանի) բոլոր անդամներուն գիտութեանը: Սկիզբէն ի վեր քրիստոնեայ նախարարներուն այսպէս կարեւոր խնդիրներու մասին ունէ տեղեկութիւն չէր հաղորդուեր, բայց այս անգամ իսլամ նախարարներէն շատերէն ալ գաղտնի պահուած են»: Զօհրապն իր մեկ նախադասութեամբ արդէն բնութագրում է հայ երեսփոխանների կացութիւնը թուրք խորհրդարանում:

Ծուտով, իրավիճակների եւ երիտթուրքերի վերաբերմունքի կտրուկ փոփոխման հետ, այս երեք հայ գործիչների դիւրահաւատութիւնն էլ շարդ ու փշուր է լինում: Ա. Գարօն աշնանը մեկնում է Կովկաս ու դառնում կամաւորական շարժման դեկավարներից: Իսկ Վարդգէն ու Զօհրապը դառնում են իրենց դիւրահաւատութեան զոհը:

«Ո՞ւր փախիմ, որո՞ւ թողում սա անտեր ու անգլուխ ժողովուրդը: Պարտքս է մինչեւ վերը պատնեշին վրայ կենալ»:

Այսպէս է պատասխանել Զօհրապը պոլսահայ մեծահարուստ Մարթէն Յակոբեանին, ապրիլեան ծերբակալութիւնների սկսուած օրերին, մերժելով նրա առաջարկած գումարը Պոլսէն փախչելու համար:

Արդեօք այս հաւա՞տն էր նրան ստիպել, որ տեսնելով հանդերձ իր շուրջ կատարուող մասսայական ծերբակալութիւններն ու լսելով Պոլսից դուրս կատարուող շարդերի, տեղահանութիւնների, աքսորի մասին, նա դեռ շարունակում էր Պոլսում մնալ, խորհուրդ տալով իրաժարական ցանկացող պատրիարքին, որ «Վհատելու, վախնալու չէ: Ամէն մարդ իր պարտականութեան գլուխ պէտք է գտնուի»: (ԻԴ, թ. 5, 68):

Ի՞նչն էր Զօհրապին ստիպում հաւատալ, որ իրենք, այսինքն ազգային հարցեր լուծողները, կարող էին այս անգամ էլ իրենց ժողովրդին օգնել: Ինչո՞ւ էին համոզուած, որ իրենց հաւատարմութիւնը թուրքերին հաստատելով կարող են փոխել նրանց թշնամական տրամադրուածութիւնը: Յայերի կողմից ուղարկուող անվերջանալի աղերսագրերը Բարձր Դուռ դա են հաստատում: Դա հաստատում է նաեւ, թէ որքան ծանր է եղել նաեւ պատրիարքի գործունեութիւնը:

Իսկ այսօր նոյն հոդի վրայ գործող մեր սրբազնը մեկ այլ թուրք պաշտօնեայ՝ Տաւութօղլուկին ասում է՝ «Օսմանան շրջանին շատ երջանիկ էինք»: («Ասպարէզ», 6 մարտ, 2012):

Մինչեւ օրս մեր ժողովրդի մի տգետ մասսա, Զօհրապին մեղադրում են դաւաճանութեան մէջ, որ նա թուրք խորհրդարանի մէջ լինելով հանդերձ, չի կասեցել հայերի շարդերի երիտթուրքերի ծրագիրը:

97 տարի է անցել մեր ժողովրդին ոչնչացրած ահաւոր աղետից եւ մենք դեռ չենք կարողանում ազգովին զմբունել մեր բնաշնչման հիմնական պատճառը: Դեռ շարունակում ենք մեղքը մեջ փնտռել, մեր անգլուիս ազգի առաջնորդներին՝ կուսակցութիւններին, մեր երեւելի մտաւորականներին ու քաղաքական գործիչներին մեղադրել, որոնք իրենց կեանքով վճարեցին անուանի լինելու, ազգին օգնելու համար:

Թեւե այսօր մենք անհամեմատելի շատ փաստագրական իրատարակութիւններ ունենք թուրքերի մեր դեմ ծրագրած Ցեղասպանութեան գլուխ պէտք է գտնուի»:





Նութիւնը բացայատող, քան երբեւէ, բայց ինչպէս երեւում է դրանք աւելի շատ օտարներին այն ծանօթացնելն է, քան՝ մեր ժողովրդոյին կրթելը: Մեր անտարբեր, մակերեսային, ծոյլ մօտեցումը մեր պատմութեան ամբողջական, խորը ընկալման, մինչեւ իսկ մեր պահանջատիրութեան, այդ են հաստատում:

Բայց շարունակենք թերթել Զօհրապի Խօթագորութիւնները, տեսնելու թէ նա ինչպէս է ընդունել, վերլուծել կատարուող իրադարձութիւնները, ի՞նչ մասնակցութիւն է ունեցել այդ օրերի քաղաքական իրադարձութիւնների մէջ եւ որքանո՞վ ինքը կարող էր օգնել իր ժողովրդին: ՉԵ՞ որ վերը յիշուած հատուածում ինքն էլ հաւատացել է, որ կարող է օգտակար լինել իր ազգին:

Իր օրագիր գրառումները ընդգրկում են 1912-1915 թթ. արեւմտահայութեան անհանգիստ, վտանգներով լեցուն կեանքի վերջին շրջանը, որոնք երբեմ գրուած են հոգեկան տագանապի պահին, յաճախ շուտափոյթ գրառումներ են, հաւասարար աւելի ուշ դրանց մանրամասն անդրադարձնալու համար, ուր բաւական տեղեկութիւններ կան ոչ միայն այդ օրերի իրադարձութիւնների զարգացման, այլ նաև՝ հայութեան մտածումի, դէպքերի ընկալման մասին: Յատկապէս հայկական բարենորդումներին եւ Արաշին աշխարհամարտին վերաբերող, որոնք դարձան պարարտ հող մեր քնաջնջման համար:

Զօհրապի այս տեղեկութիւնները անգնահատելի են, ոչ միայն ճգորիտ վկայագրութեամբ, քանի որ այն միակ փաստագրութիւնն է, որ գրուած է օրը-օրին, այսինքն դէպ-

քերի շարժման, առաջացման վիճակի մէջ, իրադարձութիւնների մասնակցի, գործող անձի կողմից, եւ ոչ թէ դիտողի, կամ ուրիշների պատմածների հիման վրայ: Եւ միակն է, որ գրուած է անմիջապէս, ոչ թէ աւելի ուշ, յիշողութեան վրայ յենուած, ինչպէս այդ ժամանակաշրջանն ու դէպքերը ներկայացնող միւս ականատեսների պահպանուած յուշագրութիւններն են: Իր այդ գրութիւններում ամբողջովին բացայատում է ոչ միայն դէպքերի զարգացումը, այլեւ՝ ազգանուեր, ազգի ցաւերով

ու նրա ճակատագրով տառապող մարդը, գործը, անխոնջ պահանջատերը եւ դիւրահաւատ հայը:

Զօհրապն էլ, ողջ արեւմտահայութեան պէս, համիտեան հայացինչ քաղաքականութիւնից շնչահեղձ եղած, օսմանեան սահմանադրութիւնից էր սպասում հայերի վիճակի բարելաւումը, հայկական հարցի լուծումը: Այդ հաւատով էլ Սահմանադրութեան հաստատումից յետոյ Փարիզից ետ է վերադառնում Պոլիս: Տեսնելով հանդերձ, որ հայերի հանդեպ բռնութիւններն ու անօրինութիւնները դեռ նոյն ձեւով շարունակուում են, ազգը ուրիշ ոչ մէկ այլ պաշտպան ունի իր իսկ հողերի վրայ, իր իրաւունքները ամբողջովին կորցնում է, նա դեռ յորդորում էր հայութեան՝ ժամանակ տալ, համբերել, վստահել երիտրութերին, իրապէս հաւատալով, որ յեղաշրջումը փոխելու է թուրքերի վերաբերմունքը հայերի հանդեպ: Ահա թէ ինչու, նոյնիսկ Ատանայի շարոյից յետոյ նա խորհուրդ էր տալիս՝ «սրտերնուս սուզը եւ կսկիծը պահելով հանդերձ, ամեն ժամանակէ աւելի փարիլ օսմանեան սահմանադրութեան...» (Յ. Թերզեան, Կ.Ա. 1912):

Թէեւ իր այս մօտեցումը շատերի համար սխալ մեկնաբանութիւնների առիթ է դարձել, նրան համարել են մինչեւ իսկ երիտրութերի գործակից, բայց իրականութիւնն այն է, որ նա հանդարտեցնելով հանդերձ շուտարած, իրարանցումի մատնուած ժողովրդին, միաժամանակ խիստ անսքող բողոքներ է ներկայացրել իր մասնակի հանդիպումներում վարչապետներ քեամիլ ու Յիլսի փաշաներին,

Ներքին գործոց նախարար Թալեաթին, Ազգային ժողովի նիստերին: Իր տասնեակ բողոք տեղեկագրերը այդ են հաստատում, իսկ ամենանշանաւորը նոր վարչապետ Ռ. Ս. Սայհին փաշային գրած բողոքագիրն է, ուր շեշտում է, որ «ամենեւին էլ պատահականութեան եւ անփութութեան հետեւանք չէ հայերու հանդեպ գործադրուող ճնշումները, այլ պետութեան կողմէ որոշուած քաղաքականութեան փաստ»:

Այս բողոքագիրը միայն կառավարութեան շրջանակում չի մնացել, այս 1911 թ. տպագրուել է Պոլսոյ «Ազատամարտ» օրաթերթում, դեկտեմբեր 21:

Ուրեմն, շատերի նման Զօհրապն էլ գիտեր թուրքերի քաղաքական մեծ նպատակը՝ համաօսմանացումը: Բայց եւ միաժամանակ վստահում էր երիտթուրքերին, քանի որ նրանք դժգոհ լինելով Յամինի բռնակալ իշխանութիւնից յեղաշխում էին արել: Յայերը երիտթուրքերի այդ քայլը ընդունել էին անսակարկ վստահութեամբ, հաւատալով, որ նրանք էլ իրապես ծգտում են քաղաքակիրթ պետութիւն ստեղծել, ուր հայը ըստ նրանց տուած խոստումների կարող է ապահով կեանք վարել, անտեսելով, որ թուրքը քաղաքական իր ծրագրուած շահերով գործող տիրապետութիւն է: Բայց պետականութեան մտածողութիւնից զուրկ հայը ի՞նչպես թափանցեր, ի՞նչպես կոահեր նրանց ծրագիրը: Բնականաբար հաւատալով երիտթուրքերի երկիրը իրապես փոխելու խոստումներին, Զօհրապն էլ փորձում էր նրանց ուշադրութեան ներկայացնել այս բոլոր խեղաթիւրուած երեւոյթները, յատկապես հայերի հանդեպ, որով դեռ դեկավարուում էր երկիրը: Նա մերկացնում էր մինչեւ իսկ խորհրդարանում տիրող ազգային խորականութիւնը, ուր հայ պատգամաւորների վիճակը ոչ միայն չէր կարելի բաղդատել թուրք պատգամաւորների հետ, այլ անհամեմատելի էր նոյնիսկ փոքրամասնութեան միւս անդամների հետ: Պոլկար պատգամաւոր «Բաւկոֆը վստահ է, անդին Պոլկարիա մը կայ, Պուշոն կը մտածէ, թէ իր պաշտպանած դատին կը հետեւի

Երոպա մը, որ հելլենասէր է ու Յունաստան մը ունի իր ետին, իսկ Զօհրապ Յայաստանի ետեւը կը տեսնէ... ոչ ոք, ընդհակառակը կը տեսնէ ինու քիւրտերը ու չի կրնար մոռնալ կոտորածը, որ Կիլիկիա արիւնլուայ ըրաւ»:

Այսպէս, իրաքանչիւր առիթով նա քննադատում եւ պաշտպանում էր բոլորի ուշադրութիւնից լքուած, թուրքերի ողորմածութեանը յանձնուած իր ժողովովի շահերը:

Վ. Փափազեանի յուշագրում կարդում ենք թէ ինչպիսի՝ բուռն վեճեր եր ունենում Զօհրապ, իր խօսքերով՝ «**ատամ-ատամի եկած եր իթիհասի հետ**»: (Անդ. 1934 թ.):

Պատերազմի սկիզբին իրավիճակները գահավէծ փոխուում են եւ շուտով Զօհրապն էլ ող հայութեան հետ ամբողջովին հիասթափուում է սահմանադրութիւնից եւ այս գործադրող իշխանութիւնից՝ երիտթուրքերից: Նա տեսնում էր, որ հայի վիճակը ոչ միայն չի բարելաւում, այլ նոր հալածանքների է ենթարկըւում եւ քնականաբար, քանի որ ամբողջովին նուիրուած էր իր ազգի իրաւունքները պաշտպանելու գործին, նրան փրկելու ճանապարհներ եր փնտուում:

Փորձում է Յայկական հարցը միջազգային լուսարձակի տակ դնել եւ այդ միտումով 1913 թ. Փարիզում, Մարտել Լեար կեղծանուամբ, հրատարակում է «Յայկական հարցը վաւրագրերի լոյսի տակ», «Սեբաստիայի նահանգը եւ հայերի դրութիւնը» ֆրանսերէն աշխատութիւնները:

Յոյսը ամբողջովին թուրքից կտրելով, տեսնելով, որ այլեւս թուրքից ոչինչ կարելի է սպասել, նա սկսում է իրավիճակները տես-



Նել այսպէս, ինչպէս այսօր մենք ենք տեսնում՝ օտար երկրների պաշտպանութեան մէջ: Այսինքն՝ իր ազգի հարցերը լուծող մի հզօր երկրի թիկունք, որը հակազդէր Թուրքիայի վրայ, նեցուկ կանգներ, պաշտպանէր արեւմտահայութեանը եւ նրա շահերը: Այդ ուժը նա տեսնում էր Ռուսաստանի մէջ: 1914թ. իր գրառումներից մէկում նշում է թէ ինչու է ապահնում ռուսներին: «Ռուսիա մեզի դաւելու պէտք չունի: Իր շահերը մեր համեստ շահերուն եւ իրաւունքներուն հետ անհամաձայն չեն»: Այս հաւատն է նրան մղում իր անխոչ մասնակցութիւնը բերելու հայկական բարենորոգումների ծրագրի իրագործմանը, որը եւ շատերի Վերլուծմամբ դարձաւ մեր կոտորածի պատճառը:

«Կրնայ պատահիլ, որ այսօր հայկական բարենորոգմանց դատը բոլորովին լքուի ամեն պետութիւններէն: Կը հարցնեմ, ասիկա յաջողութի՞ն մըն է թուրքաց համար: Բնաւ, վասնզի ցորչափ հայ ազգը կայ, իր բարենորոգմանց հարցն ալ գոյութիւն պիտի ունենայ, իր պահանջումներն ալ պիտի մնան եւ օր աւուր աւելի եւս ծանրանան»: (Դեկտեմբեր 7/20 գր.):

Իր այս տողերը հաստատում են, որ Զօհրապը չվստահելով երիտթուրքերին, չվստահելով, որ օտար տերութիւնները կը լուծեն իրենց հարցերը, երբեք չի կասկածել, որ թուրքը կարող է իրենց վերջնականապէս շնչել, տիրանալ իրենց հողերին:

Համիտեան շարդերն ու բռնութիւնները կարծես բթացրել եին մեր ժողովրդի ներքին պաշտպանութեան բնագդը, որը մարդուն

դարձնում է ոչ միայն զգօն, այլ ջնջում է իր միջից որեւէ մեկին վստահելու, հաւատալու զգայնութիւնը: Հայը կորցրել էր իր այդ զգայնութիւնը: Այդ են հաստատում Զօհրապի ոչ միայն ապրիլեան ձերբակալութիւններին վերաբերող գրառումները, այլ նաև՝ աքսորից իր գրած խնդրագիր նամակները թուրք պաշտոնեայ անձերին:

Ոհա թէ ինչու ապրիլեան ձերբակալութիւնների ամենաթեժ օրերին նա դեռ կարծում էր, որ համիտեան ոճն է օգտագործուում, որ կրկին մի քանի հարիւր հազար հայերի ոչընչացումով երիտթուրքերը առ ժամանակ կը հանգստանան, հայերին «խելքի» կը բերեն, որ որեւէ անհինազանդութիւն չգործեն: «Պատահեցաւ ինչ որ պիտի պատահեր. երեկ գիշեր ոստիկանութիւնը շատ մը ձերբակալութիւններ ըրաւ հայերէն. բոլոր գլխաւոր դաշնակցականները... յետոյ շատ մը բժիշկներ եւ դեղագործներ (ով գիտէ ի՞նչ պատճառով): Դաւադրութի՞ն, անհիմն վախ: Զգուշութի՞ն կամ հակահարուած այլուր պատահած դեպքու: Զիշ ատենէն պիտի իմանանք: Ես, ահա ազատ դեռ, իրօք այս ձերբակալուածներուն գլուխը կը գտնուիմ եւ գիտեմ, թէ ինչ պատճառաւ ինծի խնայած են»), գրել է Զօհրապը իր օրագրում (Ապրիլ 12/25): Իսկ մեկ օր անց աւելացրել է՝ «Ո՞ր օրին վերապահած է հայոց շարդը»:

Օրական տասնեակներով ձերբակալուողների պարագան անզամ չի աղթսացնում հայութեան, որ դա իրենց վերջն է: Մի քանի օր յետոյ Կարսոյ երեսփոխան Յովսէփ Սատաթեանին հեռախօսով ասել է՝ «Համրգած են ժամերս»: (Զ. 215):

Իմանալով հանդերձ նա չի փորձէլ փրկուել: Ամօթ է զգացել մորթուող իր ժողովրդին լքել, պատասխանատու է զգացել կիսել նաեւ նրա ողբերգութիւնը, ինքն էլ արժանանալ միլիոնաւորների դաժան ճակատագրին:

Իսկ այսօր 97 տարիներ յետոյ էլ դեռ հայեր կան, որ մեղադրում են այս մեծ հայասերին իր ժողովրդին այսքան նուիրուած լինելու համար:

Ա. Ալպոյաճեանի յուշագրութիւ-



Նում կարդում ենք թէ ի՞նչպէս Զօհրապ իր հանգիստը կորցրած ստիպւած է եղել «Իր ճամբան սպասող տասնեակ կիներու եւ անձկալի ընտանիքներու օգնութեան պաղատանքները լսել», փորձել է օգնել բոլորին, որը եւ հարկադրել է նրան հայութեան դէմ կատարուող այդ սպանդի համար բացատրութիւն պահանջել իթթիհատի ընդի. քարտուղար Շիւքի պէյից եւ ներքին գործերի նախարար Թալէաթից: Եւ նրանց անտարբեր, հեզանկան կեցւածքը նրան ստիպել է իր վերջին մտածումը նետել նրանց դէմքին՝ «Օր մը, ապահով եղէք որ հաշիւ պիտի պահանջուի ձեզմէ եւ դուք չպիտի կարենաք արդարացնել ձեր արարքները»: (Ա. Ալպոյանեան 2. 215):

Սա նաեւ իր պատգամն է ապրոլներին, որը 97 տարիներ ի վեր փոխանցում ենք մեր սերունդներին եւ ականատես լինում, թէ ի՞նչպէս է թուրքը փորձում ուրանալ իր գործած ծրագրուած ոճիրը, թէ ի՞նչպէս են փորձում քողարկել, որ մեր ճորերն ու դաշտերը դարձրեցին մեր գերեզմանները, որ մի լուսաւոր, նշանաւոր Զօհրապի կեանքը գազանօրէն լավեց թուրք կառավարութիւնը, ողորմելի մարդասպանի ձեռքով, որը յետոյ պարծենալու էր իր ազգային ծիսերի գազանային յատկութիւնով՝ «Զօհրապը ձեռք անցուցի: Ոտքիս տակ առի, քարով մը գլուխը ճզմեցի, ճզմեցի, ճզմեցի, միևնէւ որ սատկեցաւ»: (2. 252):

Զօհրապը մէկն էր միայն այն միլիոնաւորներից, որոնք այս ձեռով եւ աւելի դաժան չարչարանքներով նահատակութեցին:

Միթէ՞ այս դէպքերի յիշատակումը ամեն տարի այս օրերին մեզ չի սթափեցնում, Միթէ՞ դեռ թուրքին վստահելու իրաւունք ունենք: Միթէ՞ կարող ենք դեռ մեր Արցախի համար զիջումներ ընդունել կամ նոյնիսկ մտածել:

Այս ամենը գալիս է մեր պետական ազգային իրաւունքների ծրագրի բացակայութիւնից:

Մեր նման մի երկիր, որը դեռ կիսուած, բաժանուած է տարածքներով, մտածելակերպով ու հոգեբանութեամբ այլեւս չի կարող առանց



ազգային կեցուածք ծրագրի գործել, չի կարող իր ազգային խնդիրները օտարների սեղանին կեր դարձնել:

Այստեղ ուզում եմ մէջբերել լեհ մի զինուորականի՝ Եղանակովսկու գրառումը, որը 1909-1918 եղել է Աւստրօ-հունգարական կայսրութեան կցորդը Պոլսում: «Սուլթանի յաջորդների կառավարութիւնը դեռ պատերազմից առաջ որոշել էր ամենամօտիկ հնարաւորութեան դեպքում ուղղել նախկին սուլթանների սխալները՝ օսմանեան կայսրութեան մացորդները ազատել նոր բաժանումներից»: (Խօսքը մեր հողային տարածքների մասին է): (Օսմանեան Կայսրութեան Փլուզումը, էջ 128թ.):

Տեսնո՞ւմ եք թէ որքան տարբեր է մեր եւ թուրքերի մօտեցումը երկիր ստեղծելու եւ պահելու ձգտումներում... Նրանք միևնէւ օրս ել շարունակում են սուլթանների սխալները ուղղել, նրանց կես թողածը լրացնել, վկան նաեւ այսօրուայ քիւրտերի դէմ գործադրուող ոչնչացումն է:

Բայց չէ՞ որ մենք դեռ պահանջներ ունենք իրենցից:

Մենք են ուզում ենք սուլթանի յաջորդների սխալները ուղղել՝ նրանց սեփականացրած մեր տարածքները ետ վերցնել:

ՄԱՐԻ ՈՈՉ ԱԲՈՒՍԵՖԵԱՆ



ՓԱՍՏԱՇՈՒՐ

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՀԱՆՁԱՏԻՐՈՒԹԻՒՆԸ ՆՈՐ ՀՈՐԻԶՈՆՆԵՐՈՒ ԴԻՄԱՑ

(Անթիլիասի մայրավանքին մեջ տեղի ունեցած

միշագգային համագումարին առիթով)

Մեծի Տան Կիլիկիոյ կաթողիկոսութեան Անթիլիասի մայրավանքին մեջ 23-26 փետրուար 2012-ին տեղի ունեցաւ միշագգային համագումար՝ «Հայոց ցեղասպանութիւնը՝ ճանաչումն հասուցում» թեմայով, Արամ Ա. կաթողիկոսի հովանաւորութեամբ ու Ներկայութեամբ: Համագումարին մասնակցեցան միշագգային օրէնքի երսուն օտար մասնագետներ՝ Եւրոպայի ու Հիւսիսային Ամերիկայի համալսարաններէն, միշագգային դատական առեաններու դատաւորներ, պետական երեսփոխաններ, Ֆեղասպանութեան ու 20-րդ դարու Օսմաննեան կայսրութեան պատմութեան ծանօթ անձեր եւ Հայ դատի մարմիններու ներ-

կայացուցիչներ:

Որդարեւ, եզակի նախաձեռնութիւն էր յիշեալ համագումարը: Եզակի՝ մասնակիցներուն ունեցած մասնագիտութեամբ, որակով ու փորձառութեամբ. Եզակի նաև՝ մեր պահանջատիրութիւնը միշագգային օրէնքի լոյսին տակ դիտելու ու արժեւորելու իր յստակ նպատակով: Ներկայացուած մասնագիտական գեկոյցներու ու քննարկումներու ճամբռվ համար առելու օրեր շարունակ համապարփակ հայեցակետով քննարկեց միշագգային օրէնքի տրամադրութիւնները ընդհանրապէս Հայոց ցեղասպանութեան ճանաչման ու մասնաւորաբար հատուցման գծով: Այս ծիրէն ներս նկատի առնուեցան





Մարդկային իրաւանց հռչակագիրը, Միացեալ ազգերու կազմակերպութեան որդեգրած ՅԵ-ԴԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ուխտագիրը, Մարդկային իրաւանց յանձնաժողովի որոշումները, ինչպէս նաեւ՝ ցեղասպանութեան ու հատուցման առնչուած ՄԱԿ-ի յարակից մարմիններուն յայտարարութիւններն ու որոշումները:

Անհրաժեշտ կը նկատենք քանի մը ընդգծումներ կատարել՝ ազգային պահանջատիրութեան նոր շեշտաւորում եւ աշխատանքներուն նոր հուսաւորում տալու հեռանկարով.-

Ա.- Անցնող տասնամեակներուն Հայ դատի մարմինները, քաղաքական կուսակցութիւնները ու մեր Եկեղեցին հսկայ աշխատանք կատարեցին հայ ժողովուրդին դեմ գործադրուած ցեղասպանութիւնը եւ մեր արդար իրաւունքները օտարներուն ծանօթացնելու իմաստով։ Քարոզչական այս աշխատանքները իրենց դրական արդիւնքը ունեցան եւ մեր ժողովուրդին դատը սկսաւ ծանօթ դառնալ օտար ազգերուն. Եւ աւելի՞ն, պետութիւններ ու կրօնական կազմակերպութիւններ սկսան պաշտօնապէս ճանչնալ մեր ժողովուրդին դատը։ Այս ուղղութեամբ Մեծի Տան Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը յատկանշական դեր կա-

տարեց միշեկեղեցական ու միշկրօնական իր լայնածաւալ գործունեութեամբ։ Յայաստանի վերանկախացումնեն ետք Յայաստանի պետութեան կողմէ Յայոց ցեղասպանութեան արծարծումը արտաքին քաղաքական ու դիւնագիտական յարաբերութիւններու ճամբով, նոր հուսաւորում տուալ մեր պահանջատիրութեան։ Յարդ կատարուած աշխատանքը առաւելաբար քարոզչական, քաղաքական ու դիւնագիտական բնոյթ ուներ. կը պակսէր իրաւական տարածքը։ Անթիլիասի մայրավանքին մեջ տեղի ունեցած համագումարին նպատակը փաստորն այս էր. մեր ժողովուրդին պահանջատիրութիւնը քննարկել, ուսումնասիրել ու հետապնդել իրաւական գետնի վրայ։

Բ.- Վեհափառ հայրապետը համագումարի ընթացքին կարեւոր հաստատում մը կատարեց՝ ըսելով. «Անհրաժեշտ է քարոզչական,

քաղաքական, դիւնագիտական եւ իրաւական տարածքներու միշեւ սերտ առնչութիւն ստեղծել եւ ներդաշնակում յառաջացնել, որովհետեւ անոնք զիրակամբողջացնեն ու կը գօրացնեն։ Ռազմավարական ու մարտավարա-





կան այս մօտեցումը կը նկատենք խիստ հրամայական, որ կ'ենթադրէ իրայատուկ մտածելակերպ ու գործելակերպ: Արդարեւ, իրարմէ անշատ ու հեռու աշխատանքներ պէտք չեն դառնան մեր իրաւունքներու հետապնդման առնչուած ծրագիրներն ու ճիգերը: Անոնք պէտք է երբեմն զլլան իրարու զուգահեռ, երբեմն պէտք է կատարուին միասնաբար՝ համաձայն պայմաններուն, սակայն միշտ ներդաշնակաբար: Նման գործելակերպ իր բարերար արդիւնքը պիտի ունենայ ազգային պահանջատիրութեան մեր աշխատանքներուն մէջ»:

Գ.- Նման գործընթաց բնականաբար կ'ենթադրէ դերերու յստակացում ու աշխատանքի բաժանում: Վեհափառ հայրապետը բազմից Անթիլիասի թէ Երեւանի մէջ, իր պատգամներուն ու գրութիւններուն մէջ շեշտած է ազգային պահանջատիրութեան աշխատանքներու բաշխում կատարելու անյետաձգելի անհը-բաժեշտութիւնը: Այսպէս, Հայաստանի պետութիւնը իր իրայատուկ դերը պէտք է ունենայ, սփիւռքը՝ իր իրայատուկ դերը, եկե-

ղեցին՝ իր իրայատուկ դերը: Յարկ է հեռու մնալ խաչաձեւումներ ու կրկնութիւններ: Դերերու տարբերութիւնները անհրաժեշտ են պահել, որովհետեւ անոնք զիրար կ'ամբողջացնեն: Անհրաժեշտ է սակայն հիմնական հարցերու շուրջ հաւաքական տեսակետներ ունենալ ու կեցուածքներ ճշդել: Յո՞ս կը կայանայ մեր դատին հզօրութիւնը: Չմոռնանք, որ մեր պահանջատիրութիւնը մէկ է եւ այդ մեկութիւնը պէտք է մեր բոլոր աշխատանքներուն մէջ կարեւորութեամբ շեշտուի: Չմոռնանք, որ վերջին շրջանին ցեղասպանը սկսած է օգտագործել ազգային պահանջատիրութեան գծով Յայաստանի եւ սփիւռքի միջեւ երբեմն երեւան եկող տարբեր շեշտաւորումները: Յարկ է զլլալ զգն'շ եւ արթուն:

Դ.- Փաստորէն ազգային պահանջատիրութեան մեր հաւաքական ըմբռնումը ու սահմանումը տակալին կը մնան զնդիհանութեան սահմաններուն մէջ: Այսպէս, ի՞նչ կը պահանջենք ցեղասպանեն: Ցեղասպանութեան ճանաչում, հողային պահանջ, կալուածներու վերադարձ, նիւթական հատուցում եւ այլն: Ոմանք կը մտածեն, որ անհրաժեշտ է



յստակացում կատարել այս ուղղութեամբ: Ուրիշներ կը կարծեն, թէ մեր պահանջատիրութիւնը այս հանգըրւանին առածգական պահելը կրնայ մեզի աւելի նպաստաւոր ըլլայ: Երկու մօտեցումներն ալ կարելի է նկատել շինհի: Միաժամանակ անհրաժեշտ է գործնական քայլերու դիմել դուրս գալու այս նեղ օղակին ու ընդհանրացումներն: Այլ խօսքով, առանց անտեսելու ճանաչման գծով կատարուող աշխատանքները, ժամանակը հասած է այլեւս ճանաչումն անդին մեր աշխատանքը ուղղելու դեպի հատուցում: Այս հեռանկարով կազմակերպուեցաւ Անթիլիասի համագումարը:

Ե.- Անթիլիասի համագումարը լուսարձակի տակ բերաւ ընդհանրապես հատուցման ու մասնաւորաբար Եկեղեցապատկան կալւածներու վերադարձի խնդիրը: Ինչո՞ւ այս շեշտադրումը՝ այս հանգրուանին.- ա) Միացեալ Նահանգներու Ընկրեսը անցեալ տարի որոշում կայացուց, որ Թուրքիոյ մէջ գտնուող փոքրամասնութիւններու Եկեղեցապատկան ինչերը, շարժուն եւ անշարժ, վերադարձուին իրենց իրաւատերերուն: բ) Թուրքիոյ կառավարութիւնը եւս վերջերս որոշում կայացուց 1929-էն ասդին պետութեան կողմէ բռնագրաւուած կալուածները վերադարձնելու իրենց սեփականատերերուն: Այս երկու որոշումները որոշ իմաստով արթնութեան կոչ էին՝ ուղղուած մեր Եկեղեցւոյ ու ժողովուրդին ու յատկապես Մեծի Տան Կիլիկիոյ կաթողիկոսութեան, գործնապես արտայատելու իր պահանջատիրութիւնը՝ Կիլիկիոյ մէջ ունեցած իր կալուածներուն գծով:

2.- Քամագումարին ընթացքին պարզուեցաւ, թէ միջազգային օրէնքի տուեալները կալուածներու վերադարձին գծով երբեմն նպաստաւոր էին ու երբեմն՝ ո՞չ նպաստաւոր: Սակայն համագումարը մեր առջեւ բացաւ



www.aztagdaily.com
photo by Ashnag ©

նոր հորիզոններ՝ մեր պահանջատիրութիւնը ու մանաւանդ կալւածներու վերադարձի հարցը ներկայացնելու միջազգային ատեաններուն՝ հակառակ գոյութիւն ունեցող անպատճութիւններուն եւ քաղաքական ոչ նպաստաւոր պայմաններուն: Վեհափառ հայրապետը փակման իր խօսքին մէջ անդրադարձու այս կացութեան՝ ըսաւ. «Եկեղեցապատկան ու ազգապատկան հազարաւոր կալուածներ ունինք Կիլիկիոյ ու Արեւմտեան Յայաստանի մէջ: Չենք կրնար անտարբեր ու ձեռնածալ մնալ. Մենք պահանջատէր ենք: Որքան ալ դժուար ու երկար ըլլայ մեր առջեւ բացուող ճամբան, մենք պարտաւոր ենք քայլելու այդ ճամբէն: Մեր նահատակներուն կտակը մեզի համար նուիրական է: Մեծի Տան Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը, Յայ կաթողիկէ ու Յայ բողոքական Եկեղեցիներուն եւ մեր կուսակցութիւններուն հետ գործակցաբար, յառաջիկային պիտի պատրաստէ աշխատանքային ծրագիր: Բնականաբար Յայաստանի Յանրապետութիւնը կարեւոր դեր ունի կատարելիք այս ուղղութեամբ»:

Մեծի Տան Կիլիկիոյ կաթողիկոսութեան կազմակերպած այս համագումարը ազգային պահանջատիրութեան դիմաց նոր հորիզոններ կը բանայ: Անհրաժեշտ է շարունակել այս աշխատանքը պատասխանատու մօտեցումով, հետեւողական ճիգով ու միասնական ոգիով:

**ՄԵԾԻ ՏԱՆ ԿԻԼԻԿԻՈՅ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ «ԴԱՍԿ»
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ**

Փետրուար, 2012

ԴԵՊԻ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿ

Դրեկուան օրակարգ էր «ճանաչումն հատուցում»-ի հանգրուանին անցնելու պահանջը, բայց այսօր է որ անոր առաջին սանդիսամատին ենք՝ շնորհիւ Արամ Ա. կաթողիկոսի նախաձեռնած գիտաժողովին, ուր համբաւ ու կշիռ ունեցող գիտնականներու կողմէ արծարծուեցաւ մասնակի հատուցման մը հարցը: Այս, որ Թուրքիոյ տարածքին գտնուող հայկական եկեղեցներն ու վանքերը պետք է դրուին վերահսկողութեանը տակ Կիլիկիոյ կաթողիկոսութեան, որ պատմական ու բարոյական պարտաւորութիւնն ու իրաւունքը ունի անոնց տիրութեան եւ հոգատարութեան: Եթէ նաեւ Սիսի Վթոռին կալուածային պատկանելիութիւնը հաստատող փաստաթութեր կարելի եղած է փրկել-պահել, արդեն իրաւական տեսակետէ իսկ անվիճելի կը դառնայ հնադարեան այդ վանքերուն ու եկեղեցիներուն սեփականատիրոջ Կիլիկիոյ կաթողիկոսութեան իրաւունքը:

Այս պահանջը իր դրուածքով ու եռթեամբ, խորքին մէջ «հատուցում» ալ չէ, այլ՝ պարզապես յափշտակուած կալուածներ տիրոջ վե-

րադարձնելու «անմեղ» դատ մը: Նմանօրինակ դատերու արդարացիութիւնը հաստատագրուած է անշատ ու իրաւական բոլոր պետութիւններու օրինագիրքերուն մէջ եւ որու դիմաց՝ ինչ-ինչ պատճառներով նոյնիսկ եթէ վերապահ կեցուածք որդեգրողներ ըլլան, բայց եւ այնպէս անոնցմէ ոչ մէկը ինք-զինքին իրաւունքը պիտի կարենայ տալ վիճարկելու կամ հիմնաւորուած առարկութեամբ ընդդիմանալու ներկայացուած պահանջին:

Ոնժամանակ չէ այս ինդիրը անդեղեւ ու անվարան արծարծելը ամեն պատեհ արիթի՝ կրօնական պետերու մօս թէ համաժողովներու, քրիստոնեայ-իսլամ երկխօսութեանց ընթացքին: Աւելորդ են մտորումները այս մասին, որ միջազգային ատեաններն ու հիմնարկները, պետական, լրագրական թէ ակադեմական շրջանակները այս հարցով զբաղեցնելը արդիւնք պիտի տա՞յ թէ ոչ, վնա՞ս պիտի պատճառէ, թէ՝ օգուտ: Միամիտ ալ պետք չէ ըլլալ յուսալու համար, որ կ'ընդառաջուի պահանջին: Բայց նաեւ կասկած ալ չունինք նպատակայարմարութեանը, որ Ցեղասպանութեան 100-ամեակի նախապատրաստութեան իբրեւ առաջին «յարձակում» եւ եկեղեցիներու-վանքերու փոխանցումը իբրեւ թէ դիւրացնող միջոց ու նախաքայլ՝ եթէ ուղղակի դիմուի ԵՌԽԵՍՔՕ-ին, ինդիր դնելով, որ ժամանակաւորապէս ինք ստանձնե անոնց հոգատարութիւնը...: Աւելորդ է ըսել, որ այդ դիմումը աւելի կշիռ կը ստանայ,



Եթե ապահովուի անուղղակի այլ միջամտութիւններ եւս, ինչպէս օրինակ՝ եթե միեւնոյն հասցեին նոյնիմաստ հայց մը ներկայացուի տիտղոսաւոր գիտնականներու ստորագրութիւններով:

Մինչեւ հոս ուրեմն, խօսքը «անմեղ» դատի մը մասին է, որուն թեր չեղողներն իսկ կողմանից պիտի ըլլան... լրութեան:

Յարցը բոլորովին կը փոխուի ու տարբեր հանգամանք կը ստանայ անշուշտ, երբ միջազգային ատեաններու թէ պետական միաւորներու մօտ շեշտակի դրուի **հողային** պահանջը, քանի որ անիկա կը սպառնայ խախտել միջաբետական բարդ յարաբերութեանց, փոխկապակցուած շահերու եւ տարածաշրջանի ռազմագիտական հաւասարակշռութիւնը, ինչպէս նաեւ միջազգային համաձայնագիրներով հաստատուած ներկայ **սթաթուն** ու սահմաններու ընդունուած քարտեսը:

Գիտակցինք, որ աշխարհը ներկայ իրողական վիճակը (**սթաթուն**) ստացած է համաշխարհային երկու կործանարար պատերազմներու հետեւանքով եւ այդ **սթաթուն** պահպանուած է երկար տարիներու պայթունավուանգ «պաղ» պատերազմի գնով:

Յարիւրամեակ մը առաջ, արեւելեան բարդ ու բազմերես հարցին գլխաւոր օղակներէն մէկը կը վերաբերէր Թուրքիոյ, անոր սահմանները ծեւաւորելու խնդրին: Մեր օրերու տըւեալները ենթադրել կու տան, որ քաղաքական աշխարհին համար սահմաններու ծեւաւորումը քարտիսագծուած է եւ ատիկա օրակարգի հարց չէ այլեւս, գէթ ներկայիս:

Չիա այս պայմաններուն մէջ, անհաւանական չէ, որ մեր կողմէ հրետորական ոճով ու լոգունգային շեշտով դրուած հողային պահանջ մը, իբրեւ քաղաքական ու ռազմավարական շատ զգայուն խնդիր, յանկարծակիի բերէ եւ մտահոգութիւն կամ «վախ» պատճառէ այս շրջանակներուն, որոնք իրենց քաղա-



քական թէ ակադեմական կշիռով ու հանգամանքով միշտ զօրակցած են մեզի եւ գործնապէս նպաստած, որպէսզի Ցեղասպանութիւնը ճանաչումի արժանանայ միջազգային ատեաններէ, զանազան երկիրներու խորհրդարաններէ: Անհաւանական չէ նաեւ, որ մեր այդ պահանջը մեզմէ ընդմիշտ հեռացնէ անոնցմէ շատեր: Այդ շրջանակները բարեկամ դարձնելու եւ անոնց նեցուկը ապահովելու համար պէտք եղաւ տարիներու տիտանեան ճիգ ու համահայկական զօրաշարժ՝ յատկապէս սփիլոքնէ: Տիտանեան այդ ճիգին շնորհիւ եր, որ նուաճուեցաւ «ճանաչում»-ի հանգրուանը: Նաեւ, իմ համոզումով, նոյն արդիւնքով եր, որ միջազգայնօրէն հովանաւորուեցաւ Յայաստան-Թուրքիա տիրահըռչակ արձանագրութիւններուն արարը (**աքթը**), եւ ատիկա՝ զանգուածային լրատուական միջոցներու լուսարձակներու դիմաց դիտումնաւոր կերպով ողջունուեցաւ ու ծափահարուեցաւ, իբրեւ «լուծումը» հայ-թուրք կնճիռին, հակառակ այս իրողութեան, որ անոնք փաստօրէն Յայաստան-Թուրքիա կնիքը ունին եւ ոչ թէ՝ հայ-թուրք...:

Բացառուած չէ տակաւին, որ մեր հողային պահանջին դիմաց, օգտուելով Յայաստանի պետական-քաղաքական բարձրաստիճան պաշտօնատարներու յայտնի-անյայտ «տկարութիւններէն» եւ սայթաքումներէն, պարտադրուի անոնց յայտարարութիւն, թէ՝ «Յայաստան հողային պահանջ չունի Թուրքիայէն»... (Ցիշեսը նախագահ Ռ. Քոչարեանի



նախընթացք, թուրք լրագրողի մը ուղղած հարցումին իր տուած այդիմաստ պատասխանը):

Ի՞նչ ընել ուրեմն: Կ'առաջարկուի առայժմ արձարծելէ հրաժարի՞լ հողայինը կամ հատուցման խնդիրը:

Ո՛չ, անշուշտ: Դանդաղութիւնը ժամանակի կորուստ է եւ կը վնասէ մեզի: Որքան ժամանակը անցնի, այսքան վտանգ կը սպառնայ, որ նորահաս սերունդներուն մօտ տկարանայ «յիշողութիւնը» եւ պայքարունակութեան ջիղը:

Այժմ եւ միշտ կառչած պիտի մնանք մանաւանդ «Միացեալ»-ին, որ համահայկական տեսլական է ու մեծագոյն նպատակ: Միաժամանակ՝ ազգային արժանաւորութեան խնդիր է եւ ազգի ապագային երաշխիքը: Թոյլ պիտի չտանք երբեք, որ ժամանակը ընկճէ մեզ եւ գրաւումը իրաւունք դառնայ Թուրքիոյ համար:

Ինչ կը վերաբերի ի ա տ ո ւ ց մ ա ն խնդիրն, պիտի ընդունինք, որ մեզի համար իսկ յստակ չէ

տակաւին, թէ ի՞նչ կը հասկնանք «հատուցում» ըսելով: Յրապարակագործեանց մէջ կամ բեմերէն յաճախ կը թուարկենք մեր կրած ահաւոր վսասները, բայց չենք գիտեր, թէ անոնց դիմաց ի՞նչ է մեր ուզածը: Պահանջին պես անորոշ ենաեւ պահանջողին հասցեն... կ'ըսենք՝ հայ ժողովուրդը, որ ընդհանրական ու անդեմ իմացում մըն է: Պետական կամ կուսակցական մակարդակներու վրայ նոյնիսկ օրակարգի հարց չէ դարձած ասիկա:

Դժուար չէ անդրադառնալ, որ մեր կրած մարդկային, մշակութային ու կալուածային անչափելի կորուստները երեւակայելի որեւէ ծեւով ու տարողութեամբ չի հատուցուիր, բայց եւ այնպէս քանի որ պահանջը կայ, պահանջողը պարտաւոր է լոգունգայինեն անդին՝ հատուցման պատկերացումը ունենալու:

Ամբողջ խնդիրն այս է, որ հողային պահանջին համար անհրաժեշտ է նախ Թուրքիոյ յեսարանները տկարացնել եւ մեր թիկունքը ամրացնել:

Այս իմաստով, մեր գլխաւոր ապաւենը Սեւրն է, իսկ Թուրքիոյ համար՝ Սեւրը չեզոքացնող Լոզանի դաշնագիրը: Բայց Լոզանը չունի հայկական ստորագրութիւն, ինչ որ իրաւունք կու տայ հայկական կողմին սահմանային բաց հաշիկի հարց յարուցելու որեւէ ժամանակ:

Ահա թէ ինչու Սեւրն անմիջապէս վերջ եւ Լոզանէն առաջ, Թուրքիան իր ամբողջ հմայքն ու խարդաւանակը ի գործ դրաւ Մոսկուայի մօտ



Եւ յաջողեցաւ իր սահմանները ամրագրել Կարսի դաշնագրով: Ծանօթ է, որ իր անկախութիւնը կորսնցուցած **անազատ** Հայաստանին պարտադրուեցաւ, որ ստորագրութիւնը դնել հայավեսա այդ դաշնագրին տակ:

Հողային մեր պահանջին դիմաց՝ իբրեւ գլխաւոր յենարանի Թուրքիան իր թիկունքին ունի Կարսի դաշնագրիը եւ անոր նորացուածը՝ մերժելի արձանագրութիւնները, որոնք թեւ սառած կը թուին ըլլալ, բայց անոնց վերաշերմանալու հաւանականութիւնը բացառուած չէ: Ասոնք կը կազմեն աքիլլեսեան մեր կրունկը, մեզ կը դնեն տկար դիրքի վրայ...: Եթէ չըլլար Կարսի դաշնագրիը, հաւանաբար բռնազբուկ արդարացումով պատճառաբանուեր, որ փոխադարձաբար իրարու սահմանները յարգելու-ճանչնալու բաժինը Հայաստան-Թուրքիա արձանագրութեանց մէջ, պարզ ու ընթացիկ արարողակարգային-փրոթոքոլային ընդունուած «կահապար» մըն էր, որ կը դրուի երկողում համաձայնագրեր ստորագրելու կամ միջազգային ատեաններու (ՄԱԿ, Եւրոպական խորհուրդ եւ այլն) մաս կազմելու համար: Սակայն, այնքան ատեն որ Կարսի դաշնագրիը չեղեալ չէ յայտարարուած, այդ արձանագրութիւնները **անկախ ու ինքնիշխան** Հայաստանի կողմէ ստորագրուած, պիտի նկատուին... Կարսի պաշտօնականացումը:

Արամ Ա. կաթողիկոս զգուշ քայլով մը որեւ և նախաձեռնութիւն առնելէ առաջ կազմակերպեց գիտաժողով եւ ատով ամրացուց իր թիկունքը, միաժամանակ ազդանշանը տուաւ յաջորդ հանգրուանի սկիզբին:

Միենանյ զգուշաւորութիւնը աւելիով անհրաժեշտ է, երբ հատուցման ու հողային պահանջով պիտի յաւակնինք ներկայանալ միշագային ատեաններուն եւ առանձին պետութիւններուն:

Եղեռնի 100-ամեակը առիթ է, որ պետա-



կան հովանաւորութեամբ եւ կաթողիկոսներու մասնակցութեամբ կազմուած 100-ամեակի Համահայկական Կեդրոնական յանձնաժողովը իր ուշադրութիւնը կեդրոնացնէ նաեւ այս երկու կարեւոր հարցերուն վրայ եւ իբրեւ **առանցքային** ու **անյետածգելի** խնդիրներու, նախապատրաստական իր աշխատանքներու յայտագրին մէջ ներառէ.

ա.- Համաշխարհային համբաւի տեր փորձագետներու մասնակցութեամբ միջազգային գիտաժողովի մը կազմակերպումը, Կարսի դաշնագրին անվաւերութիւնը հաստատելու, եւ նապատակայարմարութեան պարագային, ի հարկին նաեւ ի լուր աշխարհին յայտարարելու համար,

բ.- Նախ՝ տարածաշրջանային բաժանումներով անշատաբար, ապա համահայկական տարրողութեամբ ազգային-ներկայացուցական խորհրդաժողովներու կազմակերպումը, որպեսզի փորձ մը կատարուի՝ որոշ չափով յստակացնելու կամ առնուազն պատկերացում մը կազմելու համար հատուցման եզրերու ու ձեւաչափի ընդունելի տարագի մը մասնի:

Կ'ակնկալուի, որ պետութեան եւ երկու կաթողիկոսներու հովանիին տակ Եղեռնի 100-ամեակի իրագործումները աւելի ծանր կշռեն, քան շրջագիծի մը մէջ ամեակէ ամեակ կրկնուող ոգեկոչական ծեսերը:

ՄԻՋՐԱՎՆ ԶԻՒՇՈՂԼԵԱՆ

Աթենք

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՈՒ ՎԱՆՔԵՐԻ ԲՈՆԱԶԱՒԹՈՒՅԾ ԵՒ ՈՉՆՉԱՑՈՒՅԾ ՈՒՆԵՑՈՒՅԾՔԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԻՐԱԴԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Դրիտթուրքական իշխանութեան կողմից կազմակերպուած Յայոց ցեղասպանութեան հետեւանքով հայերի վաղնջական հայրենիքի մեծագոյն մասը՝ Արեւմտեան Յայաստանը, որտեղ առաջացել, կազմաւորուել եւ իր գոյութիւնն էր յարատեւել հայ ժողովուրդը, որտեղ հիմնականում ձեւաւորուել եւ զարգացում է ապրել հայոց պետականութիւնը, եւ հազարամեակներ շարունակ ընթացել եր հայ ժողովուրդի գերակշռող մեծամասնութեան առօրեայ կեանքը, զրկուեց այդ հոդի բնիկ տերերից:

Տեղասպանութեան ընթացքում եւ դրանից յետոյ Արեւմտեան Յայաստանի տարածքում իրագործուեց նաեւ ազգային-մշակութային ցեղասպանութիւն, որի հետեւանքով ոչնչացւեցին հայ մշակոյթի պատմական եւ ճարտարապետական յուշակութողները, որոնք նիւթական վկայութիւններն եին վաղնջագոյն ժամանակներից այստեղ արմատաւորուած բնիկ հայկական քաղաքակրթութեան:

Ըստ իրաւագետ Ռ. Լեմքինի՝ ցեղասպանութիւնը ոչ միայն ազգային կամ կրօնական խմբի վերացումն է՝ նրա ֆիզիքական բնաշնչման միջոցով, այլեւ նրա ազգային, հոգեւոր մշակոյթի ոչնչացումը: Սակայն, ցարօք, ազգային մշակու-

թային ցեղասպանութիւնն իասկացութիւնը չի մտել ցեղասպանութեան յանցագործութիւնը կանխելու եւ դրա համար պատժի մասին ՍՍԿԿ-ի 1948 թ. հրչակագրի բնագրի մեջ:

Յայոց ցեղասպանութեան մասին խօսելիս գիտակցաբար թէ անգիտակցաբար, բայց եւ իրաւացիորեն, առաջին հերթին մտաբերում ենք աւելի քան 1,5 միլիոն անմեղ զոհերի անմարդկային սպանդը, տեղահանութիւններն ու կոտորածները: Երբեմն նաեւ, որպէս հետեւանք, անդրադառնում ենք պատմաճարտարապետական յուշարձանների գազանաբարոյ ոչնչացմանը: Սակայն քիչ անգամ ենք միայն խորհում հայերին պատկանող նիւթական հարստութեան կողոպուտներին ու աւազակութիւններին եւ, մասնաւորապես, եկեղեցական եւ վանքապատկան բռնազարդուած եւ ոչնչացուած մշակութային ուսեցուածքի



Կան քաղաք

մեր անհետ կորստեան մասին, այս մասին, թէ մենք հոգեւոր ինչպիսի՝ գանձեր, արժեքներ, կոթողներ կորցրեցինք, աւելի ճիշդ՝ հոգեւոր եւ մշակութային ինչպիսի՝ թանկարժեք սրբութիւններ ենթարկուեցին ցեղասպանի անարգ ոճին:


Բանս այս է, որ Առաջին աշխարհամարտի տարիներին իթթիհատական կառավարութիւնն առիթ գտաւ ոչ միայն հայ ժողովրդին ամբողջութեամբ բնաշնչելու եւ տեղահանելու իր պատմական հայրենիքից, անվերականգնելի ծեւերով ցուելու եւ տիրանալու նրա հողերին, այլև՝ սեփականացնելու նրա գոյքը, ոչնչացնելու վանքերին ու Եկեղեցիներին կից դարերի ընթացքում ստեղծուած պատմական անթուելի արժեքները, հնութիւնները, նրա ազգային նիւթական, մշակութային բազմատեսակ գանձերն ու, ընդհանուր քաղաքակրթական ողջ աւանդը՝ եւ նիւթական, եւ իմացական վկայութիւնները: Արդիւնքում վիթխարի վեաս հասցնելով հայ ժողովրդի նիւթական եւ հոգեւոր մշակոյթին՝ անարգուեցին ժողովրդական բոլոր սրբութիւնները:

Դեռեւս Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեակին՝ 1912-1913 թթ., թուրքական կառավարութիւնը որոշակի հետաքրքրութիւն էր հանդիս բերում Օսմանեան կայսրութեան տարածքում գործող հայկական բոլոր վանքերի ու Եկեղեցիների թուռով ու վիճակով, որը պայմանաւորուած էր արեւմտահայութեան ցեղասպանութեան պետական-քաղաքական ծրագրի ծածուկ մշակման հետ⁽¹⁾:

Նման քաղաքականութիւնը նորութիւն էր, քանի որ հայ ազգային Եկեղեցական կազմակերպութիւնը՝ ի դեմս Կ. Պոլսի պատրիարքարանի, բոլոր ժամանակներում հիմնուած է Եղել նախկին հանրային իրաւունքի խարիսխներից մեկի վրայ, որը բնաւ Բ. Դրան կողմից՝ աշխարհակալ ժամանակներից սկսած, երբեք չեղ Եղութել:

Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանը, թուրքական ներքին գործերի նախարարութեան որոշակի պահանջով ու ճնշումով, արաբատառ թուրքերէնով բարեխսդօրէն պատրաստում եւ ներկայացնում է հայկական շուրջ 1500 վանքերի եւ Եկեղեցիների լրիւ ցուցակ-

Աղթամար



ները (շրջան առ շրջան՝ համաձայն վիլայեթների, սանճարների եւ կազմաների) եւ համապատասխան ծանուցագրեր՝ «Թաքրիներ» (ցոյց տալով վանքերի եւ Եկեղեցիների տեղագրական վայրերը, անունները եւ կառուցման թուականները):

Պատրիարքարանն ազգապատկան գոյքնը ոչ միայն հաշուեցուցակի մեջ գրանցեց, այլև երեք յունուարի, 1306 (1890 թ.) թուականով ընդարձակ յիշատակագիր ներկայացըրեց կառավարութեանը, որի մեջ յիշատակելով հայկական տեղահանութեան առաջ բերած բոլոր չարիքները՝ պահանջեց շուրջ 200 վանքերի եւ 2000 Եկեղեցական հաստատութիւնների հասոյթները⁽²⁾:

Այդ ամենին հետեւում է Թալէաթի՝ Յալէափի տեղահանութեան գործերով կոմիտեին ուղղուած իրահանգը՝ «Ամեն կերպ շանալ ոչնչացնել բուն «Յայաստան» անուանումը Թուրքիայում»⁽³⁾:

Գիտակցելով Եկեղեցու դերը հայ ժողովրդի կեանքում՝ Երիտթուրքերը նպատակամընթած կազմակերպում են հայ հոգեւորականութեան կոտորածը, ոչնչացնում են Եկեղեցիներն ու վանքերը եւ բռնագրաւում Եկեղեցական գոյքը:

Յայերի շարժական եւ անշարժ գոյքերի եւ կալուածքների բռնագրաւումը, կողոպուտը եւ իրացումը կանոնաւոր եւ անաղմուկ իրականացնելու համար, ներքին գործերի նախարարութիւնը շարդարարներին է ուղարկում մի շարք ծածկագիր հեռագրեր, շրջաբերականներ եւ յաւելուածական իրամաններ: Միաժամանակ, նոյն ներքին գործերի նախա-



Առաքելոց վանք

րարութեան միջոցով 1915 թ. (1331 թ.) մայիսի 16-ին հաստատում եւ մայիսի 26-ին գործողութեան մէջ է դրում 34 յօդուածներից բաղկացած հրահանգների գաղտնի մի հաւաքածու, որը մայիսի 29-ին հաւանութեան արժանացաւ մեծ վեզիրի կողմից: Ամբողջութեամբ այս կոչում է «Պատերազմական վիճակի եւ քաղաքական արտասովոր անհրաժեշտութիւնների բերումով տարագրուած հայերին պատկանող լքեալ գոյքերի, անշարժ կալուածքների եւ հողերի «վարչական կարգադրութիւնների» մասին հրահանգներ»՝ «թալիմաթնամե»-ս, որի նախատակն էր պետական բարձրաստիճան եւ սովորական պաշտոնեաների յանձնախմբերի եւ զանազան գործակալների միջոցով ցանկագրել եւ վերջնականապէս իրացնել 500,000 հայ ըստանիքներին պատկանող հողերը, շենքերը, արտերը, դպրոցները, վարժարանները եւ մասնաւորապէս՝ վանքերն ու եկեղեցիներն իրենց ունեցուածքով⁽⁴⁾:

«Վարչական» թալիանի այդ յանձնախմբերը ենթակայ էին ներքին գործերի նախարարութեանը եւ իրաքանչիւր 15 օրը մէկ պարտաւոր էին տեղեկագրեր ներկայացնել իրենց գործունեութեան մասին:

Յրամանագրի 2, 3, 6, 11 եւ 22 յօդուածները վերաբերում էին եկեղեցական եւ կրօնական հաստատութիւններին եւ նրանց գոյքին:

Յօդուած 2- «Որեւիցէ գիւղ կամ աւան ուրիշ վայր «փոխադրելուց» (պէտք է հասկանալ՝ տարագրելուց) յետոյ «փոխադրուած»

(այսինքն՝ տարագրուած) ժողովրդի սեփական տները եւ բոլոր շինութիւնները՝ իրենց մէջ գտնուած ապրանքներով, պիտի փակուեն, դռները պիտի կնքուեն եւ պահպանութեան եւ հսկողութեան տակ պիտի վերցուեն»:

Յօդուած 3- «Պահպանութեան եւ հսկողութեան տակ վերցուած գոյքի տեսակները, քանակութիւնը, գնահատուած արժեքները եւ սե-

փականատերերի անունները մանրամասնութեամբ պէտք է արձանագրուեն մատեաններում (տոմարներում), որից յետոյ գոյքերը եկեղեցիների, դպրոցների, խանութների եւ պահեստատեղիների մէջ պիտի փոխադրուեն, այնպէս, որ իրաքանչիւրի սեփականատերը յայտնի լինի: Գոյքի սեփականատիրոջ եւ գոյքի քանակութեան մանրամասնութեամբ պէտք է արձանագրուեն մատեաններում (տոմարներում), որից յետոյ գոյքերը եկեղեցիների, դպրոցների, խանութների եւ պահեստատեղիների մէջ պիտի փոխադրուեն, այնպէս, որ իրաքանչիւրի սեփականատերը յայտնի լինի: Գոյքի սեփականատիրոջ եւ գոյքի քանակութեան մասին պէտք է պատրաստուի տեղեկագիր, որի բնագիրը պէտք է յանձնուի տեղական կառավարութեանը, իսկ դրա պատճենը՝ «Լքեալ» գոյքերի վարչական յանձնախմբերին»:

Յօդուած 6- «Եկեղեցիների մէջ եղած գոյքերը, նկարները, Սուլր Գրքերը պէտք է արձանագրուեին, դրանց պիտի կցուեին տեղեկագրեր եւ պահուեին տեղում: Երբ տարագրուած բնակչութիւնը որեւէ տեղ կը հաստատէր, իրաքանչիւր գիւղին պատկանող եկեղեցական ունեցուածքը պէտք է նրան ուղարկուեր»:

Յօդուած 11- «Տարագրուած հայերի գիւղերում, բնակարաններում եւ հողերի վրայ պիտի բնակեցուեին թուրք մուհաճիրներ, որոնց պիտի տրուեին վկայաթղթեր»:

Յօդուած 22- «Ծախուած կամ վարձով

տրուած կալուածների գումարները տերերի անուններով պիտի յանձնուեին Ելեմտական գանձարկղին... որոնք հետագայում... իրենց տերերին պետք է յանձնուեն»:

Իրաւական ուժ չստացած տեղահանման մասին այդ ժամանակաւոր օրենքի հիման վրայ արդէն 1915 թ. յունիսի 10-ին մտցուց լրացուցիչ օրենք, որը ցուցումներ էր բռվանդակում «պատերազմի եւ քաղաքական արտակարգ պայմանների հետեւանքով տեղահանուած հայերի թողած շարժական եւ անշարժ կայքի» հետ վարուելու մասին: Հայկական ամբողջ ուսեցուածքը յայտարարուեց «լքեալ» եւ կալանք դրուեց դրա վրայ: Նախատեսում էր յատուկ կոմիտեների ստեղծում, որոնց վրայ կը դրուեն «լքեալ» սեփականութեան հաշուառումը եւ դրա յուսալի պահպանումը սեփականատերերի անունով: Անասունը եւ պահպանման ոչ ենթակայ այլ ուսեցուածքը պիտի վաճառուեր հանրային աճուրդով, ստացուած գումարները պիտի պահուեին սեփականատերերի հաշիներում՝ իբր վերադառնալուց յետոյ նրանց յանձնելու համար: Նախատեսում էր նաեւ, որ հայերի տները եւ հողերը՝ համապատասխան արձանագրմամբ, ենթակայ էին յանձնելու Պալքանեան պատերազմի ժամանակ քոչած թուրք փախստականներին: Ցանձնուում էին շինութիւններ, տներ, ծիթենու պլանտացիաներ, խաղողի այգիներ եւ այլն, իսկ թուրք փախստականներին բաժանելուց յետոյ մնացած ուսեցուածքը ենթակայ էր հանրային աճուրդով վաճառուելու՝ ստացուած գումարները սեփականատերերի հաշիների վրայ գրառելով:

Բողոքելով հայերի ուսեցուածքի վաճառքի դեմ՝ ծերակուտական Ռիգան յայտարարել էր. «Ոչ ոք իրաւունք չունի վաճառել իմ ուսեցուածքը, եթէ ես չեմ կամենում: Դա արգելուած է Սահմանադրութեան 21-րդ յօդածով: Եթէ մենք սահմանադրական ռեժիմ ունենք, որը գործում է սահ-

մանադրական իրաւունքին համապատասխան, դա անել չենք կարող: Կամայականութիւն է: Բռնել ինձ, դուքս քշել իմ գիւղից, յետոյ էլ վաճառել իմ ուսեցուածքը եւ սեփականութիւնը. նման բան երբեք չի կարող թոյլատրուել: Դա չի կարող թոյլ տալ ոչ գիտակցութիւնը, ոչ օսմանեան իրաւունքը»⁽⁵⁾:

Սակայն «Լքեալ գոյքերի» օրենքը, որը պիտի պաշտպաներ տեղահանուած հայերի ինչքերը, Զաւեն պատրիարքի վկայութեամբ «քնաւ չգործադրուեցաւ... Այսպէս՝ ժողովուրդին բոլոր շարժական ստացուածքը կը փճանար կամ լաւ եւս թուրքերուն ծեռքը կ'անցներ: Կառավարութիւնը ոչ մեկ տեղ հոգածուգունուեցաւ այդ գոյքերը հաւաքելու կամ դրամի վերածելու...»⁽⁶⁾:

Նոյն Զաւեն պատրիարքի 1915 թ. յուլիսի 13-ի եւ օգոստոսի 15-ի 2 նամակների հաղորդումներից պարզում է, որ «Եկեղեցիներ ու վանքեր կողոպտուած, քանդուած ու սրբապղծուած են:... Եկեղեցիները արդէն կողոպտուած են եւ մզկիթի, ախորի կամ ուրիշ բաներու վերածուած են: Արդէն Պոլսոյ հրապարակներուն վրայ սկսած են ծախուիլ հայ Եկեղեցիներու անօթները եւ այլ գոյքեր...»⁽⁷⁾:

1915 թ. սեպտեմբերի 13-ի ուսեցրկման եւ բռնագրաւման մասին ժամանակաւոր օրենքով սահմանում էր տեղահանուածների «լքեալ» ուսեցուածքի, նրանց բանկային հաշիների եւ աւարների նկատմամբ յայտերի արձանագրման եւ քննման կարգը⁽⁸⁾: Այդ օրենքը հրապարակայնորեն քննարկուեց Ծե-





րակոյտում, բայց կիրարկուեց սահմանադրական խախտմամբ՝ առանց խորհրդարանի ըննարկման: Ըստ այդ օրէնքի՝ յարքունիս բռնագրաւում էին բոլոր տեղահանուածների, վանքերի եւ եկեղեցիների շարժական եւ անշարժ ստացուածքները: Կ. Պոլսի մէջ կազմուեցին 4 յանձնաժողովներ (Ծիկոմիդիա, Կիլիկիա, արեւմտեան եւ արեւելեան հայկական նահանգներ)՝ տեղերում բռնագրաւման գործողութիւններն իրականացնելու համար⁽⁹⁾:

Պետական գրաւոր իրամանագրերի համաձայն՝ իթթիհատականները 1914-1915 թթ. բռնագրաւեցին, կողոպտեցին եւ աւերեցին հայերին պատկանող բազմաթիւ շինութիւններ, 2050 հայկական եկեղեցիներ եւ 203 վանքեր (ըստ Ս. Օրմաննեանի տուեալների՝ Արեւմտեան Հայաստանի եկեղեցիների եւ վանքերի թիւը 1912-ին 2200 էր⁽¹⁰⁾): Խսկ Պօղոս Նուապար փաշայի եւ Աւետիս Ահարոննեանի 1919 թ. Փարիզի Վեհաժողովին ներկայացւած՝ ամբողջութեամբ կամ մասամբ կործանուած կրօնական եւ ազգային կալուածների ցանկում արձանագրուած են 83 եպիսկոպոսական աթոռներ՝ առաջնորդարաններ, 1860 եկեղեցիներ ու մատուռներ, 229 վանական հաստատութիւններ, 26 բարձրագոյն վարժարաններ, 1439 դպրոցներ եւ 42 որբանոցներ⁽¹¹⁾:

Վերոյիշեալ թուերի մէջ չեն մտնում Կ. Պոլսի եւ արուարձանների 38 եկեղեցիները, Պահեստինի եւ Սուրբայահի մէջ գրեթէ անվթար մնացած 18 վանքերն ու եկեղեցիները: Այդ

հաշուարկի մէջ չեն նաեւ 1921 թուականի Կարսի պայմանագրով Թուրքիային անցած 93 աւերուած եկեղեցիները:

Վանքերն ու եկեղեցիները հսկական գանձարաններ եին եւ ճոխ մատենադարաններ եւ ուսէին իին, անթիւ, բազմատեսակ եւ թանկարժեք առարկաներ եւ արուեստի հարուստ հաւաքածուներ: Պատկերացնելու համար թալանի իրական արժեքը՝ դրանք պայմանականորեն կարելի է բաժանել ութ իսմբի:

1) Ծիսական նպատակներով կամ եկեղեցական արարողութիւնների ընթացքում գործածուող արծաթէ, ոսկէ, պղնձէ սրբազնա առարկաներ-սկիհներ, խաչեր, վարդապետական գաւազաններ, բուրվառներ, խնկամաններ, արծաթապատ աւետարաններ, միւռոնի ամաններ, աղաւնիներ, տաշտեր, ջրամաններ, սափորներ, քշոցներ, աշտանակներ, շահեր, կանթեղներ, սրբատուիեր, մասնատուիեր, մասունքի պահարաններ, գոյքի եւ շուրջառի ճարմանդներ, արծաթէ վականներ եւ գօտիններ, մատանիններ, ծնծղաններ, թանաքամաններ եւ այլն:

Գ. Մեսրոպի մօտաւոր հաշիւներով 1915 թ. նախօրեակին հայ կրօնական հաստատութիւնների մէջ գտնուած միայն արծաթեայ եւ ոսկեայ սպասքների ընդհանուր քանակը պէտք է լինէր առնուազն 600 հազար կտոր⁽¹²⁾:

Այսօր եկեղեցական արուեստի եւ հսագիտական տեսանկիւնից մէծ արժեք են ներկայացնում այս խմբին պատկանող մետաղագործական առարկաները:

Ներկայում մեզ հասած նմանատիա առարկաները, որոնք համախմբուած են ազգային մէր թանգարաններում, Եջմիածնի, Երուսաղէմի, Վենետիկի, Ալթիլիասի, Վիենայի եւ Չմմառի վանքերում, ինչպէս նաեւ՝ Երոպայի եւ Միացեալ Նահանգների անձնական հաւաքածուներում, որոշ գաղափար են տալիս անցեալի մէր գեղարուեստի գանձերի մասին:

2) Ասեղնագործ եւ ձեռագործ իրեր- վարագոյններ, սկիհի ծածկոցներ, Աւետարանի խաչի եւ խորանի նուրբ լաթեր, բռնիչներ, սփոռցներ, խաչվառներ, սրբիչներ, շուրջառներ, սաղաւարտներ, թագեր, վակասներ, փորուարներ, բազպաններ, շապիկներ, ուրաններ, հողաթափեր, ժանեակներ, դիպակներ:

3) Գորգեր եւ կարպետներ- վանքերն ու եկեղեցիները չափազանց հարուստ էին իին ու թանկարժեք գորգերով ու կարպետներով:


4) Փայտափորագրական առարկաներ- դռներ, գահեր, աթոռներ, սեղաններ, գրակալներ, խաչեր, սիւներ, խոյակներ, մասունքներ, փայտեայ պահպանակներ, տուփեր եւ այլն:

5) Սրբերի մասունքներ եւ քրիստոնեական այլ նուիրական առարկաներ- Կենաց փայտկամ խաչափայտ, Նոյի տապանի մասունքներ, Յիսուսի խաչի բեւեռներ, Գրիգոր Լուսաւորչի, ինչպես նաև հայ եւ օտար սրբերի մասունքներ եւ այլն, որոնք վայելում էին մեծարանը, համարում էին սրբազն, չարիսխան եւ հրաշագործ:

6) Ցեղասպանութեան տարիներին ոչընչացուցին մեծ քանակութեամբ հայկական ձեռագրեր, հևագոյն տպագիր գրքեր եւ մարդարանկարչական գործեր, որոնք պահում էին բազմաթիւ վանքերում եւ եկեղեցիներում:

Ցայ ժողովուրդն իր բազմադարեան պատմութեան ընթացքում ստեղծել է պատմութեանը, գրականութեանը, արուեստին, քնական գիտութիւններին վերաբերող տասնեակ հազարաւոր ձեռագիր մատեաններ, հոգեւոր եւ աշխարհիկ քնոյթի երկեր: Դրանք մարմնաւորում էին հայ արուեստը, հայ մշակոյթը, հայ միտքը, հայի ստեղծագործ ոգին եւ ազգային հարստութիւնը: Այդ ձեռագրերը ժամանակ առ ժամանակ ոչնչացուել են տարբեր նուաճողների կողմից, սակայն 19-րդ դ. վերջին եւ 20-րդ դ. սկզբին դրանց մաքրագործումը կատարուել է մտածուած եւ ծրագրուած: 1894-96 թթ. եւ 1915-23 թթ. աւերելով հայկական սրբավայրերն ու քնակավայրերը՝ թուրքերն ու քրտերը ոչնչացրել ու հրկիցել են այստեղ պահուող հազարաւոր ձեռագրեր ու գրքեր:

Մինչեւ Ցեղասպանութիւնը մեծ թուրք հայկական ձեռագրեր են պահուել Սսի, Ատանա-



Մուշ

յի, Կ. Պոլսի, Եւղոկիայի, Խիզանի, Տարօնի, Կարինի, Սեբաստիայի, Մալաթիայի, Վասպուրականի եւ Կրեմտեան Յայաստանի ու Օսմանեան կայսրութեան այլ վայրերի վանքերում ու եկեղեցիներում եւ անհատ մարդկանց մօտ: Կոտորածների եւ տեղահանութեան ժամանակ իրենց քնակավայրերից հեռացող հայերը յաճախ առաջին անհրաժեշտութեան իրերի փոխարեն իրենց հետ վերցըրել են ձեռագիր մատեաններ՝ փրկելու համար մարդկային մտքի այդ արգասիքները: Շատ ձեռագրեր պահուել են թաքստոցներում, սակայն թուրքերը, յայտնաբերելով դրանք ոչնչացրել են: Ցրաշքով փրկուած ձեռագրերի մի մասը թուրքերը վաճառել են Երրոպայում, իսկ շատ ձեռագրերի ու գրքերի թերթերն ու Եջերը Մուշի, Կարինի եւ այլ վայրերի շուկաներում գործածել են որպես փաթեթաւորման թուղթ:

Ոչնչացուած ձեռագիր մատեանների մեջ եղել են հազուագիւտ, անփոխարինելի եւ անվերադառնալի Աստուածաշունչեր, Սաղմոսներ, Մաշտոցներ, ճաշոցներ, ժամագրքեր, Պատարագամատոյցներ, Շարակնոցներ, Յայսմաւուրքներ, ճառընտիրներ, քարոզագրքեր, տունացոյցներ, օրացոյցներ, կանոնագրքեր, վարքեր, հայ, յոյն, ասորի, հրեայ, հռոմեացի հեղինակների (Փաւստոս Բուրգանդ, Կորին, Եղիշե, Մովսես Խորենացի, Դաւիթ Ալյաղթ, Մովսես Կաղանկատուացի, Յովհաննես Դրասխանակերտցի, Թովմա Արծրունի, Գրիգոր Նարեկացի, Գրիգոր Մագիստրոս, Ներսես Շնորհալի, Ներսես Լամբ-

րուացի, Վարդան Այգեկցի, Գրիգոր Տաթեւացի, Առաքել Սիւնեցի, Թովմա Մեծոփեցի, Յակոբ Թոխաթեցի, Ստեփանոս Լեհացի, Բարսեղ Կեսարացի, Գրիգոր Նազիանզացի, Յովհան Օսկերերան, Պրոկո (Պրոկղես), Միքայել Ասորի, Նաև Ասորի, Կիւրեղ Երուսաղեմացի, Դիոնիսիոս Արեոպագացի, Եւագրոս, Յերոնիմոս, Կոռնելիոս Լատինացի, Թովմա Աքուինացի եւ այլք) պատմական, փիլիսոփայական, բնագիտական բնոյթի գործեր, հայկական մանրանկարչութեան գլուխ գործոցները: 1894-96 թթ.-ին եւ 1915-23 թթ. հայկական ճեղագրերի ոչնչացումը խոշոր հարուած էր ոչ միայն հայկական, այլեւ՝ համաշխարհային մշակոյթին ու գիտութեանը եւ անդառնալի կորուստ՝ մարդկութեան համար, քանի որ դրանք սրբազնագոյն եին, մեծ մասամբ՝ հազուագիւտ եւ անգնահատելի:

Յայ գաղթականների անձնագորիւթեան, մտաւորականութեան ջանքերի շնորհիւ, այնուամենայնիւ, Արեւմտեան Յայաստանի տարածքում գտնուող ճեղագրերի մի մասը փրկուել է ոչնչացումից: Այդպիսիք, ինչպես նաեւ հայկական այլ ճեղագրեր պահում են Երեւանի Մաշտոցի անուան Մատենադարանում, Եջմիածնի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսարաններում, Երուսաղեմի եւ Կ. Պոլսի հայոց պատրիարքարաններում, Վենետիկի եւ Վիեննայի Միհիթարեանների մատենադարաններում, աշխարհի խոշորագոյն գրադարաններում եւ թանգարաններում:

Թեև ոչնչացուած ճեղագիր մատեանների


թուի մասին կան որոշ տուեալներ (Վասպուրականում՝ շուրջ 3000, Տարօնում՝ շուրջ 2000, Կեսարիայում եւ շրջակայքում՝ 700, Անգարայում եւ շրջակայքում՝ աւելի քան 300, Արմաշում՝ շուրջ 250, Սեբաստիայում եւ շրջակայքում՝ շուրջ 170 եւ այլն), այնուամենայնիւ Եղեղնի ժամանակ թուրքերի կողմից ոչնչացուած հայկական հոգեւոր մշակոյթի այդ յուշարձանների ճշգրիտ թուաքանակը անյայտ է, որովհետեւ 19-րդ դ. սկզբին դեռևս չկար հայկական բոլոր ճեղագրերի համահաւաք ցուցակը, որի հետ համեմատուեր ոչնչացումից փրկուածների թիւը:

Սակայն նախորդ ժամանակաշրջանին վերաբերող տուեալները թոյլ են տալիս հաստատել, որ Թուրքիայի տարածքում ոչնչացւել է աւելի քան 20 հազար հայկական ճեղագիր եւ իին տպագիր գիրը:

7) Արուեստի այլ գործեր եւ սրբազան պատկերներ- իին եւ միջնադարեան ժամանակներից պահպանուած եւ ժողովրդական ու աւանդական մեծ համբաւ ճեղք բերած նկարներ, որմանակարներ, պատկերաբանակներ, խաչքարեր, տապանաքարեր, վիմական արձանագրութիւններ եւ այլն:

8) Վանական եւ եկեղեցական կալուածներ- այդ թուում նաեւ՝ վարժարաններ, իշեւաններ, տներ, խանութեներ, այգիներ, պարտեզներ, անտառներ, ջրաղացներ, որուք իբրեւ հասոյթ ծառայում եին վանքերին, վանականներին եւ եկեղեցական հաստատութիւններին: Ըստ Գ. Մեսրոպի, եթէ ժամանակին իրաքանչիւր վանք եւ եկեղեցի 10-20 մասունք ունենար «Յայոց կորսընցուցած թանկագին մասունքներուն թիւը երեսուն հազարը կ'անցնի»⁽¹³⁾:

Դեռեւս, 1915 թ. փետրուարի 14-ին Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալէաթին ուղղուած ծածկագիր հեռագրում Օսմանեան խորհրդարանի անդամ Ա. Կոամեանն ու Օննիկ Դերձակեանն առաջար-



Կեսարիա

կում էին գտնել ու յետ վերադարձնել միայն 1914-1915 թթ. թալանուած Եկեղեցիների ու վանքերի գոյքը: Սակայն հեռագիրը մնում է անպատճախան⁽¹⁴⁾:

Մշակութային կորուստը, դուրս գալով ազգային սահմաններից, ունի նաեւ միջազգային նկարագիր: Այս իրապես անփոխարինելի կորուստ է միջազգային չափանիշներով եւ մարդկային բովանդակ քաղաքակրթութեան առումով: Թուրքը, բռնագրաւելով հայ դարաւոր մշակոյթի գանձերը, դրանք չպահեց, այլ «ականահարեց, քանդեց, այրեց, փճացուց»⁽¹⁵⁾:

Գ. Մեսրոպի հաւաստմամբ՝ «Թուրք բարբարոսը եթէ միայն հայ վանքերէն ու Եկեղեցիներէն հաւաքէր բազմադարեան նկարները, հնութիւնները, մասունքները, գեղարուեստական առարկաները, յիշատակարանները, գերեզմանաքարերը, գրչագիրները, իին գորգերը, ինակերտ գործուածքները, գոհարագարդ, գոհարակուր առարկաները եւ բոլորը ծախէր քաղաքակիրք պետութեան մը, եթէ ինք չէր ուզեր կամ չէր համարձակեր պահել զանոնք, մեծարժեք թանգարան մը պահպանած պիտի ըլլար մարդկային քաղաքակրթութեան համար»⁽¹⁶⁾:

Կորստի մեծութիւնն այնքան ահաւոր է, որ չափազանց դժուար է որոշել Եկեղեցական ու վանական հաստատութիւնների մշակութային եւ արուեստի գանձերի նիւթական ամբողջական արժեքը եւ դրանց համապատասխան հաշիւները:

Ըստ Լեւոն Վարդանի՝ մեր ընդհանուր կորուստը կը կազմի աստղաբաշխական այսպիսի մի գումար, որ ընկալելու համար «անզօր պիտի մնայ ուղեղը պատմութեան...»⁽¹⁷⁾: 1919 թ. կատարուած հաշուարկների համաձայն՝ թուրքերի կողմից 1915-1918 թթ. ընթացքում հայերին հասցուած նիւթական ընդհանուր վնասը կազմել է 19 միլիառ ֆրանք⁽¹⁸⁾:

Հ. Ղազարեանի մօտաւոր հաշուարկների համաձայն՝ Արեւմտեան Յայաստանի եւ Փոքր Ասիայի միւս վայրերի մէջ գտնուած հայ վանական ու Եկեղեցական շնչերի կամ համալիրների շարժական եւ անշարժ կալուածների, դրանց մէջ հաւաքուած ոսկեայ, արծաթեայ, պղնձեայ ապրանքների եւ առարկան-



Վան

րի, ձեռագրերի, արուեստի զանազան գործերի եւ զանազան հնութիւնների մօտաւոր արժեքն իր ժամանակաշրջանում կազմել է նուազագոյնը 1,000,000,000 (1 միլիառ) տոլար: Իսկ հայերի նիւթական ընդհանուր կորուստը անշուշտ իր ժամանակաշրջանում գնահատում էր 5,000,000,000 (5 միլիառ) ոսկի տոլարով⁽¹⁹⁾: Ըստ Երուանդ Խաթանասեանի հայորդումների՝ կորուստը գնահատում է շուրջ 3 միլիառ 750 միլիոն տոլար⁽²⁰⁾:

Սակայն, հայկական յուշարձանների ոգենէն արժեքների մեծ մասի կողոպուտը հնարաւոր չէ փոխարինել ոչ տոլարներով եւ ոչ էլ ծովակտոր ոսկու հազարաւոր քիլոկրամներով:

Եթէ մարդկութեան եւ մտաւորականութեան կորուստը կարելի է ժամանակի ընթացքում մասամբ դարմանել, իսկ յամար աշխատանքով վերականգնել նաեւ կորսուած հարստութիւնները, ապա վայրագութիւնների եւ կողոպուտի հետեւանքով մեզ պատճառած քաղաքակրթական կորուստն անկարելի է ո՞չ կշռել, ո՞չ փոխանակել եւ ո՞չ էլ վերականգնել: Դրանք անսրբագրելի են եւ անվերադարձ:

Այդուհանդերձ, կարծում ենք, որ ժամանակն է լուրջ հաշուեկիր կատարելու ազգային եւ մշակութային անվերադարձ մեր կորուստների՝ Վանքերի, Եկեղեցիների, մատուռների, գրադարանների, վարժարանների, դպրեվանքերի, ձեռագիր մատեանների, տպագիր գրքերի, ոսկերչական եւ արծաթագրուական աշխատանքների, մետաղագործական կամ պղնձագործական տնային ու

կենցաղային առարկաների, Եկեղեցական սպասների եւ սրբազան այլ առարկաների, գորգերի, ասեղնագործական իրերի, հնութիւնների, հևախօսական կառոյցների, քանդակների, խաչքարերի, տապանաքարերի, արձանների, վիմագիր արձանագրութիւնների, նկարների, որմնանկարների եւ այլնի, որոնց քանակը եւ պատմական ու մշակութային արժեքը դժուար, գրեթէ անկարելի է ճշգրտորեն հաշուարկել: Սակայն ակսյայտ է, որ դրանց փոխհատուցման իրաւական հիմքերն այսօր առկայ են:

1918 թ. նոյեմբերի 4-ին, երբ Թուրքիան պարտութիւն կրեց պատերազմում եւ Երիտթուրքական կառավարութեան անդամները փախան երկրից, Օսմանեան կայսրութեան խորհրդարանն այդ փաստաթուղթը ճանաչեց ոչ սահմանադրական եւ իրաւական առումով անվաեր:

Իսկ սա նշանակում է, որ դեռեւս Առաջին աշխարհամարտի տարիներից Թուրքիան պատասխանատութիւն է վերցրել իր ոճիրների եւ կողոպուտների համար, եւ վաղ թե ուշ նա պարտաւոր է այն հատուցել: Դա նշանակում է, նաեւ, որ հայը շարունակելու է մնալ պահանջատեր:

ԱՐԵՏԻՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ Պատմական գիտութիւնների թեկնածու, դոցենտ

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Ըստ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի դիմանական աղքիւների Մեծ Եղեռնից առաջ Օսմանեան Թուրքիայում գործում էր 2538 հայ առաքելական Եկեղեցի:

2. Զաւեն արք., «Պատրիարքական յուշերս. Վաւերագիրներ եւ վկայութիւններ», Գահիրէ, 1947, էջ 317-322:

3. «Հայերի ցեղասպանութիւնը Օսմանեան կայսրութիւնում»: Փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու, Երեւան, 1991, էջ 562:

4. Հայկազն Գ. Ղազարեան, «Ցեղասպան թուրքը», Պեյրութ, 1968:

5. Եռլ. Բարսեղով, «Հայերի ցեղասպանու-

թեան համար նիւթական պատասխանատուութիւնը», Երեւան, 1999, էջ 6:

6. Զաւեն արք., «Պատրիարքական յուշերս. Վաւերագիրներ եւ վկայութիւններ», էջ 317-322:

7. Գ. Ահարոնեան, «1915-1965, Ցուշամատեան Մեծ Եղեռնի», Պեյրութ, 1965, էջ 50:

8. Եռլ. Բարսեղով, «Հայերի ցեղասպանութեան համար նիւթական պատասխանատուութիւնը», էջ 6:

9. Պատմա-Բանասիրական հանդես, թիւ 1, էջ 99-100:

10. Օրմանեան Ս., «Հայոց Եկեղեցին», Կ. Պոլս, 1913, էջ 259-269:

11. Յ. Տ. Ծ. Վրդ. Եարտըմեան, «Հայաստանի վանքերուն եւ Եկեղեցիներուն մշակութային կորուստը 1894-1896 եւ 1915-1925 տարիներուն», Վենետիկ - Ս. Ղազար, 2001, էջ 69:

12. Գեղրդ Մեսրոպ, «Թուրքիոյ հայոց կորուստները», էջ 809:

13. Գեղրդ Մեսրոպ, «Թուրքիոյ հայոց կորուստները», էջ 808:

14. «Հայրենիք», Պոսթըն, 1924 թ. ապրիլ, թիւ 6, էջ 98-101:

15. Յ. Տ. Ծ. Վրդ. Եարտըմեան, «Հայաստանի վանքերուն եւ Եկեղեցիներուն մշակութային կորուստը 1894-1896 եւ 1915-1925 տարիներուն», էջ 100:

16. Գեղրդ Մեսրոպ, «Թուրքիոյ հայոց կորուստները», էջ 811:

17. Լեւոն Վարդան, «Հայկական տասնիինգը եւ հայերու լքեալ գոյքերը», Պեյրութ, 1970, էջ 321-322:

18. ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 35, թ. 150:

19. Հայկազն Գ. Ղազարեան, «Ցեղասպան թուրքը», էջ 212 եւ 217:

20. Եր. Խաթանասեան, «Հայոց թիւը», Պոսթըն, 1965, էջ 22-23:



ՈՎՔԵ՞Ր ՏԻՐԱՑԱՆ ՀԱՅԵՐԻ ՈՒՆԵՑՈՒՅԹԵՒՆ

«Մայրն Խսմայիլ աղային այսպես էր խրատում. «Որդի՞ս, իմ վերջին ցանկութիւնն է, որ Եթե գնաս այդ գիւղաքաղաք, հայերից մնացած տները, դաշտերը չընդունես: Այն բնում, որի տերը փախել է, մեկ այլ թռչուն չի կարող ապաստան գտնել: Նա, ով բոյն է քանդում, չի կարող բոյն ունենալ: Բռնութիւնը բուսնում է բռնութեան դաշտում (Եաշար Ջեմալ, «Անձնելի թռչնակը», էջ 95):»

Օսմանեան կայսրութեան հիմնադրման պահից ի վեր մուսուլմանական-թուրքական տարրը համարում էր, որ իրեն վայել է միայն հողագործութիւնն ու ռազմական գործը, իսկ ոչ մուսուլմանները զինուրական ծառայութեան փոխարէն մինչեւ 1856 թ. վճարել են շիզը (գլխահարկ-շիզըն սկզբնաւորում է արարական խալիֆների օրոք եւ ապա տարածում այլադաւան երկրամասերում՝ գանձուելով քրիստոնեաներից ու հրեաներից իրեւ փրկագին, գլխագին, սկզբում՝ ամբողջ գերդաստանից, իսկ յետոյ՝ ամէն մի արու չափահասից: Զիզյեն հարկւում էր կայսրութեան ոչ մուսուլման, 14 տարին լրացած չափահաս տղամարդ հպատակներից՝ բացառութեամբ տարեցների (75 տարեկան եւ աւելի), անդա-

մալոյժների եւ ստրուկների: Արգելում էր շիզը գանձել գործազուրկներից եւ նրանցից, ովքեր տարուայ կեսից աւելին հիւանդ են եղել: Այս սկզբունքը Օսմանեան կայսրութիւնում գործածութեան մէջ դրուեց 1691 թուրքանից-ակունքի խմբ.), մինչեւ 1909 թ.՝ բեդելի ասքերի (Օսմանեան կայսրութիւնում բոլոր քրիստոնեաները եւ հրեաները բանակում ծառայութեան դիմաց վճարում էին զինուրական հարկ՝ բեդելի ասքերի համապատասխանաբար հարուստներից 60, միջակներից 30 եւ աղքատներից 15 դուրուց: Բեդելի ասքերի հարկը գանձում էր ոչ մուսուլման հպատակների՝ 5-75 տարեկան արական սերի ներկայացուցիչներից՝ անկախ նրանց ֆիզիքական վիճակից, իսկ 1914 թ. յետոյ կիրառութեան մէջ մտան «բանուրական գումարտակները»: Ոչ մուսուլմանները գլխաւորեցին արհեստն ու առեւտուրը, քանի որ այլ ուղի չէր մնացել: 18-րդ դարից սկսած՝ ռազմական ոլորտում կրած մի շարք անյաջողութիւնների հետեւանքով մուսուլման-թուրք հատուածը, որի վիճակը գնալով վատթարանում էր, աչքերը յառեց փոփոխուող աշխարհի պայմաններին համահունչ քայլելով հարստացող ոչ մուսուլմանների հարստութեանը: Երիտթուր-

քերի՝ «Ազգային տնտեսութիւն» անուան տակ քողարկուած հարստութեան փոխանցումն առաջին անգամ կիրառուեց 1913-1914 թթ. Եգեում:

ՅՈՅՆԵՐԻՆ ՍՏԻՌԵԼ ԵՆ ՓԱԽՉԵԼ

Գերմանացի գեներալ Լիման ֆօն Սանդերսի խորհրդով 4-րդ կորպուսի շտաբի պետ ճաֆէր Թայեարի (Էղիլմեզ), իզմիրի նահանգապետ Ռահմի պէյի եւ Միութիւն եւ առաջադիմութիւն կուսակցութեան գլխաւոր քարտուղար Մահմուտ Ճելալի (Պայար) ղեկավարած ճնշման եւ ահ ու սարսափի գործողութեան պատճառով իշխանաց կղզիներ եւ Յունաստան է փախել ըստ Պայարի՝ 200 հազար, ըստ Յատուկ Կազմակերպութեան ղեկավար Քուչչուբաշը Եսրեֆի՝ 1.5 միլիոն յոյն: 1924 թ. յունիսի 18-ին «Անադոլու/Անատոլիա» թերթի հետ հարցազրոյցի ժամանակ ֆինանսների նախարար Յասան Ֆեհմի պէյը ներկայացրել է միայն իզմիրի՝ «հարկադրաբար լքուած» ունեցուածքի քաղուածքները. «Յոյներից՝ 10678 տուն, 2173 խանութ եւ կրպակ, 79 գործարան, 2 բաղնիք, 1 հիւանդանոց, հայերից եւ իրեաներից՝ 1600 տուն, 2821 խանութ եւ կրպակ, 89 գործարան, 2 բաղնիք եւ 1 հիւանդանոց»: Նման գործողութիւնների ենթարկուել են նաեւ միւս քրիստոնեայ փոքրամասնութիւնները, սակայն ամենասարսափելին տեղի է ունեցել հայերի հետ:

ՏԵՂԱՐԱՆՈՒԹԻՒԾ ՍԿՄՈՒՄ Ե

1915 թ. ապրիլի 24-ին Պոլսի հայ համայնքի ողջ մտաւորականներին հաւաքել են իրենց տներից եւ ուղարկել Զանքը ու Այաշ, իսկ երկրի մասշտաբով տեղահանութիւնները սկսուել են 1915 թ. մայիսի 27-ին: Նոյնիսկ ըստ պաշտօնական պատմագիրների՝ 1915-1917 թթ. կայսրութեան ողջ հայ հպատակներին «պետութեանը դաւաճանելու» հիմնաւորմամբ երկրից բռնի աքսորելիս առնուազն 300 հազար հայ է մահացել: Իթթիհատականները տեղահանութիւնից անմիջապես յետոյ հայերից մնացած ունեցուածքի եւ անշարժ

գոյքի հետագայ ճակատագրի վերաբերեալ օրենք են ընդունել: Յամաձայն 1915 թ. մայիսի 30-ի նախարարների խորհրդի քաղուածքի եւ 1915 թ. յունիսի 10-ի կանոնադրութեան՝ կառավարութիւնը տեղահանութեան Ենթարկած շրջաններում ստեղծելու եր լքեալ գոյքերի յանձնաժողով, որը կազմուած էր լինելու 2 վարչական եւ մեկ ֆինանսական գծով աշխատողից:

Իթթիհատականների պարագալուինսերից Ահմետ Ռզզայ պէյը, երբ հարցը խորհրդարանում դրուած էր քննարկման, ասել է, որ այս լքեալ գոյք արտայայտութիւնը օրենքներին հակասում է, որովհետեւ հայերն այս չեն լքել, ստիպուած են եղել լքել, սակայն, քնականաբար, ականջ դնող չի եղել: Յամաձայն կանոնադրութեան՝ յանձնաժողովները տեղահանութիւնից յետոյ լքեալ տները կնքելու էին եւ, ներսի իրերի հետ միասին արժեւորելով, գրանցելու էին: Այլ ունեցուածքների թուրմ կենդանիները, անշարժ գոյքից եւ հողակտորից ստացուած գիւղատնտեսական ապրանքները եւ այս ապրանքը, որը, հաւանական էր, կը փճանար, աճուրդի եր հանուելու, իսկ ստացուած գումարը տիրոջ անունով յանձնուելու եր խնայողական դրամարկերին: Եկեղեցիների իրերը, նկարներն ու Սուրբ գրքերը հաստատելու էին քաղուածքով եւ ապահովելու տեղում պահպանումը: Այստեղ հարց է առաջանում. Եթե հայերի տեղահանութեան մասին պաշտօնական թեզի հիմքում ընկած է «դաւաճանութեան» հիմնաւորումը, ապա այդ ժամանակ իթթիհատականներն ինչո՞ւ, պետական սովորոյթին համապատասխան, հայերի ունեցուածքը բացայաց չեն բռնագրաւել, այլ փորձել են սքողել: Այս հարցի պատասխանն, ըստ եղեան, թաքնուած է իր իսկ մէջ: Այս հարցը թողնենք մեկ այլ յօդուածի համար եւ շարունակենք: Թողի վրայ մնացած որոշումները շատ գեղեցիկ են, սակայն ի՞նչպէս կեանքի կոչուեցին:

ԱՐԴԵՕՇ ԼԵԵՎ ԳՈՅՔ Ե

Մինչեւ 1916 թ. յունուարը ստեղծուել է շուրջ 33 լքեալ գոյքի լուծարման յանձնաժողով: Անհրաժեշտ էր, որ նրանք, ովքեր

պնդում էին, թէ պարտատեր են, իրենք անձամբ կամ ել ներկայացուցչի միջոցով երկու ամսուայ ընթացքում դիմեն յանձնաժողովներին: Վրտերկրում ապրողների համար ժամանակահատուածը 4 ամիս էր: Դիմողների հաղորդագրութեան համար թաղամասում, որտեղ գտնւում էր յանձնաժողովը, բնակարան էր առանձնացուել: Պարտատերը կարող էր 15 օրւայ ընթացքում յանձնաժողովի գնահատած գնի վերաբերեալ իր առարկութիւնը ներկայացնել: Կռարկութիւնը կարելի էր ներկայացնել առաջին ատեանի դատարան, սակայն դատարանի որոշումը բեկանման ենթակայ չէր:

Բնականաբար ձեզ հետաքրքրել է, թէ պաշտօնական պատմագրերի այսքան շատ գովաբանած համակարգն ի՞նչպէս է աշխատել, սակայն ձեր հետաքրքրութիւնը չի բաւարարուելու, քանի որ այս մատեանները գոյութիւն չունեն: Այդ դեպքում դիմենք այլ աղբիւների: Նախ եւ առաջ՝ պէտք չէ գուշակ լինել՝ ենթադրելու համար, որ ըստ վայրի՝ 1 ժամից մինչեւ 15 օր տրուած ժամանակահատուածում Տէր Զօրի անապատներ աքսորուածների համար այս գործընթացը իրականացնելն անհնարին էր: Ըստ եռլեան այլ աղբիւներից էլ ենք իմասնում, որ հայերից բռնագրաւուած ունեցուածքի մի մասը թալանել են տեղացի թուրք, քիւրտ եւ չերքեզ պարագլուխները, իսկ մի մասն էլ բաժանուել է Պալքաններից եկած գաղթականներին: Մի մասը, «մուսուլման-թուրք» կապիտալիստ ստեղծելու նպատակով, առանց որեւէ գին պահանջելու կամ շատ ցածր գներով եւ ապահիկով տրուել է մուսուլմաններին կամ ել մուսուլմանական հաստատութիւններին: Որոշ շենքերի եւ դաշտերի արտադրանքը վաճառել եւ շահոյթը տուել են բանակին: Որոշ շենքեր օգտագործել են որպես բանտ, դպրոց, հիւանդանոց եւ ոստիկանական բաժանմունք: Մսացած գումարով էլ հոգացել են հա-



Մարութան սար

յերի տեղահանութիւնների ծախսերը, նաեւ որոշ շրջաններում հայերին սպաննած ոստիկանների ծախսերը: Յետեւաբար՝ հայերին յետ վերադարձնելու գումար չի մնացել...

ԹԱԼԱՆԻՉԱՆԵՐԸ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹ' ԵՆ

Որպէսզի պաշտօնական պատմագիրներն ապացուցեն, որ տեղահանութիւնները հայերին ոչչացնելու նպատակ չեն հետապնդել, այս պատմութեան մի մասն է կազմում նաեւ յաճախ կրկնուող այս թեման, թէ «տեղահանութեան ժամանակ իրենց պաշտօնը չարաշահելու հիմնաւորմամբ 1397 մարդու նկատմամբ հետաքննութիւն է սկսուել, եւ նրանց մեծ մասի նկատմամբ տարբեր պատժամիջոցներ են կիրառել, այդ թուում նաեւ՝ մահապատիժ»: Այսքանով, որքանով ներկայացւում է հետազօտողներին օսմաննեան պահոցներում, յատկապէս՝ ներքին գործերի նախարարութեան ծածկագրութեան բաժնի փաստաթղթերի մէջ, որտեղ գտնւում են հարցի հետ առնչուող ամենաշատ փաստաթղթերը, տեղահանուած հայերի նկատմամբ ոճրագործութիւն եւ նմանատիպ յանցագործութիւններ իրականացրած պետական պաշտօննեանների դէմ բացուած հետաքննութիւնների վերաբերեալ որեւէ փաստաթուղթ չկայ: Ըստ եռլեան՝ ո՞չ օպամուրան Գիւրինը, ով առաջին անգամ առաջ է քաշել 1397 թիւը, եւ ո՞չ էլ նրան երաշխաւորած Եուսուփ Յալա-



ծօլուն որեւէ փաստաթուղթ չեն հրապարակել, որը կը հաստատեր այս պնդումը: Ի հակադրութիւն սրա՝ կան բազմաթիւ դատավարութիւններ հայերի թողած ունեցուածքը թալանելու, գողանալու, կաշառը եւ պարտը տալու մեղադրանքով: Սակայն յարուցուած դատական գործերի պատճառը ոչ թէ հայերի կրած վնասները հատուցելն էր, այլ հայերի ունեցուածքի վաճառքից ստացած շահոյթը, որը կառավարութիւնը ցանկանում էր չափազանց համակարգուած ձեւով օգտագործել, առանձին անհատների կողոպուտից պաշտպանելը: Վերոյիշեալ 1397 հոգին ձերբակալւել է ոչ թէ հայերի, այլ պետութեան դեմ յանցանք գործելու համար:

պանութեան նախարար Ֆերգի (Չարմաք) պէյջ 1921 թ. յունուարի 22-ի գաղտնի նիստի ժամանակ նշելով, որ երկրում մեծաւ մասամբ Սեւծովի շրջանում, դեռեւս բնակուում է 800 հազար քրիստոնեան յայտնել է իր մտահոգութիւնը, որ ոչ մուսուլմանները երկրի տնտեսական կեանքում շարունակում են պահպանել իրենց դիրքերը: Ըստ գեներալի՝ անհրաժեշտ է քրիստոնեաներից զինուորական ծառայութեան դիմաց գանձել բեղելի ասքերի հարկ, նրանց օգտագործել արհեստանոցներում, ճանապարհների, կամուրջների եւ թունելների կառուցման եւ նմանատիպ աշխատանքներում: Ի պատասխան Ֆերգի պէյի այս առաջարկի՝ Մալաթիայի պատգամաւոր Ֆերգի Էֆեստին «կեցես»-ների ժամանակ պահանջել է. «Պարոնա՛յք, հայերի կատարած վատութիւնը, դաւաճանութիւնը յայտնի է, հայերից, յոյներից եւ հրեաներից գանձել 500 լիրա բեղելի ասքեր հարկ եւ ուղարկելով Երզրում, Սվագ՝ աշխատեցնել ճանապարհների շինարարութիւններում: Յետոյ էլ յաւելել է. «Սպատակս նրանց շախշախնելն է»: Այս առաջարկութիւնների եւ իթթիհատականների՝ 1914 թ. հայերին «բանտորական գումարտակների մէջ ընդգրկելով ոչնչացնելու» միջեւ նմանութիւնն ակընյայտ է:

ԻԹԹԻՀԱՏԱԿԱՆ ՌԵՖԼԵՋՍ

1918 թ. հոկտեմբերի 30-ին, երբ Մուլդրոսի զինադադարով օսմանեան պետութիւնն ընդունեց իր պարտութիւնը, դաշնակից պետութիւնների առաջին գործը եղաւ այս հարցը: Նոյնիսկ նոյեմբերի 1-ին այս հարցի վերաբերեալ հրաման են արձակել, սակայն երկրում առկայ պայմանների պատճառով հնարաւոր չի եղել կիրառել: Լաւ, ազգային ազատագրական պայքարի մասնակիցները, որոնք առանձնայատուկ նշում էին, որ Օսմանեան կայսրութիւնը այլեւս չի շարունակելու գոյութիւն ունենալ, այս հարցի վերաբերեալ ի՞նչ են արել: Արել են հետեւեալը՝ պաշտ-

ԱՉԳԱՅԻՆ ՆԱՐԱՏԱԿՆԵՐ

1921 թ. օգոստոսի 7-ին, համաձայն գլխաւոր հրամանատարութեան մասին օրենքի, մեծիսի բոլոր իրաւասուներին իր շուրջը հաւաքած Մուլսթաֆա Քեմալը թշնամու դեմ պատերազմը ֆինանսաւորելու համար հրապարակել է «Ազգային հարկահանութեան» մասին օրենքը: 10 կետից բաղկացած օրենքի 6-րդ յօդուածում մասնաւորապես ասւում է. «Բանակի կարիքները հոգալու համար առգրաւուելու է երկիրը լքածների ունեցուածքը, որն անցել է գանձարանին»: Մինչեւ այստեղ բաւականին հասկանալի է, բացի այդ՝ Ուրֆայի մութասարորիֆ (սանճարի կառավարիչ)

Նուսրեթ պԵին, ում 1921թ. դԵԿՏԵՄԲԵՐԻ 25-ին Պոլսի ռազմական արտակարգ ատեանում տեղահանութիւնների ժամանակ կոտորածների հրաման արձակելու համար մԵղաւոր են ճանաչել եւ կախաղան բարձրացրել, ինչպէս նաեւ 1922թ. հոկտեմբերի 14-ին նոյն դատարանում նոյն մԵղադրանքով մահապատժի ենթարկուած Բողազլեանի մութասարդիֆ քԵմալ պԵին նախ՝ «ազգային նահատակ» հռչակելը, յետոյ էլ՝ նրանց ընտանիքներին «լքեալ գոյք» գործընթացից պԵտական թոշակ նշանակելը չափանց տրամաբանական էր:

Այսպէս, օրինակ, քԵմալականները Լոզանի հաշտութեան բանակցութիւնների ժամանակ պարտաւորուել են վճարել Օսմանեան կայսրութեան միւս պարտքերը, սակայն չեն համաձայնել վերադարձնել հայերի ունեցուածը: Լոզանում Թուրքիայի ստանձնած պարտքերի շարքում էր նաեւ համաձայն Պատերազմական հարկերի մասին օրենքի՝ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ոչ մուսուլմաններից բնագրաւուած այն գոյքը, որի արժեքը պԵտք է վճարուէր պատերազմից յետոյ, սակայն պայմանագիրը ստորագրելուն պէս Թուրքիան սկսեց մտածել՝ ինչպէս գլուխն ազատի այս պարտքից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼ ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՔԻՆ

Նախ՝ 1923թ. սԵպտեմբերին կայացրել են որոշում, համաձայն որի՝ արգելուել է պատերազմի ընթացքում Կիլիկիայից (Աստանայի շրջակայք) եւ Արեւելեան Անատոլիայից գաղթած հայերի վերադարձը: 1924թ. ապրիլի 3-ին փոփոխութիւններ կատարելով Ըստանուր հաշուառման մասին օրենքի 2-րդ կտուր՝ դրանով իսկ ապահովեցին, որպեսզի



ոչինչ վճարեն ոչ մուսուլմաններին, որոնց ունեցուածքը բռնագրաւել էին Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ: 1926թ. օգոստոսին յայտարարուեց, որ պԵտութիւնն իրաւունք ունի բռնագրաւել ոչ մուսուլմանների ողջ ունեցուածքը, որը ձեռք է բերուել նախքան 1924թ. օգոստոսի 19-ը՝ Լոզանի պայմանագրի ուժի մԵջ մտնելը: 1927թ. փետրուարի 2-ին ընդունած մԵկ այլ որոշմամբ նախկինում «ազգային հերոս» հռչակած Բողազլեանի կայմակամ քԵմալ պԵիի կնոջն ու երեխաններին Պոլսում յատկացրեցին հայերից մնացած 20 հազար լիրա արժողութեամբ անշարժ գոյք: 1927թ. որոշում ընդունեցին, ըստ որի՝ Լոզանի պայմանագրից յետոյ արտերկրում գտնուողները դադարելու են լինել Թուրքիայի քաղաքացիներ: 1927թ. դԵկտեմբերին տեղահանութեան մԵղաւորներից Ուրֆայի մութասարութ Նուսրեթ պԵիի ընտանիքին տուեցին հայերից մնացած ունեցուածը: Յատկացումները չսահմանափակուեցին միայն սրանով. տեղահանութիւնների ժամանակ ամենարինուտ ձեռագիրը թողած Յատուկ Կազմակերպութեան ղեկավարներից դոկտոր Պահաւտուին Շաքիրի, Շիարպեքիրի նահանգապետ դոկտոր Ռեշիտին եւ Թիֆլիսում քԵմալ փաշայի հետ մահափորձի ենթարկուած օգևական Նուսրեթ պԵիի ընտանիքներին եւս յատկացրել են հայկական ունեցուածը: Սակայն ամենավտանգաւորն այն է, որ տներից մԵկը՝ Զանքայա պալատը, որը հանդիսանում է հանրապե-

տութեան խորհրդանիշ շԷնքերից մԵկը, կառուցուել է բռնագրաւուած հայկական հողակտորի վրայ: Հասկացողի համար սրանք շատ խօսուն են...

ՆՈՅՆԻՍԿ ԶԱՆՔՎԱՅԻ ՊԱԼԱՏԸ

Ուշադրութիւն դարձնենք չակերտներում գրուածին. «Զանքայա պալատը Գասապեան ընտանիքը ոչ մԵկին չի վաճառել: Ժամանակի կառավարութիւնը ոչ միայն այդ պալատը, այլև ողջ ունեցուածքը վերցրել է ընտանիքի ծեռքից եւ 1915 թ. օգոստոսին նրանց աքսորել: Քանի որ հայրս (ծուլնով Անգարայից, 1887-1930) այդ ժամանակ աշխատելիս է եղել օտարերկրեայ հիմնարկութեանը պատկանող երկաթգծում, ողջ ընտանիքին Անգարայից (Գոյնայի ճանապարհով) Պոլիս է փախցրել: Բացի այդ՝ Գասապեան ընտանիքին պատկանած ունեցուածքի շարքում է եղել Քեչիօրենում գտնուող այգով տնակը, որին տիրացել է Վահրի Ջոյ ընտանիքը: 15 կամ աւելի շատ տարի առաջ Պոլսոյ թերթերից մԵկում լոյս էր տեսել այս այգով տնակի լուսանկարը (այս տնակը վերածուել է Վահրի պեյի թանգարանի): Մայրս լուսահոգի Վահրի պեյին նամակ էր գրել: Պարոն Վահրին էլ մօրս ուղարկել էր այդ տնակի գունաւոր լուսանկարները... Բացի այդ՝ պապիկին ընտանիքը եւ եղբայրները իրենց միջոցներով մի եկեղեցի (հայ կաթոլիկ) էին կառուցել, այս եկեղեցին էլ է փլուզուել...»:

Այս տողերը պատկանում են Գասապեան ընտանիքի անդամ Եղուարդ Զ. Չուխաչեանին, ովքեր հասդիսանում են այս անշարժ գոյքի տերերը, որի վրայ կառուցուել է Զանքայա պալատը: Ինչպէս յիշում էր, «Յիւրիյէթ»-ի պատմութեան վերաբերեալ հրապարակումներով հանդես եկող Սոներ Եալչընն իր «Զանքայա պալատի առաջին տերը հայ Եր» սենսացիոն յօդուածում (25.03.2007) պատմութիւնը խճճելով ասել է, թէ «պալատի ուսկերիչ հարուստ տերը պատերազմի ժամանակ քաղաքը լքելիս իր այգով տնակը իրերի հետ միասին վաճառել է Անգարայի յայտնի ընտանիքներից Բուլգուրլուզադեներին»: Սակայն լուրը ուղղելու համար Սոներ Եալչը-

նին ուղղուած Եղուարդ Զ. Չուխաչեանի գրած վերոյիշեալ նամակը չի հրապարակուել: Այս փոքրիկ շեղումից յետոյ վերադառնանք մեր թեմային:

ԹՈՒԵՐԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՊԵՏԱԿԱՆ ԳԱԴՏՆԻՔ

Չգիտենք՝ հայերից որքան ունեցուածք է մասել, որովհետեւ այդ շրջանից մնացած թափուները հետազօտողների համար հասանելի չեն: Ինչպէս յիշում էր, երբ 2005 թ. գնման կայքագրի ռեստրի տնօրինութիւնը իր պահոցների՝ օսմանեան ժամանակաշրջանին պատկանող գնման կայքերի փաստաթղթերը ցանկացաւ նման կայքագրերի պահոցների թուայնացում նախագծի շրջանակում ժամանակակից թուրքերնի վերածել եւ թուայնացել ու փոխանցել պետական պահոցների գլխաւոր վարչութեանը, ազգային անվտանգութեան խորհրդի զօրահաւաքային եւ պատերազմական նախապատրաստութիւնները պլանաւորող վարչութեան տնօրինութիւնը ստանձնած գեներալ-մայոր Թայեար Էլմասի ստորագրութիւնը կրող գրութեամբ նշելով, թէ նման նախաձեռնութիւնը պետութեան շահերի տեսանկիւնից վտանգաւոր է, խոչընդոտեց նախաձեռնութիւնը: («Մեր պահոցները բաց են» ասող պարծենկուտներին է նուիրում):

Եթէ մեր երկրի աղբիւներից տեղեկութիւն չենք կարողանում ստանալ, այդ դեպքում ստիպուած ենք նայել, թէ օտարներն ինչ են ասում: Նման աղբիւներից մԵկը Բրիտանիայի արտաքին գործերի նախարարութիւնն է: Յամաձայն այստեղ գտնուած մի փաստաթղթի՝ 1918 թ. Բրիտանիայի նախկին վարչապետ սըր Ճեյմս Պոլտուինը եւ իր օգնական Յերբերտ Ասքուիթը նոր վարչապետ Ռամզի Մաքտունալտին ուղղուած իրենց գեկոյցներում նշելով, թէ ինչի համար է անհրաժշտ Օսմանեան կայսրութեան հայերին նիւթապէս օգնել, ասում են. «1916 թ. թուրքական կառավարութիւնը 5 միլիոն թուրքական ֆունտ (համարժեք է մօտաւորապէս 33 տոննա ոսկու) Պերլինի Ռէյխս բանկում է ներդրել, որի մԵծ մասը հայերի փողն է»: Իսկ Դոյչ բան-

Կում պահուող եւ լեգենդ դարձած հայերի ոսկիների քանակը անյայտ է:

Ո՞Վ Է ՀԱՇՈՒԻ ՆՍՏՈՒ ԼՈՒԱՆԻ ՀԵՏ


100 ՄԻԼԻԱԾ ՏՈՒՏՐԻ ՊՆԴՈՒՄԸ

Յամաձայն 1919 թ. Փարիզում Յայոց Ազգային Խորհուրդ կոչուած հայկական կազմակերպութեան պատրաստած գեկոյցի՝ 1915-1917 թթ. տեղահանութիւնների ժամանակ հայերից բռնագրաւուած ունեցուածքի մոտաւոր արժեքը մոտ 19 միլիառ ֆրանսական ֆրանք է կազմում: (1914 թ. մինչեւ 1915 թ. վերջը 1 օսմանեան լիրան կազմում էր 22,8 ֆրանսիական ֆրանկ: Զանի որ 1916 թ. յետոյ տպուեց օսմանեան թղթադրամը, փոխարժեքի կուրսը մեծ թափով ընկաւ): Յամաձայն նոյն կազմակերպութեան պնդման՝ բռնագրաւուել է հայերի ինչպէս օսմանեան, այնպէս էլ եւրոպական բանկերում պահուող փողերը: 1925 թ. Միացեալ Նահանգների Սենատի ընսարկումների ժամանակ ենթադրուում էր, որ հայկական ունեցուածքի գինը կազմել է 40 միլիոն ամերիկեան տոլար: Այսօր որոշ հայ հետազոտողներ առաջ են քաշում այն տեսակետը, թէ տեղահանութիւններից յետոյ բռնագրաւուած հայկական հարցստութիւնը համարժեք է 14,5 միլիառ ֆրանքի (այսօրուայ փողով 100 միլիառ տոլար):

Կսում են՝ Թալեաթ փաշան գործը հասցրել է Նրան, որ պահանջել է հայերի՝ ամերիկեան ապահովագրական ընկերութիւնների փողերը. Ամերիկայի արտակարգ եւ լիազօր դեպան Յենի Մորկենաթուն իր յուշերում գորում է, թէ Թալեաթը ասել է. «Երանի թէ դիմէիք ամերիկեան կեանքի ապահովագրման ընկերութիւններին եւ տայիք հայկական վկայագրերի տերերի ողջ ցուցակը: Ամեն դեպքում այժմ բոլորը մահացած են, չունեն նաեւ ժառանգներ, ովքեր կը ստանան գումարը: Բնականաբար, այս ամենը մնում է պետութեանը: Այժմ կառավարութիւնն օրինական ժառանգործն է, չէի՞ք կարող դա կատարել»:

Ըստ 1914 թ. գրանցումների՝ օսմանեան պետութիւնում հայերն ունեցել են 2538 եկեղեցի, 451 վանք եւ 2 հազար դպրոց: Տեղահանութիւնից յետոյ հայկական գիլդերում ու քաղաքներում բնակեցուած մուսուլման բնակչութեան առաջին գործը եղել է կենտրոնական եւ գեղեցիկ Եկեղեցիները վերածել մզկիթի: Իսկ մնացածն օգտագործուել է որպէս ամբար, պահեստ եւ ձիանց:

Լոգանի բանակցութիւնների ժամանակ Թուրքիան ներկայացնող դոկտոր Ռզզա Նուրը, ով մեծիսի ռասիստական-թուրքականութեան թեւից էր, Արեւելեան ռազմաճակատի հրամանատար Թեազիմ Կարաբեքիրին ուղղարկած 1921 թ. մայիսի 15-ի իր նամակում ասում էր. «Եթէ կարողանաս Ասիի հետքերը երկրի երեսից չնշել, դրանով Թուրքիային մեծ ծառայութիւն մատուցած կը լինես»: Վերոյիշեալը միջնադարեան հայկական թագաւորութեան մայրաքաղաքն էր: Կարաբեքիրն իր յուշերում գրել էր, որ մերժել է Ռզզա Նուրի առաջարկը, որովհետեւ Ասիի աւերակները Սուամպուլի պարիսավերի նման ընդարձակ մակերես են զբաղեցնում, շատ դժուար կը լինի յաջողել նման գործը, աւելին՝ նման նախաձեռնութիւնը անհանգստութիւն կը պատճառի մնացած հայերին: Վերջին շրջանում Ռզզայ Նուրի գիտակցութիւնը տեղն ընկաւ, եւ հրաժարուեց Ասին գետնի երեսից վերացնելու մտքից:



Թեւ 1924 թ. Լոգանի հաշտութեան պայմանագրի 42-րդ կետում ասւում է՝ «Թուրքական կառավարութիւնը Եկեղեցիները, սինակոկները, գերեզմանցները եւ միւս կրօնական կառոյցներն իր ամբողջական պաշտպանութեան տակ առնելու երաշխաւորը պետք է լինի», ըստ 1974 թ. «ԵՌԻՇԵՍՈԶՕ»-ի զեկոյցի՝ մասցել է 913 Եկեղեցի եւ վանք: Դրանից յետոյ սրանցից 464-ն ամբողջութեամբ աւերուել է: 252-ը փլուզման է վտանգի տակ է, իսկ 197-ը լուրջ վերանորոգման կարիք ունեն: Սակայն Վանի Աղթամար կղզու Սուլր Խաչ Եկեղեցու վերանորոգման ընթացքում տեղի ունեցածը յիշողութիւններում դեռ թարմ է:

ԳՐՈՂՆԵՐԻ ԱՉՔԵՐՈՎ

Պատմութիւնը միշտ փաստաթղթերի մէջ չէ: Երբեմս մի վեպում, երբեմս մի քանաստեղծութեան, երբեմս մի նկարի մէջ ել հանդիպում ենք «պատմական իրականութեան» հետ առնչուող հետքերի: Նոյնիսկ երբեմս այս տողերը պատմական փաստաթղթից աւելի ազդեցիկ են եւ մտածելու տեղիք են տալիս: Ահա մի քանի օրինակ.

«Երբ Եկար գիւղաքաղաք, բռպիկ էիր: Եւ երբ հայերը փախչում եին, հայերի ամենագեղցիկ տանը դու քնակուեցիր: Արթին Զիւլեքեանի տունը, Զենտիրլիի առանձնատունը դու և այսական սարցեցիր: Ջո ծանօթներին, քչուոր թուրքմէն աղաներին, ազդեցիկ մարդկանց նորից դու քաժանեցիր հայերի տները: Վրաններից անցան հայկական առանձնատուն... Ի՞նչպէս ձեռք բերեցիր Յայկ Թօփուզեանի այն հողակտորի թափուն (սեփականութեան վկայականը), որի հողն արեամբ հեղեցիր, պարո՞ն ուսուցիչ (...): Ինչու Վարդան Բեղեանի 6 հազար տեղուում դաշտը Նրանից յետոյ մէկ օրուայ ընթացքում անմիշապէս տուեցիր: Զեղանից բացի էլ ո՞վ կարող էր մտածել, որ հայկական աւերակները, որոնց մի մասում քնակեցրել էիր քրտերին, մնացածն էլ աւերուել էր, շատանալու են (Եաշար Զեմալ, Դարբինների շուկայի ոճրագործութիւնը, էջ 353-354):»

Օրիան Զեմալն իր «Յողեր» վեպում ընթեր-

ցողին ներկայացնում է, թէ ժողովրդահանրապետական կուսակցութեան անդամ Նետիմ աղան ինչպէս է կուտակել իր հարստութիւնը. «Նետիմ աղայի համար սրանից բացի ոչինչ չկար, որ կատարէր կուսակցութեան կարեւոր մարդկանց դէմ: Որովհետեւ այս գործարանը, որի մասին ընկուզենու սեղանի վրայ հիմա խօսում է նահանգային վարչութեան պետի հետ, տարիներ առաջ այս կուսակցութեան պատգամաւորը յարգարժան մէկի օգնութեամբ կրկին էժան գներով գնել էր լքեալ գոյքից, տարեցտարի զարգացնելով ընվայնել էր: Կուսակցականների ձեռքին այս գործարանը մի տեսակ դամոկլեան սրի էր նման: Երբ գլուխները տաքանում էին, անմիշապէս ձեռքից վերցնում էին, այս գործարանը գիշերները քունը փախցնում էր նրանց աչքերից ...»:

Նոյն վեպում գործարանի քարտուղարն ու կշռավարը խօսում են Նետիմ աղայի մասին. «Նետիմ աղայի մասին ամեն ինչ գիտե՞ս (...): Յայերի տեղահանութեան ժամանակ կտորի խանո՞ւթ է հեշտութեամբ ձեռք բերել: Իր նմանների հետ միաւորուելով՝ մարդու կոկո՞րդ է կրծել: Երկուսն ել կայ: (...) Սրանք Կեսարիայի գիւղացիներից են, որոնք հարիւներով ամեն տարի Կիլիկիա են իշել. յայտնի է, որ այդ ժամանակ հայերն ու յոյները առեւտուրը վերցրել են իրենց ձեռքը՝ անխոդօրէն հարստահարելով օսմանեան պետութեանը: Յենց այդ ժամանակ զահընկց են անում սովորան Յամիտին: Սահմանադրութիւն: Սիութիւն եւ առաջադիմութիւն: Ազգային հարուստներ աճեցնելու նորոյթ: Յետոյ էլ՝ հայոց տեղահանութիւնները: Այս Նետիմի տնօրէն պարոնն էլ հայ էր, փախչելու էր թուրքիայից: Նետիմին ասել է. «Այ Նետիմ, թեզ սիրում եմ, դու խօսքի մարդ ես»: (...) Ունեցուածքիս տէր կանգնիր, իմ փոխարէն գործերս ղեկավարիր: Վաստակիր, կեր խմիր, թող հալալ լինի: Ինձ էլ արդէն ինչ էլ որ ուղարկես... (Օրիան Զեմալ, Արիւնոտ հողեր, 1972, էջ 102-103):» Յետագայում հեղինակից իմանում ենք, որ Նետիմին այդ մարդուն ոչինչ էլ չի ուղարկում: Նետիմ պէյի տունը եւս հայերից մնացած քարաշէն առանձնատուն է եղել:

«Այս ժամանակուայ Յոնագի աղաներից ոմանք, որոշ ժանտարմներ, որոշ ստորագր աւագակներ թալանեցին յոյների տև-

ոք... կողոպուտ, աւար: Զարփըզը կոչուած մէկը տների կարի մեքենաները, կահ-կարասին թալանեց: Ոմանք հաւաքեցին վերմակ, բարձ, թաւա: Թալանեցին՝ ինչ որ կար տներում, մինչեւ անգամ աղիւս, դուռ եւ պատուհան: Ոմանք հարստացան այդ աւարով (Եալ-ըն Քեմալ- Վստահուած օժիտ, փոխանակած մարդիկ, «Քելգէ» հրատարակչութիւն, 1998, էջ 13):

ՄԱՐԴ, ՈՒՄ ՈՉ ՈՉ ԶԵՐ ՍԻՐՈՒՄ

Պատմաբան Ռեֆիկ Ահմետ Ալթընայն իր «Երկու կոմիտէ, երկու ոճիր» («Քերիքէշ» հրատարակչութիւն, 1994) աշխատութեան մէջ պատմում է, թէ պատերազմի ընթացքում Պոլսից Էսքիշեհիր փախած պետական այրերն ինչպէս են բաժանել աքսորուած հայ քաղաքացիների ունեցուածքը. «Վիթխարի հայկական առանձնատունը յատկացրին շեղատեներին (արքայազն), Սարըսու կամուրջի շրջակայքում գտնուող դեղձանիկի դեղին գոյնի պէս իրար կողքի կառուցուած երկու հայկական տները՝ Թալէաթ պէյին եւ իր մտերիմ ընկեր Զանպուլաթ պէյին, ներսում՝ հայկական թաղամասում, հիասքանչ մի հայկական առանձնատուն՝ Թօփալ Խսմայիլ Յաքքին. կայարանին մօտ գտնուող քնակուելու համար յարմար բոլոր տները յատկացուել եին իթթիհատականների ամենակարեւոր պետական այրերին (էջ 10):

«Արդէն հանել եին նաեւ Էսքիշեհիրի հայերին: Արժէքաւոր գորգերն ու իրերն ամբողջութեամբ իրենց տներում եր: Սակայն սրանց պաշտպանութիւնը կառավարութեան կողմից շատ թոյլ եր: Անտեր մնացած տները իբր պահպանում եին ոստիկանները: Մինչդեռ գիշերները գորգերը, մանր եղշերաւոր անասունը, արժէքաւոր իրերն ամբողջութեամբ գողանում եին: Նոյն իրավիճակը երդի ունեցաւ իզմիտի Ատափազարի պարպումի ժամանակ. իրերը թալանելուց յետոյ, որպեսզի հետք չմնայ, տները հրդեհեցին (էջ 34-35):»

«[Եգեյի] հայ մեծահարուստների տները գնել են, սակայն առաջարկն անելուն պէս փողերը բռնի ուժով յետ են վերադարձրել... Այս տառապանքները լսելուց յետոյ անհնար

է չագդուել... Այս գործողութիւնը մարդկութեան անունից ոճրագործութիւն էր: Ոչ մի կառավարութիւն ոչ մի ժամանակ այսքան դաժան ոճրագործութիւն չէր սանձագերծել (Էջ 45):» Յիշեցնենք, որ Ահմետ Ռեֆիկ Ալթընային իթթիհատականներն ընդհանրապէս չեին սիրում, այս պարզաբանումների պատճառով հանրապետական շրջանում շարունակաբար ճնշումների է ենթարկուել, նրա աշխատութիւններն արգելուել են, կորցրել է համալսարանի աշխատանքը, մատնուել է աղքատութեան, մահացել է չքաւորութեան մէջ:

ՎԵՐՉԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

1923 թ. ընակչութեան փոխանակումը, 1942 թ. ունեցուածքի հարկը, 1955 թ. սեպտեմբերի 6-7-ի կողոպուտը, 1963 թ. յետոյ 40 հազար յոյնի՝ Թուրքիայից բռնի տեղահանումը իթթիհատականների սկիզբ դրած «կապիտալի թուրքացման» քաղաքականութեան շարունակութիւնն է: 1974 թ. Վաքրֆների ունեցուածքի իրացումը այս գործողութեան վերջին ճիգն էր: Այս վերջին իրացումը բռնագրաւուած գոյքի կողքին նման է ովկիանոսում ջրի կաթիլի, սակայն տեսնելով, թէ նոյնիսկ սրանք չվերադարձնելու համար որքան են այս ու այս կողմ ընկնում, եւ չնայած վաքրֆների մասին օրենքի բոլոր թերութիւններին՝ անհնար է զգնահատել Վրդարութիւնն եւ զարգացում կուսակցութեանը: Ծիշըն ասած, երբ վարչապետ Երտողանն ասում է, թէ «թուրքերն ենթեամբ ցեղասպան չեն», եւ որ «հայերի միակ տարտը թուրքերից փոխհատուցում պոկելն է», մեզ ստիպում է մտածել, թէ ինքը պատմութեան հետ առերեսուելու հարցում հետեւում է պաշտօնական տեսակետին, այսուամենայնիւ, եկեք չկորցնենք մեր յոյսը:

ԱՅՃԵ ՀԻՒՐ
Թարգմանեց՝ ԱՆԱՐԻՏ ՅԱՐՏԱՇԵԱՆ

ՈՒԹ ՊԱՏԿԵՐ, ՈՒԹ ԽՈՐՅՈՒՐԴ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ, ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՈՅԱՏԵՒՄԱՆ ՀԱՄԱՐ

ԴԱՍԱԳԻՐՁ ԵՒ ԶԱՐՏԵՍ

«Գերմանիոյ Պրաևտերպուրկի երկրամասը Յայոց ցեղասպանութիւնը ներառած է դպրոցական իր դասագիրքերուն մէջ»:

Այս յայտարարած է Յայաստահի մօտ Գերմանիոյ դեսպան Յանս Եոհան Շմիտը: Ընորհակալութիւն, պատմականորեն հասունացած ինքնաքննարկումին համար:

Նախորդ դարու սկիզբները՝ Գերմանիոյ քարտիսագրական ռազմաւսումնասիրական ու հետազոտական իիմսարկը, 1915-1922 տարիներուն հրատարակած էր մօտ 1000 մասնագիտական քարտեսներ, ախտաճանաչելով ու բնորոշելով թրքական, այլեւ թիկունքային՝ հայկական, յունական, պուտական, գինական, զօրաբանակային, հայդուկային, աւելին՝ տեղահանութեան ու արսորավայրերու ճանապարհներ, ու զանոնք

օրը-օրին յանձնած Թուրքիոյ գինուորական բարձրագոյն հրամանատարութեան, ռազմական ու ռազմավարական Վճռորոշ առաւելութիւններ ու գերակայութիւններ ընծեռելով Թուրքիոյ եւ իր այլեւայլ սպասարկութիւններուն:

Գերմանական շեշտակի այս թրքասիրութիւնը կու գայ վերահաստատելու հինեւն եկող քաղաքագինուորական այն ծանօթ տոկման, որ մեծ ուժերը կը կիրարկեն միայն ու միայն իրենց շահերուն ծառայող քաղաքականութիւն, երեւութապէս չեզոքութիւն խաղալով, բայց խորքին մէջ սուլթաններու, Երիտ. թուրքերու, քեմալական եւ նեօ-օսմանեան իշխանութիւններու ի նպաստ դիւանագիտական դիրքաւրումներ որդեգրելով:

Ներ վերցես, Երտողանի Գերմանիա այցելութեան առիթներն մէկն ալ թուրք-գերմանական վերջին յիսուն տարուան բարեկամութիւնն էր: Ինչ յիսուն, կը վախսան հարիւր ըսելու: Յիսունը անմեղ թիւ է, հարիւր արիւնով լեցուն թիւ է... Երտողան Գերմանիա պիտի այցելէր լայնախոհութեան մրցանակ ստանալու համար: Բարեբախտաբար, 25 հազար քաղաքացիներու ցոյցը պատճառ դարձաւ որ իր պարգեւատրումը առկախուի դատական կազմին կողմէ:

Գաղտնիք չէ, որ Գերմանիա, Ֆրանսա, Բրի-



տանիա, Միացեալ Նահանգներ, Ռուսիա, Խորհրդային Միութիւն եւ իրենց կարգի բազմաթիւ անուանիներ, շատ կը սիրեն զբաղիլ համաշխարհային շահաբեր զինարշաւով ու քաղաքական անուղղափառ լարախաղացութեամբ:

Թուրքիոյ հին եւ նոր բարբարոսութիւններուն մեծ մասը կատարուած է մեծ պետութիւններու քաջալերութեամբ. առնուազն՝ խրախուսուող հանդուրժողականութեամբ: Յանդուրժողականութիւն՝ որ քաղաքականութեան ու ցեղասպանութիւններու պարագային ապատանի ու ապաստանեալի դաւադրական պատմուճան ալ զգեցաւ...

Երբ մեծ պետութիւններ կոնակդ կանգնած ըլլան, անոնք իրենց ուզածն ալ կը թելադրեն, իրենց ուզածն ալ կը պարտադրեն, դաշնակիցն ու ոչ դաշնակիցին:

Թուրքիան ալ միեւնոյն թելադրականութեն ներշնչուելով սանձարձակօրէն ուզածը կ'ընէ ե՛ւ իր դաշնակիցներուն, ե՛ւ իր ոչ դաշնակիցներուն:

Մոռնալու չենք. քաղաքակիրթ մեծ պետութիւնները մէկական սուր գամ միեցին Յայոց ցեղասպանութեան արիւնոտ դագաղին վրայ: Վերջն ալ չհանեցին:

Ամենօք կ'ուզեն որ հայերը իրենց քաղաքականութեան վայել պատկերով ու չափերով տարութերին: Ո՞չ աւելի, ո՞չ պակաս: Ո՞չ պակաս, ո՞չ աւելի:

Իրականութիւնը տեսնելով, մեր պատմութեան ողջ ընթացքին, քիչ մարդոց ու աւելի քիչ պետութիւններու հետ նոյն լեզուն խօսած ենք, կամ ալ, չենք խօսած թնալ:

Յաւալին այն է, որ հայերը շատ կը յիշեն իրենց պատմութիւնը:

Յաւալին այն է, որ ուրիշ ազգեր շուտ կը մոռնան իրենց պատմութիւնը:

Յաւալին այն է, որ հայերը պատմութեան մէջ մենաշնորհեալներ չեն հանդուրժեր:

Յաւալին այն է, որ ուրիշ ազգեր պատմու-



թեան մենաշնորհեալի տիտղոսն չեն կրնար հրաժարիլ:

ԱԼԻ ՊԻՐԱՍ ԵՒ ՃՐԱՅՐ ԶԻԼԻՆՑԵԱՆ

«Թուրքիա իր պատմութեան եշերուն դեմ յանդիման պետք է գայ, եւ համեստութեամբ ու քաջութեամբ ընսէ իր անցեալի սխալները: Բոլոր երկիրները ուշ կամ կանուխ բախում պիտի ուսենան իրենց անցեալի մութ եշերուն հետ»:

Այսպէս գրած է CNN-Turk-ի գլխաւոր խմբագիր եւ յայտնի վերլուծաբան Մեհմետ Ալի Պիրանտ 21 Նոյեմբեր 2011-ի իր գրութեան մէջ, մատնանշելով Յայոց ցեղասպանութիւնը: Իսկ 1 մարտ 2012-ին զգուշացուցած է Թուրքիոյ կառավարութիւնը, որ շատ չոգեւորուի Ֆրանսայի Սահմանադրական Խորհուրդին կողմէ Յայոց ցեղասպանութեան ժխտումը քրեականացնող օրինագիծը հակասահմանադրական նկատելու որոշումով՝ միաժամանակ նշելով, թէ՝ «կրնայ ըլլալ որ ուրացման օրինագիծը մեծ հարուած ստացաւ, սակայն «Ցեղասպանութիւնը» տակաւին լուրջ հիմքեր կ'ապահովէ»:

1982-ին Մարսիլիոյ հարեւանութեամբ՝ Եքս-Ան-Փրովանս քաղաքի Արդարութեան Պալատին մէջ տեղի ունեցող՝ Զուիցերիոյ մայրաքաղաք Պեռնի թուրք դեսպան Տողան Թիւրքմէնի ազգային-քաղաքական գինեալ պահանջատիրական գործողութեան մասնա-

կից մարսիլահայ հայրենասերի մը՝ Յրայր Զիլինճեանի դատավարութեան ընթացքին, Մեհմետ Ալի Պիրանտին հետ, դատարանի օտար լրագրողներու բաժնին մէջ կողք-կողքի նստած կը հետեւէինք դատավարութեան:

Ծանօթ չըլլալով անձիս, ազգութեանս, հանգամանքիս, կողքես, անդադար կը դատապարտէր «հայկական ոճրային ահաբեկ-չութիւնը»:

Աւելի վերջ, զիս ալ ճանչցաւ Պալատի արդարահատոյց վճիռէն ետք՝ երբ դատարանի ընդարձակ իրապարակին վրայ համախըմբուած քանի մը հազար հայերու հետ կը բացականչէինք՝ «Ազատագրեցէք Զիլինճեանը», «Մերսի՝ Ֆրանսա»:

Դատավարական այս դէպքէն երեսուն տարի ետք՝ անուանի թուրք խմբագիրը անցեալի քարացած դիրքերէն հասուն ու իրապաշտ շրջադարձ մը կատարելով, իր երկրի դեկավարութեան ուղղակիորէն կը թելադրէ՝ դէմ յանդիման կանգնելու իր պատմութեան էջերուն հետ:

Այսպիսի ճանաչումներ սուր ակոռաներով սանտրի մը նման են. մարդ զանոնք գործածելէ կը դադրի, երբ տասնամեակներու փորձառութիւնը զինք կը մօտեցնէ ճշմարտութեան, եւ յանկարծ կը գիտակցի, որ սանտրը անօգուտ է այլեւս, քանի արդէն ճադատ դարձած է:

Երեսուն տարիներ ետք՝ թեկուզ հայրենիքներու պահպանման վախը սպառնագին կերպով կը յամենայ, կրնանք հաստատել թէ՝ Յրայր-Մաքս Զիլինճեանի գաղաքարն երը պանծալիօրէն յադթանակած են:

**ԻՆՉՊԵ՛Ս
ԿԱՉՄՈՒԹԵՑԱՌ
ԹՐԵԱԿԱՆ
ԴՐՈՅԸ**

Թուրքիոյ պետական դրոյը յառաջ կու գայ

աւելի քան հազար տարուան կեանք ունեցած բիւզանդական կայսրութենէն, որուն մայրաքաղաքն էր համբաւաւոր Կոստանդնուպոլիսը:

Յունաստանի դիւցազնական հնադարեան տարիներուն՝ Ողիմպոսի մայր, Յերայի զաւակը, չաստուածուիի Եքաթին, կը համարւէր «լուսնային լոյսի» առասպելական աստւածուիի, եւ հևամենի արձաններու, տաճարներու, կաւամաններու ու սափորներու վրայ իսկ կը ներկայացուէր իր գլխուն վրայ փառաւորապէս ցոլացնող կիսալուսնի լուսագարդ խորհրդանիշով:

Երբ Մեծն Աղեքսանդր Մակեդոնացիի հայրը՝ Փիլիպպոս արքան փորձեց գրաւել տըւեալ քաղաքը, կիսալուսնի խորհրդանիշը հոն կը գործածուէր արդէն: Նոյնիսկ իր ատենի դրամանիշներու դիմերեսին վրայ կիսալուսնով տպագրուած փաստացիօրէն «Վիզանտիոն» բառը կը տպագրուէր:

Փիլիպպոս արքան, գիշերով, անաղմուկ ու գաղտնի, իր բանակը քաղաքին վրայ առաջնորդած միջոցին՝ տիեզերային կիսալուսնը իսկոյն կը լուսաւորէ քաղաքը, որու հետեւանքով ալ յարձակող բանակը ուժգնօրէն ետ կը մղուի՝ ձախողեցնելով խոյացող գրաւումը:

Այդ օրէն ի վեր կիսալուսնը կը դառնայ քաղաքի սրբազան խորհրդանիշ ու դարերու ընթացքին պետական պաշտօնականութեամբ կ'որդեգրուի բիւզանդական կայսրութեան կողմէ, որպէս սրբագրծուած նշանօրինէր:

1453-ին, Կոստանդնուպոլսոյ գրաւման ու Վերջնական անկման ժամանակ, սուլթան Մոհամետ Գրաւիչը կ'օգտագործէ կիսալուսնը՝ իր ամիշական տիրապետութեան շնորհելով կայսրութեան մը կողոպտուած խորհրդանիշը որդեգրելու եւ իր



տիրական շարունակելու ժառանգական իրաւունքը, Բիւզանդիոնի կայսերապատկան գաղափարի յաւերժացման նպատակով, որպես իր յաղթութեան յափշտակած գերագոյն աւար ու ոտնահարուած քաղաքի ստորևացման դիմաց՝ գերակայութեան խորիմաց աւետում:

Այսպէս, բիւզանդական կիսալուսինը նուիրականացաւ որպես քրիստոնեութեան դեմ օսմանեան նուաճման ազգայնամոլական խորհրդապաշտութիւն:

Եթէ բոլոր պարագաներու հաւասարապես պատմութիւն գիտնայինք, դիւրութեամբ ականջ պիտի չկախեինք ամեն տեսակ թրքաբարոյ անծղութիւններու, որ իբրեւ վաւերական պատմութիւն կը իրամցուի, սուտը իրաւին եւ իրաւը սուտին խառնելով:

Պատմեցէք վերի պատմութիւնը ձեր թուրք ծանօթներուն ու իրենց բարեկամներուն, որպէսզի իմանան պետական այդ խորհրդանիշին իրական ծագումն ու սրբագործուած յաւերժացումը թուրքերուն կողմէ:

Թերեւս պատմական յոխորտացող բեռէ մը կը թեթեւնան: Պատմութիւնն ալ՝ գուցէ պագայ ունենալու ներշնչումով ճշգրտորէն գոյատեւելու յոյս կ'ունեսայ:

Թուրքիոյ համար բացարձակ պատմութիւն չի կրնար ի զօրու ըլլալ, երբ իրմէ առաջ պատմութեան դրոշմ դրած ստեղծարար ժողովուրդներ, ազգեր, կայսրութիւններ գոյութիւն ունեցած են:

Պատմութիւնն ալ կտոր-կտոր եղած է:



համակազմակերպութեամբ, Աթենքի մէջ նախաձեռնութեամբ Փոքր Ասիոյ տարածքին ցեղապահութիւններու վերաբերող երկօրեայ համագումարի՝ կլորս եղած անդամական գորոյց-վիճաբանութեան մը: Օրւան նիւթին շուրջ գեկուցողներէն մէկը Անգ-

լիոյ երկարամեայ ու փորձառու դեսպան մըն եր, որ իր խօսքին մէջ յաջորդականօրէն «քրքական աքսորներէն» փրկուածները՝ «անտուն մնացած» մարդիկ կը բնորոշէր: Ո՛չ իսկ ժողովուրդ, ո՛չ իսկ տեղահանութիւն, ո՛չ իսկ շարդ:

Երբ համագումարին մասնակիցներէն նկատել տուաւ, թէ ինչո՞ւ կը խուսափի թուրքիոյ կողմէ կանխածրագրուած ու գործադրուած Յայոց ցեղասպանութիւնը իր բուն բառով արտայայտելու, դեսպանը դիւանագիտական անկրկնելի պաղարիւնութեամբ պատասխանեց, որ «այդ բառը ռոմանթիկ մարդիկ, փիլիսոփաներ ու ակադեմականներ կը գործածեն, բայց ոչ՝ քաղաքագետներ»:

Երբ դարձեալ յամահօրէն պնդէց, որ ցեղասպանութիւնը Միացեալ Ազգերու կազմակերպութեան, Եւրոպական Միութեան, Եւրոպական Խորհուրդի ու միջազգային այլ կազմակերպութիւններու կողմէ ճանաչում, յստակօրէն բանաձեւուած տարագ ու պաշտօնական բնորոշում ստացած է, եւ աշխարհի քաղաքագետները ամենայն լրջութեամբ ու ծանրութեամբ կը գործածեն ու կը հետապնդեն զայն, դեսպանը կիսաշուարած ոճով մը պատասխանեց որ՝ «ցեղասպանութիւնը դիւանագիտական ներքին գործածութեան համար պարզ ու ընթացիկ տարագաւորում մըն է, որ կ'օգտագործուի ոչ իրապաշտ ու ռոմանթիկ դիւանագետներու կողմէ:

Եւ երեւակայել, որ համագումարին սկիզբը, դեսպանը համաժողովական մասնակից-

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒԾ «ՌՈՄԱՆԹԻԿ»-ԱՅԱՒ

Յունաստանի արտաքին գործոց նախարարութեան եւ յունական համալսարանի մը



Ներուն Ներկայացուեցաւ որպես պատմագիտ, վաւերական գիրքերու հեղինակ, արդարութեան շատագով եւ անիրաւուած ժողովուրդներու դատերու պաշտպան անձնաւութիւն:

Այսօր, դիւանագետներ, շատ մը պատմագետներ եւ մտաւորականներ տարբեր դեր սահմանած են իրենք իրենց համար: Անոնք ցեղասպանութիւններն ու ազգերու անկախութիւնները սկսած են դիտել տարբեր գնահատումով ու չափանիշներով:

Քիչ չեն նաեւ անոնք, որոնք պղտոր ջուր կը հոսեցնեն մեծապետական շահերու թաւալոյ շաղացքին:

Ուրիշներ ալ արտաքին քաղաքականութիւն կը ճշդեն ներքին քաղաքական հաշիւներէ մղուած: Այս ալ զուգահեռ քաղաքականութիւններու խաղին մաս կը կազմէ:

Ո՞վ պիտի փրկէ մեզ մեր անկոչ փրկարաներէն:

Ո՞վ պիտի փրկէ մեզ ցեղասպանութիւնը «ռոմանթիկ»ացնող, «ռոմանթիզմ» ալ ցեղասպանացնող ...արդարամիտներէն:

Հայոց ցեղասպանութիւնը հայոց հայրենիքն է: Ռոմանթիկ՝, այո՛. քանի իր պատմական իրողութիւնը իր համբաւէն ու հօչակւաւէլի արժեքաւոր է:

Այս կը պատահի սակայն, երբ արուեստական բանիմացութիւնը չի կրնար յաղթահարել անբնական երկերեսութեան ու կեղծահնար շողոջրթութեան, արգիլելով որ արժեքներու սակարանին մեջ ազգ մը պատմա-

կան իրաւունք ունենայ ...նոյնիսկ իր ցեղասպանութեան վկայակոչման վրայ:

Չեմ գիտեր եթէ ցեղասպանութիւնը միայն բառերով կը գրուի: Մինչեւ այսօր սակայն, միայն բառերով չէ գրուած:

Բոլորս պարտաւոր ենք զգուշ ըլլալ, որպեսզի անցեալի ուրուականները դարձեալ չարթընան...

ԲՐԻՏԱՆԱՑԻ ԴԻԱՆԱԳԵՏԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐԽԻՒՆԵՐԸ ՉԻ ՀԱՄԱՐ

Վթենքի վերոնշեալ համագումարին մասնակցող բրիտանացի այլ դիւանագետ մը, լորձնաշուրջն յոխորտաց որ Ֆորեյն Օֆիսի պատմական արխիւնները բոլոր շահագրգուրուղներուն առջեւ եօթանասուն տարին անգամ մը կը բացուին, ինչպես բացուած են Թուրքիոյ պատմական արխիւնները, որոնք կը վերաբերին 1915-1922 ժամանակահատուածի դեպքերուն, եւ առանց խտրութեան պատմագետները կրնան ուսումնասիրել ճշմարտութիւնը: (2012-ին ալ Ֆորեյն Օֆիսը 24 թղթածրարներ բացաւ, յայտարարելով որ իրենց ժամկետը աւարտած 6 թղթածրարներ ալ պիտի բացուին 20 տարի վերց):

Ի դեպ, ինչ որ դրսփակ նիստերու մեջ կը խօսուի ամենեն լաւ ու ակնկալուած ըսելիքն ու հրապարակելիքը չի կրնար ըլլալ: Կրնայ ըլլալ, թերեւս՝ հակառակը, որովհետեւ անոր ճշմարիտ պատասխանը ունի միայն ան՝ որ կը քողարկէ զայն: Կ'երեւի, այս ալ մարտավարական ընտրանք մըն է: Չենք կրնար թաղումի մը երթալ, ապա յայտարարել, որ ամեն ինչ շատ զուարծալի ու հաճելի անցաւ:

Երբ դիւանագետին շեշտակիօրէն նկատել տրուեցաւ, որ երկու երկիրներուն մեջ ալ Հայոց ցեղասպանութեան անդրադարձող բուն արխիւնները խստագոյն ձեւով կը պահպանին ժանգ ու փոշի կապած անթափանցելի սնտուկներուն մեջ, եւ վաւերական, բայց ար-

գիլուած արխիվները շատ քիչեր միայն կը տեսնեն, այսինքն՝ անոնք միայն որ կրնան եցեր պակսեցնել կամ անհետացնել, անոնք որոնք պատմութեան հետ աջքսփութ խաղալու (ան)կանոնները լաւ գիտեն:

Աւելին, դիտել տրուեցաւ, որ անհրաժեշտ է անվերապահօրեն ուսումնասիրել Յայաստանի Յանրապետութեան Յեղասպանութեան թանգարանի, Պոլսոյ հայոց ու յունաց պատրիարքարաններու եւ սփիռքեան բազմանուն հայկական կեդրոններու արխիվներն ու գրականութիւնը, բրիտանացի դիւանագետը կողմանակալութեան չքմերացնող ակնարկութեամբ եւ այդ արխիվներու վաւերականութիւնն ու արժեքը ստորագնահատելու յստակ միտումով պատասխանեց.

- Ի՞նչ ըստի, ատոնք զուտ հայկական արխիվներ են, ինչպէս կրնան ճշմարտութիւնը ցոլացնել, ինչպէս կարելի է հայկական արխիվներուն վստահիլ:

Մինչդեռ թրքական արխիվները, վստահութեամբ կը յորդին...

Կ'երեւի, ինչ ալ ի զօրու է «հայկական և պատուական ե» (չէ) ասացուածքը:

Կեանքի մեջ կատակարանութիւնները երեմն ողբերգութիւններեն աւելի կը տեւեն:

Այսօրուան քաղաքագետներն ալ շատ մեծ զգուշաւորութեամբ ու լրջութեամբ պետք է գործածեն ամեն բառ ու իմաստ, որոնք կը բնորոշեն աշխարհի մեծագոյն պատմական ողբերգութիւնը նկատուող ցեղասպանութիւնները: Իսկ այսօրուան պետութիւնները պետք է զգուշ ըլլան արկածախնդիր, կաշառուոյ ու կողմանակալ դիւանագետներ պաշտօնի կոչել: Այս Վերջինները ուրիշի պատմութիւնը խեղաթիւրելէ զատ վաղը մեծ դիւրութեամբ իրենց սեփական հայրենիքին պատմութիւնը պիտի աղաւաղեն եւ իրենց երկրին արխիվներն ալ անվաւեր պիտի համարեն: Մի՛ կասկածիք, քանի անծղութիւններ ըսելու մեծ դիւրութիւն կ'ունենան, երբ կամայական զօրանցներ ընտրելու փորձութեան կը մատնուին:

Կը թուի, թէ թուրքերը, գործուած պատմական ոճիրներուն համար չհամոզեցին միայն իրենց սեփական ժողովուրդին մեկ մասը, այլ նաեւ՝ իրենց սեփական համակիրներուն մեկ մասը: Յամոզուողները զօրանցին մեջ են, զօրանցէն դուրս չեն:

Ո՛չ թուրքերը, ո՛չ ալ իրենց համակիրները սակայն կրնան համաշխարհայնացնել պատմութիւնը կամապաշտօրեն ծեւազերծելով զայս: Յայոց պատմութիւնը պիտի բաղդատի միայն ճշմարիտ իր պատմութեան հետ:

Մենք պետք չունինք կարծիքը դիւանագետի մը, որուն արտառոց գլխարկներով թագուհին 20-ամեայ երիտասարդներու մահավճիռը կը ստորագրեր՝ իրենց հայրենիքին անկախութեան սիրոյն ըմբռստացած ըլլալու «յանցանքին» համար:

Յայաստանն ու հայը կոչուած են խաղալու իրենց պատմական դերերը, քանի Թուրքիա եւ թուրքերը կը փորձեն խաղալ ու պարտադրել պատմութիւնը աղաւաղող ուրիշ դերեր. երբեմն՝ իրենցը, երբեմն՝ ուրիշներունը:

Զանի՞ դագաղ եւս պետք է վերաշինենք մեր նահատակներուն համար:

Ո՛չ, ո՛չ. ցեղասպանութիւնը այսքան միտումնաւոր անպատասխանատութիւն չի կրնար հանդուրժել:

«ՔԱՂԱՔԱԳԵՏԸ» ՀՈՍԱՆԻԾ՝ «ԱԽՉԱԿԻ»

Կեդրոնական Ափոհիկէի մեջ գործածուող



«շանկօ» լեզուով՝ «քաղաքագետ» բառը հոմանիշ է «արկածախնդիր աւազակի»:

Ափրիկէի ցեղախումբերը Երրոպայի ու Ամերիկայի ժողովուրդներէն անառարկելիօրէն աւելի իմաստուն են եւ, վստահաբար, կը խօսին հասարակաց ճշմարտութեան միեւնոյն լեզուով:

Երանի յառաջադէմ համարուող ժողովուրդները, բայց մանաւանդ՝ Կիլ-Էրտուղան-Տաւութօղլու վատահամբաւ եռեակը կարենար այցելել կեդրոնական Ափրիկէ եւ քանի մը դաս առնել «շանկօ» լեզուի իմաստութենէն, հիմնականօրէն սկսելով «քաղաքագետ» բառէն:

Երեկ եւ այսօր՝ այդ երեք քաղաքագետները շատ խօսեցան ու դեռ կը խօսին:

Թուրքիոյ համար՝ համադրուած կամ չհամադրուած, հակակշռելի թէ անհակակշռելի վիճակներու երեւոյթներ դեռ անբացատրելի կը մնան: Թուրքիա ունի գինը կատարելապես ոչչացնող մեծ թշնամի մը՝ ինքզիսը:

Թուրքիոյ պատմութիւնը ունի երեք մեծ թշնամիներ եւս՝ Կիլը, Էրտողանը եւ Տաւութօղլուն:

Դուք մի՛ տեսնեք, որ անոնք գլխու ֆեսը հանեցին ու Երրոպական գլխարկ հագան: Ի՞նչ թիւրիմացութիւն:

Դուք մի՛ տեսնեք, որ իրենց վրայի շալվարը հանեցին ու ֆրանսական պոչաւոր քոստիւմ հագան: Թիւրիմացութիւնը կը շարունակուի:

Եկեք պարզենք. ի՞նչ կոնանք սպասել Թուրքիոյ եռոտանի այս վարչախումբն:

Յոգիի ազնուութի՞ւն: Պատմութեան հանդեպ յարգա՞նք: ՉԵ՛, չԵ՛, այս բաները չեն դասաւանդուիր Թուրքիոյ մեջ: Այս բաները չեն ուսուցուիր այս երկրին մեջ:

Համաշխարհային մշակոյթին ու քաղաքակրթութեան մեջ Թուրքիա տեղ չունի: Այս մասին նուազագոյն կասկածը մի ունենաք:

- «Ան որ կ'աղաւաղէ կամ կը կեղծէ պատմութիւնը, չի՛ ներուիր»: Գիտե՞ք, Էրտողանն է այս բանը ըստոք:

Թուրքիոյ վարչապետը իր ակնկալած արժանապատուութեան ու արժանահաւատութեան մեծ գոհն է:

Իր հետապնդած թիրախը առանց վերադրի ճանապարհ մըն է:

Ազագան տեսնելու համար անհրաժեշտ է մաքրել անցեալի հաշիւները: Մեկը պետք է սորվեցնէ:

ԼԵՒԻՆՍԹԻՒՆ ՀԱՄԱՐ ԱԼ ՅՈՅՍ ԿԱՅ

Համացանցեն կը հետեւիմ «100 տարի 10 վայրկեան» պատմական շատ գեղեցիկ ու պատկերազարդ յայտագրի մը: Վերջին 100 տարուան կարեւորագոյն դեպքերէն մեկը կը նկատուի նախագահ Պիլ Ոլինթընի եւ իր գեղանի ու խարտիշահեր քարտուղարուիկ Մոնիքա Լեւինսթիի սեռային գայթակղութիւնը 1998-ին, Սպիտակ Տան ծուածեւ գրասենեակին մեջ: Ի՞նչ ցնցից մանրամասնութիւն:

Վերջին 100 տարուան կենդանի պատմութեան մեջ ո՛չ մեկ տող, ո՛չ մեկ պատկեր 20-րդ դարու առաջին ցեղասպանութեան մասին:

Պատմութեան հետ զրոյցի նստելու եւ հաշիւ մաքրելու ժամն է:

Հայաստանը ապագայ ունի, իոդ չէ թէ փոքր երկիր է: Փոքրը եւ մեծը չափի խնդիր չէ, հիմնականօրէն արժեքի խնդիր է: Արժեքը, արժեքները՝ արմատներ ունին որ իինէն կու գան: Ազգերը կը գոյատեւեն իրենց պատմու-



թան ընդմեջն, որովհետեւ պատմութիւնը իրենց վաւերական անցագիրն ալ է:

Մարդկութեան վերջին հարիւր տարուան մէջ Յայոց ցեղասպանութեան մասին ո՛չ մէկ նշում, ո՛չ իսկ անցողակի սեղմ տող մը: Ժխտողականութեան պատը ամեն օր քիչ մը աւելի կը բարձրանայ: Բայց նոյն այս պատմութիւնը չէ զիշած բնաւ ու յօժարած է հարիւրամեակի մը ցլցիչ նիւթերէն մէկը վերածել ու արձանագրել Մոնիքայի գործածած ...ակռայի դեղը:

Կը խօսիսք զուտ գոյապաշտական խնդիրներու մասին, որոնք պատմութեան մէջ դատապարտուած են շարունակուելու:

Յիմա սակայն, ի տես նախագահական անցեալի արկածախնդրութեան մը հանգոյն, պատմութիւնը խեղճացած ու առանձին մնացած է: Մոնիքա Լեւինսքին՝ ո՛չ:

Պատմութեան մէջ շատ աւելի քան կայ որ չենք հասկնար, քան կը փորձենք ի զուր հասկնալ ու իւրացնել:



Աղքատ, հիւանդ ու հաշմանդամ երեխաները կը կազմեն մեր հայրենիքի խոցելի վիրաւոր խումբը:

Յայրենի յաջորդական իշխանութիւններու կիրարկած քաղաքականութիւնն ու թիրախները կ'օգնեն հարուստը աւելի հարստացնելու, բայց ընկերային բարեխնամ ծրագիրները հասանելի չեն ըլլար ամենէն հրատապ ու անմիշական կարիքը ունեցող անբախտ մասուկներուն:

Բախստը դուռդ մէկ անգամ կը զարնէ, բայց անբախտութիւնը, կարծես, աւելի մեծ համբերութիւն ցոյց կու տայ: Անբախտներու ընկերութիւն մըն ալ թշուառներու դասակարգ կարելի չէ՞ համարել...

Այս բոլորով հանդերձ սակայն, 2011-ի դրութեամբ, Յայաստանի աւելի քան 300.000 փոքրիկներ կ'ապրին չքատրութեան մէջ: Այսինքն՝ Երկրի ամբողջ քնակչութեան 35.8 տոկոսը: Զեկուցագրութիւնը յատկապէս կը սեւորի Երկրաշարժի գօտիին շուրջ:

Մինչ ցեղասպանութենեն մէկ դար վերջ հայ վերապրողները կը նուազին, 1988-ի ահաւոր երկրաշարժն 24 տարի անց՝ աղետի գոտիին մէջ անօթեանութեան խնդիրը լուծած չէ, հակառակ զացող-եկող կառավարութիւններու խոստումներուն եւ տարուե-տարի վերակրկնուող նոր ժամկետով մեծադղորդ խոստումներուն:

Կառավարութիւնները ի վիճակի՞ են իրենց պատասխանատուութիւնները ստանձնելու դուրս գալով իրենց յախճապակեայ բերու-

ՏԱՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԲԱՐԴՈՅՑ ԵՒ ԳՈՅԱՍՏԵԽԱՍ ԻՐԱՒՈՒՅ

«Աղքատութիւն եւ ընկերային պատկեր» ԵՈՒՆԻՍՖ-ի վիճակագրական ծառայութեան տեղեկատուութեան համաձայն՝ երեխաները Յայաստանի ամենազքատ խաւը կը նկատուին: Երեխաներու 54 տոկոսը աղքատ է, իսկ 5 տոկոսը կ'ապրի ծայրայեղ աղքատութեան մէջ:

Տեղասպանութենեն 97 տարի յետոյ, երբ վերապրող սերունդներէն չորրորդը՝ մասնկանը, իր հայրենիքին մէջ ամենազքատ խաւը կը համարուի, կը նշանակէ որ ցեղասպանութիւնը խտրականօրէն կը յարատեւ մեր օրերուն ալ, ազատ-անկախ, ներքուս կողմնակի ու կողմնակալօրէն հարստացող հայրենիքին մէջ:



թեն: Թիւերը չեն կրնար մարդերէն վեր ըլլալ, ոչ ալ՝ անոնցմէ առաջ:

Կը թուի թէ Ցեղասպանութիւնը հայ ժողովուրդին մէջ արմատացուց մնայուն ու անվերջ գաղթականութեան ազգայնօրէն յամեցող բարդոյթը, որմէ իբրեւ ժողովուրդ չենք կրնար ձերբագատիլ այս նոր դարամեակին եւս, ողբերգականօրէն «տարագիր» մնալով հայրենի սեփական հողին վրայ իսկ:

Այս ալ ազգասպանութիւն չէ: Այս անգամ ալ մեր սեփական ձեռքերով:

Չեմ գիտեր քանի՞ տարի պէտք է նոր սերունդ ստեղծելու համար, բայց աղքատութիւնն ալ հպարտութիւն ունի: Յոզ չէ թէ պետական հոգատարութիւն չունի:

1915-ի Ցեղասպանութենէն վերապրող սերունդը, առանց կեանքէն մեծ ակնկալութիւններ ունենալու, անհաշտ սպասումի մը մէջ գոյատելող սերունդ մը եղաւ, չգիտնալով նոյնիսկ եթէ յաջորդ առաւօտ արեւը պիտի ծագի, եթէ պիտի ապրի իր կեանքի վերջին լուսինը. չպատկերացնելով անգամ, եթէ պատահի հասակէն երիտասարդ, չափահաս, ալեհեր ըլլալու բախտը պիտի ունենայ կամ ոչ:

Սերունդ մը, որ ապրեցաւ ու գոյատելեց սպասումով. անորոշ ու անապագայ սպասումով մը, իր սպասումին մէջ խեղդելով աչքերուն առջեւ խողխողուած հարազատներու

աղեխարշ տեսարաններ: Յաւատացեք, անորոշ վախէն ու նայուածքն աւելի ահաւոր բան չկայ. մանաւանդ, երբ բոլորն ալ կը վախնան մօտալուտ ցեղասպանութեան մը սարսափէն:

Վերապրողներէն շատեր, ետ ու ետ նայելով կեանքին, անհաղորդ դրժարութեամբ, իրենք իրենց կը փորձէին համոզել թէ կոցած են կառչիլ կեանքին, նոր ու դեռ չձեւարուած կեանքի մը, որ շա-

րունակութիւնն եր իրենց անորոշ սպասումին:

Վիրաւոր այդ սերունդը խաղալիքներով, պուարիկներով, «փիե սթեյշըն»-ներով չխաղաց, վառող-մարող անհիներու լոյսիկներով հեծելանիւ չքշեց մասկութեան, ծայնասփիւռով ինքնաշարժ չվարեց, պեթոնապատ հարուստ բնակարաններու մէջ չապրեցաւ, օդափոխիչ սարք, համացանց, «թուիթըն», չէթ, **Տի.Վի.Տի.**, արբանեակային կայան եւ ժամանակակից արհեստագիտութիւն չճանչցաւ. իր խաղալիքները առանձին շինեց՝ պարզ փայտով, թելով, երկաթով, լաթերու կտորներով կլորցած փողոցի գնդակներով, որմէ դուրս եկան նշանաւոր ֆութապոլիսներ, իսկ հոն ուր չիհասաւ հնարամիտ արհեստագիտութիւնը՝ թափ տուաւ երեւակայութեան ու գոհացաւ ցանկացածը գծելով ու իր անրջային գծագրութիւնը վայելելով:

Այս բոլորը չունենալուն համար, իր չունեցած կորսնցուցած չըլլալուն համար, որեւէ երկրի օրէնք մեր ցեղասպանութեան սերունդ չպատժեց: Բժիշային հեռածայն չունենալուն համար՝ ուշ ատեն տուս վերադարձող զաւակներուն մայրերը չեին անհանգստանար. զստահութիւն ունեին իրենց որդիներուն, նոյնիսկ երբ առանց լուր տալու տեղ մը կ'երթային ու կ'ուշանային: Յայ մայրերը լաւ գիտէին որ իրենց զաւակները թմրեցուցիչ պիտի չգործածն ամայի ու քարքարոտ ճամբաներու անկիւնը, որ տարտամօրէն կը լուսաւորուէր փայտեայ սիւնէ մը կախուած աղօտ լապտերով:

Փոշեթաթախ փողոցներուն մեջ առանց կօշիկի քալող, ծայր աստիճան հնամաշ ցնոցտիներ հագած սերունդ մը անօթի, ծարաւ, օտար պետութիւններէն կառավարական պատիժի չեր Ենթարկուեր բոպիկ ու պատառտած հագուստ հագած ըլլալուն համար: Դպրոցն ոչիլ բերողին գլուխը մայրերը տաք քացախով կը լուային կամ գլխու բոլոր մազերը արմատեն կը խուզէին: Բայց ոչիլէն մարդ չմեռաւ, ոչ ալ իր դպրոցն հեռացուեցաւ: Ծատ անուշեղէն ուտողներէն ոեւէ մեկը շաքարախտաւոր չեղաւ: Զուրս ալ կը խմէին թաղամասի հասարակաց աղբիլէն, առանց գաւաթի, շրթունքը միացնելով ծորակին եւ ոեւէ մեկը չեր քաներ միւսէն: Ծատ ու շատ բան չկար այդ օրերուն. բայց կար անկեղծութիւն, կար բարեկամութիւն: Աղքատութեան մեջ հարուստ բարեկամութիւն ու բարեկամութեան հանդեպ հաւատք ու գթասրտութիւն: Բոլորս ալ տարագիր տղաք էին, ճակատագրակից մահուան ու կեանքին, կեանքին ու մահուան:

Դպրոց գացող աշակերտները ամեն օր միեւնոյն բորբոսած հագուստները կը հագուէին, բայց մարդ չեր նայեր անոնց. մեկը միւսին աչքերուն ու սրտին կը նայեր, ոչ՝ հագուստներուն: Իրարու հետ չեին մրցեր, բոլորս ալ գիրք, տետրակ, գրիչ չունէին: Թիչ մը աւելի մեծերը, դպրոցն վերջ, փողոցներու երկայնքին «պոյաճիութիւն» կ'ընէին, մատի վրայ համրուող վաստկաց մետաղեայ դրամները իրենց ծնողին յանձնելու համար: Այսպէս, մասամբ կը փարատեր թշուառութեան իհասթափութիւնը եւ իհասթափութիւնը կեանքի կը վերածուէր:

Բայց այդ բոլորով հանդերձ, Ցեղասպանութենէն ապրած սերունդը ազատ ու հպարտ էր. պատանիներու սերունդ մըն էր, որ երշանկութենէն աւելի լաւ ապագայ մը երազեց, պատախանատուութեամբ ու հեռանկարային ակնկալութեամբ: Այս յոյսին ընդմեջէն սորվեցաւ, հասունցաւ, կարծրացաւ, տոկաց ու ստեղծագործեց. իրեն համար, ուրիշին համար, շուրջինին համար ապրեցաւ ու ապրեցուց ժողովրդային պատմութեան առասպելը ժողովրդականացած խիդճով, իր ճակատագիրը սեփական ինքնութեան ու անձնաթուղթի վերածելով:

Մեծցաւ որպէս փողոցի տղայ, բայց փողոցի անհիթական երշանկութեամբ: Այդ երազը հասցուց ապագայ սերունդներ, որոնք այսօր իրենց դատին հաւատարիմ պահանջատերեն են: Այդ սերունդներուն երազը այսօր ու վաղը շարունակութիւն պիտի ունենայ, որովհետեւ գիտցաւ թէ ինչպէս փրկուեցաւ ու մեծցաւ եւ մեծցաւ փրկուելու համար:

Ցաջորդող սերունդները պիտի գիտնան պայքարի ճամբէն քալել, որովհետեւ անոնք եւս սպասումով մեծցող ու պայքարով հասունցող սերունդներ են:

Ցայց բոլոր սերունդները սպասումի մեջ պիտի ըլլան. նոյն երազով ու ակնկալութեամբ, նոյն պահանջատիրութեամբ քալելու համար: Մինչեւ որ անոնք ալ մեծնան եւ կարգը գայ յաջորդներուն: Ցաջորդներու սերունդ մըն է մեր ազգը: Մինչեւ որ անոնք ալ մեծնան եւ կապ ունենան մարդկութեան հետ, այս աշխարհին պատուով ու ճերմակերես դուրս գալու համար:

Ճերմակ երեսի մը համար կ'ապրինք ազգովին: Անոնք որ քիչ կը սիրեն Ցայաստանը, եւ անոնք որ շատ կը սիրեն Ցայաստանը: Բոլորին համար Ցայաստանը մեկ է. անոնց համար որ ապրեցան իրենց գաղափարներով, եւ անոնց՝ որ ապրեցան իրենց գաղափարներուն համար:

Ցայաստանը կրնայ բաղդատուիլ միայն իր առաքինութիւններուն հետ եւ առաքինութիւնները՝ միայն Ցայաստանին հետ:

Ցայը պայքարեցաւ ապրելու, ոչ թէ մերսելու համար: Մեռնիլը կը վերաբերէր ազգային արժանապատուութեան: Այդ ալ՝ կեանքին շունչ տալու համար միայն:

Իրաւունք չունինք ժողովուրդին գեղելու իր ապրելու յոյսը:

ՅՈՎՍԵՓ ՊԱՐԱՉԵԱՆ

Աթենք

ԴԱՐՁԵԱԼ ԱՊՐԻԼ...

Գարուն է: Բնութեան զարթօնք, խոր քրունեն արթնցած ծառ ու ծաղկունք: Խիսդ ու ծիծաղ ամենուր, բայց եւ այնպէս հայ հոգույն մէջ վիշտ ու սուզ: Ամեն գարնան հետ վերանորոգուող ազգային կուկիծ: Եփրատի ջուրերուն հետ յորդող արեան կանչ:

Տեր Զօրեան անապատի աւագներուն մէջ թաղուած մարդկութեան ամենամեծ ոճիրին տարելիցն է կրկին: 24 Ապրիլ 1915. հայ ժողովուրդի պատմութեան ամենաաղետալի եւ մարդկային պատմութեան ամենաամօթալի օրը: Մեծ պետութիւններուն նիւթած ու արիւնարբու թուրքին իրագործած Յայկական ցեղասպանութիւնը, այսօր հարիւրամեակի շեմին տակաւին կը մսայ հայուն արիւնահոս վէլոք: Տմարդի թուրքը ինչ ձեւերով ալ փորձէ խեղաթիւրել ու դրժել անհերքելի փաստերը, «Յայկական ցեղասպանութիւն»ը որպէս ոճրագործի դաշուածք պիտի մսայ անոր ճակատին յաւիտեան, եւ որպէս ամօթ իրաքանչիւր պետութեան ճակատին, ով որ կը ժխտէ կամ կը կասկածի այդ ոճիրին իրողութեանը,

եւ իրաքանչիւր հայու սրտին որպէս պահանջատիրութիւն:

Յայ ժողովուրդին հանդեպ իրագործուած բնաշնչման քաղաքականութեան հետեւանքները կը շարունակուին մինչ օրս: Բացի այդ, որ տարագրութեան հետեւանքով այսօր հայ ժողովուրդը գրկուած է իր հարազատ հողին եւ սփոռուած աշխարհով մէկ, մինչեւ օրս կան տակաւին ուժեր, որոնք շանք չեն խնայեր այդ իրողութիւնը այլակերպելու, եւ զայն օգտագործելու, ըստ պահանջույն, իրենց շահերը մատակարարող թէժ հարցերու մէջ:

Ապրիլեան այս օրերուն հայկական բոլոր գաղթօճախներու մէջ, անխտիր, տեղի կ'ունենան զանազան հանդիսութիւններ եւ ոգեկոչման ու յիշատակի արարողութիւններ: Իւրաքանչիւր հայկական միութիւն, հաստատութիւն կամ եկեղեցի իր յարգանքի տուրքը կը մատուցան մէկուկէս միլիոն անմեր զոհերու յիշատակին: Տեղի կ'ունենան նաև միջմիութենական եւ միջհամայնքային ծեռնարկներ: Սակայն ժամանակն է արդէն աւելի լուրջ մօտենալու համահայկական աշխատանքի

որդեգրման գաղափարին, մէկդի ձգելով կուսակցական ու համայնքային հակումները, ժամանակն է համախմբութելու ազգային ինքնութեան ու հայունիքի շուրջ: 1915-ի ողբերգական թուականին յիշատակը լաւագոյն առիթն է համախմբելու բոլոր հայութիւնը, միացնելու հայրենիքի եւ սփիւռքի բոլոր շերտերը, համազգային պայքարի ու միակամ պահանջատիրութեան,



բովանդակ աշխարհին ցոյց տալու մեր համախըմբուածութեան ուժը: Այս գաղափարէն մեկնելով Յայաստանի նախագահ Ս. Սարգսեան Յեղասպանութեան 100-ամեակի տարելիցը շեշտելով, 2011-ին ստեղծեց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին

ձեռնարկները համակարգող յանձնաժողով, զոր կը դեկավարէ անձամբ Յայաստանի նախագահը եւ որուն կազմին մէջ ընդգրկուած են Յայաստանի տարբեր գերատեսչութիւններու դեկավարներ, ինչպէս նաեւ սփիտքահայ կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, յայտնի գործիչներ, մշակոյթի եւ գրականութեան նշանաւոր դէմքեր: Յանձնաժողովը կը հետապնդէ մեկ նպատակ, որն է՝ «համախմբել հայկական ներուժը ի խնդիր Յայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման»: Այս առթիւ նախագահ Սարգսեան նշեց. «2015 թուականի Յայոց ցեղասպանութեան 100-ամեակը մեր պայքարը ամփոփելու տարելից չէ, այլ ընդհակառակը՝ պայքարի վերապնդման եւ տարբեր եղանակներով մեր պահանջատիրութիւնը շարունակելու մեկնակետ.... Մենք իսպահ ժողովուրդ ենք, սակայն անկախ որեւէ բանից, մենք երբեք չենք հանդուրժելու Յայոց ցեղասպանութեան ժխտումը եւ անարգանքը մեր անմեռ նահատակների յիշատակի հանդեպ... Յեղասպանութեան միջազգային ճանաչումը եւ դրանից բխող հետեւանքների վերացումը միայն ինարաւորութիւններ կը ստեղծեն ժողովուրդների միջեւ վստահութեան վերականգնման»: Միայն ու միայն միասնական ուժով է, որ պիտի կարենանք յաղթական դուրս գալ մեր դարաւոր պայքարէն: Յայուն անկարելին կարելի դարձնելու կարողութիւնը կը շեշտէ Գարեգին Բ. Ամենայն հայոց կաթողիկոս. «Յեղասպանութեան 100-ամեակի յանձնաժողովը այսօր ներկայացնում է աշխարհասփիւր մեր ժողովորդի վերածնուած կեանքը, որս ապա-



ՖՈՏՈՐԱՊԻ

գային նայում է յոյսերով, լաւատեսութեամբ, իրատեսական ծրագրերով, որոնք խարսխուած են մեր ձեռքբերումների, նպատակների, նախանձախընդութեան յանձնառութիւնների պատրաստակամութեան վրայ: Անցած 100 տարիներու ընթացքում, հակառակ

մարդկային եւ նիւթական կորուստների, կրած զոհողութիւնների, որտեղ եւ հաստատուեց մեր ժողովուրդը իր ջանք ու վաստակով, նոր կեանք կառուցեց, հասաւ յաջողութիւնների, դիրքի եւ ճանաչման: Այս գևահատականն է նախեւառաջ վեր յառնում մեր առջեւ մեկ դար անց, որը պետք է հապատութիւն եւ խրախուսակը դառնայ մեր ժողովորդի համար ու նաեւ անդրադարձ պահպանելու եւ օրոցնելու այն հոգեւոր ուժը, որով ապրել ու արարել է այշչափ կորուստներից յետոյ դժուարութիւնների առջեւ...»: Ժամանակն է զարգացնելու եւ յառաջ մղելու համահայկական մտածողութիւնը, ցոյց տալու աշխարհին մեր միութեան ուժն ու կարողութիւնը, մեր հոդին ու ազգային ինքնութեան անքակտելի պատկանելութիւնը եւ մեր կեանքի գնով պահանջատիրութեան սուլր երդումը: Թող որ սփիւրքը դառնայ միակամ գործող համահայկական իրողութիւն եւ օտար հողերու վրայ աւելի կազմակերպուած ու ինքնավստահ տարածե ու ծանօթացնէ մեր արդար դատը:

Յեղասպանութեան նահատակներուն յիշատակը վառ պիտի մնայ մեր սրտերուն մէջ: Անոնք զոհուեցան, բայց չմեռան: Անոնք կ'ապրին ու պիտի ապրին ամենուր, ուր որ թեկուզ մեկ հայ կը շնչէ: Անոնք անմահ հոգիներ են, որ մեզ ուժ կը ներշնչեն անվարան ու հետեւողական պայքարի, անոնց վրեժինընդութեան կանչն է որ մեզ կ'առաջնորդէ լիայոյս քալելու յաղթանակի ճամբով:

ԹԱՄԱՐ ՕՉԱՆԵԱՆ

ԹՈՒՐՔԵՐԸ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԵԶ

Լիբանանի մեջ թրքական համայնքի մը ներկայութիւնը երկար ատեն անծանօթ եղած է շատերուն: Պատահականութիւնը իր դերը ունեցած է համայնքին յայտնաբերման մեջ: 1989-ին, լիբանանեան բանակի սպայ մը կ'անդրադառնայ, որ իր զինուրներէն խալետ կատահ լեզուն արաբերներ չեր, այլ՝ թրքերնը: Պատասխանատուները այս մասին տեղեակ պահուելէ ետք՝ կը դիմեն Լիբանանի մեջ Թուրքիոյ օրուան դեսպան Իպրահիմ Տիզլելիին, որ կը ծանօթանայ ենթակային եւ ծանօթութեան շրջանակը ընդլայնելով՝ կը հասնի... Աքքարի քառուշարագիւղը, ուրկէ կու գար յիշեալ զինուորը:

Քառուշարան կը բացայատէ Լիբանանի մեջ թրքական ներկայութեան մեկ երեսը, փագուին առաջին կտորը, որ սակայն պէտք ուներ մնացեալ կտորներուն, ամբողջական պատկերը երեւան հանելու համար: Կամաց կամաց կը յայտնաբերուին նաեւ պատկերին

պակսող մնացեալ բաժինները՝ Այտամունը Աքքարի մեջ, Շեյմիէն, Տորիսը, Նաևանիէն, Վտտուսը, Յատիտիէն եւ Ել Ջաաը Պաալպէ-ջի մեջ, Թրիկոնիի թուրքերը եւ, Վերջապէս, մայրաքաղաք Պէյրութի թրքական համայնքը:

Այսօր արդէն կը խօսուի 30-40 հազարնց Լիբանանի թրքական համայնքին մասին, որ սաղմանային կազմաւորման հանգրուանը բոլորել ետք՝ այժմ Թուրքիոյ պետական իշխանութիւններուն բացայատ ու լայն աջակցութեամբ կը գտնուի ինքնակազմակերպման իր փուլին մեջ:

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԼԻԲԱՆԱՆԻ ԹՈՒՐՔԵՐԸ

Լիբանանի թուրքերը միատարր զանգուած մը չեն. անոնք բաղկացած են թիւրքմեններէ, չերքեզներէ, Կրետէի եւ Ղնատողութիւրքերէ, որոնք տարբեր ժամանակներու Լիբանան ժամանած են տարբեր պայմաններու տակ:

Ծանօթ է, որ 1516-ին, սուլթան Սելիմի օրով Օսմանեան կայսրութիւնը կը նուաճէ Լիբանանը եւ 400 տարի իր տիրապետութիւնը կը հաստատէ մայրիններու երկրին վրայ: Յետեւաբար, Ժ. Դարէն սկսեալ թուրքեր կը սկսին հասնիլ Լիբանան: Լիբանանցի պատմաբան Քամալ Սալիհի կը հաւաստիացնէ, թէ թուրքերու Լիբանան ներկայութիւնը շատ աւելի իին է, տրուած ըլլալով որ երկիրը ԺԳ.-ԺԵ. դարերուն



Հոկտ. 2010. Յայ ցուցարարներ
կը պատռեն Էրտողանի նկարը

ապրած է մեմլուքեան գերիշխանութեան տակ եւ այդ հանգրուանին մեծաթիւ թիւրքմեններ եկած են Լիբանաս: Պատմական աւելի նոր ժամանակներուն, նշանակալից թուականներ կը հանդիսանան 1878-ն եւ 1898-ը: Արդարեւ, ռուս-թրքական Բ. պատերազմեն ետք, կարեւոր թիւրք չերքեցներ Օսմանեան կայսրութիւնը լրելով ապաստան կը գտնեն Լիբանաս: Զան տարի ետք, երբ թուրքեր Յունաստաննեն պարտութիւն մը կրելով կը հեռանան Կրետէ կղզին, սուլթան Համիտ Կրետէի թուրքերը փոխադրել կու տայ Դամասկոս եւ Թրիփոլի: Թուրքերու երրորդ ալիք մը, այս անգամ Ասատոլոււն, Պէջրութ կը հասնի 1940-ական տարիներուն, խոյս տալով երկրի տնտեսական ծանր պայմաններէն:

Լիբանան հասած թուրքերէն ամենէն աշխուժը եւ կազմակերպը կը հանդիսանան Կրետէի թուրքերը, որոնք 1962-ին Թրիփոլիի մէջ կը հիմնեն «Կրետէն գաղթածներու ընկերակցութիւնը», որ կը գործ մինչեւ լիբանանեան պատերազմի տարիներ: Անգարա 1985-ին ընկերակցութեան հետ կը հաստատէ որոշ կապէր, որոնք սակայն չեն արդիւնաւորուիր՝ հետագային ընկերակցութեան կազմական պատճառով:

Լիբանանի թուրքերուն մեծամասնութիւնը կ'օգտուի 1994-ի հպատակութեան օրինագիծն եւ կը ստանայ լիբանանեան քաղաքացիութիւն, պահելով նաեւ թրքական հպատակութիւնը:

2002-ին, երբ Թուրքիոյ մէջ իշխանութեան կը հասնին «Արդարութիւն եւ բարգաւաճում» կուսակցութեան ներկայացուցիչները եւ հետամուտ կ'ըլլան նոր-օսմանականութեան քաղաքականութեան հետապնդման, անոնք մեծ ջանքեր ի գործ կը դնեն արաբական աշխարհի մէջ ցրուած թրքական բեկորները գտնելու եւ կազմակերպելու համար: Լիբանանեան բանակի գինուոր Խալէտ Ղատ պատահական այդ բեկորներէն մէկն եր, որուն միջոցով թուրքեր կը գտնեն Զառուշարայի թիւրքմենները եւ ապա՝ մնացեալ շղաններու իրենց հայրենակիցները: Ի զուր



Տառատօղլու կ'ողջունէ լիբանանցի թիւրքմեն մը

չէ, որ Միջին Արեւելքի ռազմավարական հարցերու ուսումնասիրութեան թրքական կեդրոնը «Մոռցուած թուրքեր» կ'անուանէ զանոնք եւ փետրուար 2010-ին անոնց մասին կը պատրաստէ ուշագրաւ թղթաձրար մը:

Ո՞Ր ԵՒ Ի՞ՆՉՊԵՍ ՏԵՂԱԲԱՇԽՈՒԱԾ ԵՆ

Լիբանանի թուրքերը տեղաբաշխուած են սիւննի միջավայրով չորս շրջաններու մէջ-Աքքար, Պաալպէք, Թրիփոլի եւ Պէջրութ:

Ա) **Աքքարի մէջ** կը գտնուի թիւրքմեն բնակչութեամբ երկու գիւղ՝ Զառուշարա եւ Ղյտամուն: Զառուշարան Աքքարի փոքր գիւղերէն մէկն է, որ ունի 2800 բնակիչ: 2009-ի երեսփոխանական ընտրութիւններուն գիւղը ուներ 1066 քուեարկողի անուն: Բնակիչները ամբողջութեամբ թիւրքմեններ են, սիւննի իսլամներ: Երեց եւ միջին սերունդի ներկայացուցիչները ծանօթ են թրքերէնին, սակայն նոր սերունդը իր լեզուն եւ իսլամութիւնը կորսնցնելու ընթացքին մէջ է: Կարեւոր թիւ մը Զառուշարացիներու կը բնակի Պէջրութի մէջ եւ իր կապերը կը պահէ գիւղին հետ: Ուսանողները կ'օգտուին Թուրքիոյ տրամադրած համալսարանական կրթաթոշակներէն եւ իրենց բարձրագոյն ուսումը կը շարունակեն Պոլսոյ եւ Իգմիրի համալսարաններուն մէջ:

Ղյտամունը 3000 բնակչութեամբ այլ գիւղ մըն է, որուն 75 առ հարիւր թիւրքմեններ են, իսկ մնացեալը՝ քրիստոնեայ լիբանանցիներ



(յոյն ուղղափառ են մարոնի): 2009-ի երեսփոխանական ընտրութիւններուն գիւղը ուներ 1849 քուէարկողի անուն, որուն 1250-1300-ը թիւրքմեններ էին: Այտամուսցիները քաջածանօթ են իրենց թրքական արմատներուն, սակայն թրքերենը մոռցած են ամբողջովին: Անոնք սերտ կապեր ունին Լիբանանի մեջ թրքական դեսպանատան եւ հարաւի մեջ հաստատուած ՖԻՆԻՒ-ի թրքական ուժերուն հետ:

Աքքարի շոշանի Հալպա եւ Մըշաա գիւղերուն մեջ եւս կան թիւրքմեններ, որոնց մասին սակայն կը պակսին ստոյգ տեղեկութիւններ:

Բ) Պաալպէքի մեջ կը գտնուին թիւրքմեններով բնակուած հինգ գիւղեր.- Ծեյմիէ, Տորիս, Նանանիէ, Ատտուս, Հատիտիէ եւ Էլ Քաա: Անզարա Պաալպէքի թիւրքմեններուն հետ իր առաջին կապերը կը հաստատէ 2007-ին, երբ օրուան դեսպան Սերտար Քըլըն կ'այցելէ շրջան:

Ծեյմիէն Պաալպէքէն 20 քմ. հեռաւորութեամբ գիւղ մըն է, որ ունի ամբողջութեամբ թիւրքմեններէ բաղկացած 1000 բնակիչներ, որոնք լաւապէս պահպանած են թրքական իրենց ինքնութիւնը: Անոնք թրքերենը ամենն լաւ խօսող թիւրքմեններն են: 2009-ի ընտրութիւններուն գիւղը ուներ 500 քուէարկողի անուն:

Տորիսը համեմատաբար աւելի մեծ գիւղ մըն է, որ ունի 8000 բնակիչներ, կէսը՝ իսլամ, կէսը՝ քրիստոնեայ: Իսլամներուն 85 առ հա-

ռիւրը շիիներ են, իսկ մնացեալը՝ սիւնսիներ: Տորիսի մեջ կը բնակին 600 թիւրքմեններ, որոնք թրքերէն չեն խօսիր:

Նանանիէն ամբողջութեամբ թիւրքմեն բնակչութեամբ գիւղ մըն է: 800 բնակիչները հպարտ կը զգան իրենց թրքական ինքնութեամբ, թեւ մեծ մասամբ կորսւնցնելու վրայ են իրենց ոհմագիծը: Գիւղին տարեցները միայն թրքերէն կը խօսին: Շատերը կը կրեն թրքական անուններ: Երիտասարդները, ինչպէս թիւրքմեն բոլոր գիւղերու պարագային, մեծ թիւերով կը ծառայէն լիբանանեան բանակին եւ ոստիկանական ուժերուն:

Նանանիէի դրացնութեան մեջ կը գտնուի Ատտուս գիւղը, որուն 800 բնակիչներուն 58 առ հարիւրը թիւրքմեններ են, իսկ մնացեալը՝ շիի արաբներ: Ատտուսի մեջ կ'ապրին 700 թիւրքմեններ:

Հատիտիէն Ատտուսէն 5 քմ. հեռաւորութեամբ թիւրքմեն այլ գիւղ մըն է, 500 բնակիչներով:

Վերջապէս, Պաալպէքէն հեռու, Հերմելի մօտերը կը գտնուի Էլ Քաա սահմանային գիւղը, որուն 500 բնակիչները ամբողջութեամբ թիւրքմեններ են: Բնակիչներէն 200-ը լիբանանցի թիւրքմեններ են, իսկ 300-ը՝ սուրիացի թիւրքմեններ: Վերջին ամիսներուն Էլ Քաայի անունը յաճախ կրկնուեցաւ լրատուամիջոցներու մեջ, դեպի Սուրիա փախստական գէնքի եւ զինեալներու փոխադրութեան հարցով:

Գ) Թրիփոլիս թրքական ներկայութեան այլ ոստան մըն է Լիբանանի մեջ: Թրիփոլիի թուրքերը ծագումով կրետացի թուրքեր են: Անոնք իրենք իրենց կու տան «Մուհամմադիար» («Գաղթականներ») անունը: Կրետացի թուրքերու առաջին եւ երկրորդ սերունդները խօսած են թրքերէն եւ յունարէն, ներկայ սերունդը անծանօթ է թրքերէնին: Թրիփոլիի թուրքերը կը պահեն թրքական իրենց կարգ մը սովորութիւնները եւ տեղացիներէն կը ճան-

ցուին իրենց մականուններով: Անոնց մականունները կը կրեն **աքի** կամ **եքի** վերջածանցը, որ յունարենով կը նշանակէ որդի (օրինակ՝ Պեքրաքի, Պեքրիին որդին): Թրիփոլիի թուրքերուն թիւը կը գնահատուի եօթէն տասը հազար:

Դ) Մայրաքաղաք Պէյրութի թուրքերը ունին այլ պատմութիւն: Անստոյգ տեղեկութիւններու համաձայն, այսօր Պէյրութի մեջ կ'ապրին 20 հազար թուրքեր, որոնք 1940-ական տարիներուն եկած են Սերտիին շրջակայ Սովորալու, Էօմերի, Զաւուշլու, Շենքոյ, Միտիաթ եւ ճելինքայա գիւղերէն: Երեց եւ միշին սերունդի ներկայացուցիչները բաւական լաւ կը խօսին թրքերէն, նոր սերունդը սակայն գրեթե անծանօթ է իր մայրենիին: Պէյրութի թուրքերէն շատերը ազգականական կապեր ունին թուրքիոյ մեջ եւ յաճախ այցելութիւններ կը կատարեն:

Պէյրութի մեջ կարելի է հանդիպիլ նաեւ թիւրքմեններու, որոնք Սուրիային եկած աշխատաւորներ են: Անոնք սահուն թրքերէն կը խօսին եւ ընդհանրապէս կօշիկ կը ներկեն կամ վիճակահանութեան տոմսեր կը ծախտէն:

Լիբանանի մեջ կայ նաեւ չերքեզներու ներկայութիւն: Անոնք յատուկ շրջանի մը մեջ չեն կերդունացած, շատ ցրուած ու անկազմակերպ են:

Ի՞ՆՉ Կ'ԸՆԵՏ...

Պաշտօնական տեղեկութիւններու բացակայութեան, մամլոյ հրապարակումներէ կարելի է հետեւցնել, որ այսօր Լիբանանի մեջ կը գործեն լիբանելթրքական երկու ընկերակցութիւններ եւ Պէյրութի թուրքերը համախմբող մեկ միութիւն:

Ընկերակցութիւնները հաստատուած են Թրիփոլիի մեջ եւ կը փորձեն ճիւղաւորուիլ նաեւ այլ շրջաններու մեջ: **Լիբանելթրքական բարեկամութեան ընկերակցութիւնը** (The Lebanese Turkish Friendship Association) արդէն իսկ ունի չորս տարուան պատմութիւն: Ընկերակցութիւնը մասնաճիւղեր ունի Պէյրութի, Սայտայի եւ Աքքարի գիւղերուն մեջ: Փոխնախագահը Թրիփոլիի քաղաքապետա-

կան խորհուրդի անդամ Խալէտ Օմար Թատմորին է, որ ունի թրքասիրութեան մեծ հռչակ: 40-ամեայ այս լիբանանցին վկայուած է Պոլսոյ Միմար Սինան համալսարանէն՝ Երկրաչափութեան մասնագիտութեամբ: Անգարայի համալսարանէն ան ունի թրքագիտութեան վկայական: 2000-ին, Տիգրանակերտի Ս. Կիրակոս Եկեղեցւոյ վերանորոգութեան ուսումնասիրութիւնը կատարած Երկրաչափներէն մեկն է: Իր շանքերով լիբանանեան Պաալպէք, Սինան եւ Թրիփոլի քաղաքները քոյր հռչակուած են Թուրքիոյ Պերկամա (յուլիս 2008), Ջուսատասի (նոյեմբեր 2008) եւ Գոնիա (փետրուար 2009) քաղաքներուն հետ:

Լիբանելթրքական բարեկամութեան ընկերակցութիւնը հոկտեմբեր 2010-ին, յայտարարութեամբ մը դատապարտեց Երտողանի այցելութեան դեմ հայութեան կատարած բողոքի ցոյցը Պէյրութի Նահատակաց հրապարակին վրայ:

Լիբանելթրքական ընկերակցութիւնը (Lebanese Turkish Association) աւելի նոր ընկերակցութիւն մըն է, որ ունի ծաւալուն գործունեութիւն: Ընկերակցութիւնը պաշտօնապէս գրանցուած է փետրուար 2011-ին, մինչ այդ ինը ամիս գործելէ ետք: Նախագահը Թրիփոլիին Զահէր Սուլթանն է, որ Անգարայի համալսարանէն վկայուած է դեղագործութեան մասնագիտութեամբ: Զահէրի մեծ հօրը մեծ հայրը՝ Ղիմէտ Էֆէնտի Սուլթանզատ օսմանեան տիրապետութեան շրջանին եղած է Թրիփոլիի դատախազը: Երկու մեծ հայրերը թուրքերու հետ կառւելով մահացած են Զանաքարլիի ճակատամարտին:

Ընկերակցութիւնը ունի համացանցի իր նորաստեղծ կայքէջը (www.libnanaturkcemiyeti.org), ուր գործունեութեան նպատակ կը ճշդէ՝ Լիբանանի եւ Թուրքիոյ միջեւ մշակութային, կրթական եւ գիտական մարզերու միջեւ գործակցութեան հաստատումը: Թուրք եւ լիբանանցի ժողովուրդներու կապերու ամրապնդումը, զանազան ձեւի օժանդակութիւններու բաշխումը եւ մարդասիրական արժեքներու տարածումը:

«**Ո՞վ ենք մենք**» հարցումին, ընկերակցութիւնը կը պատասխանէ՝

«Բոլոր անոնք որոնք Թուրքիան կը սիրեն, Աքքարի լիբանանցի թուրքերը,

«Բոլոր թիւրքմենները,
«Բոլոր անոնք որոնք թրքական արմատ-
ներէ կը սերին,

«Բոլոր անոնք որոնք շրջանաւարտ են
թրքական համալսարաններէ եւ հիմնարկնե-
րէ,

«Բոլոր գաղթականները Կրետէն»

«Բոլոր անոնք որոնք Լիբանանը եւ Թուր-
քիան կը սիրեն,

«Եւ բոլոր անոնք որոնք ընկերակցութեան
նպատակներուն համար կը գործեն...»:

Ընկերակցութիւնը իր հիմնադրութենեն ի
վեր ունեցած է հետեւեալ գլխաւոր աշխա-
տանքները.-

2010-ին, ընկերակցութիւնը մասնակցած է
Մարմարայի քաղաքապետութիւններու նա-
խագահ Ռաճապ Թապայի Թրիփոլի այցելու-
թեան ի պատիւ կազմակերպուած ընդունե-
լութեան: Այս առիթով, Թապա խոստացած է
Նորոգել ընկերակցութեան կեդրոնը, որ օս-
մանեան շրջանէն մնացած եւ լիբանանեան
պատերազմին վնասուած կառոյց մըն է: Այ-
ցելութեան ընթացքին համաձայնութիւն
կնքուած է Թրիփոլի 3 եւ Մարմարայի 300
քաղաքապետութիւններուն միշեւ: Մամլոյ
ասուլիսին, Թրիփոլի քաղաքապետը քաց-
յայտած է, որ Թրիփոլի արդէն «քոյր» քաղաք
է Այնթապ քաղաքին հետ:

Նոյն տարին, ընկերակցութիւնը «Ըստրիա-
կալութիւն Թուրքիա» անունով ինքնաշարժ-
ներու մրցում մը կազմակերպած է Թրիփոլիի
մէջ եւ բարի գալուստի այցելութիւն մը

տուած է Լիբանան այցելող վարչապետ Էր-
տողանի:

2011-ին, ընկերակցութիւնը կազմակեր-
պած է թրքական համալսարաններու առա-
ջին ցուցահանդեսը Թրիփոլիի մէջ, մասնակ-
ցած է ուժանիւթիւն կենսուրութիւնի միջազգա-
յին 17-րդ տօնավաճառին Պոլսոյ մէջ եւ
ապահոված է լիբանանցի խումբ մը կապա-
լառուներու Ներկայութիւնը Անթալիոյ մէջ
կազմակերպուած շինարարական աշխա-
տանքներու տօնավաճառին: Ընկերակցու-
թիւնը մասնակցած է նաեւ Թրիփոլիի մշա-
կութային ընկերակցութեան գիրքի ցուցա-
հանդեսին եւ Թուրքիոյ զբուաշրջութեան եւ
կրթութեան մարգերը ծանօթացնոյ ֆիլմեր
ցուցադրած է այցելուներուն:

Այս տարի, ընկերակցութիւնը ձեռնարկած
է թրքերէնի դասընթացքներու՝ Թրիփոլիի եւ
Պէյրութի մէջ: Ուսի 6 դասարաններ եւ 66
աշակերտներ: Ան կազմակերպած է թրքա-
կան համալսարաններու երկրորդ ցուցահան-
դեսը Թրիփոլիի եւ Պէյրութի մէջ: Շուտով կը
կազմակերպէ դեպի Պոլիս՝ գարնանային
շրջապտոյտներ:

Լիբանանի մէջ գործող թրքական ամենէն
կազմակերպ միութիւնը «Ապագայ Երիտա-
սարդական ընկերակցութիւն»-ն է («Future
Youth Association»), որ հիմնուած է 1997-ին:
Կեդրոնը կը գտնուի Պէյրութի Ուաթուաթ թա-
ղամասին մէջ: Օրին, կեդրոնը գնուած է պէյ-
րութաբնակ թուրքերու 120 հազար տոլարի
հանգանակութեամբ: Ան թրքերէնի դասըն-
թացքներ կը կազմակեր-

պած է Թուրքիոյ կրթական նախարարութեան կողմէ
տրամադրուած ուսուցիչներով: Անդամները ար-
ձակուրդներուն շնորհա-
ւորական այցելութիւն-
ներ կը կատարեն հարա-
ւային Լիբանան հաս-
տատուած թրքական ու-
ժերուն: Նաեւ, անոնք
կ'ընկերակցին այդ ուժե-
րուն, երբ կարճատեւ այ-
ցելութիւններով անոնք
կը ժամանեն Պէյրութ:

Հոկտեմբեր 2010-ին,



«Ֆենիսիա» պանդոկին առջեւ համախմբում մը կատարելով, միութիւնը ողջունեց Երտողանի Լիբանան այցելութիւնը: Զանի մը ամիս ետք, Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութիւնը պատուիրակութիւն մը դրկեց՝ Պէյրութ՝ ծանօթանալու համար անոնց պատասխանատուներուն:

«Ապագայ երիտասարդական ընկերակցութիւն»-ը կը յաւակնի խօսիլ Լիբանանի... «80 հազար» թուրքերուն անունով եւ ունի քաղաքական դերակատարութեան ստանձնման յստակ ակնկալութիւններ: Լիբանանեան «Ախապար» թերթին մեջ լոյս տեսած տեղեկատութեան մը համաձայն, միութեան պատասխանատուններն Սակլամ 2010-ի ձմեռը Կիմատ Շարիրիի հետ ունեցած հանդիպումի մը ընթացքին, որուն ներկայ կը գտնուին նաեւ լիբանեւթրքական բարեկամութեան ընկերակցութեան Սայտայի եւ Թրիփոլիի ներկայացուցիչները, «Սութաքաղաք» հոսանքն կը պահանջէ բաժին ունենալ երեսփոխանական յառաջիկայ ընտրութիւններուն մեջ: «Մենք պիտի չընդունինք միայն ընտրել, այլ՝ պիտի պահանջենք նաեւ ընտրուիլ», կ'ըսէ ան: Մամլոյ նոյն տեղեկատութեան համաձայն, Սակլամ Շարիրիի հարց կու տայ, որ «Ինչո՞ւ 120 հազար հաշտող հայերը կառավարութեան մեջ երկու նախարար ունին, իսկ 80 հազար թուրքերը ո՞չ մեկ ներկայացուցիչ: Գոնե հայերուն տրուածին կեսը տուեք մեզի», կ'աւելցնէ ան:

Քաղաքական այս պահանջները կը փոխանցուին նաեւ Լիբանանի մեջ Թուրքիոյ դեսպանին եւ վարչապետ Երտողանին:

...Ի՞ՆՉՊԵՍ Կ'ՇՆԵՆ

Որքան ալ Լիբանեւթրքական ընկերակցութեան նախագահ Զահեր Սուլթան յայտարարէ, որ իր գլխաւորած ընկերակցութեան եկամուտի աղբիւրը նուիրատուութիւններն են, անկարելի է պատկերացնել, որ իր եւ Լիբանանի թրքական այլ ընկերակցութիւնները կարենան այսքան գործունեութիւն ծաւալել

Լիբանեւթրքական ընկերակցութեան կեդրոնը Թրիփոլիի մեջ



նուիրատուութիւններու ապաւինելով միայն: Լիբանանի թրքական դեսպանատան աջակցութիւնը զգալի է ամենուրեք: Ի վերջոյ, նոյն Զահեր Սուլթանը կը խոստովանի նաեւ, որ իր ընկերակցութիւնը իիմնուած է թրքական դեսպանատան քաջալերանքով...

Լիբանանի թրքական դեսպանատունը եւ անոր ետին կանգնող Անգարայի վարիչները անվերապահ աջակցութիւն կը ցուցաբերեն իրենց համայնքի զաւակներուն թրքերեն ուսուցման եւ ընկերային-տնտեսական պայմաններուն բարելաւման համար: Վերջին շրջանին, դեսպանատունը թրքական անցագիրներ կու տայ իրենց արմատները վերագտնող լիբանանցի թուրքերուն, նոյնիսկ անոնց որոնք զինուրական ծառայութիւն չեն կատարած Թուրքիոյ մեջ: Եւ դեռ, կ'արժէ աչքի առջեւ ունենալ թիւրքմեն գիւղերուն Թուրքիոյ տրամադրած նպաստները՝ որոշ գաղափար մը կազմելու համար կատարուածին ու կատարուելիքին մասին:

Թրքական աղբիւրներ իրենք կը տեղեկացնեն, որ անցնող քանի մը տարիներուն հսկայական օժանդակութիւններ տրամադրած են Աքքարի եւ Պաալպէքի իրենց հայրենակիցներուն: Արդարեւ, թրքական դեսպանատունը դպրոց մը կառուցած է Զառչարա գիւղին մեջ եւ զայն օժտած է Ելեկտրածին շարժակով մը: Աև 21 համակարգիչներ տրամադրած է շրջանի ոստիկանական ուժերու համակարգչային կեդրոնին: Զեռնարկած է նաեւ շրամատակարարման ծրագիրի մը եւ

առողջապահական կեդրոնի մը ստեղծման: Դեպահան առ ա տ ո ւ ը գիւղին տրամադրած է նաեւ ամբողջական սարքերով կիւանդատար ինքնաշարժ մը, առաւել՝ 1991-էն սկսեալ տարեկան չորս կրթաթոշակ թուրքիա ուսանիլ փափառը թիւրքմեներու:

Նմանօրինակ ծրագիրներ իրագործուած են նաեւ Այտամունի եւ Պաալպէքի 5 գիւղերուն մէջ: Առանց մոռնալու, անշուշտ, թրփուիի եւ Պէյրութի մէջ կազմակերպուած թրքերէնի դասընթացքները, որոնց ուսուցիչները կ'ապահովուին դեսպանատան միջոցով, որ յաճախ կը հովանաւորէ եւ կը կազմակերպէ զանազան ընկերակցութիւններու անունով իրականացուող ձեռնարկները:

Ծրագիրներու շարքը երկար է: Վերջին իրագործումը կեդրոնական Պէյրութի մէջ թրքական մշակութային կեդրոնի մը բացումն է, որուն անմիջականորեն պիտի հետեւին թրքական քոլեճի մը բացումը եւ Լիբանանի թիւրքմեններու ընկերակցութեան ստեղծումը: Մամլոյ շրջանառութեան մէջ են նաեւ այլ ծրագիրներ. մտային խանգարումներէ տառապողներու իիւանդանցի մը բացում թրփուիի մէջ, «Թուրքիա» ջրամբարի կառուցում Տընկիէի մէջ եւ թրքական արտադրութիւններու առաջին ցուցահանդեսի կազմակերպում Պէյրութի մէջ:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՊԵՏՈՒԹԻՒԾ Ի՞ՆՉ Կ'ԸՆԵ

Թրքական համայնքին զարթօնքը եւ Լիբանանի մէջ թրքական ազդեցութեան տարածումը անկարելի պիտի ըլլային, եթէ երբեք քաղաքական բարենպաստ պայմաններ չստեղծուեին անոնց համար: Այդ պայմանները վերջին 10-12 տարիներուն ստեղծուեցան



շրջանային եւ լիքա ան ե ա ն կեանքի զարգացումներուն բերումով:

Ծրջանային ի մաս ս տ ո վ , թուրք-սուրիական յարաբերութիւններու բարելաւումը հոկտեմբեր 1998-ի Ատանայի համաձայնութենէն ետք եւ անոր հետեւած՝

թիւրտիստանի Աշխատատրական Կուսակցութեան դեկապար Ապտալլա Օճալանի հեռացումը Դամասկոսն, անկասկած, որ նոր էջ բացին երկու դրացիններու տասնամետակներու պատմութեան մէջ: Այդ յարաբերութիւններու ամրապնդման ծառայեցին նաեւ իրաքի պատերազմը եւ 2005-էն ետք Սուրիոյ դեմ որդեգրուած պատժամիջոցները:

Արդարեւ, ամերիկեան ուժերու իրաք ներխուժումով եւ երկորին հիւսիսը քրտական ինքնավար շրջանի մը ստեղծումով, թուրքիա եւ Սուրիա ապրեցան քրտական ազգայնականութեան հզորացման վտանգը, ինչ որ կրնար սպառնալ երկութին ազգային անվտանգութեան շահերուն: Յետեւաբար, անհրաժեշտ գործակցութիւն մը անխուսափելի թուրեցաւ թէ՛ Ալգարայի եւ թէ՛ Դամասկոսի վարիչներուն: Այդ գործակցութիւնը ամրապնդուեցաւ Լիբանանի վարչապետ Ռաֆիք Շարիրիի սպառնութենէն ետք, երբ Արեւմուտքը Սուրիոյ դեմ որդեգրեց շրջափակումի քայլեր, որոնցմէ թուրքիա փորձեց առաւելագոյնս օգտուիլ՝ թափ տալով Սուրիոյ հետ տևական իր կապերուն:

Թուրք-սուրիական յարաբերութիւններու սերտացման ցուցանիշը պետք է նկատել յունուար 2005-ին, Սուրիոյ նախագահ Պաշշար Ասատի թուրքիա այցելութիւնը, ինչ որ անսախընթաց էր Սուրիոյ պատմութեան մէջ: Երկու երկիրներուն միշեւ ստեղծուած վստահութիւնը հասաւ այն աստիճանի, որ Ալգարա 2008-ին ստանձնեց Սուրիա-հսրայէլ անուղղակի բանակցութիւններուն միջնորդութիւնը:

Այս բոլորը, հասկնալիօրեն, իրենց անդրադարձը ունեցան թուրքելիքանանեան յարաբերութիւններուն վրայ, մանաւանդ երբ Թուրքիա 2006-ի յուլիսեան պատերազմէն եւ 2008-ի Կազախի դեպքերէն ետք հագուեցաւ դիմադրութեան ուժերու պաշտպանի դիմակը եւ շրջանին մէջ հանդէս եկաւ հակահիսրայէլեան կեցուածքներով:

ՊԵՋՐՈՒԹԻ ՄԷՋ, պետական շրջանակներ շերմօրէն ողջունեցին Թուրքիոյ այս դիմաշրջումը եւ ճակատագրական սխալը գործեցին շատ արագ դռները բանալու անոր դիմաց: 2002-ին ստեղծուեցաւ թուրք-լիբանանեան առեւտրական ընկերակցութիւնը (համանախագահներ թուրք Մեհմետ Յապաաա եւ լիբանանից Ուաժիհ Պրզոի), որ տնտեսական աշխուժ գործակցութեան մը հորիզոնները բացաւ Անգարայի եւ ՊԵՋՐՈՒԹԻ դիմաց: Յաջորդեցին Լիբանանի Վարչապետներ Ռաֆիք Յարիրի (2004) եւ Ֆուատ Սինիորայի (2005) Թուրքիա այցելութիւնները, ինչ որ նոր թափ, որակ ու ծաւալ տուին երկու երկիրներու քաղաքական ու տնտեսական յարաբերութիւններուն: Այսպէս, 2006-էն 2008, թրքական արտադրութիւններու Լիբանան ներածումը աւելցաւ 150 առ հարիւրով, իսկ Թուրքիա այցելող լիբանանիներուն թիւը տարեկան 14 հազարէն բարձրացաւ 50 հազարի:

2006-ի յուլիսեան պատերազմը թուրք-լիբանանեան յարաբերութիւններուն մէջ նոր հանգրուանի մը ազդանշանը տուաւ: Պատերազմի վնասներու դարմանումին առիթը օգտագործելով, թուրքեր շարք մը նախաձեռնութիւններով իրենց ներկայութիւնը ամրապնդեցին Լիբանանի մէջ: Պատերազմը հազիւաւ արտած, Թուրքիոյ իշխանութիւնները եւ թուրք ոչ պետական կազմակերպութիւններ 20 միլիոն տոլարի մարդասիրական օժանդակութիւն-

ներ տրամադրեցին հարաւի գաղթականներուն: Թուրքեր հիւանդանոցներ նորոգեցին, 20 «պատրաստ դպրոցներ» հաստատեցին Սայտայի, Թրիփոլիի եւ... Սուրի մէջ: Եւ ամեննեն կարեւոր, 600 հոգինց զինուորական ուժով մը իրենց մասնակցութիւնը բերին հարաւային Լիբանանի Ֆիւնի-Ֆիւնի-ի խաղաղարար ուժերու առաջելութեան:

Իբրեւ երախտագիտութիւն Լիբանանի համար Թուրքիոյ ի գործ դրած ճգերուն, 2006-ին, Թրիփոլիի քաղաքապետութիւնը քաղաքին գլխաւոր հրապարակը (Ել Թել) անւանց սովորական Յամիտի անունով: Յարապարակը նշանաւոր եղած է իր պատմական ժամացոյց աշտարակով, զոր սովորական Յամիտ գահակալութեան 25-ամեակին առիթով կառուցել տուած է 1902-ին:

2008-ին, Տոհայի համաձայնութեան ստորագրութենեն ետք, Թուրքիոյ Վարչապետ Էրտողան անձամբ ներկայ գտնուեցաւ նախագահ Սիշէլ Սլեյմանի ընտրութեան խորհրդարանական նիստին, մինչ երկու երկիրներու տնտեսական յարաբերութիւնները շարունակեցին արագ զարգացում ապրիլ: Ցունուար 2009-ին, թուրք-արաբական համաժողովի աշխատանքներու կողքին՝ Թուրքիա եւ Լիբանան որոշեցին ստեղծել տնտեսական գործակցութեան ազատ գոտիներ: Բացուեցաւ Մերսին-Թրիփոլի նաւային գիծը:

Ցունուար 2010-ին, երկու երկիրները ստորագրեցին առողջապահութեան, երկրագործութեան, անտառամշակման, զինուորական գործակցութեան գոտիներ: Բայց կրթական մարզական մարզի վերաբերող վեց համաձայն ագիրն էր: Անոնք չնշեցին երկու երկիրներ մուտքի արտօնագիրն էր: Տասը ամիս ետք, նոյեմբերին, կողմերը ստորագրեցին երկու նոր համաձայնագիրներ՝ տնտե-



ՖԻՒՆԻ-ՖԻՒՆԻ-Ի ԹՐՔԱԿԱՆ ՈՒԺԵՐ ՀԱՐԱՎԻ ՄԷՋ

սութեան, բարձր մակարդակի արհեստագիտութեան եւ մարդկային պաշարներու օգտագործման վերաբերեալ:

Գործակցութիւնը հասաւ մինչեւ մշակութային մարզ: Թրքական հաղորդաշարերը անցնող տարիներուն ողողեցին լիբանանեան պատկերասփիլոի պատառները: Մարտին, դեսպան Ինան Եօգերլուզ Լիբանանի տեղեկատուութեան նախարարին հետքնարկեց պետական պատկերասփիլոի կայանին թրքական յայտագիրներ տրամադրելու կարելիութիւնը, մինչ Պէյրութի մէջ կազմակերպուեցաւ թրքական ֆիլմերու երկրորդ շաբաթը:

Յատկանշականօրէն, նոյն ամիսը, Պէյրութի եւ Պոլիս հրչակուեցան «քոյր» քաղաքներ:

Այսօր, թուրքելիբանանեան յարաբերութիւններուն շերմութիւնը այն չէ՝ ինչ որ էր երկու տարի առաջ: Սուրբիոյ իրադարձութիւններուն նկատմամբ թուրքիոյ վերաբերմունքը եւ իսրայէլի հանդեպ որդեգրած խարուսիկ կեցւածքներուն բացայացումը բաւական բան փոխած են լիբանանեան քաղաքական շրջանակներուն մօտ, որոնք այլեւս վերապահութեամբ մը կը մօտենան Անգարայի առաջքայերուն, առանց սակայն հասնելու կտրուկ մերժումի հանգրուանին:

ՄԵՆՔ Ի՞ՆՉ Կ'ԸՆԵՆՔ

«Մենք ի՞նչ կ'ընենք»-ը ապրիլ 24-ի առիթով արտասանուած տեղին հարցում մըն է, որուն պատասխանը սերտօրէն առնչուած է համահայկական մեր նպատակներուն իրականացման հետ: Լիբանանի մէջ թրքական ներկայութեան մասին շատ խօսուած է, սակայն թիւերու եւ տուեալներու լեզուն միշտ ալ կցկուր եղած է՝ անկարելի դարձնելով հարցին ամբողջական տարողութեան պատկերացումը:

Հայութիւնը ցարդ հակագդողի դիրքին մէջ գտնուելով, բաւարարուած է բողոքի պարագայական ելոյթներով. իր ձայնը բարձրացնելով ան մերժած է թրքականը՝ ի հաշիւ լիբանանեանին եւ տեղացիներու ուշադրութիւնը հրաւիրած է թրքական թափանցումի վտանգաւոր հետեւանքներուն վրայ: Յաջողա՞ծ է

ան, կը կասկածինք: Թշնամին ճակատումի ձեռնարկած է պետական միջոցներով, մեծագումար ներդրումներով եւ յաճախ լիբանանեան պետական շրջանակներու իսկ գործակցութեամբ: Իսկ որո՞նք են հայկական կողմին «զէնք»-երը. քանի մը ցոյց, երիտասարդական բողոքի քանի մը արտայայտութիւն, մամլոյ յայտարարութիւններ, կլոր սեղաններ եւ այսքան: Ցուցական-քարոզչական ձեռնարկները առանձինն, դժբախտաբար, չեն յաջողած բաւարար «զէնք»-եր ըլլալ: Պահանջուածը աւելին է, ամէն մարզի մէջ ու ամէն մակարդակի վրայ:

Կը բացակայի հիմնական գործօնը՝ հայրենիքը, Յայաստանը, որ նուազագոյնը (թշնամին օրինակով) տեր պիտի ըլլայ իր հայրենակիցներու դպրոցներուն, որպէսզի անոնք կանգուն մնան այսօրուան եւ վաղւան մեր պայցարին համար: Տոկան եւ ապահովեն իրենց ժողովուրդին տոկունութիւնը՝ թրքական յարաճուն վտանգին դէմ:

Լիբանանի հայութիւնը ջրամբարտակ, համակարգիչ ու հիւանդանոց չի սպասեր Երեւանի իշխանութիւններէն, այլ՝ հայ-լիբանանեան կապերու արագ ամրապնդում՝ որքան կարելի է: Բան մը, որուն պիտի հետեւի հայ-լիբանանեան տնտեսական գործակցութեան մակարդակին բարձրացումը եւ կրթական, մշակութային եւ զրոսաշրջիկական մարզերու գործակցութեան սերտացումը՝ գեթ մասամբ հակաշռելու համար թրքականը:

Գաղութային մակարդակի վրայ, ժամանակն է, որ հարցը իր արժանի տեղը գրաւէ ազգային խնդիրներու քննութեան սեղանին վրայ, որպէսզի վաղը չափսուանք այսօրւան կորսուած առիթին համար:

Լիբանանի մէջ թրքական ներկայութեան հարցը կը կարօտի հետեւողական եւ աչալուրջ հետապնդումի: Յարցին վրայ լուսարձակներ հրավիրելու մեր համեստ փորձը թող նկատուի հայութեան նետուած ձեռնոց մը՝ այս իմաստով քայլ մը առցեւ անցնելու:

Վ. ԱՐԱԳԵԱՆ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ ԸՆԴԱՌԱԶ

ՄԵՐ ՅՈՅԱԼ, ՄԵՐ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԸ

Մեր տարիներ մնացին ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԸ դիմագրաւելու: 97 տարիներէ ի վեր կ'ոգեկոչենք թուրքին կազմակերպած ցեղասպանութեան նահատակները: Կ'արժէ հաշիւ մը ընել, թէ անցնող տարիներուն որքանո՞վ կարողացանք մեր ձայնը լսելի դարձնել աշխարհին եւ անոր յայտնել, յիշեցնել, թէ կայ օսմանցի կոչուած ցեղ մը, որ արևախում է եւ ունի գազանային ախորժակներ մարդ բզկտելու, ցեղ մը ամբողջ շարդելու, կոտորելու:

1915-1922 գործադրուած ցեղասպանութիւնը Հայաստանի արեւմտեան տարածքներէն մինչեւ Կիլիկիա եւ մինչեւ Կիպրոսի ջուրերը, օսմանցին ցոյց տուած է իր ժանիքները, իսկ աշխարհ խուլ ու կոյր ձեւանալով մնացած է անտարբեր: Զարդուած ազգին բեկորները երբ հասան խաղաղ երկիրներ, ուր թուրքը չկար, կարողացան բուժել իրենց վերքերը, միսիթարել այրած սիրտերը, եւ անօնական բայց միշտ ինքնավստահ գտան իրենց հացի ճամբան, որոնեցին լոյսի ճամբան, աղօթելու տրամադրութիւն ունեցան:

Իր գոյութիւնը հաստատելու առաջին 25 տարիները եղան նման պատրաստութիւններ, սփիւռք դարձած տարածքներու վրայ, Արեւելքն Արեւմուտք եւ մինչեւ հեռաստաններ... Երկիրներ եւ ժողովուրդներ անծանօթ մեր մէջ ԵՍ-ին, մեր հաւաքական ԼՂՑ-ին, ՄԵՐ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՑԱՖ-ին, սկսան հե-



տաքրքրուիլ մեր ցեղային արժանիքներով: Ճիշդն ասաց ոչ թէ անոնք հետաքրքրուեցան, այլ մենք պարտադրեցինք մեր կենցաղային կամքով, թէ «Մենք կոչում ենք հայ...»:

Յետ եղեղնի երկրորդ 25 տարիները, մինչեւ 50-ամեակ, հայր կարողացաւ լեզուն բանալ, որովհետեւ իր զաւակները ճանչցան իրեն ապաստան տուած ժողովուրդներու լեզուները, սորվեցան ու գրեցին, սորվեցան ու խօսեցան, յօդուածներ գրեցին տեղական մամուլին եւ ըսին.

«Թուրքը անցաւ հոսկէ...»:

Երբ Փրանսացի անմահանուն բանաստեղծ Վիքթոր Յիւկոյի խօսքերը եւ զայրոյթը յիշեցուցին, ժողովուային բազմահազար բազմութեանք 50-ամեակ տօնեցին եւ գոչեցին. «Թուրքը Հայաստան, թուրքը ցեղասպան, վկայ Լիբանանի Պեյրութ մայրաքաղաքի Պուլճ հրապարակի յուշակոթողը...»:

Աշխատանքը կազմուած հայր ունեցաւ իր երկրորդ եւ երրորդ սերունդը: Տարիները դիզուեցան իրարու վրայ, 60, 70, 80 90-ամեակներ, նորագոյն սերունդը, մանկապարտեցն մինչեւ համալսարան լսեցին թուրքին կատարած կոտորած կոտորածները, իր պատերէն, մեծ մայրերն արձագանքներ հասան ականչին, ճանչցաւ թուրքին դրօշակը եւ օր մըն ալ, եւ այդ օրը Ապրիլ 24 էր, հաւաքուեցաւ սրահներու դիմաց եւ այրեց, հրկիցեց այդ դրօշակը, իբր բողոք շարունակուող անարդարութեան:

Կար երիտասարդ սերունդը, ան բռունցքը ամրացուց եւ ուխտեց պահանջել իր իրաւունքը:

«- Օսմանցիներու թոռներ, ճանչցեք ձեր անգութ և ախահայրերը, ձեր հայրերը, լսեցեք մեր ծայնը: Եթէ այսօր չլսեք, վաղը պիտի լսեք անպայման...: Որովհետեւ... Որովհետեւ վաղուց սորված ենք հոգեպինդ պատգամը, թէ՝

«Այսքան չարիք թէ մոռանան մեր որդիք,

«Թող ողջ աշխարհ հային կարդայ

նախատինք...»:

Կը գտնուինք 100-ամեակի սեմին. պատրաստ է մեր ազգը ամբողջ, իր անկախ հայրենիքով, իր բազմածիւղ սփիւռքով, իր զարգացած նոր սերունդով, որ իր ծայնը լսելի կը դարձնէ աշխարհահռչակ լեզուներով, երգեր կը յօրինէ, գիրքեր կը գրէ, շարժանկար կը պատրաստ «Տատիկիս դաշուածքին» մասին կը պատմէ...: Խեղճ բեկորներ չենք, Տեր Զօրի այրող աւագները թօթուած ենք մեր ներբաններէն: Ունինք սեփական դրօշ՝ ծիածանակերտ Եռագոյնը, ու կը պահանջենք ամենայն զօրութեամբ. «Ճանաչումն հատուցում»:

Հազար ապրի մեր նոր եւ նորագոյն սերունդը, որ կախ կ'ազդէ նոր օրերու թալեաթ-



ներու, որոնք կը կոչուին Երտողան կամ Տաւութօղլու: Մենք ներկայաւութիւն ենք աշխարհի չորս ծագերուն: Ձու գործած մեծ չարիքիդ «բարիք» է այս:

Սիրելի հայորդիք, 100-ամեակի սեմին իստացը նենք մեր շարքերը, մեր սիրտերը

ամրացնենք, մեր հոգիները առաւել հայացը նենք: Մեր դատին հանդեպ հաւատը սրբացնուցէք, որովհետեւ թուրքին արեան մեջ տեսակ մը թոյն կայ, որ միշտ կ'ուզէ սրսկել ասմեղներու կեանքերուն վրայ: Յիշէ Յրանդ Տիկը, Յունգարիոյ մեջ թուրք զիսուրի մը կատարած ոճիրը՝ քնացող իր զօրակից հայ զիսուրը սպաննելը: Թուրքը ծնած է կողոպտելու, շարդելու, ուրիշին մշակոյթը գողնալու եւ ստելու համար: Ձեզի կը մնայ սիրելի հայորդիք ապրիլ, շարունակել հայանալ արժանաւորապէս, թէ՝ Կոմիտասները, Զօրիապները, Սիամանթօնները, Դանիէլ Վարուժանները, Ռուբէն Սեւակները սպաննող օսմանցին նոյն դաւաճան նենգամիտն է: Ամրացուր բռունցքը, ուխտեց պահանջել բռնաբարուած հողերու, որպեսզի մեր նահատակներուն հոգիները իրճուին:

100-ամեակին ընդառաջ պատրաստուե հայ ժողովուրդ: Փախուստ չկայ իրաւունքներդ պահանջելէ: Չարը պիտի խոնարհի ի վերջոյ: Անցած դարը մեզ չի յուսալքեր: Պատմութեան ճամբաններուն վրայ դարերը կարճատեւ պահեր են: Յայը պիտի ապրի իր ամբողջական հայրենիքով:

Օրիհան Փամուըներուն ողջոյն, անոնք թող բազմանան եւ ողջոյն Ֆեթիհէ Զեթինին, որուն երակներուն մեջ հայու արիւն կը տրոփէ: Եւ վերջապէս՝ **«Մենք քիչ ենք, բայց կուլում ենք հայ...»**:

ԾԱՐԱՆՇՈՒՏ

ՀԱՅՈՒՆ ՀՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ

«Հացի, օդի եւ ջուրի նման,
հպարտութեան պէտք ուսինք»
ՎԱՐԱՆ ԹԵԶԵԵՎՆ

Սուրիծա Մաթոս-եան մանկութիւնը անցուցած է Կիպրոս: Ուսանած է Անգլիա եւ Պետքորտ համալսարաննեն վկայուած է փիլիսոփայութեան մէջ: Նաեւ հետեւած էր մասնագիտացած է երաժշտութեան եւ թատրոնի մէջ: Ներկայիս կ'աշխատակցի «Պի.Պի.Սի.»-ի տեղեկատուութեան ցանցին եւ կը թղթակցի միջազգային թերթերու, ինչպէս՝ «Տը կարտիզն» եւ «Ինտիվենտընթ փոսթ»՝ ստորագրելով գեղարուեստական բնոյթի զանազան յօդուած վերլուծումներ:

Սակայն, ինչ որ ուշադրութիւնս գրաւեց իր պատրաստած «Հրանտ Տինք. Երկու ազգութեան սիրտը» քառասուն վայրկեաննց կարճ ֆիլմն է: Նուրիծա Մաթոս-եան արժանացած է միջազգային մրցանակներու իր այս ֆիլմին պատրաստութեան համար: Նուրիծան կը զրուցէ Հրանտ Տինքի հետ. աև կը խօսի եւ Տինքը կը պատմէ: Նուրիծա Մաթոս-եան կրցած է դուրս բերել Տինքին՝ «Հասարակ մարդուն» ներաշխարհը, մանկութենեն սկսելով, եւ հոգեմտաւոր աշխարհը՝ հայեցակետը, ինքնութեան պրատումները, հայ-թուրք յարաբերութիւնները, քրիստոնեական ու հոգեւոր արժեքները...: Եւ այս կարճ ֆիլմին մէջն Նուրիծա Մաթոս-եան յաջողած է բացայատել Տինքին «սիրտը» եւ այդ սրտին տրոփիւն տուող «հպարտութիւնը», որ չդադրեցաւ տրոփել՝ նոյնիսկ իր մահեն ետք:



«Հայը համազօր է հայոյանքի այս երկրին մէջ», կը խօսի Տինքը: «Թուրք ժողովուրդը ոչ միայն չի գիտեր Ցեղապանութեան մասին, բայց նաեւ կը հաւատայ, թէ հայը թուրքն է որ սպանած է», կ'ըսէ ան: «Ուրեմն այս ժողովուրդը (հմա՝ թուրքը) պէտք է սորվի իրականութիւնը», կ'եզրակացնէ ան:

Եւ այս «իրականութիւնը» սորվեցնելը Տինքին կեանքը տարաւ մինչեւ կատարելութիւն, որ վերջացաւ անարգ սպանութեամբ: Տինքի կեանքը եղաւ համակ աշխատանք եւ նուիրում այս «իրականութեան» համար, եւ անոր համար ո՞չ մէկ ճիգ ինայեց ան:

Նուրիծա կը շարունակէ. «Ի՞նչը կը կապէ քեզ այս երկրին»: Տինքի հաստատ պատասխանը. «Իմ երկիրս Է...: Իմ արմատներս հուն: Եթէ պիտի փլեն՝ մենք նորեն պիտի շինենք...»:

Եւ արմատները, նոյնինքն արմատերուն կապուած հողը, շատ բան կ'աւելցնեն Տինքի հպարտութեան վրայ:

Բայց Նուրիծա կը շարունակէ «անհանգստացնել» Տինքը. «Յոս մէկ հատ հայ չեմ տեսներ ես...»:

Յոս ի յայտ կու գան Տինքին պայծառատեսութիւնը եւ յստակատեսութիւնը: Հպարտութիւնը կը խթանէ զինք, որպէսզի ան աներկիւդ պատասխանէ՝ «Ես կը տեսնեմ. տեսի՞լք թէ իրականութիւն՝ կը տեսնեմ»:

Եւ Տինքը կը տեսնե՝ քանի ուսի հպարտու-

թիւնը իր «պապերուն»: «Իմ պապերուս երկիրն է այս...»:

Նուրիձա Մաթոսեան Տիևքին կ'ընկերակցի մինչեւ վերջ: Կը սկսի տեսնել Տիևք մարդը եւ անոր մէջ մտահոգութիւնը, որ շաղախուած է վախով: Մահուան սպառնալիքներ ստացած է, եւ այս անպայմանօրէն կը մտահոգէ՝ չէ...: Մարդկային ո՞ր եակը պիտի չունենայ նոյն զգացումները: Յետեւելով ֆիլմին ու նայելով Տիևքի աչքերուն եւ նայուածին՝ Մաթոսեան կը սկսի տեսնել անոր ներաշխարհին անորոշութիւնները: Տիևք սակայն գիտ թէ ինչպէս պիտի յաղթահարէ այդ ներաշխարհը: Յայ Աւետարանական Պատանեկան Տան մէջ սորված է, թէ «Տէրը իմ հովիս է, բայի մը կարօտը պիտի չունենամ»: «Չիս խոտաւետ արօտներու մէջ կը պառկեցնէ, հանդարտ ջուրերու քով ինծի կ'առաջնորդէ (Սաղմոն 23):

Մաթոսեանի հետ կ'ապրիս Տիևքի «հանդարտութիւնը», որ զինք կը պահէ զգաստ՝ շարունակելու համար իր երթը «իրականութեան» պայքարին համար:

«Պատմութեան մէջ մէկ դարը մէկ նախադասութեամբ կ'անցնի», կը շարունակէ Տիևք: Ուրեմն, կայ աշխատանքին ու գործին անհրաժեշտութիւնը: Եւ հոս՝ Տիևք դէմ առ դէմ կուգայ իր կեանքի «ճակատագրին» եւ իր «հպարտութիւնը» կապած անոր կ'ըսէ. «Եթէ ես երթամ, անշուք չեմ երթար», որովհետեւ ան գիտէ, թէ Յրանդ Տիևք «ինչ գործեր ըրած է»:

Տիևքի «հպարտութիւնն» է այս, հողին ու արմատին ինքնագիտակցութիւնը, որ զինք կը մէյ Ցեղասպանութեան եւ պահանջատիրութեան «իրականութեան» համար ամբողջ կեանք մը նուիրելու: Կեանք մը՝ որ ծգտեցաւ կատարելութեան եւ այդ կատարելութիւնը զինք տարաւ նահատակութեան:

Տիևք կարողացած էր «գուշակել», թէ «անշուք պիտի չերթար» եւ թէ՝ «ինչ գործեր ըրած եր», որովհետեւ Պոլսոյ Թաքսիմի հրապարակը մինչեւ այսօր կ'արձագանգէ՝ «Բոլորս հայենք, բոլորս Յրանդ Տիևք ենք...»: Ու տակաւին, Տիևքի հպարտութիւնը խթանեց գաղտնի մնացած, պահուցտած եւ կորսուած շատ մը հայեր, որպեսզի վերագտնեն նաեւ իրենց «հպարտութիւնը»:

Եթէ կը գտնուինք Ցեղասպանութեան յիշատակութեան հարիւրամեակի սեմին, այս պիտի նշանակէր, թէ պիտի հաւատանք Տիևքի պէս «ինչ գործեր ընելու» անհրաժեշտութեան: Իսկ այս գործերը կրնան իրականանալ, եթէ մէր մէջ ամրապնդենք «հայուն հպարտութիւնը»: Այս այս հպարտութիւնն է, որով մէր նախահայրերը չգիշեցան ու չսակարեցին ո՛չ ազգային ինքնութիւն եւ ոչ ալ քրիստոնեական հաւատք: Այս այս հպարտութիւնն է, որ մէր նախահայրերը մղեց, որ Տէր Զօրի գժոխքն դուրս գան կենդանի ապրող իրականութիւնը հիւղաւանները եւ թիթեղապատ տնակները վերածեց կազմակերպուած սփիւռքի:

Յայուն հպարտութիւնը գերակայութեան եւ գերադասութեան համար չէ, եւ ոչ ալ դիմացինը արհամարհելու եւ ստորևացնելու մէջ: Այս այս հպարտութիւնն է, որ պիտի մղէ մեզ՝ հայրենիք եւ սփիւռք տէր կանգնելու մէր ազգային արժեքներուն, քաջ գիտնալով որ այս արժեքները շատ բան տուած են համաշխարհային քաղաքակրթութեան:

Եւ այս նոյն հպարտութիւնն է, որ Ցեղասպանութեան ճանաչումը եւ պահանջատիրութեան գործընթացը պիտի վերածէ զգաստութեան կեանք մը, ուր նուիրումի եւ զոհողութեան տրամադրութիւնները պիտի դառնան տեսլական:

«Յրանդ Տիևք. Երկու ազգութեան սիրտը»: Եթէ թուրքին սրտին վրայ կայ Ցեղասպանութեան ծանրաբեռնուածութիւնը, եւ անպայմանօրէն կայ, նոյնիսկ երբ կը դրժէ այդ իրականութիւնը, հայուն սրտին մէջ կայ պահանջատիրութեան հպարտութիւնը: Եւ այս հպարտ սիրտով Յրանդ Տիևք կրցաւ «ճեղքել» թուրքին սիրտը:

Յայը այսօր պէտք ունի «հացի, օդի եւ ջուրի»: Բայց նաեւ պէտք ունի «հպարտութեան»:

Յայուն հպարտութիւնն է այս, որ պէտք է վերականգնել հարիւրամեակի նախօրեակին, եւ այս հպարտութիւնն է, որ հայը պիտի խթանէ, որպեսզի «շատ գործեր ընե...»:

ՀՐԱՅՐ ՃԵՊԵՃԵԱՆ

«ՕՐՈՐՈՅԱՅԻՆԸ ՓՐԿՈՒՄ Է ԵՐԵՒԱՅԻՆ ԹՈՒՐՔԻՑ»

ՄԻ ԵՐԵՒԱՅԻ ԿԵԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

**Որոշում ըստ Սոլոմոնի. հայ մայրը
կիսաձայն մրմզում է օրօրոցային
երգեր իր գողացուած մանկիկի համար:**

Յալէպ: Մի ամերիկացի կրկնել է Սոլոմոնի դատական իմաստուն սխրագործութիւնը նրա իսկ սեփական երկրում: Նա Կարմիր խաչի աշխատակից էր եւ ստիպուած էր վճռել նոյն հայցը, ինչ Սոլոմոնը հազարաւոր տարիներ առաջ: Ահա պատմութիւնը: Թուրքական կառավարութեան կողմից դեպի արաբական անապատ մեկ միլիոն հայերի աքսորի ժամանակ, թուրքերը սովորութիւն ունեին ճանապարհոց առեւանգել երեխաների, կաևանց:

Չորս տարի առաջ մի հայ մայր իր փոքրիկ, գեղեցիկ երեք տարեկան դստեր հետ հազիւ հազ անցնում էր Յալէպի փողոցներով: Մի թուրք դուրս վագելով իր տնից՝ ճանկեց երեխային, մինչդեռ գաղթականներին հսկող զինուրները, ստիպեցին երեխայի մօրը շարունակելու ճանապարհը: Նախորդ ամիս մայրը վերադարձաւ անապատից՝ փնտռելով իր փոքրիկին: Վերջինիս նա գտաւ մի թուրքի տանը եւ պահանջեց նրան, բայց փոքրիկ աղջիկը, որն արդէն 7 տարեկան էր, ճանաչեց իր մարդիկին, իսկ թուրքը մերժեց հայ մօր պահանջը:

Այսուհետեւ խեղճ կիսը դիմեց Ամերիկան Կարմիր խաչին, որը բրիտանական բանակի աջակցութեամբ միջոցներ էր ձեռնարկում վերադարձնելու բոլոր գողացուած եւ կորած երեխա-

ներին: Նրանք բերեցին կորցրած աղջկան Կարմիր խաչի ապաստարան, եւ նրան վերադարձնելուն ուղղուած երկու կողմերի պահանջները յայտնուեցին Կարմիր խաչի հովանաւորութեան տակ գտնուող որբանոցի ղեկավարի սեղանին:

Յազարաւոր տարիներ առաջ Սոլոմոնն ունեցել է նմանատիպ մի հայց, երբ երկու մայրերը պահանջում էին նոյն երեխային: Խնդիրը լուծելու համար Սոլոմոնը հրամայեց մի զինուրի բաժանել երեխային երկու մասի՝ իրաքանչիւր կոնչը մեկական մասը տալով: Այս ամենից յետոյ իսկական մայրը հրաժարուեց երեխայից՝ փրկելու համար վերջինիս կեանքը: Իմաստուն միապետն անմիջապես տուեց երեխային այն կոնչը, որը պատրաստ էր հրաժարուել երեխայից՝ փրկելու համար նրա կեանքը:

Կարմիր խաչի սպան չէր օգտագործում այսպիսի դրամատիկ մեթուսներ, բայց նա ստացաւ լաւագոյն արդիւնքը: Նա փորձեց այլ ձեւով պարզել երեխայի ինքնութիւնը: Նա ստիպեց կոնչը երգել որոշ հին օրօրոցայիններ, որ նա երգել է իր երեխայի համար: Եւ երբ մայրն սկսեց երգել, երեխան ճանաչեց «ձայնը», երգերը:

«Սոլոմոնը վերադարձել է մեզ մօտ». սա էր հայ գաղթականների վճիռը:

**«ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ
ՏԵՂԵԿԱԳԻՐ»**

Ուաշինգթոն, օգոստոսի
18, 1919 թ., հատոր III,
համար 34, էջ 1





ՍԵՒ ԿԱԿԱԶՆԵՐ

(ՆՈՒԵՐՈՒՄ ԵՄ ԿՈՐԻՒՆ ՍՐԲԱՉԱՆ ՊԱՊԵԱՆԻՆ)

1 965 թուի ապրիլեան արեւը իրիկնային հրավառութիւն էր ստեղծել՝ գունաւորելով Սուլրիոյ Գամիշլի քաղաքի մթուորտը: Իրիկնային այդ նարնչագոյն ցոլքերում գունաւորել էր նաեւ քաղաքի հայոց առաջնորդարանը, որի պատշգամբում մտախոհ կանգնած էր թեմի քանչօրսամեայ Կորիւն վարդապետ Պապեանը: Տիսուր էր վարդապետը: Կրդէն ապրիլին ամեն հայի դեմքը քողարկուում է տիսրութեամբ: Նա նոր էր աւարտել Թեմական խորհրդի նիստը, որտեղ ծրագրուում էր 1915 թուականի Յայոց եղեռնի յիսնամեակի ոգեկոչման արարումը: Կես դարի յառնոդ յիշատակներով խոհուն, նայում էր

վարդապետը այդ մահամերձ մայրամուտին, երբ նրան սթափեցրեց առաջնորդարանի սպասաւոր Սերոբի ծայսը.

- Յայր Սուլրը, մեկը կ'ուզէ ձեզ տեսնել:

- Թող գայ,- առանց յետ նայելու շշնչաց վարդապետը:

Այցելուն անակնկալի բերեց Կորիւն վարդապետին. Նա հսկայաքայլ մօտեցաւ, ուղղակի յափշտակեց առաջնորդի աջը եւ երկիւղած համբուրելով շշնչաց.

- Աստուած օգնական...

- Աստուած պահապան,- նոյնպէս շշուկով պատասխանեց վարդապետը, հայեացքը երկնային տեսարանից կտրելով՝ նայեց առշեւը ծնկած քրտատարագ հսկային, որն ար-

տակարգ յուզումով կրկնում էր.

- Ես քրտացած հայ եմ, վարդապետ, քրտացած հայ...

Ճեզիրեի առաջնորդական փոխանորդ կարգուելուց ի վեր, սա առաջին անգամը չէր, որ նա քրտացած, բայց իրենց հայութիւնը չմոռացած հայերի էր հանդիպում, բայց այս հսկայամարմին մարդու երկիւղած աջ համբուրելը յուզեց վարդապետին.

- Աստուած պահապան,- կրկին շշնչաց, ձեռքը տակալին խոնարհուած ու ծնկաչոք մարդու գլխին դնելով,- Աստուած պահապան...

Կրեւից մոռացուած մի շող յամառում էր առաջնորդարանի պատին, երեկոն խորանի շուլս ուներ, սրահը՝ լուրթեան ոտևաձայն: Նստած են՝ Եղեռնի յուշերով ապրող մի վարդապետ եւ արմատախիլ ու քրտախոս մի հայ՝ Խալօ Խօս...

- Պատմիր,- վերջապէս խօսեց վարդապետը:

- Այս սեւ օրերին առեւանգուած ու քիւրտ ցեղապետի վրանի տակ մեծացած քրտախոս հայ եմ... դեռ խօսում եմ հայերէն, բայց՝ դժուարութեամբ:

- Խօսիր քրտերէն, ես արդէն իմ խօսքը ժողովրդին հասկանալի դարձնելու համար, ստիպուած երբեմն խօսած եմ քրտերէն,- տիսրութեամբ ասաց վարդապետը:

- Ուրֆացի եմ, Մկրտիչ Եօթնեղբայրեան-ների տոհմից...

Վարդապետը ցնցուեց. գիտեր այդ ուրֆացի Եղբայրների սխրանքը:

- Յազիւ ութ տարեկան էի, որ շարդս սկսուեց... Մայրս ինձ գրկած ճողովրեցինք՝ խառնուելով մեզ պես տեղահանուածներին: Քշում էինք անյոյս, կօշիկներս չփիմացան, ոտքերս արիւնոտուեցին, մայրս, տառապանքի հետ, ստիպուած շալակեց նաեւ ինձ... Քայլում էինք սոված, քայլում էինք ծարաւ, շատերն ընկան, շատերը մեռան ճամբեզրին, անթառ, անշիրիմ ... նօսրացող մեր խմբին միացնում էին նորերին՝ թշուառ, կողոպտուած, կմախացած նորերին... գիշերները քնում էինք քարերի արանքում, թիւրի տակ: Ֆերեկը այրում էր առեւը եւ երբեմն էլ մտրակում էր քամին՝ մեր ցնցոտիները խուզարկելով: Մի առաւօտ, ճամբան սուզուեց Վարար ու պղտոր գետի մեջ: Մեզ արգիլեցին գետին մօտենալ, բայց բախտաւորները գետ նետելով խեղդամահ եղան, ազատուեցին... ու մեզ շուրջկալ արած՝ քշեցին, մինչեւ կանգ առանք մի ճորաբերանի բարձունքում, որտեղ բազմաթիւ ծառերի կոճղեր կային՝ նախապէս հողում խրուած:

Արեւը այրում էր եւ ծարաւը խեղդում, իսկ կականը անեծքի պես բարձրանում էր, երբ անսպասելի շրջապատուեցինք գինուած ոճրագործներով... այլեւս կողոպտելու բան չէր մնացել եւ մեզ, ինչպէս վնասատու գազաների վիհմակի, քշում էին դեպի ճորը եւ գլխատում՝ արիւնից հարբած մոլուցքով... Ես մօրս գրկում թաքնուած, սարսափահար դիտում էի այդ սպանդը. կացնահարուող մարդկանց գլուխներն ու դիակները արիւնլուայ եւ արիւնահոս թափուում էին ճորը...

Չորամէջ թափուող արիւնից օդը կարմրեց, իսկ գլխատուողների հոգեվարքի հռնդիւնից ոգեւորուած դահիճները, արիւնորւշտ գազաների նման նոր զոհեր յափշտակելով՝ թեժացնում էին սպանդը: Մայրս գետնի վրայ յետ-յետ սահելով աշխատում էր լայնացնել դահիճներից մեզ բաժանող տարածութիւնը, երբ նրանք արիւնոտ ձեռքերով յարձակուեցին մօրս վրայ... նա սարսափահար ճաց, ինձ գրկից բաց թողնելով. «Ինձ սպանեք, բայց զաւակիս ինայեք»... Ես լեղապատառ

փորձեցի փախչել, բայց նրանք ինձ քռնեցին... Այդ րոպէին հեռուում կանգնած մի ձիաւոր մօտեցաւ կատաղած դահիճներին, հրամայական շեշտով խօսեց նրանց հետ եւ ինձ ազատելով, վերցրեց ու հեռացաւ սպանդի վայրից:

Սերոբը սուրճ բերեց: Խմեցին: Լուլթիւնը ծանրանում էր սեւ երազներով... Վարդապետի մտքում անեծք էր ծնուում տարրեր չափեռով, իսկ խալօ Խոյի մէջ՝ տիսուր անցեալը ծխամորճի ծուխով պարուրելու անմիջական ցանկութիւն: Նա մտազբաղ բացեց ծխախոտի քսակը եւ ծխամորճը խորեց պարուսակութեան մէջ: Սեղմեց՝ խստացնելով պարուսակութիւնը, ու զիշ յետոյ Կորիւն վարդապետը զգաց ծխամորճից արձակուող յատուկ բուրմուսը: Երբ խալօ Խոյն վստահեցաւ ծխամորճի թժութեանը, աշ ձեռքը կրծքին սեղմած, ճախով ծխամորճը խոնարիհաբար մատուցելով, թախանձեց.

- Յամմեցէք...- ասաց հայերէն:

Վարդապետը չէր ծխում, ու ժպտաց խալօ Խոյի անկեղծութեան վրայ: Խոյն բորբոքեց ծխամորճի կրակը, առատ ծուխը ներծծեց ու հազարվ շարուսակեց.

- Ինձ առեւանգող զիւրտը ցեղապետ էր, շատ հարուստ, անզաւակ ցեղապետ: Չնայած, որ երեք կին ուներ՝ Աստուած նրան զաւակ չէր պարգետել, ուստի ինձ որդեգործին, որպէս առաջին կնոշ զաւակ՝ իմ հայկական Խահակ անունը Խօս դարձնելով: Մեծացայ ինչպէս զիւրտ աշիրեթապետի զաւակ... Ինձ նման շատ հայ երեխաներ կային քրտացած, երբեմն վախսվիւլով հայերէն էինք խօսում, յիշելով մեր սպանսուած ծնողներին... Երկու ամիս առաջ մեռաւ ինձ որդեգրած ցեղապետ խալօ Ռեզգին՝ իր ամբողջ հարստութիւնն ու իշխանութիւնը թողնելով ինձ: Ես ել ունեմ ամուսնացած տղաներ եւ աղջիկներ, ութ զաւակի հայր եմ եւ քսանեօթ թողների պապ... Յիմա, որ հարուստ եմ, ցանկանում եմ մի օգնութիւն անել առաջնորդարանին, կ'ուզէք դպրոց շինեք, կ'ուզէք Եկեղեցի՝ անշիրիմ մօրս յիշատակին, անունը դրեք Գայեան:

* * *

Կես գիշերին, լուսինը մտել էր Կորիւն վար-



Դապետի ննջարանը: Վարդապետը մաքառում էր օրուան տպաւորութիւններից գունաւորուող երազների մեջ... Խալօ Խսոն կանգնել էր սպառազնու ու վրեժինողիր: Դիմացը ջուր էր՝ հոսող գետ, գետափին՝ կանայք եւ երեխաներ: Խալօ Խսոն ծնկում եւ գնդակահրում էր կանանց ու երեխաներին, ջուրը արիւնում, տանում էր դիակները... Վարդապետը կանգնած էր ջրի վրայ, ջուրը թռում էր ամպ, բայց երբ զոհը ընկնում էր ջրի մեջ, արիւնում էր ջուրը եւ կարմրող ալիքներից բարձրանում էր կական եւ անեծք...

Վարդապետը յուզուած ու սարսափահար բղաւում էր.

- Խալօ Խօ, մի... - ու ձայնը խեղդում է կոկորդում, եւ մնացեալը չի կառողանում հասցնել, իսկ Խսոն հրացանազարկ կոտորում է անխնայ... Վարդապետը ջրի վրայ քայլելով մօտենում է Խսոյին եւ աղաչում.

- Խալօ, մի՛ սպաննիր...

- Աստուած օգնական,- ասում էր Խսոն եւ կրակում:

Վարդապետը զայրացած կանգնում է Խսոյի ու ժողովրդի միջեւ ու բղաւում.

- Առաջ ինձ սպաննիր...

- Խալօ Խսոն կատաղում է.

- Յեռացիր, Յայր Սուրբ, ես հայ չեմ սպանում:

- Բայց սրանց, որ սպանում ես, վերջապես կանայք են ու երեխաներ...

- Վարդապետ, վարդապետ,- յանկարծ հեկեկում է հսկան,- արի, արի,- ու թօնում է վար-

դապետի ձեռքից, տանում: Նորից քայլում են ամպերի միջով:

- Խայիր, վարդապետ, սա Տեր Զօրն է, սա

Ռասուլայնը եւ սա Մասքանէն, տես՝ որքան անթաղ ոսկորներ կան...

- Այստեղ ոսկորներ չկան,- զարմանում է վարդապետը,- այստեղ քաղաքներ են ու աւաններ, ծաղկած-մշակուած դաշտեր,- Վերից ցած նայելով ասում է վարդապետը:

Ազշում է Խալօ Խսոն եւ դառը արտասում:

- Ուրեմն դու էլ, դու էլ չես տեսնում, վարդապետ, ինչպես ամբողջ աշխարհը... արի-արի, Յայր Սուրբ, ես կը տանեմ ու ցոյց կը տամ այն ձորը, որտեղ սպաննեցին մօրս եւ քան հազար կին ու երեխայ... բոլորին՝ անթաղ, անխունկ, անպատարագ...

- Որտե՞՞ն է այդ որճապարտ ձորը,- տխուր հարցում է վարդապետը:

- Այնտեղ,- ձեռքը հիւսիս մեկնելով պատասխանում է Խսոն,- Տերիցից այն կողմ, ձորերի ու սարերի միջեւ, Աստծուն յայտնի, աշխարհին՝ անյայտ...

Մղձաւանչից սթափում է վարդապետը եւ արթևանում, ճակատին սառը քրտինքի կաթիլներ, մահճակալին՝ լուսնի կոտրուած մի թեւ, իսկ դրսում՝ լուսնի տակ քնած խաղաղ մի աշխարհ:

* * *

Վարդապետը արթևացաւ գլխացաւով: Սերոք սուրճ բերեց, սուրճի հետ՝ գլխացաւի դեղահատ: Ժամը 10:00-ին թեմական ժողովի նիստ կար, իսքը պիտի նախագահեր: Ցաւից մեղմացող գլուխը ափերի մեջ, կարդաց անցեալ օրը կազմած ծրագիրը, որոշեց նորը կազմել: Յազիւ աւարտած Տերունական աղօթքը՝ բացեց Ապրիլ 24-ի յիսնամեակի վերջին նիստը, որին մասնակցում էին թեմի ներկայացուցիչներ՝ իին եւ նոր սերնդից, կային Տեր Զօրից, Ռասուլայից, Մասքանէից մազապուրծ վերապրողներ՝ Եղեռնից խարանուած...

- Ներկայ է ինքը՝ Ապրիլ 24-ի ծանրակշիռ

խորհուրդը, արիւնող վերքի պէս, որ ճակատագրի յամառութեամբ, ամէն տարի կրկնուող թախծի պէս հիւսւում է մեր նորօրեայ պատմութեանը:

Յուզուած խօսեց վարդապետը: «Այսօր հաւաքուած ենք այստեղ, մենք՝ Եղեռն տեսած ու չտեսած հայերս, Մեծ Եղեռնի զարհուրելի պատմութեան ականատես այս շոշանում»: Զգաց որ ձայնը դողաց, ջրի բաժակը վերցրեց, ջուր խմեց, բայց ծարաւ չէր, խմեց յուզումը պարութելու համար, լրեց: Լռութիւնը մի պահ հաճելի թուաց, բոլորը լռութեամբ խոկալու կարիքն ունեին, եւ լռութիւնը խցեց ինքը՝ վարդապետը.

- Մենք տակաւին Եղեռնից չյայտնաբերւած եւ պատմութեան անծանօթ վայրեր ունենք. մեր պարտքն է, որ յարգենք այդ անծանօթ նահատակների յիշատակը եւ գրանցենք 20-րդ դարի առաջին Ցեղասպանութեան պատմութեան Եշերի մէջ, ինչպէս պատմութեան սեփականութիւնն ենք դարձրել Տէր Զօրի, Ռասուլայսի, Մասքանէի նահատակութեան արիւնոտ վայրերը: Այս Վարիլ 24-ին հայութեան եւ մարդկութեան սեփականութիւնը պիտի դարձնենք Եղեռնապատում մի նոր վայր, որ մինչեւ այսօր անծանօթ է մնացել մեզ՝ հայերիս, եւ ողջ աշխարհին... կը խնդրեմ՝ անյապաղ որոշում կայացնենք եւ գործադրենք,- ասաց Ներշնչուած եւ սպասեց Ժողովականների պատասխանին, ու լռութիւնը համաձայնութիւն համարելով, շարունակեց.

- Երեկ ինձ մօտ եկաւ քրտացած մի հայ, հզօր եւ հարուստ, բայց մանկան պէս պարզ ու անմեղ 58-ամեայ մի այր: Պատմեց 1915 թուականի ջարդի մասին եւ իր՝ իրաշքով ազատուելը մի անզաւակ քիւրտ ցեղապետի օժանդակութեամբ: Ութամեայ հսահակին քրտացնելով՝ իսօ են դարձրել: Երկու ամիս առաջ մեռնում է ցեղապետը: Խոն դառնում է ցեղապետ եւ լսելով, որ աշխարհում դեռ հայեր կան ու Գամիշլի քաղաքում՝ հայկական առաջնորդարան եւ առաջնորդ, որոշում է ստուգել: Գալիս է, աջս համբուրելով՝ խոստովանում, որ 50 տարի շարունակ հաւատացել



Ե թուրքերի սին յայտարարութեանը, որ՝ աշխարհում այլեւս հայ չի մնացել... Քիմա զղում է այդ ուշացումի համար եւ ցանկանում է մի նուիրատուութեամբ յաւերժացնել իր մօր՝ ուրֆացի Գայեանէի յիշատակը: Միաժամանակ ցանկանում է այցելել աշխարհին անյայտ մնացած այդ նախճիրի վայրը եւ կատարել մի պատշաճ հոգիների խաղաղութեան համար: Իսկ ինքը, իր զինեալ մարդկանցով, կը պաշտպանի մեզ պատահական վտանգներից: Սակայն նա, այս բոլորից յետոյ, սրբագրելու համար 50-ամեայ այս ուշացումը, մեր տրամադրութեան տակ է դնում մի գումար, որ իր նահատակ մօր՝ Գայեանէի յիշատակին կառուցենք մի դպրոց կամ եկեղեցի:

Վարդապետը աւարտեց խօսքը: Լռութիւն իջաւ նորից, եւ այդ լռութեան մեջ հասունացան մտքերը ազգային հպարտութեամբ, որ

տիսրութիւնը փոխակերպեց օրինութեան մրմունչի:

Թող օրինեալ լինի ուրֆացի Գայեանէի եւ նրա հետ զոհուած բոլոր նահատակների յիշատակը,- միաձայնութեամբ որոշեցին ուխտի գնալ նախճիրի վայրը եւ կատարել հոգեհանգստեան արարողութիւն՝ մինչ այդ անյայտ մնացած նահատակների հոգիների խաղաղութեան համար:

Կորիւն հայր սուրբը գոհունակութեամբ փակեց ապրիլեան այդ յիշարժան նիստը,

քանզի դեպքերը ընթացան իր կազմած նոր ծրագրին համապատասխան:

* * *

Սպառիչ յետմիջօրեն իրիկնանում էր: Վարդապետը, ճամբորդութեան ծրագիրը լրացրած, բարձրացաւ պատշգամը:

Յոգնած էր: Սերոբին սուրճ պատուիրեց ու նստեց աթոռակին: Գամիշլին երանգուում էր իրիկնային արեւով և այդ խաղաղ ոսկեփոշում ճախրում էին աղաւնիները...

- Սուրճը կը սառչի,- շշնջաց Սերոբը, տեսնելով, որ հայր սուրբը տարուած է աղաւնիների թռիչքով:

- Այո,- վերցրեց սուրճը եւ նոյնպէս շշուկով ասաց,- աղաւնիները մեզանից երջանիկ են...

- Այդպէս է, հայր սուրբ, նրանք մարդկային ազահութիւնը չունեն եւ բաւարարում են Աստծոյ տուածով:

- Աստծոյ...- կրկնեց վարդապետը եւ յոգնած մտքով սկսեց մտածել Աստծոյ մասին:

Սերոբը ճանաչել էր անցեալ օրուայ տարօրինակ հիւրին, դրսում քրտերենով զրուցել էր դոլամների հետ եւ առիթի էր սպասում՝ խօսելու այդ մասին, սակայն զգալով վարդապետի մտազբաղ վիճակը՝ մատուցարանը գրկած հեռացաւ:

- Աստուած,- նորից կրկնեց վարդապետը եւ մի անբացատրելի թախիծ դողաց սրտի մեջ... զգաց, որ անզօր է, յաճախ մտածել է հասկանալ Աստծուն, բայց հոգեւորականի սքեմը կաղապարում էր միտքը եւ «Աստուած

մեծ է եւ անքննելի» խօսքը, որպէս պատասխան, միշտ վարագուրում էր միտքը... Աստուած, ես, որպէս մի չնչին արարած, փորձում եմ հասկանալ, հասկանալ... բայց տառապում եմ, երբ խորհում եմ արարչութեանդ անքննելիութեան մասին, եւ տառապանքս փոխուում է հարցումի... ինչո՞ւ թուրքին ստեղծեցիր մարդակերպ, բայց գազանային բնագդով...

Ինչո՞ւ...

Եւ պատասխանը դառնանում էր արդարութեան համով եւ խոճի կարմրութեամբ...

- Աստուած...

Եւ յուզուած ու ակամայ շշնջում է սաղմութրգուի պաղատանքը.

- Դու Տէր զճշմարտութիւն սիրեցեր, զանյայտս եւ զծածկեալս իմաստութեամբ քով յայտնեցեր ինձ:

- Լսելի արա ինձ Տէր, զցնծութիւն եւ զուրախութիւն, եւ ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք...

Փորձեց խաղաղուել...

Փորձեց մտածել վաղը մեկնող կարաւանի ապահովութեան մասին, որ գնում էր մի նոր Տէր Զօր, Ռասուլայն, Մասքանէ գտնելու. այս նորը անուն չուներ, 50 տարուայ անյայտութիւնից պիտի յայտնութեան գար ու գրանցուեր Ցեղասպանութեան դեռ Եշերը բաց մատեանի մեջ...

Գնում էին խաղաղութիւն պարգեւելու անշիրիներին... գնում էին ուխտի. ճամբեքում ահ կար ու մահ...


* * *

Ուխտաւորների կարաւանը լուսաստղի հետ Գամիշլից դուրս ելաւ...

Տէրիքում նորերը պիտի միանային, որոնց մեջ անցեալին ու ճանապարհներին ծանօթ մի հայ կար՝ Հաճի Մուրատ՝ Եղեռնից մազապուրծ, շրջուն առեւտրական, վայրերին ու ցեղերին ծանօթ:

- Տէր, եթե զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսց զօրինութիւնս քո: Աղօթում էր հայր սուրբը իր հոգու մեջ:

Աղջամուղջ էր, խաւարի երկունք



ու լոյսի ծնունդ: Կառքերը սուրում եին հարթ, հայոց արիւնը ծծած ու չորացած աւազների վրայով...

Զգախէժի կրճտումից յաջում էր մարդկային յիսնամեայ մի ողբ, որ նման էր նախնիրուած գանգի քամու ելքի, որ արագացընում էր վարդապետի սրտի տրոփը եւ ողջ եռլթիւնը լցում ցաւով:

«Տէր, ուղղեա՛ զգնացս մեր ի ճանապարհս խաղաղութեան. Տէր, ուղղեա՛ եւ առաջնորդեա՛ հոգոց մերոց եւ զամենայն հաւատացելոց՝ գնալ յարդարութեան ճանապարհն»: Տեղում էր վարդապետի միտքը: Ճանապարհին ողբ կար, ողբում՝ աղջամուղջ, աղջամուղջում՝ սուրող մեքենաների աչքի լոյս, որ փոշու նման մտնում էր խաւարի մէջ, շօշափում բնութեան մէջ յաւիտեան արձագանգող ոսկորի ծայնը...

Ընթանում էր կարաւանը՝ յայտնաբերելու մարդկային ոսկորների մի նոր բրածոյ, որտեղ թխսել էր թուրքի խիղճը՝ աշխարհին խեղդամահ արդարութեան ճուտեր տալու...

Ընթանում էր կարաւանը, կարաւանում՝ դալուկ մի վարդապետ, կաւե անօթում վառող հոգեղին ձեթ... երկու սեւասքեմ քահանայ, երկու զգեստաւորուած դպիր եւ նախճիր տեսած ու չտեսած ութառունվեց հայեր:

Լուսաստղը նրանց հետապնդում էր թիկունքից, իսկ հորիզոնը արեւմուտքում ճացում էր կապարային մռայլութեամբ:

Կիսախաւարը երբեմն արագութեան կշռոյթով քսում էր վարդապետի մտահոգ ճակատին, շոյում, յուսադրում:

«Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա ի մեզ, Տէր, եւ զգործս մտաց մերոց յաջողեա մեզ...»:

Աստղերը հանգչում եին բլրալանշերում՝ հիվիւների աչքաթող արած խարոյկների նման, եւ երկինքը հեռանում էր երկրից, ու լայնանում էր գունատ հորիզոնը եւ այդ հեռաւոր գունատութիւնից լսում էր վաղ արթնացած Տէրիքի եկեղեցու զանգերի դողանքը, որ ալիքում էր աքլորականչով:

Լուսաբաց է:

- Աստուած օգևական, հայր սուրբ:
- Աստուած պահապան,- օրինութիւն բաշխելով պատասխանեց Կորիւն հայր սուրբը:

Տէրիքի տօնական տարագներով հայու-

թիւնը բիւրեղացաւ, եւ պսպղուն լանջախաչով ընդառաջ եկաւ Տէր Աւետիքը:

Ողջագուրուեցին...

- Պատրա՞ստ էք,- հարցրեց հայր սուրբը:
- Միանգամայն պատրաստ,- պատասխանեց Տէր Աւետիք քահանան եւ թախանձեց,- վաղ լուսաբացից ժողովուրդը նախաճաշ է պատրաստել:

- Բարի,- համաձայնուեցին ուխտաւորները:

* * *

Արեւը անաղմուկ գրաւում էր հեռակայ լեռնագագաթները: Յովիտներից կապոյտ շամանդաշ էր բարձրանում:

Չորս ինքնաշարժ եւ քան հոգի միացան կարաւանին:

Տէր Աւետիքը գեկուցեց:

Տէրիքի ռազմուժը՝ մի քահանայ, մի ուղեցոյց՝ Յաճի Մուրատ, որ շրջուն վաճառական է, հինգ մատի պէս ծանօթ վայրերին ու ճամբաներին, խօսում է, բացի մայրենիկից, երեք լեզու՝ արաբերէն, քրտերէն եւ թուրքերէն:

Յաճի Մուրատը քրտի տարագով եւ հայի հաւատքով, համբուրեց առաջնորդի աջը եւ ճամբայ ելան:

Տէրիքը մնաց հեռում, բայց օրինաբեր դողանքը դեռ արձագանգում էր ճամբաների պտոյտում:

Արեւը ոսկեհիւս կողովի պէս ծածկում է բլրագագաթները, ու ճամբան փոխառում է արահետների, որոնք ժապաւենների նման միացնում են հեռուները: Յաճի Մուրատը դարձաւ կենտրոնական դեմք, աւելի ճիշդ՝ խօսուն քարտեզ...

- Յաճի՝ որքա՞ն պիտի քայլենք,- ճամբի փոշին թարթիչներին, հարցում է վարդապետը:

Ուղեցոյցը, հայեացը կածանների լոռութեանը, մտքով հաշտում է համրիչի հատիկները՝ խեյր, շառ, կատուած... եւ սթափում վարդապետի ծայնից:

- Խեյր է...

- Որքա՞ն պիտի քայլենք,- կրկնում է վարդապետը անդրիանքով:

- Մեկ ժամ,- ու նայում է արեւին,- ջուր շատ վերցրեց մինչեւ Այնտիուար՝ ճամբին ակչկայ...



Եւ խարկուած արահետից ծխի նրբութեամբ փոշի է բարձրանում... թափօրը մեղեսիկի նման գալարում է ողևաշարը կածանի ցանկութեամբ ու քայլում, քայլում է դառնացած եւ զգում, որ միջոցում դեռ յիսնամեայ անեծք կայ, յիսուն տարուայ տօթից չորացած աղցունք...

Թափօրի առջեւից քայլում է ուղեցոյց Յաճ Մուրատը, նրան հետեւում է Կորիին վարդապետը, յետոյ՝ երեք քահանաներն ու երկու դպիրները, եւ հոգեւոր հայրերին հետեւում է Եղեռն տեսած ու չտեսած՝ 105 ուխտաւորների տիկրամած շարքը, որ գնում են՝ մինչեւ հիմա պատմութեանն անծանօթ նահատակների հոգու խաղաղութեան համար աղօթելու:

Կորիին վարդապետը նայում է արահետից բարձրացող ծխանման փոշուն, որ պարուրում եւ գունափոխում է սրեմը, նստում թարթիչներին արեւային ծանրութեամբ: Արահետը դաշուած է մեծ ու փոքր կճղակահետքերով. անցել են կենդանիները, ինչպէս մի օր անցել են տեղահանուած մեծ ու փոքր հայեր այս արահետով դեպի մահ: Յիմա իրենք քայլում են երկրախոյզների նման... բայց ինչքան տարբերութիւն կայ այդ երթերի միջեւ... երկրախոյզը գտնում է հազարամեայ մի գանկ, կամ բեկուած ոսկոր ու խայտալով բռնում է թանգարանի ճամբան... իսկ իրենք՝ երեւի արդարութեան, որ մնացել է խոճի փլատակների տակ...

* * *

Ոճրախոյզները քայլում են յոգնած, քայլում են ծարաւ եւ շարունակում կամաւոր Գողգոթան...

Խարկուած բլրագլխին արահետները խառնում են, կծկում ու նորից բացում՝ ձգում հեռուները:

Զախում անանց լեռներ, աջում անապատն է անգոյն երկնքով, իսկ առջեւում՝ մի քրքրուած կածան, որտեղ սողում է թրքական սահմանը...

Յաճին նայեց երկար...

Արեւը իշաւ գլխին, տապը գլխից սուզուեց մինչեւ Ներբանները եւ ձեռքը բռնեց ճակատին ու նայեց սահմանին ոճրածին...

- Դիմացը, Տիգրիս գետից անդին, թուրքաց սահմանն է, պիտի մօտենանք ու թեքւնք ձախ, թրքական պահակատան առջեւից...

Յառաջացան:

Կածանում փոշի չկար, բայց ծածկուած էր գայլատամների նման խճաքարերով, որ դժուարացնում էր հոգեւոր երթը: Բարձրացան, մի նոր բլրագագաթից երեւաց դժինմ պահականոցը:

Թափօրը կանգ առաւ:

Զախում սիրիական հողի վրայ թափուած էին հսկայական քառաժայռեր, իսկ արահետը առաջանում եւ թեքում էր ձախ եւ անհետանում քառաժայռերի բաւիղում:

- Ծները կարող է արգիլեն,- տատանուեց Յաճին:

Թափօրը կուտակուեց բլրագագաթին:

Պահականոցում տագնաա ստեղծուեց: Յողագոյն համազգեստով սահմանապահները, ափով հովանի արած եւ զարմացած, նայում են այս անսովոր համախմբումին:

- Որտեղի՞ց է անցնում ճամբան,- պահանջկոտ հարցրեց Վարդապետը:

- Եթէ ուզում ենք քայլել տարագիրների անցած կարաւանի ուղիով՝ պահականոցի առջեւից պիտի թեքունք ձախ...

Վարդապետը խուզարկու նայեց ժայռաբեկորների արանքում փշուր-փշուր եղած արահետին, ուղեցոյցի դեմքից կաթող ատելութեանը, որ կես դարի ժանգ ուներ, քահանաների՝ նահատակութեան պատրաստ դեմքե-

րին, դպիրներին եւ քրտնաշան թափօրականներին... յուզուած նայեց վեր՝ երկինք, ու տեսաւ թերը կոտրած արդարութեանը, որ ճգնում էր իրեն պահել այդ գունատ բարձունքում... ծնկեց եւ պայուսակից հանեց արծաթակուր խաչը, գլխից վեր բռնած, անվեհեր անցաւ առաջ եւ թափօրը մեղեսիկի պէս, հատիկ-հատիկ, շարուեց արահետում եւ շարժուեց. խէյր, շառ, Աստուած...

Յոգեւորականի սքեմը եւ արեւի ճառագայթները բիւրեղացնող խաչը պատճառ դարձան, որ կիսամերկ դուրս նետուի պահականոցի հրամանատարը:

Դիտեց զարմացած...

- Յայեր են,- բացատրեց տարեց մի զիւր:

- Յայե՞ր,- շփոթուեց սպան:

Թափօրը մօտենում էր պահականոցին, Կորիւն վարդապետի աներկբայ քայլերի կշռոյթով:

Արեւը ծամում էր թափօրի շարժուն ստուերները, իսկ շիկացած քարերի զայրոյթից եռում էր տաքութիւնը:

Սպան դժկամ նայեց արեւին եւ ճակատը սրուելով, մտազբաղ հարցրեց իւրայիններին.

- Բայց ի՞նչ նպատակ ունեն...

- ...

- Յէյ, ովքե՞՞ր եք,- հարցրեց մի պահակ:

- Յայեր...- լսուեց բարձրածայս:

- Բայց դուք գիտե՞՞ք, որ իրաւունք չունեք մեր սահմաններին մօտենալու:

- Մենք ուխտի ենք գնում,- բացատրեց Յայի Սուրատը սառնարիւն:

- Այս կողմերում ուխտատեղի չկայ,- դիմախուեց սպան:

- Յիսուն տարի առաջ եք ստեղծել,- մօնչաց Կորիւն վարդապետը:

Թուրքերը մի պահ խորհրդակցեցին:

- Լսեք,- ծայսին կշիռ տալով խօսեց սպան,- ծեզ հրամայում եմ՝ վերադարձեք եկած ճամբով ու մեզ համար պատմութիւն մի ստեղծեք...

- Մենք ցանկանում ենք վերականգնել պատմութիւնը,- ընթացքը առանց կասեցնելու պատասխանեց վարդապետը:

- Ես ծեզ պատմութիւն ցոյց կը տամ,- գոռաց սպան,- վերադարձեք հրամայում եմ...

- Մենք մեր խղճի պարտքն ենք կատարում, առանց ընկրկելու պատասխանեց Կորիւն վարդապետը:

- Ես ծեզ խիղճ ցոյց կը տամ,- կատարում ես սպան:

Ու երթը շարունակում է:

- Վերադարձեք, հրամայում եմ, շներ...

Ընկրկում չկայ...

- Ի զե՞ն,- հրամայեց սպան:

Եւ հրացանակիր պահակայինները հրամանի են սպասում:

- Լսեք, հայեր, ես մեկից մինչեւ երեք կը հաշուեմ, եթե չվերադարձաք՝ համազարկի կը բռնուեք,- խրոխտ եւ վճռական յայտարարեց սպան:- Մեկ... երկու...

Օդում պայթեց մի հրազեն...

Ու անմիջապես լսուեց մի առնական ձայն.

- Թողէ՞ք անցնեն...

Ժեր ու քարոտ բարձունքից բազմաթիւ հրազեններ կախուեցին պահականոցի վրայ:

Սպան շշմած նայեց վեր:

Բարձրացաւ Խալօ Խսոյի առնական, սպառազեն հասակը:

- Մեր դիրքը բարձրադիր է եւ քանակը՝ առաւել, եթե չեք ուզում կոտորուել՝ մտէք ծեզ որչը,- ահեղաձայն որոտաց Խալօ Խսոն:

* * *

Յրաշքը մարդկային կամքից է ծնւում...

Կորիւն վարդապետի ուխտաւորների խումբը, այդ ճգնաժամային պահին հրաշք գործեց իր աներկբայ վճռականութեամբ, իսկ անվեհեր Խալօ Խսոն ճիշդ ժամանակին հայերին փրկեց աղետից:

Ուխտագնացները շփոթ նայում են բարձունքից իր երկու դոլամներով հսկայաքայլ իշնող սպառազեն քուրտին, որը հրազենը ճօճելով խանդավառ ձայնում է.

- Յայր սո՛ւրբ, Աստուած օգևական:

- Խալօ Խսօ՛, Աստուած պահապան,- ազատարարին ճանաչելով գոչում է վարդապետը բազկատարած:

Ողջագուրուում են:

Վարդապետը Խալօ Խսոյի առնական թեւերի մեջ շերմութիւն զգաց, ապահովութիւն եւ սրտառուց երախտագիտութեամբ ասաց.

- Խալօ Խսօ, ուխտաւորների կեանքը փրկեցիր:

- Յիսուն տար-
ւայ մոռացուած
պարտք եր,-
պարտահատոյց
պատասխանեց
Խալոն...

- Մոռացուած
պարտք,- մտա-
ծեց Վարդապե-
տը եւ սթափուեց
զեղումից...

Ու թափօրը
շարժուեց:

Զարաբեկոր-
ները կուլ տուին
արահետը, օրորեցին կիրճի մեջ, մինչեւ դուրս
եկան ուղտափերով ծածկուած մի հարթա-
վայր:

Ուղեցոյց հաջին առաջ անցաւ եւ կանգնեց
մի նոր ձորաբերանին.

- Վհա այս ճամբով դաշտ մտան մեր նա-
հատակները,- ու ծնկի իշաւ, ճակատը դրաւ
հողին...


Բոլորը ծնկի եկան: Ժամանակը ջնշել էր
նահատակների ոտնահետքերը, բայց հողը
կար, յուզումը կար, միայն չկար... ձեռքերն
արիւնոտ արդարութիւնը...

Վարդապետը կանգնեց, նայեց խոնար-
հուած գլուխներին, նայուածքը սեւեռեց հո-
ղին ու յիշեց իր մեծ հօր նահատակութիւնն ու
շախախուած գանգը ջրաղաց քարի վրայ...
խաչակնքեց սաղմոսելով: Խաչը դրեց հողին,
նստեց եւ ուխտեալի հաւատքով հանեց կօ-
շիկներն ու գուպաները եւ կանգնեց բոկոտն:

- Ես, որպեսզի զգամ նահատակների ֆի-
զիքական տանշանքներն ու ապրումների մի
կաթիլը մինչեւ նրանց խողխողուելը, պիտի
քայլեմ այս քարքարոտ ու փշոտ ճամբան՝
նրանց նման ոտարոպիկ: Թող արիւնոտուեն
իմ ոտքերը նրանց պես, թող որ ճաշակեմ
տանշանքի դառնութիւնը նրանց նման...

Բոլորը հետեւեցին Վարդապետին, նոյնիսկ
Խալօ Խոն, որ ճամբել էր իր մարդկանց եւ
միայնակ միացել թափօրին:

Յաճին առաջ էր ընկել: Նա որոնում էր ձո-
րաբերանը, որտեղ գլխատուեցին զոհերը:
Ուղեցոյցին հետեւում էր թափօրը, արիւնոտ



ոտքերով, որ ան-
վարժ քայլում էր
փշերի եւ քարե-
րի միջով, ցաւի
զգացումն ապ-
րելով, որպես
սփոփանք, իսկ
կիզող արեւի գո-
յութիւնը՝ ծարա-
լի տառա-
պանք...

Յաճի Մուրա-
տը դեմ առաւ ձո-
րաբերանի կոճ-
դերին, որոնց
վրայ գլխատուել

էին ամսեղները:

Չոհերի արիւնը սեւացել էր խղճի պէս ու
դիմադրել քամու, անձրեւի եւ արեւի յիսնամ-
եայ ջնջումին...

Յաճին ծնկաչոք գրկեց մի կոճոյ ու
փղձկաց:

Կորիին Վարդապետը սահմոկած նայեց
մարդկային խղճի սեւակնած մնացորդներին
եւ ետ նայեց իրեն հետեւած, յոգնած, արիւ-
նոտ ուխտաւորներին ու խաչակիր աշը
բարձրացնելով պատգամեց.

- Յիսուն տարի է, որ այստեղից անցնում է
աշխարհին հսկող արդարութիւնը... անցնում
է կուրացած... Յիսուն տարի է, որ մարդկային
խղճը նշջում է արդարութեան ոտնահետքե-
րում... Յիսուն տարի է սպասում ենք, որ
մարդկութեան խղճն արթնանայ...

Յոգեւորականները շուրջառ հազած պատ-
րաստուեցին արարողութեան:

Խալօ Խոն հետեւեց Յաճու օրինակին,
ծնկեց մի ոճապարտ կոճոյի առջեւ, գրկեց եւ
ասաց հայերեւ:

- Մայր, յիսուն տարուց յետոյ եկայ գտնելու
քո անթաղ ոսկորները, որ հաւաքելով պիտի
թաղեմ հայի պատարագով...

Եւ սկսուեց հայի հոգեհանգստեան արա-
րողութիւնը՝ անապատի լրութեան եւ այրող
արեւի ներկայութեամբ:

- ...Ի վերին Երուսաղեմ... ի դրախտին Եղե-
մական... ողորմած Տէր, ողորմեա հոգւոցն
մեր նևշեցելոց:

- Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Զրիստոս

որդի Աստծոյ, անոխակալ եւ բարեգութ, գթաց քո արարչական սիրով ի հոգիս հանգուցեալ ծառայից քոց. մանաւանդ ի հոգիս նահատակաց մերոց, որը յամին 1915-ի եւ յապա ի սպանդ եւ յաքսոր վարեալ, տանջանօք չարամահք եղեւ ի ձեռն ցեղասպան Թուրքիոյ, վասն հաւատոյ եւ հայրենեաց իւրեանց. յիշեա յաւուր մեծի գալստեան արքայութեան քո. արա արժանի ողորմութեան, քաւութեան եւ թողութեան մեղաց...

- Տեր ողորմեա...

Թուրքը բացել է պատմութեան գրքի անտիա էջը եւ փորձում է իր պատմութիւնը գրել... բայց գրչածայրից արիւն է կաթում...

- Տեր ողորմեա...

Ոչ ոք սիրու չի անում ոճրածին ծորին նայելու. ո՞վ է կարող իր հարազատի կմախքին նայել՝ առանց սարսուռի...

Բայց ծորում հառաչանք կայ, բազմիմաստ շշուկ:

Թերեւս քամին մտել է ծորն ու խանգարում է լողութեան նինջը...

Գուցէ գիշակերներ են բոյն դրել քարերի արանքում եւ սերնդից-սերունդ սնուել մարդկային մսով..., գուցէ թուրքի խիղճն է չղջիկ դառել, խարիսափում է ու ելք չի գտնում...

- Պիտի հաւաքել ոսկորները՝ թաղելու համար, հայերենով ասում է խալօ Խոսն:

- Պիտի հաւաքել,- հաւանութիւն է տալիս վարդապետը:

- Պիտի... պիտի... պիտի...- արձագանգում են թափօրի միջի կմախ քատերը:

Եւ թափօրը հեղեղատի բացուածքով թափուում է ծորը:

Զորը... ծորը սեւ է հագել, սեւ է կապել, ծորում սեւ մրմունչ կայ, սեւ ու մարմանդ ալիք, որ ծփում է քամու մատների տակ:

Սեւը տիրական է դառնում զարմացած հայեացքներում, սեւը գոյն չէ, այլ մտածում՝ ուղեղների մեջ...

- Հրաշք է,- ասում է խալու եւ կրանում, ծերօնվ խառնում կակաչների բուսական մուրը,

որ սեղմ աճել, խտացել, կպել է իրար... շօշափում է երազողի պես ու քաղում:

Խալօ Խոսի ծեռքում մի փունչ կայ՝ կանաչ ցողուններով ու սեւ, բացած ծաղիկներով...

- Կակաչներ են,- ճանաչելով բացագանցում է վարդապետը...

ԿԱԿԱՉՆԵՐ... ՍԵՒ ԿԱԿԱՉՆԵՐ...

- Նահատակների ապրող վիշտն է,- ասում է Կորիխն վարդապետը եւ փորձում հոստոտել, անբոյր սեւ է... վերի կառափնահատ ցիցերին կպած սեւի նման...

ՄԵԿԸ սարսափում է:

- Ճմլեցի, ծեռքերից արեան հոտ է գալիս...

- Սա անմեղ արիւն է, որ ծաղկում է ամեն տարի եւ վերանորոգում հայոց վիշտը, տխուր խորհրդածում է հայր սուրբը:

Յետմիջօրէի քամին մտել է կակաչների մեջ եւ խտուտ է տալիս նրանց բարակ ցողունը: Թուր է, թէ դրանք վշտի ստեղներն են, որ վարպետ քամու մատների տակ նուագում են մարդկութեան անլսելի սարսափը...

Սահմուկում է թափօրը ու նահանջում: Քամու նուագից արեան հոտ է տարածում:

- Արիւնը չի մոռացւում,- ճզում է մեկը:

- «Ամենասուրը երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն... եւ հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն»:

- Վերադառնասք,- խաչը նախկին տեղը դնելով ասում է Կորիխն վարդապետը, - գևանք հանգիստ խղճով, արդեն մայր բնութիւնը գերեզմանել է մեր նահատակներին եւ զարդարել ամեն գարնան վերընձիւղող սեւ կակաչներով...

* * *

Վրդարութիւնը երբեմն թափառում է եւ մեղապարտին գտնելով մղում է խոստովանութեան:

Ուխտաւորները վերադարձան, խկ նրանց աղօթները մնացին սեւ կակաչների ծորում, որպես արձագանգ, որպես յիսնամեայ ուշացած արցունք:

Ուխտաւորները քայլում են դանդաղ ու խաղաղ:



Նրանք յոգնած են ու ծարաւ:

Կորիւն վարդապետի ոտքերի ներբաններում հառաջում է ցաւը, իսկ ուխտաւորների շուրթերի վրայ ծարաւ կնքել է ջրի կարօտ:

Ամայութեան երկուու ճամբորդ եղիկները բլուրների վրայ բազմաթիւ արահետներ են գծել՝ ստեղծելով իրենց բնակավայրի քարտեզը, որից օգտուում են գազաններն ու մարդիկ: Այժմ այդ արահետներից մեկով իջևում է թափորը: Կածանը ձգում է քարաժայերի միջով: թերուած արեւը երկար շուրաջներ է ձեւում, իսկ արահետի աւազը բարակ մեշքով հառաջում է՝ քայլերի ծանրութիւնը կշռելով:

- ՅԵ-խա, հԵ-խա, լսում է մարդկային մի կոխնչ, ու կածանը փակում են մի քանի նիհար այծեր:

Եւ յայտնուում է ամայութեան ոգին՝ ոսկրացած ու նիհար հովիւը, քամահար դեմքով եւ արեւից յագեցած մաշկով:

- ՅԵ-խա, - փորձում է կարգի բերել բազմութեանս անսովոր այծերին, - հԵ-խա:

Վարդապետը զգում է այծերի ստեւներից բարձրացող բնական հոտը, որ արեւի, անձրեւի եւ քամու բոյր ունի:

- Սալամ-ալ-յօրում, - ձախով ցուազը բռնած, աջը ճակատին տանելով բարեւում է հովիւը:

- Սալամ, - պատասխանում են վարդապետն ու Յաճին միաբերան:

Յովիւը աճապարանքով աշխատում է անասուններին դուրս հանել ճանապարհից:

Այծերը ցատկում են կածանից դուրս:

- Յայե՞ր Էք, - ցուաին յենուելով հարցնում է հովիւը:

- Սաքուր հայեր, - ասում է Կորիւն վարդապետը ու խորհում հովուի տարիքի մասին եւ հետաքրքրութիւնից մղուած, շարունակում: Այս, գիտեմ՝ ինչո՞ւ Էք հարցնում, - եւ գլուխը խորիրդաւոր շարժում է, - գիտեմ:

Յովիւը պղտոր նայում է խմբին ու Կորիւն վարդապետի լանջախաչին եւ ահով ասում:

- Այդ ծորը, որ տեսաք, առաջ կակաչները կարմիր են...

Վարդապետը նայում է հովուի դողդողացող շուրթերին եւ սպասում:

- Մենք՝ քրտերս, կոտորեցինք հայերին թուրքի դրդումով, եւ Աստծոյ դատաստանը չուշացաւ: Մեր հանդերք չորացան, անասունները սատկեցին, իսկ ժողովուրդը կոտորուեց

հիւանդութիւնից... Մեր երկիրը ամայացաւ, իսկ դուք հիմա, լսելովս, Արարատից այս կողմ երկիր ունեք ու պետութիւն, իսկ մենք... յուսահատ օրօրում է գլուխը, ձեռքով մնաք բարով անում եւ կոնչում ծերունական խռպոտ ձայնով.- ՅԵ-խա...

Յաւազում է այծերին:

Խումբը շարժուում է դեպի կայան:

Յիմա Յաճի Մուրատը գնում է առջելից, վարդապետը հետեւում է նրան, խալօ Խոն՝ վարդապետին հետեւող քահանաներին, ու այսպէս մեղեսիկի հատիկների պէս, մայրամուսի շողերի տակ արեւաշրուում է պարտականութիւնը կատարած ուխտաւորների թափորը:

Յոգնած Կորիւն վարդապետի միտքը դարձեալ ծանրաբեռնուած է դժուարին հարցերով, կրկին մտածում է արդարութեան եւ արարչութեան մասին եւ գոհունակութեամբ շշնորհ «Եղիցին կամք քո»...

Բլրալանջերին վայրի կենդանիները արահետներ են գծել՝ ապրելու եւ յարատեւելու համար: Նայում է Կորիւն վարդապետը արահետներին եւ խորհում. «Այս անապատների, սարերի եւ ծորերի մեջ, հայ ժողովուրդի Գողգոթայի ճամբաներուն վրայ ապաստան գտած, իր արմատներին տակաւին հաւատարիմ մնացած հայի բեկորների ապագայի մասին...»:

Բաց դաշտում վրևոշում է մի թամբած նժոյգ:

Խալօ Խոնի նժոյգն է, իր հեծեալ զինակիցներից մեկը բերել, պահել է արահետի վերջում:

Խալօ Խոն պատկառանքով մօտենում է վարդապետին, շերմեռանդ համբուրում նրա աջը եւ երախտագիտութեամբ ասում հայերնեն.

- Աստուած օգնական, հայր սուրբ:

- Գնա, խալօ, Աստուած պահապան լինի քեզ:

ՍՈՒՐԵՆ ԱՍԱՏՐԵԱՆ

1988, Նոր Զուղա - Թեհրան

ՎԱՐՉԱՊԵՏ ԷՐՏՈՂԱՆ՝ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆԵՆԳԱՓՈԽՈՂ ՔԱՂԱՔԱԳԵՏԸ

(ՖԱԹԻ ՄԵՐՄԵՏ Բ. ՍՈՒԼԹԱՆԻՆ ԿՈՂՄԵ
ՊՈԼՍՈՅ ԳՐԱՒԱՆ ՄԱՍԻՆ ԻՐ ԾԻԼ ԱՐԺԵՒՈՐՈՒՄԸ)

Յամաշ - իարհային պատմութեան անկիւնադարձային դրուագներէն՝ բիւզանդական կայսրութեան «Աստուածարեալ քաղաքին» անկման մասին վարչապետ Էրտողանի արժեւորումը ուշագրաւ է իբրեւ պատմութեան նենգափոխումի գլուխ գործոց: Առ այդ, արժանի է լայն մեկնաբանութեան:

Էրտողան 5 ապրիլ 1453 թուականին ակնարկելով, Պոլսոյ մայրաքաղաքին անկումը՝ ֆաթի Մեհմետ Բ. սուլթանին ամիսներ տեղողական է եղի, համաշխարհային պատմութեան «Սեւ Էջին փակումը» կը նկատե... ու թրավարի ինքնախարենութեամբ, Բիւզանդիոնի «Աստուածարեալ քաղաքին գրաւումը՝ Սելճուք սուլթանին կողմէ «Յամաշխարհային լուսաւոր նոր դարաշրջանի մը սկիզբը» կը հօչակագրէ... երբ պատմական մերկ ծշմարտութիւնը՝ անսախընթաց, սարսափելի եւ սահմոկեցուցիչ դեպքերու բեմադրում մըն է, նոյնինքն ֆաթի սուլթանին կողմէ կատաղօրէն իրագործուած:



Պոլսոյ գրաւման յաջորդող երեք օրերուն համար միայն, ֆաթի Մեհմետ սուլթան արեան ծարաւի իր բազմահազար զինուորներուն կ'արտօնէր քաղաքին մէջ անկաշկանդ ու անսահման թալան, ջարդ, կողոպուտ, բռնաբարում, սպանութիւն եւ քանդում-

ներ կատարել՝ առանց խղճահարութեան:

Ֆաթի սուլթան, միաժամանակ, մոնկուածին իր վայրագ զինուորներուն սեռային կիրթերն ալ խենեշօրէն արթնցնելով, «հայրաբար» կը թելադրէր.

«Պոլսոյ մէջ դուք պիտի տիրանաք նաեւ չքնաղ, հոլանի եւ ծիւնասպիտակ մարմիններով կիներու, եւ մարդկային լավիշ նայուածքներու, եւ անքարոյ արարքներու տակաւին զոհ չդարձած, Բիւզանդիոնի կայսերական տիկնանց եւ իշխանազուն օրիորդներու»:

Սուլթանին զինուորները, Պոլսոյ փողոցներուն մէջ պատահաբար ձեռք անցուցին շրջապատի սարսափագդու տեսարաններէն ահաբեկեալ՝ Բիւզանդիոնի վերջին կայսր Կոստանդին 11-րդը, ու անոր ոսկեզօծ մու-



ճակերտեն ազնուական անձ մը ըլլալը հետեւցնելով, սուլթանին հրահանգով, եաթաղան թուրի մեկ հարուածով կայսեր գլուխը անջատեցին մարմնեն, եւ ցիցի մը վրայ ամրացուցած, երեք օր շարունակ պտտցուցին Պոլսոյ աւերակ փողոցներուն եւ Օսմանի բանակատեղիներուն մէջ, արիւնարբու սուլթանին ինքնագոհ ու սնափառ ներկայութեան:

5 ապրիլ 1453-ի առաւօտուն, Կ. Պոլսոյ «Աստուածարեալ քաղաքը» կը պարզէր հետեւալ խառնաշփոթ տեսարանը.

500,000-ոց պաշարող հսկայական բանակ, ժամանակին համար մրցանշային, 493 միաւոր ծովէն շրջափակող նաւերու շարասիւն:

10,000-ոց ճայնարկու գոռացող յատուկ զօրամաս, որոնց հագագներէն տուեալ պահուն ազդանշանով արձակուած գոռում-գոյւմը՝ սարսափ կը տարածէր ամենուրեք:

Սելճուք բազմահազար բանակը կ'առաջնորդուէր փողերու, ծնծղաներու, թմբուկներու եւ հսկայ տաւովներու խլացնող խժալուր աղմուկով, եւ յառաջացող բանակին դրօշակիր գունդերուն պարզած անհաջուելի արիւնագոյն ծածանող դրօշակներով:

Պարոն Էրտողան, արդեօք Օսմանի արեան բաղնիքով սկիզբ առած, Պոլսոյ գրաւման յաջորդող ու ապա շարունակուող այդ քստմնելի եւ սահմակեցուցիչ դեպքերը բնական եւ լրացուցիչ հետեւանքնե՞րը կը նկատէք աւերակներուն վրայ հիմնուած Օսմանեան «փայլուն» դարաշրջանին:

Պարոն վարչապետ, Պոլսոյ 1453 թուակա-

նի անկումին ասդին, արեան ծովերէ անցնելով, եկաք հասաք 21-րդ դար, ու զայս անգամ մը եւս «Եօգալեան» լուսաւոր դար հօչակեցիք, դո՛ւք պատմութեան նենգափոխող տեսաբան, ձեր պայծառ մտքի փայլատակող բացայայտումով:

Արդարեւ, Բիւզանդիոնի անկման թուականին ասդին, բովանդակ հայութիւնը, Օսմանեան հպատակ դարձած բոլոր ազգերն ու ժողովուրդները, օտար մեծ ու փոքր երկիրներու քաղաքագետները, դիւանագետները, եւ համաշխարհային պատմութեան էջերը արձանագրեցին, որ թուրք-մոնկոլ մարդատեսակը դարեր շարունակ եաթաղանով, ահ ու սարսափ տարածելով, արեան հեղումով, շարդեր կազմակերպելով, գերեվարութիւններով, բռնի իսլամացումի ծրագիրներով, ենիշերիներու խառնածին բանակներ կազմելով, ոչ-թուրքերու հոդին, կալուածներուն, կեանքին ու ինչքերուն մակարուծօրին տէր կանգնելով, ընկճուած ազգերուն հազարամեայ քաղաքակրթութիւնները, մշակութային դարաւոր եւ անզնահատելի կոթողները քանդելով ու փոշիացնելով... Գորշ գայլերու վոհմակներուն ժառագորդ մնաց:

Սեփական մշակոյթի գուրկ, տափաստաններու «Ալան-թալանի քաղաքակրթութեան» հաւատարիմ հետեւողներ, մարդ եակի գաղանային վայրագ տիպար, դուք ձեր ձիերու սմբակներուն տակ, դարեր շարունակ տրուեցիք, քանդեցիք ու փոշիացնեցիք, ձեզի բռնութեամբ ենթարկած ժողովուրդներուն մշակութային հազարամեայ գոհարները:

Չուր տեղը չէր որ ֆրանսացի մեծահօչակ ազատասէր բանաստեղծ փիլիսոփան՝ Վիքթոր Յիլկոն, լաւատեղեակ օսմանեան կայսրութեան տարածքին բռնակալական ու շարդարարական աւանդութեանց, մարդկային արդարութեանց զօրակցողի իր դիրքն մեկնելով, յաւերժին համար վկայագրեց.

«Ժուրքը անցած է այստեղին. այսուհետեւ

**Խոյնիսկ խոտ չի բուսնիր այս հողերուն
վրայ...»:**

Պարո՞ն Երտողան, դուք մարդկային աստ-
րածատուր իրաւունքները եւ ժողովուրդներու
ազատագրումը գիտութեան կապանքներէն՝
ոչինչ կը համարէք, եւ Արաթիւրքի նոր Թուր-
քիան, յափառենական ձեր հայրենիք «Եռլ-
տը» կը հօչակէք: Դուք, որ Արեւմտահայա-
տանի եւ Արեւելեան Անատոլիոյ բնիկ ժողո-
վուրդներն ու ազգերը դարեր շարունակ կան-
խամտածուած, սիստեմաթիկ պետական
ծրագրումներով հայրենազուրկ զանգուած-
ներու վերածեցիք, Պոլստոսի յոյները, հայկա-
կան լեռնաշխարհի հազարամեակներու բնիկ
հայութիւնը, ասորիները, եւ ձեզի կրօնակից
միլիոնաւոր քիւրտերն ու ալեւիները պատու-
հասեցիք, շարդեցիք եւ ձեր ստեղծած ար-
ւեստական «միատարր թրքական Եռլտի»
տարածքին բռնի կերպով աշխարհագրական
նոր մարդաբաշխումի Ենթարկեցիք, եւ յամա-
ռօրէն անոնց ցեղային ինքնուրոյն Եթնիկ
պատկանելիութիւնը մերժեցիք:

Մարաշի, Տերսիմի, Տիարպէջիրի եւ Հա-
քարիի ալեւիներուն եւ քիւրտերուն զան-
գուածային ցեղասպանութիւնը եւ շարդը
իրագործեցիք:

Պարոն վարչապետ, այս օրերուն, ձեր քա-
ղաքական արեւելումին յարմարող, զարգա-
ցած, համալսարանաւարտ, աղուեսային խո-
րամանկութեամբ օժանդակ մըն ալ ճարած
էք՝ յանձինս նոր օսմանականութեան տեսա-
բան Ահմեթ Տաւութօնլուի:

Եւ այսօր, օտար մեծ
ուժերու կողմէ պաշտ-
պանուած, եւ անոնց ան-
սահմանափակ զինուո-
րական եւ ֆինանսական
նեցուկը վայելելով,
«Պատմական» Ենթադր-
եալ առաքելութեան մը
եւ «արդար դատերու»
ինքնակոչ դատաւորի
հնամաշ պատմուճան-
ներ հազած, համարձա-
կօրէն Միջին Արեւելքի
արաբական աշխարհին
կը ներկայանաք, ձի-
թենիի հաշտարար կեղծ

ճիւղեր ճօճելով, թրքավարի «մարդասիրու-
թեամբ» զրահուած, ձեր պաշտպանեալ Տա-
ւութօնլուն ալ, Միջին Արեւելքի քրիստոնեայ
հալածական բնիկ ժողովուրդներուն եւ
զանգուածներուն հովանաւորողի դերով ներ-
կայանալով, Թուրքիոյ արիւնով յագեցած հո-
ղերուն վրայ, անոնց Ֆիզիքական գոյութիւնը
ապահովելու եւ իրաւական վիճակը բարելա-
ւելու համար... Յամագումարներու գումարու-
մը կ'առաջարկէք:

Դուք՝ որ դարերով իրացուցիք ձեր ճնշած
ազգերուն նիւթական ողջ սեփականութիւնը,
իրացուցիք եւ փոշիի վերածեցիք անոնց
ստեղծած մշակութային դարաւոր կոթողնե-
րը, եւ հայոց պարագային բռնագրաւեցիք
ազգի մը պապահով գոյատեւման անփոխարի-
նելի երաշխիք, հազարամեայ բնօրրանը՝
հայրենի ՀՈՂԸ...

Պարոն Երտողան, մինչեւ այսօր հայա-
պատկան բռնագրաւուած հողերուն վրայ
անօրէն կերպով հաստատուած ձեր ծոյլ ու
մակարոյժ զաւակները՝ իրենց մեծ հայրերուն
գոյութեամբ սեփականացուած պարտէզնե-
րուն մեջ թաղուած ոսկիի կարասներուն
փնտուուքով զբաղած են... անկուշտ նիւ-
թապաշտութեամբ:

Թուրքիոյ հանրապետութեան հիմնադիր՝
Զեմալ Արաթիւրը, 1920-ական թուականնե-
րուն, իրեն օօրակցող եւ «ազատագրական»
իր շարժումին մղիչ ուժը դարձած իթթիհատի
նախկին ղեկավար դասակարգի Եֆէստինե-
րուն՝ հայերէն գողցուած եւ յափառակուած



ոսկիի կարասներուն ահագնութենեն Եւ հաշուետութեան հաւանականութենեն ահաբեկուած առաջնորդներուն, սա խօսքերով կը դիմէր.

«Եֆենտիներ, դուք պարտաւոր եք իմ ստեղծելիք պետութեանս նեցուկ կանգնելու, որովհետեւ եթէ դաշնակից յաղթական իշխանութիւնները հաշիւ պահանջեն, Եւ կամ հայերու Եւ այլ ազգերու հալածուած ու մորթուածներու ժառանգործները, իրենց հայրերուն ինչքերուն Եւ կալուածներուն համար իրաւականօրէն հատուցում պահանջելու դիմէն, բոլորդ ալ կորսուած կ'ըլլաք, որովհետեւ... (բառացիօրէն՝ Վթաթիւրքի նկարագրութեամբ), կոթը կ'ուտէր...»:

Պարոն Երտողան, դուք Եւ ձեր ծայրայեղ ազգայնականները, պատմական յիշողութեան տկարութիւն ունեցող հայրենակիցները, օտար ազգերու ազատ ու անկախ զաւակներուն ու անոնց քաղաքական առաջնորդներուն կը զլանաք խօսքի Եւ մտքի ազատութիւն, ճիշդ ինչպէս ձեր թուրք քաղաքացիներուն, ձեր տիրահոչքակ օրէնքի 301-րդ յօդուածի տրամադրութեան համաձայն, արդէն կը զլանաք նոյն իրաւունքները:

Ու զարմանալի չէ, որ մինչեւ այսօր, ձեր հոչակեալ բանտերը խճողուած Են հազարաւոր այլախոհ թուրքերով Եւ օտար «դատապարտեալ»-ներով:

Դուք, թուրքերդ, անատակ եք ընդառաջելու բոլոր տեսակի դրական ու կառուցողական նախապայմաններու: Անոնց փոխարէն,

դուք ոչ-կառուցողական պայմաններ առաջարկելու անմրցելի տաղանդը զարգացուցեր Եք ազգովին:


Թրքատիա «Էտեայիւթի» (Մշակո՞յթ) հերոս՝ պարոն Երտողան, ձեր օրինակով այլամերժ դաստիարակութեամբ սնած անձերուն հոգիները անատակ Են մարդկային վսեմ թռիչքներու: Դուք, Թուրքիոյ սահմաններէն ներս, հակառակ ձեր Երեւութական զարգացման, ու խօսքով «հանդուրժողութեան», մնացած Եք այլամերժ:

Ձեր հոգին անհաղորդ մնացած Եք բարիին, գեղեցիկին Եւ վսեմին ձգտելու սիրանըներուն:

Դարերով մասնագիտացաք հուրով, սուրով, շարդերով, երաթաղանի գործածութեամբ իշխելու, գերեվարուած ազգերուն, Եւ անոնց շարժուն Եւ անշարժ կալուածներուն ապօրէն տիրանալով, անոնց մշակութային անկրկնելի կոթողները անխնդօրէն փոշիացնելով, Եւ մասնաւորաբար, հայ ազգի զաւակներուն կողմէ՝ «Օթոման պանքի» Եւ գերմանական «Տոյչ Պանք»-ի դրամատուններուն մէջ պահուած մեծ քանակութեամբ ոսկին կողոպտելով, Եւ Եւրոպայի Եւ Պերլինի ձեր գաղտնի գանձարաններուն մէջ պահելով, յետնորդ սերունդներուդ արիւնով շաղախուած ժառանգ ձգելով:

Կրդարութեան, երախտագիտութեան, անյիշաչարութեան Եւ զղումի զգացումները ձեր քաղաքացիներուն համար միշտ ալ խորթ մնացին, Եւ ազգային մարդկային ոգիի մը գոյառման չժառայեցին ամենեւին:

Դարերու Երկայնքին, միլիոնաւոր խաղաղասեր, շինարար, հողին կապուած Եւ ստեղծագործ բնակչութիւններ ծրագրուած կերպով, անխնդօրէն ու անպատճիտ, անապատներուն մէջ ոչնչացուցիք, Եւ առանց զղումի դոյզն զգացում ցուցաբերելու, Պիղատոսի նման, յուղարկաւորի դերով, Եւ «կարեկցողի» հանդարտ



խղճով կը ներկայանաք... կարծ յիշողութեամբ յատկանշուած անտարբեր աշխարհին:

Պարոն Երտողան, ազգովին արդեօ՞ք երախտագիտութիւն յայտնած էք հայազգի ճարտարապետ Սինանին, Օսմանեան ու նախորդող դարերուն իր կատարած ծառայութեանց համար, կամ Այս Սոֆիան ճարտարօրէն վերանորոգած Տրդատ անկրկնելի ճարտարագետին, դարերով Օսմանեան սուլթաններուդ հաւատարմօրէն ծառայած՝ արտաքին նախարար Գաբրիէլ Նորատունկեանին, Տատեան, Պալեան, Պեզնեան, եւ այլ ամիրաններուն, անթիւ անհամար շենքեր ու պալատներ կառուցած հայ Երկրաչափներուն, Պետական գանձը եւ ֆինանսները ապահով շրջանառութեան մէջ պահած տնտեսագետներուն, թուրք արդի լեզուն մաքրազոտող Յակոբ Մարթայեան՝ «Տիլաչար» կոչումով լեզուագետին, Ելոպայի մայրաքաղաքներուն մէջ ձեռնահասօրէն օսմանեան հայրենիքին քաղաքական վարկը բարձր պահած դեսպաններուն, հիւպատուններուն, Եազընեան եւ Պապիկեան պայծառանուն դիւանագետներուն, Օսմանեան խորհրդարանի «մեպուս», օրենսգէտ, իրաւաբան, Երկրաչափ եւ անկրկնելի հոետոր՝ Գրիգոր Զօհրապին, որուն հանճարեղ ուղեղը ամայի տափաստանի մը մէջ ժայռաքարով ճգմեցիք, եւ տեղույն վրայ՝ վայրի գազաններու պար պարեցիք:

Ու տակաւին Երեկ, ձեր «Եօգէլեան» 21-րդ դարու սեմին, իր խմբագրատան առջեւ, ոճրաբար Յրանդ Տինքը օր-ցերեկով սպաննելէ ետք, հարիւր հազարաւոր յուլարկաւոր թուրքերու հագագներէն՝ «Բոլորս հայ ենք, բոլորս Յրանդ Տինք ենք» յանկերգող թրքական կեղծ Երախտագիտութիւն բեմադրեցիք:

Միլիոնաւոր հայերու Ցեղասպանութիւնը ծրագրած ու գործադրած ջարդարար Թալէաթը ազգային հերոս հոչակեցիք, ու Պոլսոյ մէջ անոր արձանը կանգնեցուցիք:



Պարոն Երտողան եւ նոր օսմանականութեան աշխարհագրական քարտեսը պատրաստող Ահմեթ Տաւութօղլու, այսքան ատեն որ արդարութեան, Երախտագիտութեան եւ ձեր արիւնալի ու ոճրապարտ անցեալի պատմութիւնը անկեղծ զջումով ընդունելու անընդունակ եւ արդար հատուցման պատրաստակամութիւն չէր ցուցաբերեր:

Կը մնաք՝ թրքական «Ետէպիեթի» կեղծ հերոսներ, հազարամեակ մը առաջ՝ մննկոլի տափաստաններէն դուրս եկած՝ արեան ծարաւի, Վայրագ թուրքեր, ու բովանդակ թուրքիոյ տարածքին, հայապատկան հողերուն եւ պարտեզներուն մէջ, տակաւին Երկար ժամանակ՝ ոսկի կարասներու փնտռութով զբաղողներ:

Ձեզի հարկաւոր է ազգովին սորվիլ մարդկութեան ծառայել՝ ստեղծագործ հայ ազգի զաւակներուն պէս, ճակտի քրտինքով իրենց օր-աւուր հացը քարեն հանող, արդարասիրութեամբ, Երախտագիտութեամբ, հաւատարմութեամբ, մարդկային քաղաքակրթութեան իրենց նպաստը անսակարկ ընծայաբերող «Գլխագիր Մարդ»-ու նման, եւ ոչ՝ որպէս եաթաղանի «քաղաքակրթական Ետէպիեթի» Երկրպագու, արեան անյագօրէն ծարաւի, Ֆաթիհ Մեհմեթ Սուլթանի հարազատ հոգեզաւակ:

ՅՈՎՍԵՓ Յ. ԷՍԿԻՃԵԱՆ

ԹՈՒՐՔԻՈՅ «ԼԻՆԶԻ ԴԱՏԱՍՏԱՆ»Ը ԵՒ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԱՌԱՍՊԵԼԸ



Չ եր վերջերս, Պոլսոյ Թաքսիմի հրապարակին վրայ «Խոչալուի ցեղասպանութեան»^(*) նուիրուած ցոյցի ընթացքին պարզուած ֆաշիստական ցուցապաստառներուն եւ կարգախօսներուն ակնարկելով, թուրք պատմաբան Թաներ Աքչամ տեղւոյն «Թարաֆ» թերթին տուած իր հարցազրոյցին մէջ կ'եզրակացներ.

«Այս արարքը ցոյց կու տայ, որ այս երկրին հայ քաղաքացիներուն կեանքը ապահով չե...:

«Եթէ երկրին ներքին գործոց նախարարը, որ ըստ օրինի պատասխանատու է նաեւ հայ քաղաքացիներու կեանքի ապահովութեան, կը մասնակցի հանրահաւաքի մը, ուր անվերապահորն կը կատարուի «Թափուած արինը գետինը պիտի չմնայ...» սպառնալիքը, սա կը նշանակէ, որ Թուրքիոյ քրիստոնեաներուն կեանքը կտաև գուած է....»

«Ճայց ցեղասպանութեան 100-ամեակի սեմին, իշխող «Արդարութիւն եւ Բարգաւաճում» կուսակցութիւնը ցոյց կու տայ, որ կա-

րող է ցեղապաշտութիւն կիրարկել...»:

Մինչ այդ, «Խոչալուի ցեղասպանութեան»^(*) նուիրուած ցոյցին տասը օրեր առաջ, Պոլսոյ քաղաքապետարանին եւ առնչակից պետական միաւորներու կազմակերպութեամբ, ազգայնամոլական բովանդակութեամբ որմազդներ յայտնուած էին քաղաքին հրապարակներուն եւ նշանաւոր փողոցներու պատերուն վրայ:

Ըստ Թաներ Աքչամի՝ Յրանդ Տինքի սպանութենեն ետք առաջին անգամ ըլլալով, խառնամբոխային տրամաբանութեամբ վաևկարկուող «Մենք Օկին Սամաթներ ենք» կարգախօսը, իր ազգայնամոլական ծայրայեղու բովանդակութեամբ ահազանգ կը հնչեցնէ, սակայն զուգահեռաբար, երկրին պետական գաղափարախօսութեան ազգայնամոլական-ցեղապաշտական եռթիւնը բացայատող յաւելեալ ապացոյց մըն է...

Եւ ահա, 21-րդ դարու իսլամական աշխարհիկ ժողովրդավարական պետութիւնը՝ Յանրապետական Թուրքիան, որ իսլամական աշխարհի առաջին եւ միակ ֆաշական պետութիւնն է, որուն քաղաքական գաղափարախօսութիւնը հիմնուած է ազգայնամոլութեան, այլամերժութեան, ամբողջատիրութեան, ծաւալապաշտութեան, ռազմամոլութեան եւ մասնաւոր հայատեացութեան վրայ:

Թրքական ազգայնամոլութիւնը «ազգայնականութիւն» բառային տարբերակով, իր-

ուր օրենսդրական-իրաւական սահմանում, հիմք եւ մեկնակետ հանդիսացած է Թուրքիյ 1937-ի սահմանադրութեան. իրականութիւն մը, որ իր հակաժողովրդավարական բացարձակ հասկացութեամբ անմիջական թիրախ կը դարձնէ Երկրին բազմազգ, բազմագոյն խճանկարին մաս կազմող ոչ-թուրք տարրերը, Ներառեալ՝ ոչ-թուրք իսլամները, մանաւանդ թուային առումով Թուրքիոյ բնակչութեան Երկրորդ մեծ դիրքը գրաւող քիւրտ զանգուածը, որ ինքնին մեծագոյն արգելքը հանդիսացած է Երկրին «Ազգային պետութեան» ստեղծման գաղափարախօսութեան, յօդս ցնդեցնելով «Ազգային պետութեան» տեսաբաններու լոկ կրօնի գործոնին հաշւառումով քիւրտերը ծովելու ծրագիրը:

Ազգայնականութեան, ցեղապահտութեան, հետեւաբար եւ այլամերժութեան թրքատիա տեսութենեն թելադրուող Երկրի մը վարչակարգը իր բաղկացուցիչ քաղաքական, դիւանագիտական, օրենսդրական, իրաւական, գիտական, կրթական, մշակութային եւ այլ ոլորտներու մեջ ունեցած բացարձակ տիրապետութեամբ, «իրական ժողովրդավարութիւն» դրսեւորելու հնչ ցուցանիշեր կրնայ ունենալ, երբ խորքին մեջ «ամբոխավար պետութեան» մը ցեղամոլական վարքագիծով հանդիս կու գայ եւ ամպիովանին է Երկրի ոչ-թուրք զանգուածներու դեմ կրօնամոլ թէ ցեղամոլ «զտարիւն թուրք»ին սնուցած խառնամբոխային տրամադրութիւններուն, մանաւանդ՝ զաւառներու մեջ, ուր ի բացակայութեան Երկրին ոչ-թուրք տարրերը պաշտպանելու կոչուած Երկրի օրենքներուն, «Լինչի դատաստան»ը կը գործէ իր խուժանային ենութեամբ եւ գործելակերպով: Այս մասին, սոսկ օրինակի կարգով, կը բաւէ կարդալ թուրք այլախոհ գրող, գերմանաբնակ Քեմալ Եալզընի «Սարի Կեալին» եւ «Վերապրողները» վեպերը, ուր «Լինչի դատաստան»-ը դուրս եկած ըլլալով իր ծննդավայր Միացեալ Նահանգների սահմաններէն, եւ տուեալ ժամանակահատուածի մը բովէն, իր ամենադաժան, ամենադժիւմ դրսեւորուններով, ըստ յիշեալ գիրքներու ընդգրկած աշխարհագրական տարածքներուն, կը գործէ Ատընամանի եւ Պոյապաթի հայկական միշավայրին մեջ:

«Լինչի դատաստան»ը իր անգիր օրենքի հանգամանքով ահ ու սարսափի մթնոլորտ ստեղծած էր մանաւանդ գաւառահայութեան մէջ, ուր տգիտութեան եւ յետամնացութեան ծովուն մեջ լողացող թուրք մեծամասնութիւնը իր ցեղային եւ կրօնական մոլեռանդութեամբ նախապահարուած, անասելի վայրագութիւններ կը գործէր, հաւատալով, որ «Եօթը հայ սպաննողը դրախտ կ'երթայ...», կամ՝ «հայ կին մը իսլամացնողը բարեպաշտական մեծ գործ կատարած կ'ըլլայ...»:

Այսօր «Լինչի դատաստան»ին սպառնալիքը կը ինչէ Պոլսոյ Թաքսիմի հրապարակին վրայ... կեղծ ժողովրդավարութեան թուզի տերեւը ինկած է... «Թափուած արիւնը գետինը պիտի չմայ...»: Թոքութեան պաշտամունքի չափանիշները միշտ ալ նոյնը եղած են գաւառին թէ քաղաքներուն մեջ: Այսօր թէ Երեկ, գաղափարախօսական աշխարհիկ հայեացըներ ունեցող թրքասերներն ալ նոյնան չարիք կը գործեն, նոյնքան ատելութեամբ եւ չարութեամբ լեցուած են՝ մանաւանդ հայերու դէմ, որքան կրօնամոլ եւ ցեղապահտ զանգուածները: Թուրքիոյ մեջ քաղաքական կազմակերպութիւններու սկզբնաւորման շրջանին իսկ ազգայնական ըմբռնումները թափանցած էին նաեւ ծախակողմեան հոսանքներէն ներս, այս տարողութեամբ, որ անոնց հետեւորդները իրենք գիրենք «ոչ թէ Թուրքիոյ ծախակողմեաններ», այլ՝ «թուրք ծախակողմեաններ» կը համարէին, որովհետեւ բոլորն ալ հաւասարապես թրքութեան ազգային կրթութեան սկզբունքներով, իմա՝ ազգայնամոլութեամբ եւ «մէկ լեզու, մէկ մշակոյթ»-ի առաջադրանքներով դաստիարակութած էին:

1923-ին Լոզանի դաշնագիրով, հայերու եւ ընդհանրապես քրիստոնեաններու վերաբերող իրաւունքներու ճանաչման տրամադրութիւնները Պոլսոյ սահմաններէն անդին չէին անցներ, որովհետեւ այդ դաշնագիրը ստորագրող պետութիւններուն համար Թուրքիան միայն Պոլսոյ կը նշանակէր, Անատոլուի հայերը հաշուի չէին առնուեր: Պոլսոյ մեջ հայկական վարժարաբնակ ունենալու, հայկական անուն-մականուն կրելու իրաւունքները հաստատող օրենքները ի օրոր չէին գաւառահայութեան համար եւ ընդհանրապես գոյութիւն



չունեին Ատրեամանի, Տիգրանակերտի, Մարաշի, Մալաթիոյ եւ Շռնագի նման քաղաքներու մեջ: Այդ վայրերուն մեջ զարդերէն վերապրած հայերը համատարած վախի մթսուրտի մը մեջ, փակ բերանով, իրենց պատեանին մեջ կծկուած կ'ապրէին, ենթարկուելով խտրականութեան մշակոյթի սահմանած օրէնքներուն եւ մանաւանդ՝ «Լինչի դատաստան»-ին, որուն ստեղծած արհաւրալի մթսուրտը դամոկիեան սուրի նման կախուած էր ընդհանրապես ոչ-թուրքերու գլխուն վերեւ:

1928-ին Թուրքիոյ մեջ պաշտոնապես կը հաստատուեր հայկական անուն-մականուն փոխելու օրնը:

Մինչ այդ, 1923-ին հիմնուած հանրապետական Թուրքիան ոգի ի բռին լծուած էր շնչելու ազգային ինքնութեան բաղկացուցիչ ամէն ցուցանիշ՝ անուն, հաւատք, մշակութային-ճարտարապետական կոթողներ եւ մանաւանդ՝ յիշողութիւն... Թուրքիոյ լեզուաբանական կաճարի նախագահը՝ Յակոբ Մարթայեան, որուն Աթաթուրը Յակոբ Տիլաչար անունը տուած էր, հակառակ իր գլխաւորած լեզուաբանական կաճարին բերած գիտական մեծ նպաստին, իրաւունք չէր ունեցած իր հարազատ անունով հանդէս գալ եւ անով ստորագրել իր գիտական բազմարժեք ուսումնասիրութիւնները: Այս ուղղութեամբ Քեմալ Եալզը կ'ըսէ. «Ինչպէս թուրք լեզուաբանական կաճարի նախագահը հայ մըն էր, երանի թէ կարելի ըլլար Թուրքիոյ մեջ հայ լեզուաբանական կաճառ մը հիմնուեր եւ

զայն գլխաւորէր թուրք լեզուաբան մը: Երանի թէ կարելի ըլլար Թուրքիոյ մեջ նման գեղեցկութիւններ վայելել, երանի թէ այս գեղեցկութիւնները լիովին ընկալելու չափ հաշտութեան մշակոյթին տիրացած ուլայինք: Կարծիքովս, եթէ լեզուներ եւ մշակոյթներ ոչնչացնելու համար տարուած շանքերուն փոխարին, զանոնք ապրեցնելու համար նոյնքան շանք թափուէր, Անատոլուն

այսօր բոլորովին տարբեր դիմագիծ մը կ'ունենար...» («Սարի Կեալին», էջ 153):

Բայց ուր էր, որ թուրքը հասկցած ըլլար երկրի մը բազմամշակութային դրուածքին կարեւորութիւնը եւ անոր բարիքները, երբ «Եւրոպական բարքերու տիրացած» նախկին վարչապետուիի թանսու Չիլլէր հրապարակաւ հայատեացութիւն կը քարոզէր, եւ «հայու սերմ» որակումով կ'ակնարկէր երկրի հայութեան, ապա ի՞նչ վերաբերմունք կարելի է սպասել արդէն իսկ կրօնական, ցեղային կամ ազգայնական զգացումներով հրապարակները ողողող ամրոխւն:

Երկրին մեջ պետական մակարդակով դրսեւորուող խտրականութեան քաղաքականութիւնը եւ անկէ թելարուող գործելակերա մը թափանցելով ժողովրդային խաւերու կենցաղային առօրեայ կեանքեն ներս ոչ-թուրքերու, բայց մանաւանդ՝ քրիստոնեաներու հանդէա առաւել եւս կը սրէին անհանդուրժողութեան եւ թշնամանքի զգացումները, շնչելով խուժանին գործած վայրագութիւններու, անիրաւութիւններու եւ անարդարութեան չափն ու սահմանը: Բոլորին յայտնի էր պետութեան դրսեւորած խտրականութիւնը:

1939-ին, իբրեւ թէ բանակին ծառայելու պատրուակով հայ, յոյն եւ ասորի տղամարդիկ «բանուորական ջոկատներ» անուան տակ, քար կտրելու համար աշխատանքային ճամբարներ կը որկուէին. շուտով անոնց բախտակից կը դառնային «ունեւորութեան

տուրք»-ը (1942-ին հաստատուած) վճարելու անկարող քրիստոնեաները:

Այնուհետեւ, «ժողովրդավարական վարչածեմ»-ի հաստատումով յառաջացած Մեստերեսի կառավարութիւնը 1955-ի սեպտեմբեր 6-7, ազգային փոքրամասնութիւնները մաքրագործելու ծրագրով, բայց իբրեւ թէ «Լինչի դատաստան»-ին վճիռով, կը յարձակեր եւ կը կողոպտէր նախապէս նշագրուած յոյն եւ հայ բնակիչներու տուներն ու խանութեները: Կը սպաննուեին 16 քրիստոնեաներ, կ'արձանագրուեին 500-է աւելի վիրաւորներ, ընդհանուր հաշիռով կը թալանուեին 4214 տուն, 1004 գրասենեակ, 73 եկեղեցի, 26 դպրոց եւ այլ հաստատութիւններ: Օրին, Սալոնիկի մեջ Աթաթուրքի տուն-թանգարանի բակին մեջ տեղի ունեցած պայթումին կազմակերպիչը՝ Օքթայ Էնկին, մեկ տարի Յունաստանի մեջ բանտարկուելէ ապա ազատ արձակուելէ եւ Թուրքիա վերադառնալէ ետք, կը վարձատրուեր Զանքայայի Գայմաքամի, ապա՝ ոստիկանութեան գլխաւոր վարչութեան քաղաքական բաժանմունքի պետի պաշտօններով: 1971-ին, Էնկին կը դառնայ Թուրքիոյ անվտանգութեան վարչութեան պետ, իսկ 1991-ին կը նշանակուի Նեշեհիրի նահանգապետ: Դեպքեն տարիներ ետք, Թուրքիոյ «յատուկ նշանակութեան գինուած ուժերով» նախկին պետ Սապրի Եիրմիպեշօլու կը նշէ, թէ 1955-ի սեպտեմբեր 6-7-ի դեպքը իրենց հրաշալիօրէն կազմակերպած գործն էր:

Թուրքիոյ պետական պատուերով գործող «Լինչի դատաստան»-ը չէ խնայած «զտարիւն թուրք»-ին բացի ոչ ոքի:

- Ազորիներու դեմ շղթայագերծուած հալածանքը եւս, իր բարբարոսութիւններով եւ անորակելի վայրագութիւններով մաս կը կազմէ Թուրքիոյ արիւնով գրուած պատմութեան եցերուն:

- 1937-1938-ի Տերսիմի քիւրտ եւ ալեւի բնակչու-

թեան կոտորածները եւս, ուր հայն ալ հերթականօրէն եւ անխուսափելի ճակատագրով տուժած է, կը բացայայտեն ոչ միայն պետական քաղաքականութեան այլամերժ վարքագիծը, այլ՝ անոր լծակից-գործակից «խառնամբոխային գործոն»-ի աւանդական դրոյթը:

- Ըստ Թուրքիոյ գործող սահմանադրութեան, հանրապետութեան բոլոր քաղաքացիները թուրք են եւ ո՛ թրքահպատակ հայ, յոյն, ասորի, իրեայ, քիւրտ, ալեւի, եւն...: Այս մասին դեռ 1934-ին, փանթուրքիզմի ռահվիրաներէն, թուրք ցեղապաշտ Նիհալ Աթսոզ, «Օրքոն» ամսագրին մեջ «թրքութիւն»ը բնութագրելով կ'ըսէր. «Թուրքերուս համար ազգը՝ նախ եւ առաջ արեան խնդիր է... այսինքն՝ թուրք եմ ըստո, պէտք է թուրք ցեղին պատկանած ըլլայ...», իետեւաբար, «Երանի անոր որ թուրք է» կարգախօսը կը բաւէ քողագերծելու Թուրքիոյ կեղծ ժողովրդավարութեան իրական դիմագիծը:

- Թուրքիոյ մեջ միջազգային չափանիշերով սահմանուած փոքրամասնութեանց իրաւունքները այսօր խախտումներու կ'ենթարկուին, հայկական, յունական եւ իրեական համայնքները դնելով լուրջ հիմնախնդիրներ դիմագրաւելու մարտահրաւերին առջեւ. այդ կարգին պետութեան կողմէ ինչ-ինչ պատըրւակներով բռնագրաւուած կալուածները վերադարձելու բազում պարագաներ, ճարտարապետական-մշակութային կոթողներու պահպանութեան ի խնդիր տարուող աշխա-



տանքներու խոչընդոտումներ, եւ մասնաւանդ՝ իբրեւ իրաւական հաստատութիւններ Պոլսոյ հայոց պատրիարքարանին եւ իրեական ռապահիսատին պետական ճանաչում ձեռք ծգելու ընթացքին յարուցուող հարցեր, որոնց ընդունելի լուծումներ գտնելու պատեհութիւնը կը պայմանաւորուի երկրին «ժողովրդավարական ժամանակակից սահմանադրութեան» մը Վերամշակումնվ, որուն առաջնագոյն նպատակը Եւրոպիութեան անդամակցութեան պայմաններու լրացումն է: Այս առթիւ Պոլսոյ հայոց պատրիարքական փոխանորդ Արամ Արք. Աթէշեանի Մարտ 12-ին ունեցած ելոյթը Թուրքիոյ խորհրդարանի սահմանադրական յանձնաժողովին առջեւ եւ նախքան այդ, նոր սահմանադրութեան հետ կապուած համաժողովի մը ընթացքին, որուն մասնակցած է Թուրքիոյ խորհրդարանի նախագահը, համարձակ քայլ մըն է, որմով Արամ Արք. Աթէշեան ներկայացուցած է Թուրքիոյ սահմանադրութեան մէջ առկայ «Թուրքիոյ բոլոր քաղաքացիները թուրք են...» կետին Վերանայման պահանջը, աւելցնելով որ՝ «օրէնքի առջեւ բոլորը հաւասար են, սակայն իրականութեան մէջ այդ հաւասարութիւնը գոյութիւն չունի...»:

- Թուրքիոյ մէջ թուաքանակով երկորդ ցեղային միաւոր համարուող քիւրտերը Ենթակայ են ո՛չ միայն իրենց վրայ բանեցուող քաղաքական եւ մշակութային ահաւոր ճնշումներու, այլ՝ իրենց ցեղային գոյութեան սպառնացող հալածանքի, բռնարարքներու, տեղահանութեան եւ աշխարհագրական որոշ տարածքներու վրայ աշխարհին ծանօթ ռազմական հերթական գործողութիւններու:

- «Ժողովրդավարական» Թուրքիոյ մէջ դեռ կը գործէ Հրանդ Տիլքը զգեստնած քրեական օրէնսգիրքին 301-րդ յօդուածը, որուն զոհ գացած կամ անոր սպառնալիքին Ենթակայ «խօսքի ազատութեան» հաւատացած Տիլքին նմանները, անկախ իրենց ցեղային պատկանելիութենեն, կը մեղադրուին երկրին պետական գաղափարախօսութեան հակադրուելու յանցանքով:

Արտաքին ճակատներու վրայ՝

- Թուրքիա բռնագրաւած կը պահէ Կիպրոսի հիւսիսային հատուածը, Սուրիոյ Ալեք-

սանտրեթ Սանճաքը, Հայաստանի արեւմըտեան տարածը:

- Թուրքիա շրջափակուած կը պահէ Հայաստանի Հանրապետութիւնը, կը սպառնայ ռազմական ուժ կիրարկել Հայաստանի, Սուրիոյ, հիւսիսային հրաքի, Կիպրոսի, Յունաստանի, այլ խօսքով՝ իր ծաւալապաշտական ու ռազմամղական ձգումները սանձել փորձող բոլոր պետութիւններուն դէմ:

- Թուրքիա Հայկական ցեղասպանութեան «ուրացման քաղաքականութեան» փուլեն անցած ըլլալով «խեղաթիւրումի հանգըրւան», կը փորձէ շփոթ ստեղծել հոն, ուր Հայկական ցեղասպանութիւնը ամենաբարձր մակարդակով քննութեան առարկայ կը դառնայ: Քարոզչական ապակողմնորոշիչ լայն արշաւ տանելու կողքին, մեծագումար յատկացումներով Արեւմուտքի մէջ ան կը կաշառէ օտար պատմաբաններ, ակադեմականներ եւ պետական ու քաղաքական գործիչներ:

Այսօր «Էրտողանեան Թուրքիա»-ն հանդէս կու գայ «քաղաքական իսլամականութեան» եւ «սիինական իսլամականութեան» յանձնառութեան դիրքերէ, որուն հետեւանքով, թէ՛ ներքին, թէ՛ արտաքին ճակատներու վրայ ծագած քազմագոյն, քազմատեսակ հարցերը ծիծաղաշարժ առասպելի կը վերածեն Երտողանի եւ Տաւութօղլուի նման խուժանապետերու յօրինած «զերօ խնդիրներ»ու չնաշխարհիկ տեսութիւնը:

Միւս կողմէ, Հայոց ցեղասպանութեան կոշմարը կը հալածէ բոլորը, հանգիստ չի տար ոչ ոքի, ինչ որ տեղ կը փշրէ կոշկոր կապած հայատեացութեան նախապաշտումները եւ հայկական հարցին կրած զարգացումներու արդիւնքով ծագած ինքնութեան տագնապ ապրողներն ու վերջին շրջանին ստեղծած թուրք ողջմիտ մտաւորականներու փաղանգը կը մղէ ջախչախելու «վախ»-ի պատևէշը եւ ըսելու, որ «ջուրն ալ կը բռնկի...»:

ՍԱԼԲԻ ԳԱՍՊԱՐԵԱՆ

Հալեա

ՎԱՏԻԿԱՆ ԵՒ ԻՐ ԳԱՂՏՆԻ ԱՐԽԻՒՏԵՐԸ

100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԸՆԴՎՈՎՁ

Յայոց ցեղասպանութեան յիսնամեակէն սկսեալ տարութեան տարի աւելի սրբցաւ միշազգային հետաքրքրութիւնը եւ ուշադրութիւնը Յայոց ցեղասպանութիւնը ճանչնալու աշխարհասփիւռ տարագիր հայութեան պահանջին նկատմամբ: Այսուհանդերձ, այս պահանջին դիմաց՝ կեցուածքները (դրական կամ բացասական) միշտ չեն որ հիմնուեցան ճշմարտութեան, Արդարութեան եւ իրաւունքի հաշտառման վրայ:

Ցեղասպանութիւնը ճանչնալու պարտաւորութեան դիմաց կանգնած երկիրներէն շատերը իրենց որոշումին մեջ յաճախ առաջնորդուեցան (եւ դեռ կը շարունակեն առաջնորդուիլ) շահախնդրութեամբ, իրենց սեփական շահերու, քաղաքական, դիւանագիտական, տնտեսական եւ բազմաթիւ այլ նկատառումներով: Ոմանք Յայոց ցեղասպանութիւնը ճանչնալու եւ դատապարտելու անհրաժեշտութիւնը կը տեսնեն՝ միայն որպես նախապայման հետագայ ցեղասպանութիւններու կանխարգիլումին, առանց ճանաչումն անդին երթալու տրամադրութիւն ցոյց տալու:

Յամենայն դեպս, ճանաչման եւ դատապարտումի գործընթացին միշազգային բեմին վրայ արձանագրած զարգացումները, անկախ իրենց դրական կամ հայանպաստ տրամադրութենեն, պատահական չեղան, այլ՝ առաջին հերթին, արդիւնքը՝ յարաբերական, քարոզչական, տեղեկատուական եւ



լոպիիստական աշխատանքներուն, որոնք Ցեղասպանութեան 50-րդ տարելիցն սկսեալ տարուեցան տարագիր հայութեան կողմէ, հոգ չէ թէ յաճախ տարտղուած շարքերով, եւ որոնք սահմանափակուեցան Ցեղասպանութեան միշազգային ճանաչման ու դատապարտումի պահանջով: Ճանաչումն ու դատապարտումն անդին՝ աւելին պահանջելու միտումը զգացուցինք միշտ, սակայն այդ միտումը գործադրութեան դնելու ուղղութեամբ քայլեր առնելու փորձերը՝ փորձի սահմանին մեջ մնացին: Աւելին պահանջելու համար՝ տարագիր հայութիւնը միշազգային իրաւական կարգավիճակով ներկայացնող մարմին մը անգամ (ինչպէս կ'ուզեք կոչեցեք զայն) չկարողացանք ունենալ:

Այսուհանդերձ, ճանաչման ու դատապարտումի պահանջատիրական արշաւը ինընա-

Նպատակ չէր կրնար ըլլալ անշուշտ: Ան տրամաբան ականշարուս ակութիւնն էր պատմական յիշողութիւնը վառ պահելու եւ զայն իրերայաջորդ սերունդներուն փոխանցելու սահմանուած հանգրուանին, որ Ցեղասպանութեան յաջորդած հինգ տասնեակ տարիներուն յատկանը-ւեցաւ առաւելաբար յուշաբեր ու ոգեկոչական ձեռնարկներով:

Ցայկական պահանջատիրութիւնը շրջադարձային թափ, ծաւալ ու որակ ստացաւ յատկապես վերջին երկու տասնամեակին՝ վերանկախացած Ցայաստանի ու անոր դիւանագիտութեան յայտնութեամբ միջազգային բեմին վրայ՝ Ցայց ցեղասպանութեան ճանաչման համահայկական պահանջին թղթածրարը ձեռին: Այս իրողութիւնը տակնուվրայ ըրաւ Թուրքիան, իր պետութեամբ ու հասարակութեամբ, մինչեւ հսկ հակասական տրամադրութիւններ ստեղծելով մտաւորականութեան շրջանակներէն ներս: Ան շփոթիմատնեց թրքական իշխանութիւնները: Թրքական պետութեան եւ անոր դիւանագիտութեան վարիչները իրենց խուճապահր վիճակը գգացուցին իբրեւ թէ հայեւթուրը յարաբերութիւններու բնականուացումին ծառայող միամիտ առաջարկներով, իրենց ժխտողական ու հայատեաց ելոյթներով, հայանպատ ամեն ծայն լրեցնելու միտող բռնադատութիւններով եւ մինչեւ իսկ ոճրային արարքներով, որոնք արար աշխարհին ցոյց տուին որ թրքական ներկայ իշխանութիւնները, ինչպիսի՝ կեղծ դիմակով ու տարազով ալ ներկայանան աշխարհին, իրենց այլատեացութեամբ, ոճրամետ նկարագրով ու բնութեամբ, իրենց նենգամտութեամբ, չարակամութեամբ ու կեղծաւորութեամբ, եւ այս բոլոր յատկանիշներէն թելադրուած վարքագծով ու



քաղաքականութեամբ, կրկնօրինակն են աւելի քան դար մը առաջ սկսած, 1915-ին լրումին հասցուած եւ մինչեւ օրս հակահայ ոտնձգութիւններով շարունակուող Ցայց ցեղասպանութեան սեւ էջերու առաջին հեղինակներուն:

Օսմանեան իշխանութեան ժառանգորդները այսքան իրարու պիտի չանցնեին՝ եթէ վստահ ըլլային որ Ցայաստանի արտաքին քաղաքականութեան օրակարգին վրայ գտնուող Ցայց ցեղասպանութեան թղթածրարը կը փակուի ճանաչումով եւ առաւելագոյնը՝ դատապարտումով մը:

Թրքական իշխանութիւններու իրարանցումին պատճառը՝ հատուցման, պատմական ոճիրին հետեւանքները դարմանելու պահանջն է, որ անխուսափելիօրէն պիտի յաջորդէր ճանաչման ու դատապարտումի հանգրուանին: Ահա թէ ինչո՞ւ թրքական իշխանութիւնները ոգի ի բոին լծուեցան հատուցման պահանջին առաջնորդող գործընթացը խափանել փորձելու աշխատանքին: Այնպէս ինչպէս ըրին իրենց նախորդները դար մը առաջ՝ բնաշնչելու համար ամբողջ ազգ մը, ժամանակակից Թուրքիոյ դեկավարներ եւս՝ իրենց նպատակին հասնելու համար միջոցներուն մեջ խտիր չդնելու իրենց քաղաքականութեան վկայութիւնը տուին:

Ցակառակ դար մը առաջ իր ծրագրած ու գործադրած ցեղասպանութեան ճանաչման ու դատապարտման գործընթացը խափանելու փորձերուն, նաեւ՝ պատմական Ոճիրին հետեւանքները դարմանելու պահանջին արշաւը կասեցնելու ճիգերուն, հայութեան պահանջատիրութեան թղթածրարը հասաւ մարդու եւ ժողովուրդներու իրաւանց դատապարտապան միջազգային կառոյցներու եւ ատեաններու սեղանին, ու կը գտնուի միջազ-

գային որոշումներու նժարը բռնած պետութիւններու արտաքին գերատեսչութիւններու հրատապ խնդիրներու ցուցակին վրայ՝ «հատուցումն դարմանում» խորագրով։ Այս խորագրին թելադրած գործընթացին մեկ ազդանշանը հանդիսացաւ Մեծի Տան Կիլիկիոյ կաթողիկոսութեան նախաձեռնութեամբ՝ 2012-ի փետրուարի վերջին շաբթուան ընթացքին Անթիլիասի մեջ տեղի ունեցած «Յայց ցեղասպանութեան ճանաչումն հատուցում» (from recognition to reparation) խորագրեալ գիտաժողովը, մասնակցութեամբ բազմաթիւ միջազգային օրէնսդեւներու։

Արդարեւ, Յայց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին ընդառաջ, աշխարհասփիւր հայութեան եւ հայկական պետութեան գերիսնդիրն է միջազգային ուշադրութիւնն ու հետաքրքրութիւնը ուղղել հատուցման պահանջի հանգրուանին վրայ եւ աշխատանք տանիլ, որպեսզի միջազգային ընտանիքը իր կարգին ճանաչման ու դատապարտումի հանգրուանեն անդին անցնելով արձագանգե Մեծ Օճիրին հետեւանքները դարմանելու պահանջին։ Նման ակնկալութիւն մը, բնականաբար, կը կարօտի շօշափելի հիմնաւորումի ու համոզիչ փաստարկութեան։ Յետեւաբար, այդ հիմնաւորումն ու փաստարկութիւնը հաւաքագրելու եւ միջազգային ատեաններու ուշադրութեան յանձնելու մարտահրաւերին առջեւ կը գտնուի այսօր հայութիւնը, իր պետութեամբ եւ սփիւրքով։ Յաւաքագրումի այս աշխատանքը հեզասահ պիտի չընթանայ, որովհետեւ թուրքիա անգամ մը եւս ամեն միշոցի, կազմակերպութեալ մինչեւ շանթամքի ու սպառաւ իրադարձութեան միշոցի, կազմակերպութեալ մինչեւ անհարդախ ու իրեն համար առաջ առ հզ այն անխարդախ ու իրեն համար անհպելի արխիւներուն, ուր կը գտնուին Յա-

յոց ցեղասպանութեան մասին գինը խարանող եւ ամբաստանեալի աթոռին նստեցնող վկայութիւններն ու փաստերը։ Այդպիսի արխիւներն է Վատիկանի արխիւրը, որմէ քաղած առաջին վկայագրութիւններու հրապարակումը բաւարար եղաւ, որպեսզի թրքական իշխանութիւնները թրքավարի միշոցներով խափանել փորձեն այդ վկայագրութիւններուն տարածումը։

Սակայն, բոլոր պատճառները ունինք հաւատալու, որ թրքական ոչ մեկ ճնշում պիտի կարենայ խափանել Յայց ցեղասպանութեան մասին Վատիկանի գաղտնի արխիւներուն մեջ պահուած փաստաթուղթերը ամփոփող հատորի մը հրատարակութիւնը, այսպէս ինչպէս խոստացաւ Վատիկանի գաղտնի դիւանի կառավարիչը՝ գերապայծառ Սերճի Բականօ, 2011-ի յուլիսին, Յօնսի մեջ, «*lux in arcā*» ցուցահանդեսին առիթով տրուած մամուլի ասուլիսի մը ընթացքին, ի ներկայութեան Վատիկանի պետական քարտուղար Կարտիկանալ Պերթոնեի եւ Յօնսի քաղաքապետ ճիաննի Ալեմաննոյի։ Գերապայծառ Բականօ «մարդկային պատմութեան ամենն մութ եւ տիսուր էշերէն մէկը» նկատեց Յայց ցեղասպանութիւնը։ Ան ըսաւ, որ հատորին մեջ նկարագրականը պիտի տրուի «թուրքերու կողմէ որդեգրուած դատախազութեան զարիուրելի եղանակին հանդեպ հայերու, որոնք վայրագ ոճիրի ու մեծ ջարդի զոհ հանդիսացան»։ «Յաւի ու սարսափի անգուսա զգացողութիւն կ'ունենամ, երբ կը կարդամ հայերու Ն կ ա տ մ ա մ բ թուրքերուն կողմէ իրագործուած խոշտանգումներու մասին։ Անոնք կը ստիպէն ինծի ամօքնալ որ ես մարդ եմ», ըսաւ Վատիկանի գաղտնի արխիւներուն տևօրէնը։

Միեւնոյն օրերուն, Վատիկա-



ՖՈՏՈԼՈՒՐ

Նի ռատիոկայանը իր միլիոնաւոր ունկնդիր-ներուն յիշեցուց, որ Յովհաննես Պողոս Բ. պապը, 2001-ին Երեւան այցելութեան ընթացքին՝ աղօթելէ Ետք Ծիծեռնակաբերդի նահատակաց յուշակոթողին առջեւ, դատապարտեց «մէկուկէս միլիոն քրիստոնեայ հայերու բնաշնչումը. արարք մը, որ կը նկատուի 20-րդ դարու առաջին Յեղասպանութիւնը» ըսելով: Երանելի պապը, 2001-ին, Յայաստանի պետականօրեն քրիստոնեայ հռչակման 1700-ամեակին առիթով հրապարակեց Առաքելական Թուղթ մը, ուր ընդգծեց, որ «հայոց քրիստոնեական հաւատքը հիմնուած է իր ժողովուրդին նահատակութեան եւ անոր թափած արիւնին վրայ»:

2006-ին, Երանելի Յովհաննես Պողոս Բ. յաջորդը՝ Պենետիկոս Ժ2.՝ Պոլիս կատարած այցելութեան ընթացքին, հրապարակային իր մէկ ելոյթին մէջ փառք տուաւ Աստուծոյ «հայ ժողովուրդի հաւատքին ու քրիստոնեական վկայութեան համար, որ փոխանցուած է դարտ դար եւ յաճախ ողբերգական պարագաներու ներքեւ, ինչպես եղաւ անցեալ դարու պարագային»: Իսկ 2008-ի մայիսին, Վատիկանի մէջ, Գարեգին Բ. Ամենայն Յայոց կաթողիկոսը հրաւիրելով իր կողքին մասնակցելու իր հերթական ընդհանուր ունկնդրութեան, անոր փոխանցեց Յայոց ցեղասպանութիւնը համաշխարհային ճանաչման արժանացած տեսնելու իր ցանկութիւնը:

Երանելի Յովհաննես Պողոս Ժ2. քահանայաբետին օծումն ու պաշտօնական գահակալութիւնը տեղի ունեցան Յայոց ցեղասպանութեան 90-րդ տարելիցին օրը, 24 ապրիլ 2005-ին: Ան որդեգրեց Յայոց ցեղասպանութեան վկաներէն Պենետիկոս ԺԵ. ի անունը: Նախքան ընտրութիւնը, իբրեւ ծիրանաւոր կատարած իր մէկ յայտարարութեան մէջ, ան ըսաւ, որ «Թուրքիոյ նման Երկրի մը ընդունումը Երոպական Միութիւն՝ մեծ սխալ մը պիտի ըլլար»:

Պատահականութիւն կամ ոչ, այս զուգադիպութիւնները օրին մեզի ներշնչեցին յոյս եւ հաւատք, որ նորընտիր պապը պիտի ըլլայ նոյնքան հայասէր՝ որքան նախորդը եւ նոյնքան հայապաշտպան՝ որքան Պենետիկոս ԺԵ. պապը, որովհետեւ հայասէր ըլլայ կը նշանակէ գնահատել մարդկային, հոգեւոր ու

բարոյական արժեքները, որոնց սիրոյն գերագոյն զոհորութիւնը յանձն առնելու չվարանեցաւ հայ ժողովուրդը: Իսկ հայապաշտպան ըլլալ կը նշանակէ հետամուտ ըլլալ ճշմարտութեան, Արդարութեան եւ Իրաւունքին, որոնց ջահակիրը Եղած են ու կը մնան աւելի քան մէկ միլիառ կաթողիկէ աշխարհին հոգեւոր պետերը: Այս իրողութեան մէկ վկայութիւնը կը հանդիսանան Պենետիկոս ԺԵ. ին Յայոց գողգոթայի մասին հրապարակած վկայութիւնները եւ այդ գողգոթային արգելք ըլլալու համար դաշնակից տերութիւններուն եւ նոյնինքն օսմանեան ջարդարար իշխանութիւններու դեկավարներուն կատարած իր դիմումներն ու բողոքները, որոնց բնօրինակներով վստահ ենք լեցուն են Վատիկանի գաղտնի արխիմինները: «Ազգերը չեն մեռնիր: Յարստահարուած եւ ստրկացուած՝ թէեւ կը տանին իրենց պարտադրուած լուծը, բայց ասիկա իրենց մէջ կը պատրաստէ փոխ-վրեժը եւ սերունդէ սերունդ կը փոխանցէ թշնամութեան եւ ատելութեան տիսուր ժառանգը», ըսած է Պենետիկոս ԺԵ. Երշանկայիշատակ պապը՝ ի լուր օսմանեան իշխանութեան կողմէ ծրագրուած ու գործադրուած հայասպանութեան, 28 յուլիս 1915-ին, միջազգային ընտանիքին եւ անոր յաճախ նենգաբարոյ դեկավարներուն ուղղած իր ցնցիչ կոչերէն մէկուն մէջ:

Յայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին ընդառաջ, համայն հայութիւնը արդարուեն կ'ակնկալէ, որ Վատիկանի գաղտնի արխիմիններու բացման զուգահեռ, Պենետիկոս ԺԵ. պապը, իբրեւ ճշմարտութեան, Արդարութեան եւ Իրաւունքի վրայ հիմնուած կեցուածք մը՝ Յեղասպանութեան հետեւանքները դարմանելու հայութեան պահանջին նկատմամբ:

ՍԱՐԳԻՍ ՆԱԾԱՐԵԱՆ

ՓԱՍՏԱԳՐԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ
20 ՄԱՅԻՍ 1923, ԶՄՄԱԴ

ՏԵՂԵԿԱԳԻՐ ՍՈՒՐԻՈՅ ՏԱՐԱԳԻՐ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՎԻՃԱԿԻՆ ՄԱՍԻՆ

1923

թուականին երբ կը ստորագրուեր Լո-
զանի տիկրահօչակ դաշնագիրը, արդէն
դատարկուած էին Արեւմտահայաս-
տանն ու Կիլիկիան, իսկ արեւմտահայութեան ողջ մնա-
ցած բեկորները ցիր ու ցան սփռուած էին Մեծն Սուրբոյ (Սուրբա, Լիբանան) տարածքին: Կանին ու Մուշին, Սիսին
ու Ատանային փոխարինելու եկած էին Հալէպն ու Պէյրու-
թը, Սայտան ու Սուրբ: Այս մասին կան զանազան վկայու-
թիներ՝ հայ թէ օտար կազմակերպութիւններու եւ կա-
ռոյցներու տեղեկագիրներուն մէջ:

Մինչեւ Մեծ եղեն Սուրբոյ եւ Լիբանանի տարածքին հազիւ նկատելի ներկայութիւն եղող հայ համայնքը, իր բոլոր յարանուանութիւններով, Առաջին Աշխարհամարտի աւարտին ար-
դէն պատկառելի զանգուածի մը ճեւզ ստացած էր, ազդելով նոյնիսկ այդ երկիրներու ազգա-
գրական պատկերին վրայ:

Մեր տրամադրութեան տակ գտնուող Կարապետ Ծ. վրդ. Պատուհասեանի (1923-ի մեծա-
ւոր Զմառու վանքի) արխիւային տուեալները բաւական խօսուն են այս իմաստով: Կը մնայ
անոնցմէ հետեւութիւններ ընել, պատկերացում կազմելու համար ամբողջ ազգի մը դաժան
ճակատագրին եւ անոր հասցուած անխնայ հարուածներուն մասին, միաժամանակ չմոռնա-
լով արժանին մատուցել այդ ազգի ապրելու եւ արարելու տենչը մարմնաւորած հայութեան
հերոսածին զաւակներուն:

Ստորեւ՝ 20 մայիս 1923 թուակիր, Կարապետ Ծ. վրդ. Պատուհասեանի տեղեկագիրը՝ ներ-
կայացուած Ազգային մարմինին:

ՍՈՍԵ ՓԻԼԱՒԹԵԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ ՍՈՒՐԻՈՅ ՄԵԶ ԳՏՆՈՒՈՂ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՎԻՃԱԿԻՆ ՎՐԱՅ

Սուրբոյ ներկայ հայութեան թիւը կ'են-
թադրուի 150,000 հետագայ բաժանումով:

Հալէպ եւ շրջակայքը	90,000
Պէյրութ	18,000
Դամասկոս	8,000
Իսկենտերուն	8,000
Լիբանանու մէջ ցրուած	6,000
Թարապլուս Զղարթա	5,000

Ժիաէլլ	3,000
Պաթրուն	3,000
Զահլէ եւ շրջակայ գիւղեր	2,000
Սուր եւ Սայտա	3,000
Ժունիէ	2,500
Ղազիր	1,500
	150,000

Այս թիւերը շարունակական փոփոխութեան էնթարկուած են, ըստ որում հաստատուն բնակութիւն չունենալով՝ գործերու եւ պարագաներու բերմամբ կը տեղափոխուին։ Գաղթականական այս մեծ խուժումը տեղի ունեցաւ Կիլիկիոյ պարագումին հետեւանքով եւ հայութիւնը այդ մօտակայ տեղը գտաւ իրեն պատսպարան։ մասամբ գուցէ բախտաւոր համարուին այդ գաղթականները, եթէ կարելի է այդ բառով որակել համեմատութեամբ ուրիշ գաղթականութեանց, ըստ որում ժամանակ ունեցան իրենց ունեցածովը եւ գոյքերովը փոխադրուիլ։ Այս հոսանքին առաջին ազդանշանին, մարոնցոց պատրիարքը որ մեծ համբաւ կը վայելէ այդ շրջանակին մեջ, ըստ որում բնակչութեան մեծագոյն մասը մարոնցի է, առանձին շրջաբերականով յորդոր կարդաց ժողովորդեան սիրալիր ընդունելութիւն եւ կարելի աշակցութիւն ընծայել եկող ժողովորդեան, եւ իրաւամբ տեղացի, մանաւանդ մարոնի ժողովուրդը, իհիրընկալ գտնուեցաւ եւ կարելի դիւրութիւններ ընծայեց հայութեան։ Ֆրանսական կառավարութիւնը հոգածութիւն ունեցած է անոնց փոխադրութեան եւ զետեղման գործին մեջ՝ հայթայթելով տախտակեայ տաղաւարներ, բաշխելով միանգամայն հաց եւ ուրիշ կարեւոր պետքեր, սակայն իր այս օժանդակութիւնը երթալով նուազած է եւ գործէ դադրելու վրայ է։ Ազգային միութիւնները կազմուած են յարաբերութիւնները պահելու տեղական կառավարութեանց եւ ժողովուրդին միջեւ եւ իրենց կարելին կ'ընեն թշուառութիւնը մեղմացնելու։

Ազիթը ունեցայ պտտելու հետագայ տեղերը, Պէյրութ, Ալթիլիաս, Ժունիէ, Ղազիր, Ժպէյլ, Պաթրուն, Թարապատ, Զիարթա եւ Լիբանան։ Պէյրութի ազգային միութիւնը ուժեղ կազմ մը ունի եւ ատենապետ տոքք. Մելգոննեան ճկուն դիւրանագետ մըն է եւ տեղական իշխանութեանց համարումը եւ վստահութիւնը կը վայել։ Յոն ցայժմ կը տի-

րէ համերաշխ գործունեութիւն, թէեւ կան կուսակցական հոսանքներ՝ շատ թաքուն։ Պէյրութի արեւելեան կողմը, երկաթուղիի կայարանին կից, ծովեզերքը հաստատուած է գաղթականաց կայանը, ուր կը պատսպարուին տաղաւարներու մէջ 8000 ժողովուրդ։ Յոն երեք յարանուանութիւնները ունին իրենց կրօնական պաշտման տեղ եւ գաղթական տղոց դպրոցներ։ Այդ տաղաւարներու մէջ բացուած են շուկաներ, ուր գործէ ամեն կարեւոր արհեստաւորներ կը գտնուին եւ կը գործեն, ինչպէս նաև ամեն պիտոյքներ հայթայթելու կրապակներ բացուած են. միսիթարական է որ հոն կարելի է ամեն պիտոյք գտնել, քաղաքէն նոյնիսկ աւելի աժան գնով։ Ազգային միութեան հսկողութիւնը կանոնաւոր է եւ կը հայթայթուի բժշկական ինսամք եւ առողջապահական սպասարկութիւն։ Ցանցաւ հիւանդութիւններ կան թեթեւ եւ անցողակի։ Քաղաքին մէջ հայ կաթողիկէ եկեղեցւոյ մօտը բացուած է նաև ծրիավարժ դպրոց գաղթական տղոց, ուր կը յաճախեն 150-ի չափ 8-16 տարեկան մանչեր, կայ նաև մայրապետաց նոր բացուած աղջկանց դպրոց, ուր կը յաճախեն տեղացի հայ ընտանեաց եւ բարեկեցիկ գաղթականաց աղջիկներ 800-ի չափ եւ կ'ընդունին լուրջ դաստիարակութիւն։ Կայ նաև ազգային երկսեռ վարժարան՝ լաւ վիճակի մէջ։ Պէյրութի մէջ հաստատուած է նաև Բարեգործականի մեծ որբանոցը 800 որբերու։

Ժունիէ, Ղազիր, Թարապատ եւ Զիարթա գաղթականները տուններու մէջ դրուած են, իսկ Ժիպէյլ եւ Պաթրուն մեծ մասամբ տաղաւարներու մէջ։ Ղազիր եւ Ժունիէ բացուած են գաղթական տղայոց դպրոցներ, ուր կը յաճախեն 400-ի չափ երկսեռ աշակերտներ։ Այդ կողմները ապրուստը աւելի սուլ է՝ քան Պոլիս, առեւտուրը կ'ըլլայ սուրիական թղթադրամով, որ ֆրանսական ֆրանքի համարժեք է։

Ժողովուրդը իր մէջ կը պահէ հայերէն լեզուն, իսկ տեղացի-



Ներու հետ հաղորդակցելու համար ստիպուած է սորվիլ արաբերեն եւ ֆրանսերեն լեզուն:

Գաղթականութիւնը իր հայրենիքը վերադարձի յոյսով փռուած է ծովեգերքի երկայնքին եւ չ'ուզեր աւելի ներսերը ցրուիլ, ուր կը ստիպուի երթալ ապրուստ ճարահատ մնալէ յետոյ: Այժմեան բնակավայրերը ապրուստի տեսակետով ապագայ չեն խոստանար եւ գաղթականութեան մեծագոյն մասը կ'ապրի օր ըստ օրէ շահածին վրայ՝ սպառելով մաս մը հետը բերած պահեստեն:

Եթէ այս վիճակը երկարի գաղթականութիւնը պիտի ցրուի, մեծ մասամբ ուրիշ տեղ փնտռելով: Տեղոյն ձեռնիաս անձինք ինձ հաղորդեցին, թէ Դամասկոսի եւ Քալեպի երկաթուղիի երկայնքին կան հողաշատ եւ արգասարեր տեղեր. եթէ լաւ կազմակերպութիւն ըլլայ կարելի է հոն տեղուանքը հաստատուն բնակչութիւն հաստատել եւ մասամբ ապագան ապահովել առ ի զգոյն լաւագոյնի: Այժմ գաղթականները կ'ապրին իրենց ձեռագործներով եւ հողամշակութեան մեջ աշխատելով եւ կամ իրենց գիտցած արհեստները գործածելով:

Որբանցներ. Բարեգործականը ունի երկու որբանց. մին Պեյրութի մեջ, ինչպես վերը ըսի եւ միւսը՝ Ժունիեի մեջ, Պ. Դազարոս Խալիքեանի տնօրենութեան ներքեւ: Այս վերջինը ունի 300-ի չափ բարեգործականի երկսեռ որբեր եւ 200-ի չափ Ռուիֆի կողմանէ իրեն յանձնուած՝ ամսական ծախքի համար որոշ գումարի վճարումով, սոյն որբանցներուն թէ՛ նիւթական եւ թէ՛ կրթական վիճակը լաւ եւ գոհացուցիչ է, սակայն մեծածախս եւ դժուար թէ կարենայ ընդ երկար յարատել:

Ամերիկեան Ռուիֆը, որուն կեդրունը հաստատուած է Պեյրութի մեջ, իւր հոգածութեան տակ ունի 10,000-ի չափ երկսեռ որբեր՝ ցրուած Պեյրութեն մինչեւ ժիպէյլ: Մեծ կերդուններ են Սաամլթէյն, Անթիլիաս, եւ Դազիր: Ընդհանրապես որբերուն առողջութիւնը լաւ է եւ կազմուածքը ուժեղ: Կրթական մասին չկրցայ որոշ գաղափար մը կազմել: Պաշտօնեութիւնը գրեթէ ամբողջութեամբ հայերէ կազմուած է, իսկ տնօրենները եւ մատակա-



րարները ամերիկացի են: Մաամլթէյն եւ Անթիլիաս ծովեգերեայ են, իսկ Դազիր լերան վրայ է, սիրուն գիւղի մը մէջ: Երեքին ալ տեղերը լաւ են, օդաւետ եւ ջուրը առատ: Առաջին երկուքը մանչերու է եւ երրորդը՝ աղջրկանց: Ռուիֆ վերջերս որոշում տուած էր 16 տարեկանէ վեր որբերը արձակելու, ինչ որ բազմաթիւ տղայոց անգործ եւ թափառական մնալու մտավախութիւն կը պատճառեն. կը թուի, թէ իւրաքանչիւր տղու ամսական 10-12 տոլարի ծախը կ'ըլլայ:

Սոյն վեհափառ կաթողիկոսը Պեյրութի մէջ հաստատած է իր բնակութիւնը. շատ ընկճուած է ներկայ անակնկալ դէպքերեն եւ անստոյգ վիճակէն, սակայն համակերպած կ'երեւի տխուր իրականութեան: Մերթ ընդ մերթ կ'այցելէ հայաշատ տեղերը եւ կը հետեւի ազգային միութեան գործունեութեան:

Այդ շրջանի ամբողջ հայութիւնը արժանի է որոշ ուշադրութեան՝ իւր բարոյականը բարձր պահելու եւ ազգային ոգին չկորսնցընելու համար: Շատ մեծ պէտք կայ հայ լեզով գիրքերու ժողովրդեան ցրուելու համար, որ պարապոյ ժամերուն կարդան իրենց լեզուն չմոռնալու եւ ազգային զգացումը վառ պահելու համար: Մասնաւոր կերպով պէտք կայ գաղթականական դպրոցներու մէջ հայերէն դասագրքերու. այդ ուղղութեամբ եղած նպաստը ուղղակի նպատակին կը հասնի:

Ահա հակիրճ տեղեկութիւնները զորս կը ներկայացնեմ ազգային պաշտօնական մարմանյ ուշադրութեան:

Կ. Վ. ՊԱՏՈՒԽԱՍԵԱՆ

ԵՂԵՌՆԻ 100-ԱՄԵԱԿԻ ՍԵՄԻՆ

«Կերպարուեստը զինք է թշնամիին վրայ յարձակելու եւ անկէ պաշտպանուելու համար»:

ՓԱՊԼՕ ՓԻԶԱՍՈ

Պատմութեան ընթացքին ցեղասպանութիւնները իրագործուած են այնպիսի մարդոց ձեռքով, որոնք ո՞չ անձնական հարցեր ունեցած են զոհերուն հետ եւ ո՞չ ալ նոյնիսկ ճանչցած են զանոնք: Այլ, պարզապես հրահանգի տակ եղած են, այնպիսի բռնակալներու, որոնք գազանաբարոյ դաժանութեամբ ծրագրած են կազմակերպած են անմեղներու ոչնչացումը՝ շահադիտական յետին նպատակներով: Ինչպես գրողներն ու այլ տեսակի արուեստագետներ, կերպարուեստագետներն շատեր եւս ի տես այս

տեսակ հակամարդկային արարքներու հակագրած եւ կերտած են մնայուն արժեք ներկայացնող երկեր: Ինչպես՝ Էօժեն Տելաքրուայի թուրքերու կողմէ յոյներու «Կոտորած Ջիոս կողիին մէջ» եւ «Թրքական թնդանօթը», Ֆրանչիսքո Կոյայի «Մայիս 2» եւ «Մայիս 3» գլուխահարութեան տեսարանները, Օկիւսթ Ռոտենի «Կալէյի քաղաքացիները» եւ կամ Փապլօ Փիքասոյի «Կերնիքա»-ն:

Նմանօրինակ յանձնառու ստեղծագործութիւնները, իրենց արուեստի ուժականութեամբ եւ գաղափարական խորքով, ո՞չ միայն կը դատապարտեն անմեղներու «անիմաստ» ոչնչացումն ու առհասարակ ցեղասպանութիւնը, այլեւ իբրեւ գաղափարական



«Ցեղասպանութիւն»,
գործ՝ Կիւտերի

զինք կը պայքարին անիրաւութենէ եւ բռնատիրութենէ ծնունդ առած թշնամիներու դէմ, ինչպես բանաւոր խօսքով եւս կը հաստատէ Փապլօ Փիքասօ:

Ոյն ինչ որ 1915-ին տեղի ունեցաւ հայ ժողովուրդի հետ ահաւոր է եւ անասելիօրն քստմնելի: Յայ ժողովուրդի բնաշնչումը ծրագրուած ձեւով եւ հետեւողականորեն սկսած էր կիորուիլ Մեծ Եղեռնին շատ առաջ: Եւ պատահական չէ, որ Յովհաննես Այվազովսի դեռևս 1895-ի շարդերուն արիթով անդրադարձած է այս ցաւոտ նիւթին ու պատկերած շարք մը կտաւներ,

ինչպես՝ «Տրապիզոնի շարդը», «Յայերը ողջող կը նետեն ծով» (այս գեղանկարը մաս կը կազմէ Պեյրութի Նշան Փալանձեան ճեմարանի հաւաքածոյին), «Թրքական նաւուն պայթիւնը» եւ այլն: Այվազովսի 1895-ի կոտորածներն ետք, Սուլթան Յամիտեն ստացած աղամանդեայ շքանշանները կը կապէ շան վիզին ու պտտցնելէ ետք Օտեսայի հայկական եւ թքական թաղամասերը, իբրեւ բողոք, ժողովուրդի ներկայութեան կը նետէ զանոնք Մեւ ծով եւ ապա ձեռքերը կը լուայ...

1915-ի չարաքաստիկ թուականնեն առաջ, այլ հայ գեղանկարիչներ եւս անդրադարձած են հայկական կոտորածներու թեմային: Ինչպես Վարդգես Սուլեյնեաց, Գեղրգ Բաշին-

շաղեան, Վարդան Մախոխեան եւ այլն:

Իսկ Եղեռնին ճողոպրած բազմաթիւ կերպարուեստագետներ պատկերած են թէ՛ ուղղակիօրէն ջարդերը, թէ՛ բռնագաղթն ու անոնց հետեւանքները, ինչպէս Ետկար Շահին (Փարիզ), Տիգրան Փոլատ (Փարիզ), Մարտիրոս Սարեան (Մոսկովա եւ Երեւան), Երուանդ Տեմիրճեան (Գահիրէ), Սարգիս Խաչատորեան (Քայաստան, Ֆրանսա եւ ապա Միացեալ Նահանգներ), Արշի Կորքի Աղոյեան (Միացեալ Նահանգներ), Ռուբեն Նաբեան (Միացեալ Նահանգներ), Յեսրի Լայըն (Միացեալ Նահանգներ), Ժան Շարժինեան (Պէյրութ), Յովենի Փուշման (Միացեալ Նահանգներ), Աշոտ Զօրեան (Եգիպտոս), Հմայեակ Արծաթպանեան (Թիֆլիս), Մելքոն Ջեպապանեան (Փարիզ), Երուանդ Ջոչար (Թիֆլիս, Փարիզ, Երեւան), Շարլ Աղամեան (Փարիզ), Արշակ Ֆեթվաճեան (Միացեալ Նահանգներ), Օնսիկ Ալետիստեան (Գահիրէ), Ժիրայր Օրագեան (Քոռմ) եւ այլն: Այս կերպարուեստագետներու ստեղծագործութիւնները ունին նաեւ փաստագրական, վաւերագրական նշանակութիւն, իբրև անմիջական տուժողներու եւ ականատեսներու վկայութիւններ:

Յետ Եղեռնին առաջին սերունդը թէեւ փրկուածներէն ու իրենց ծնողներէն իմացան Եղեռնի մասին, սակայն անոնք ուղղակիօրէն Ցեղասպանութեան հետեւանքները կոռոներն են, յատկապէս հոգեբանական առումով: Այս սերունդի տաղանդաւոր կերպարուեստագետները գրեթէ բոլորն ալ անդրադարձած են Եղեռնի թեմային, սակայն անոնցմէ շատեր ամբողջական նկարաշարքեր նուիրած են Ցեղասպանութեան: Ինչպէս՝ Խորէն Տէր Յարութիւնեան, Ժանսէմ, Գառզու, Փոլ Կիրակոսեան, Յովհաննէս Աստրեան, Կիւվտէր, Թաջազ, Լեւոն Թիւթիւնեան, Խորէն Մութաֆեան, Գեղամ Թագեան, Բիւզանդ Գոճամանեան եւ այլն: Ասոնցմէ իւրաքանչիւրը, իր սեփական ոճով եւ ուրոյն յղացքներով ոչ միայն ոգեկոչած է Եղեռնի զոհերուն յիշատակը, տագնապներն ու անասելի տառապանքները, այլեւ՝ գեղարւեստական լեզուով իր կեցուածքը ճշդած ու



«Եղեռնահար սարսափ», գործ՝ Տեղիփ Կոտզեսի

պաշտպանած նաեւ մարդկային տարրական իրաւունքները: Գուցէ գոյութիւն չունի սփիւրքահայ տաղանդաւոր կերպարուեստագետ մը, որ առնուազն անուղղակիօրէն արձանագրած չըլլայ Եղեռնական խժդժութիւններուն եւ կամ հայ տարագիրներու վերականգնման ու գոյատեւման պայքարին: Ինչպէս՝ Շարթ, Չաւէն Խորշեան, Կիւվ, Ջերօ Ալթոյեան, Վարուժան Պողոսեան, Էտուըրտ Ալետիստեան, Ռառվ Յեկ, Միհրան Սեյրալեան, Թորոս Տէր Յակոբեան, Թերճան, Տիգրան Տատրեան, Գրիգոր Նորիկեան, Յարութիւն Պատիկեան:

Յայրէնի կերպարուեստագետներէն շատեր, խորհրդային զգուշաւոր պայմաններու տակ իսկ անդրադարձած են Եղեռնի թեմային, օրինակ Վրտաշէն Յուևանեանի, Յակոբ Յակոբեանի, Գրիգոր Խանճեանի, Չուլում Գրիգորեանի, Արթօ Չաքմաքեանի եւ կամ Վալենթին Պոտպուրովի նման հայրէնասէր եւ արի կեցուածք ունեցող կերպարուեստագետներ, ուղղակիօրէն պատկերած են թէ՛ շարդի տեսարաններ եւ թէ՛ խորհրդանշական երփնագրեր. իսկ ուրիշներու քով Ցեղասպանութեան թեման ի յայտ եկած է, ոչ անպայման մտածուած ձեւով, ինչպէս՝ Մարտիրոս Սարեան, Սեղրակ Ռաշմաճեան, Գեորգ Գրիգորեան (Ճոթթօ), Չուլում Գրիգորեան, Մինաս Ալետիստեան եւ այլն: Յայրէնի կերպարւեստագետներու, յաջորդ սերունդէն ումանք աւելի համարձակ յղացքներ իրագործեցին,



«Տեղասպանութիւն», գործ՝ Սիլվիա Սելսըրի

ինչպէս՝ Արա Շիրազ, Եռլի Պետրոսեան, Ռոպեր Էլիբեկեան, Մկրտիչ Մազմանեան, Վարուժան Վարդանեան, Սեյրան Խաթլամաշեան, Էդ. Խարագեան եւ այլն:

Այսօր համեմատաբար աւելի երիտասարդ կերպարութափետներ, ըլլայ հայրենիքի թէ սփիւքի տարածքին իրենց հակամարդկային յղացըներով աւելի աշխուժ կերպով կը մասնակցին Յայկական դատի պաշտպանութեան, ի մասնաւորի Յեղասպանութեան ճանաչման գործընթացին: Ինչպէս՝ Եռլոզ (Եռլի Գեղրգեան), Զատիկ Զատիկեան, Վահրամ Դալթեան եւ Դաւիթ Երեւանցի:

Ինչպէս կը Նշմարէ ընթերցողը հարկադրաբար անուններու շարան մը գոյացաւ (որուն ցանկը ամբողջական չէ) մեր այս ակնարկին մէջ, որմէ խուսափում չունեինք: Սակայն այս մէկը կը վկայէ, որ ինչքան խոր հետք ձգած է Եղեռնը, մեր կերպարութափետներու վրայ եւ ինչպիսի խորն է ու մեծ մեր ազգային վերջն ու արժանապատութեան վիրաւորանքը:

Յեղ Եղեռնի կերպարութափին յատուկ է նաեւ հայ ժողովուրդի վերածնունդի եւ գոյատեւման թեման, որուն կարելի է առանձին անդրադառնալ:

Թեկուզ իրեւ յետ գրութիւն, հարկաւոր է անդրադառնալ նաեւ երկու Երեւոյթներու: Առաջինը բռնի կրօնափոխ հայերու պարագան է, որոնք տարբեր տեսակի արուեստներով կը նպաստեն Յայկական դատին, յաճախ

յիշեցնելով Յայոց ցեղասպանութիւնը: Անոնց մէջ կան նաեւ կերպարութափետներ, որոնք երբեմն ամբողջական ցուցահանդեսներ կը կազմակերպեն Եւրոպական քաղաքներու մէջ: Մեզի յայտնի ամենանշանաւոր գեղանկարիչը, որ լայն ճանաչում ունի Եւրոպայի տարածքին Տեևիզ (Ծովակ) Ալթընն է, որ Եղեռնի նուիրուած իր նկարաշարքը ցուցադրած է Պերլինի, Վիեննայի, Լուտոնի, Վալանսի, Ժընեվի, Ֆրանքֆորթի եւ այլ քաղաքներու մէջ:

Երկրորդ Երեւոյթը միջազգային կերպարութափետներու անդրադարձն է 1915-ի հայկական կոտորածներուն, ինչպէս՝ Սիլվա Սելսըր (Ալովաքիա), Նաթալի Լապաքի (Լիբանան), Տեթլիֆ Կոթզէն (Գերմանիա), Կիլերմօ Տիտիէկօ (Արժանթին), Ակուսթին Ջասթրօ (Ուրուկուլէյ) եւ այլն: Յատկանշականը այն է, որ այս կերպարութափետները յենուելով իրենց մարդկային սկզբունքներուն եւ կեցուածքներուն վրայ, իրենք է որ իրենց կամքով կ'անդրդառնան Յայկական Եղեռնի թեմային:

Վստահաբար, մեր մէջբերած բոլոր ցանկերն ալ թերի եւ պակասաւոր են, սակայն այս ակնարկը կրնայ հիմք ծառայել նոր ուսումնասիրութիւններու: Տրուած ըլլալով, որ կերպարութափի «գեղարութափական լեզուն» համամարդկային է, համաշխարհային, հարկաւոր է ուժ տալ ու քաջալերել մեր ժամանակակից արուեստափետները, որպէսզի առաւելագոյնս անդրադառնան Յեղասպանութեան վերաբերող հարցերու եւ արուեստի ուժականութեամբ նպաստեն մեր հետապնդած ազգային իրաւունքներու ձեռք բերման ու վերջնական յաղթանակին:

Եղեռնի հարիւրամեակին սեմին կը գտնուինք ու մեր ազգային այս գերինսիրը աւելի հրատապ ու կենսական կը դառնայ: Յիմակուընէ հարկաւոր է նախապատրաստուիլ 100-ամեակի առիթով կերպարութափի որակեալ ցուցահանդեսներ կազմակերպելու կենսական գործին:

ՄՈՎՍԵՍ ԾԻՐԱՆԻ

ՉՄԻՌՆԻԱՅԻ ՏԱՐԱԳԻՐՆԵՐԻ ՉԱՆԳՈՒԾԱՅԻ ՎԵՐԱԲԵՆԿԵՑՈՒՄ ՅՈՒՆԱՏԱՆՈՒՄ

Սոյն յօդուածը վերաբերում է 1922 թ. աշնանը Չմիւռնիայի տարագիրների վերաբնակեցմանը Յունաստանում: Յօդուածի նպատակն է թեմային առնչուող սկզբնաղթիւնների եւ գրականութեան հենքի վրայ ներկայացնել եւ վերլուծել Չմիւռնիայի տարագիրների՝ հայերի եւ յոյների դրութիւնը Յունաստանում 1922 թ. յետոյ ընկած ժամանակահատուածում: Ուսումնասիրելով տարագիրների զանգուածային վերաբնակեցման պատճառներն ու հետեւանքները՝ միշարք հարցադրումներ ենք առաջադրել. ի՞նչպէս հնարաւոր դարձաւ Չմիւռնիայի կանխամտածուած ոճրագործութեան հետեւանքով տարագիր դարձած քրիստոնեաների՝ հայերի եւ յոյների զանգուածային վերաբնակեցումը, ինչպիսի՞ն եր Յունաստանի արձագանգը՝ որպէս «հիւրընկալող պետութեան», կա՞՞ր արդեօք հասարակութեան մէջ տարագիրների ներգրաւման յստակ եւ համակարգուած ծրագիր եւ այլն:

Արեւմտեան պատմաբան Երիկ Հոբսբաումի հաւաստմամբ Առաջին աշխարհամարտից ի վեր «աշխարհն իրեն սովորեցրեց» աստղաբաշխական չափերով արտաքսումների եւ սպանութիւնների. այն աստիճան ան-



ծանօթ երեւոյթի, որ նոր բառեր յօրինելու անհրաժեշտութիւն առաջացաւ, օրինակ, Ցեղասպանութիւն, հայրենազոր կ (ապատրիդ):

Միամիտ է կարծել, որ Չմիւռնիայի քրիստոնեայ բնակչութեան «ազգային մաքրումը» պարզապէս «աղետ» եր, ինչպէս ընդունուած է

բնորոշել. այս թուրքական ցեղասպան քաղաքականութեան «բարեյաջող աւարտու» եր: Այս առումով միանգամայն իրաւացի է միշագայնագետ Յ. Յակոբեանը, երբ նշում է, որ Մուստաֆա Քեմալ Կթաթուրքը քրիստոնեայ ազգային փոքրամասնութիւններին Թուրքիայից արտաքսելու քաղաքականութիւնն արդարացնելու միջոց ծառայեցրեց Թուրքիան ոչ միայն էթնիկական իմաստով, այլև «պատմականորեն» թուրքացնելը⁽²⁾:

Մերձաւոր Արեւելքում Միացեալ Նահանգների հիւպատոս ճորճ Յորթոնը՝ որպէս Չմիւռնիայում կատարուած ոճրագործութեան ականատես, վկայում է, որ թուրքերի ողջ արիւնոտ պատմութեան ընթացքում կատարուած ոչ մի գործողութիւն աւելի դաժան չի եղել, որքան Չմիւռնիայի 1922 թ. կործանումը. այն մարդկային տառապանքների համար ընտրուած վատագոյն ծեւերի կիրառում եր՝ անպաշտպան ու անզեն մարդկանց

Նկատմամբ⁽³⁾: Զ. Հորթոնն այն որակել է որպես սոսկալի ողբերգութեան «Սատանայական աւարտ»⁽⁴⁾, որի հետեւանքով քրիստոնեայ Վերապրողները հարկադրուած էին հեռանալ Չմիւնիայից՝ ապահովելով Յունաստանի մարդասիրութեանն ու մեծահոգութեանը:

Հետաքրքիր են յատկապես դեսպանների, հիւապատոսների, միսիոներների վկայութիւնները, որոնք հաւասար տեղեկութիւններ են հաղորդում կատարուածի վերաբերեալ: Այսպես, նախկին ամերիկեան դեսպան Յենի Մորկենթաուն գրում է. «... Քեմալի աչքի առաջ թուրքական բանակն իրականացրեց Չմիւնիայի յունական թաղամասի յոյն տղամարդկանց, կանանց եւ երեխաների կանոնաւոր սպասութիւնները, տների եւ եկեղենների կազմակերպուած կողոպուտը, առանց խտրութեան կանանց եւ երիտասարդ աղջիկների ազատօրեն բանաբարումը, 16-50 տարեկան աշխատաւոր տղամարդկանց օտարումը, ապա երկրի խորքերը քշելը, ուր գրեթե բոլորը մեռնում էին հարկադիր աշխատանքի հետեւանքով: ... Այս բոլոր բանութիւնները Փոքր Ասիայից յոյներին ամբողջութեամբ քշելու թուրքերի նպատակադրուածութեան ակնյայտ արտայայտութիւնն է: Քեմալի հսկողութեան ներքոյ թուրք ազգայնականների հետապնդած ծրագրով Փոքր Ասիան ամբողջութեամբ «թուրքացուեց»: Յոյն բնակչութեանը քշելու կամ արտաքսելու այս ծրագիրը պարզ էր. Չմիւնիայի սարսափների հետեւանքով Փոքր Ասիայի նաւահանգիստներից հազարաւոր յոյն ընտանիքներ անմիշապես հեռացան...»⁽⁵⁾:

Այս առևտութեամբ դանիացի միսիոներուին Ենսինէ Օրգը հաղորդում է. «Քրիստոնեաների հալածանքները հազիւ թէ իրենց հաւասարն ունենային պատմութեան մէջ, որոնք աւարտուեցին Չմիւնիայի տիրահռչակ աղետով: Աղօտ գաղա-

փար կազմելու համար, թէ ինչ տեղի ունեցաւ, բաւական է ընդամենը յիշատակել, որ քաղաքը կրակի մատնուեց... ժողովրդի միակ ապաւենը նաւահանգիստն էր՝ ծածկուած մարդկանց դիակներով եւ արիւնով ներկուած շրով»⁽⁶⁾:

Սմանօրինակ վկայութիւնները բաւարար են մարդատեացութեան աներեւակայելի բռնարարքների մասին պատկերացում կազմելու համար: Շատ ականատեսներ, իրականում, ինարաւորութիւն չունեին կասեցնելու զազրելի գործողութիւնները եւ ակամայից վերածում էին «հանդիսատեսի», ովքեր իրաւունք չունեին միջամտել ողբերգութեան ընթացքին: Մի բան սակայն պարզ է, որ անզօրութիւնն ունակ է խոր հետք թողնելու նրանց գիտակցութեան մէջ: Այս միտքը հաստատում է Օրգի հետեւեալ գրառումը. «... Մեր պատըշգամբից տեսնում էինք հազարաւոր մարդկանց, ովքեր օր ու գիշեր անցկացնում էին բաց երկնքի տակ՝ սպասելով նաւերի, շուրջ 80.000 մարդ: Նրանք մեր օգնութեան կարիքն ունեին, մինչդեռ մենք ոչինչ անել չկարողացնք... Բոլոր ինարաւոր նաւակներն օգտագործուեցին՝ տեղափոխելու այն յոյներին ու հայերին, ովքեր երջանիկ պատահականութեամբ փրկուել էին... Այս խառնաշփոթութեան մէջ անմոռանալի պատկերների ականատեսը դարձանք, թէ ինչպես էին շատերն իրենց կառամատոյցից նետում, որպեսզի կամ վերջ տային իրենց տառապանքին կամ լողալով հասնեին ափ, որը քիչ հաւասական էր յաջողութեան հասնելու համար»⁽⁷⁾:

Այսուամենային, Չմիւնիայի բնակչութեան մի ստուար զանգուած վերապրեց՝ սեփական կեանքը համարելով մեղք ու դաւաճանութիւն սպանուածների նկատմամբ: 1922 թ. աշնանը աւելի քան մէկ միլիոն յոյն Փոքր Ասիայից ու Արեւելեան թրակիայից Յունաստան գաղթեց: Շուրջ հինգ միլիոն⁽⁸⁾ բնակչութիւն



ունեցող երկրում տարագիրների թիւն, ընդհանուր առմամբ, հասել էր մեկ ու կես միլիոնի: Ամենատարբեր աղբիւրներում տարագիր հայերի թիւն ամբողջ Յունաստանում տատանում էր 90.000⁽⁹⁾ մինչեւ 200.000⁽¹⁰⁾, ովքեր հաստատուել եին Արենքում, Լիբազմայում, Թորինայում, Ալեքսանդրուպոլսում, Սալոնիքում եւ այլուր⁽¹¹⁾:

Յ. Մորկենթաուս յիշատակում է. «Երկու շաբաթուայ ընթացքում 750.000 մարդ նախրի նման թափոււց Սալոնիքի եւ Արենքի նաւահանգիստներ եւ Եգեեան ծովի յունական կղզիներ՝ Կրտսէ, Միտիլինի, Ջիոս եւ Եվրեա: Յունաստան ժամանելիս այս մարդկանց դրութիւնն անսկարագրելիօնն խղճալի էր... Նրանց ուղեւորութիւնն անցնում էր իրար յաջորդող այրող արեւի եւ աշնանային սառը անձուելի տակ: Ես ինքս տեսել եմ մի նաւ, որ սահմանուած լինելով երկու հազար մարդու համար, բեռնաւորուած էր եօթ հազար հոգով: Այս եւ այլ դեպքերում ջուր կամ սնունդ չկար... Տարածում էր տիֆն ու ծաղիկը, վիստում՝ ոչիլզ: Երեխաներ եին ծնում տախտակամածի վրայ: Տղամարդիկ եւ կանայք խելագարում էին: Շատերը ծովի էին նետում՝ վերջ դնելու իրենց դժբախտութեանը: Ողջ մնացածներն էլ ցամաք հասան կեղտոտ, տեսնից տանջահար եղած, անապաստան, առանց վերմակի կամ նոյնիսկ տաք հագուստի, սննդի եւ գումարի: Այս սարսափելի տանջանքներից բացի տարագիրներն ստիպւած էին ամեն տեսակ դժբախտութիւն տանել՝ ամուսինների, կանաց եւ երեխաների կորուստ մահուան, մոլորութեան եւ տարատեսակ հիւանդութիւնների պատճառով»⁽¹²⁾: Նա նշում է, որ այդ ծերերը, երեխաներն ու կանայք ընդամենը մի քանի շաբաթ առաջ իրենց երջանիկ տներում ապրում էին խաղաղութեամբ⁽¹³⁾:

1923 թ. սեպտեմբերի 29-ին հիմնուած Փախստականների հարցերի կարգաւորման յանձնաժողովի նախագահը Յ. Մորկենթաուս էր: Նա մեծ պատասխանատուութիւն էր զգում տարագիրների նկատմամբ եւ բացառում որեւէ ծախողում. «... իմ ծախողումը կը նշանակի աւելի խորը տառապանք պատճռել այս մարդկանց... Նրանց օգնութիւն տրա-

մադրելու ճանապարհին ոչինչ չի կարող արգելք հանդիսանալ... Նրանք, ովքեր կորցրել են իրենց յոյսը, կ'այրեմ իմ հաւատով, որ կարողանան փրկութել: Եթե Յունաստանում գումար չհայթայթենք, ապա կ'անենք դա Եւրոպայում, եթե ոչ Եւրոպայում, ապա՝ հաստատ Ամերիկայում... »⁽¹⁴⁾:

Տարագիրների բնակեցումը Յունաստանում թեեւ դժուարութեամբ, սակայն իրականացաւ: Տեղի յոյսերը գրկաբաց ընդունեցին նրանց՝ որպէս ազգային ընտանիքի լիիրաւ անդամների: Նրանք ստացան քաղաքացու բոլոր իրաւունքներն առանց որեւէ հստրութեան⁽¹⁵⁾: Յասարակութեան մեջ տարագիրների ներգրաւման ծրագիրը միանգամայն յստակ էր:

Յոյների՝ յատկապէս հայ տարագիրների նկատմամբ բարեացակամ վերաբերմունքի մասին է Վահրամ Փափազեանի⁽¹⁶⁾ հետեւեալ յիշատակութիւնը. «Յոյն կառավարութեան եւ ժողովուրդին Յայերուս հանդէա ցոյց տուած ասպնջականութիւնը եւ սերը գրիչով գրեթէ կարելի չէ նկարագրել: Յայերուն հետ միաժամանակ, Փոքր Ղսիային, հարիւր հազարաւոր Յոյներ եկան եւ Յունաստանի զանազան շրջաններուն մեջ տեղաւորութեան:

Բնիկ ժողովուրդը, սակայն աւելի տաք վերաբերմունք մը ցոյց տուաւ հայերուս հանդէա, քան թէ իր հարազատ ներգաղթող հայրենակիցներուն... Պետութիւնը իրաքանչիւր գաղթականի, անխտիր, դրամական կանոնաւոր յատկացումներ ըրաւ: Բաշխումի ընթացքին, վճարումը կ'ըլլար նախ՝ հայերուս եւ յետոյ՝ յոյն գաղթականներուն... Յոյն բժիշկներ գրեթէ ծրի կը դարմանեին մեր հիւանդները եւ խանութպանները ապաշիկ ուտեստեղէն, ապրանք կու տային իրենց բոլորովին անծանօթ հայ գաղթականին: Երբ գործաւորի պետք կար, նախ հայուն գործ կու տային շատ մը շրջաններու մեջ»⁽¹⁷⁾:

Յայտնի է, օրինակ, որ Սալոնիքի բաց երկնքի տակ ապրող մարդկանց համար որպէս ժամանակաւոր ապաստան ծառայեցին դպրոցները, եկեղեցիները, թատրոնները, բանակային ճամբարները եւ պահեստները⁽¹⁸⁾:

Այս առնչութեամբ բաւականին հետաքըրքի են Ազգերի լիկայում փախստականների

հարցով եւ ռազմագերիների հայրենադարձութեան գծով գերազոյն կոմիսար Ֆրիտինֆ Նաևսենի տպաւորութիւնները. «Ես առաջ երբեք չեմ իմացել, թէ ինչ է Նշանակում տեսնել մի ամբողջ ժողովուրդ ոտքի վրայ, դա իսկական «Volkswanderung» (ժողովուրդների գաղթ) էր ինչպես իին ժամանակներում: Մենք բարձրացանք մի բլիր գագաթը: Ես կարծեցի, թէ տեսնում եմ մի ամբողջ քաղաք իմ դիմաց իր հազարաւոր լոյսերով. դա նրանց ճամբարներն եին սփռուած դաշտով մեկ... Այստեղ նրանք քում եին գետնին՝ առանց որեւէ ծածկի... Նրանք չգիտեին, թէ ուր են գնում եւ ինչ կը գտնեն՝ օթեւան, թէ՞ թշուառութիւն»⁽¹⁹⁾:

Անկարելի է թերագնահատել տարագիրների նկատմամբ Յունաստանի պատրաստակամ եւ բարեհոգի Վերաբերմունքը: Յ. Մորկենթաուն գրում է. «...Ենթադրենք քանվեց միլիոն տղամարդ, կանայք եւ երեխաներ յանկարծակի եւ անսպասելիօրեն շոգենաւով ժամանել են Պոսթընի, Նիւ Եորքի, Ֆիլատելֆիայի եւ Բալթիմորի նաւահանգիստներ: Ենթադրենք աւելին, որ այս հսկայական բազմութիւնը՝ կեղտոտ եւ քայլայուած տիֆից ու ծաղիկից, գրեթէ սովամահ է եղել, մնացել առանց դրամի կամ որեւէ ունեցուածքի: Պատկերացնենք այս քանվեց միլիոն մարդկային արարածներին (գլխաւորապես կանայք, երեխաներ, ծերեր) ամբողջովին կախեալ վիճակում Ամերիկեան ողորմածութիւնից անյապաղ սննդի, ապաստանի եւ բժշկական օգնութեան համար: Նրանք պէտք է լիովին ապաւինեն Ամերիկային, հնարաւորութիւն ստանան տուն եւ ապրուստի միջոց հայթայթելու մինչեւ իրենց կեանքի վերջ: Այժմ պատկերացնենք, որ Ամերիկան, ընդունելով մարտահրաւերը իր մարդասիրութեանն ու խելամտութեանը, կերակրում է այս սովամահ եղած մարդկանց, ապաստան տալիս անտուներին, բժշկում հիւանդներին, աշխատանքով ապահովում նրանցից քիչ ընդունակներին... Այսպիսով, Վերականգնում է քանվեց միլիոն կործանուած մարդկային կեանք, եւ այս ամենն իրագործում է վեց տարուայ ընթացքում նրանց՝ երկրում հաստատուելու պահից ի վեր: Աշխարհն արդեօք չէ՞ր թնդայ Ամերիկեան մարդասիրութեան, Ամերիկեան առատաձեռնութեան, Ամերիկ-

եան շանքերի եւ հնարամտութեան գովասանքներով: Վերջին վեց տարիների ընթացքում Յունաստանը, ի հարկէ, ոչ բացարձակ, բայց հենց այսպիսի ձեռքբերում արձանագրեց, իսկ աշխարհը բացարձակապես ոչինչ զգիտի այս ամենի մասին»⁽²⁰⁾:

Աշխարհը, բնականաբար, ականշալուր էր կատարուած ցեղասպանութիւնների շարքին, դրանց հետեւանքով առաջացած աշխարհասփիւթ տարագիրների կենսակերպին: Յետեւաբար, տեղեակ էր, որ տարագիրներին ապաստան տուած պետութիւնները, այդ թում՝ Յունաստանը՝ որպես «աստղաբաշխական թուերով տարագիրների երկիր», ամենայն պատասխանատուութեամբ նրանց իր յարկի տակ էր պահում եւ կերակրում: Սակայն ինչո՞ւ էր հենց այդ նոյն «արդարադատ» աշխարհն այդքան զուսպ իր գնահատականում: Չե՞ որ Յունաստանի կառավարութիւնը մեծ շանքեր գործադրեց տարագիրներին երկրով մեկ տեղաբաշխեու համար⁽²¹⁾:

Այսուամենայնիւ, միշագգային հանրութեան անտարբերութիւնը չխանգարեց, որ Զմիւռնիայի տարագիրները բնակութիւն հաստատեին Աթենքում եւ նրա մերձակայ քաղաքներում, Կրետեում եւ Յունաստանի արեւելեան կղզիներում⁽²²⁾: Այսպես, Սալոնիքում հաստատուել էր 100.000 տարագիր, Թրակիայում եւ կղզիներում՝ մօտ 120.000, Սիթիլինիում՝ 130.000, Ջիոս կղզում՝ 60.000, Սամոսում՝ 15.000, Փիրեայում՝ 50.000, Կրետ կղզում՝ 27.500: Այս տուեալներով 1922 թ. նոյեմբերի 1-ին սկսուեց Լոզանի քոնֆերանսը, մինչդեռ Կոստանդնուպոլսում եւ նրա արևարձաններում, ինչպես նաեւ Իմբրոսում եւ Տենեդոսում մօտ 300.000 յոյն կար, իսկ Փոքր Ասիայում՝ 400.000: Նրանցից շատերը տեղահանուեցին համաձայն բնակչութեան փոխանակման թուրք-յունական պայմանագրի⁽²³⁾:

Յունաստանի արտաքին գործերի նախարարութեան ներկայացրած տուեալների համաձայն հայ տարագիրների թիւը հասնում էր 120 հազարի, հայ ազգային մարմինները յիշատակում են հարիւր հազարը: Այլ աղբիւների համաձայն՝ մինչեւ երկու հարիւր հազար⁽²⁴⁾: Մինչեւ 1923 թ. Յունաստանն ընդունեց 1.060.000 տարագիր, ներառեալ արդեն եկած 90,000-ը⁽²⁵⁾:

Պատկերացում կազմելու համար,թէ ինչպիսի պայմաններում էին ապրում տարագիրները, բաւական է յիշատակել հետեւեալը. «Վթենքի դպրոցներից մէկում, երեք ընդարձակ սենեակներում օթեւան է գտել 22 ընտանիք, այսինքն՝ 91 մարդ, այդ թւում՝ 17 տղամարդ, որոնցից 7-ը բաւականին ծեր էին իրենց ընտանիքներին որեւէ օգնութիւն ցուցաբերելու համար: Մասցածները 60 - 70 տարեկան կանայք էին, ովքեր հոգ էին տանում երեք, նոյնիսկ հինգ երեխայի մասին... »⁽²⁶⁾:

Միջազգային մարդասիրական կազմակերպութիւնների եւ յատկապէս միսիոներների մատուցած ծառայութիւնները տարագիրների շրջանում բազմազան էին եւ տարաբնոյթ: Այսպէս, օրինակ, «ապրելու մարտահրաւերն» ընդունել տալու եւ կեանքի իմաստը վերստին գտնելու շարունակական յորդորներն իրենց առաքելութեան մասն էին կազմում: «Կեանքը մէջքին ու մտքին ծանրացած» վերապրոյի մէջ հաւատ սերմանելու փորձն անզամ դիմադրութիւն էր առաջացնում: Այս իրողութեան շոււետ միսիոներուին Ա. Ենիանսուի բացատրութիւնը հետեւեալն է. «... Մարդիկ ուժ չունեն դիմադրելու հիւանդութիւններին»⁽²⁷⁾: Միեւնոյն ժամանակ նրանք ամեն մի հիւանդի կեանքը փրկելու համար ծայրայեղ միջոցների էին դիմում: Ենիանսուն այդ մասին գրում է. «... Երբեմն դա ինձ յաջողութ էր, Երբեմն՝ ոչ: Ես պէտք է յամառութիւն ցուցաբերէի: Երբեմն պատահում էր, որ ծանր հիւանդ մարդիկ, որոնց առողջանալու միակ յոյսը վիրահատութիւնն էր, դիմում էին ինձ, բայց ինձ չէր յաջողութ նրանց հիւանդանոցում տեղաւորել: Որոշ հիւանդների ես կարող էի ինամել նաեւ տանը, այդ դեպքում պէտք է շանքեր ներդնէի, որ հիւանդների համար աւելի շատ ուտելիք հայթայթէի»⁽²⁸⁾: Սալոնիքում տարագիր հայերի շրջանում միսիոնարուիների մարդասիրական ծրագրերը հա-



լասարապէս վերաբերում էին ինչպէս առողջական խնդիրների վերականգնմանը, նպաստաւոր պայմաններում ապրելու, այնպէս էլ հոգեւոր ու անձնական աճի ապահովմանը: Այդ է վկայում Սալոնիքից ոչ հեռու գտնուող Խարիլաոս և Խերմանքի գիւղերում նրանց հիմնած դպրոցների գոյութիւնը: Խերմանքիոյի դպրոցում, օրինակ, սովորում էր 103 երեխայ, իսկ 1923 թ. մայիսի 1-ին Խարիլաոսում 95 աղջիկներից բաղկացած վարժարան է հիմնը ւում, որի թիւը հետագայում մեծանում է⁽²⁹⁾: 1928 թ. հոկտեմբերի 15-ին նոյն հաստատութիւնը Խարիլաոսում հայկական մանկապարտեզ եւ նախակրթարան է բացում հայ ազգային իշխանութեան անունով, ուր 40-45 երկսեռ փոքրիկներ անվճար կրթութիւն են ստանում: Դպրոցը հոգում է նրանց հագուստի, գրենական պիտոյքների եւ կեսօրուայ ճաշի մասին⁽³⁰⁾:

Այսպիսով, մի այնպիսի ժամանակահատուածում, երբ «մարդու համար մարդու ընացնումն անդիմադրելի էր, իսկ յապահելն աններելի» «Զմիւնիայի տարագիրների բանակը» ապաստան գտաւ մի պետութեան տարածքում, ուր արդեն այլ տարագիրներ կային: Պետութիւն, որը թեւ հիւծուած էր տնտեսապէս ու ֆինանսապէս, այնուամենայնիւ, գրկաբաց ընդունեց նրանց. նախ ապաստան տունց, ապա հոգ տարաւ նրանց մասին:

Վկանատես դառնալով ողբերգական մահւան սարսաւեցուցիչ տեսարանների՝ խեղուել եր նրանց հոգեբանութիւնը, մինչդեռ հոգեցընցում ապրած տարագիրները պարտաւոր էին ընդունել «ապրելու մարտահրաւերը»:

Նրանց վերաբնակեցումը Յունաստանում տեղի ունեցաւ հարկադրուած տարագրութեան հետեւանքով: Տարագիր լինելը բոլոր ժամանակներում էլ բաւականին բարդ է եղել: Տարագիր ներաշխարհում իսկական քառու է

տիրում: Դա լաւ են պատկերացրել հին յոյները, երբ յանցագործի համար առաւել սոսկալի պատիժ սահմանել են տարագրութիւնը՝ գերադասելով «սովորական մահապատճից»:

Յունաստանին՝ որպէս հիւրընկալ պետութեան, միշագգային ամենատարբեր կազմակերպութիւններին, անհատներին եւ հասարակ ժողովրդին միաւորում եր մարդասիրութիւնը: Նրանց գործադրած ջանքերը մեծապէս նպաստեցին, որ տարագիրները Վերամաստաւորեն իրենց կեանքն ու վերստին գտնեն ապագայի հանդեպ կորցրած հաւատը: Այդ փորձը կարելի է յաջողուած համարել. դա է վկայում տարագիրների սերունդների խաղաղ ու ստեղծագործ գոյութիւնը:

ԹԵՇՄԻՆԵ ՄԱՐՏՈՅԵԱՆ

Հայկական ցեղասպանութեան
թանգարան-ինստիտուտ

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Hobsbawm E., Age of Extremes, The Short Twentieth Century 1914-1991, London, 1995, p. 50.

Հոբսբաումն այս երեւոյթների առաջին ժամանակակից փորձ է համարում մեկ ու կես միլիոն հայերի զանգուածային ոչնչացումն Օսմանեան կայսրութիւնում:

2. Յակոբեան Յ., Հայրենիք վերադառնալու գաղափարը եւ ժամանակակից միշագգային իրաւունքը, Ե., 2000, էջ 114:

3. Horton G., The Blight of Asia, N.Y., 1926, p. 112.

4. Նոյն տեղում:

5. Morgenthau H., I was sent to Athens, USA, 1929, p. 47.

6. Jemsine Oerts Peters, Tests and Triumphs of Armenians in Turkey and Macedonia, USA, 1926, p. 48.

7. Նոյն տեղում, էջ 48-51:

8. Refugee Greece, Athens, 1992, p. 33.

9. Ազատեան Լ., Հայ որբեր մեծ եղեռնի, Լու Անձելը, 1995, էջ 103:

10. Աբրահամյան Ա., Համառոտ ուրուագիծ հայ գաղթավայրերի պատմութեան, հ. Բ., Ե., 1967, էջ 105:

11. Նոյն տեղում:

12. Morgenthau H., I was sent to Athens, p. 47- 49.

13. Նոյն տեղում, էջ 101-102:

14. Նոյն տեղում, էջ 102:

15. Morgenthau H., I was sent to Athens, p. 104.

16. Սթոքհոլմի հինգերորդ միշագգային օլիմփիական խաղերի մասնակից Կահրամ Փափագեանն իր կնոջ եւ որդու հետ 1922 թ. օգոստոսի վերջին Զաւեն Պատրիարքի հրահանգով Կ.Պոլսից մեկնում է Պիրեա, ապա՝ Կրտսե:

17. Փափագեան Վ., Սէր, սէր, սէր, Պէյրութ, 1962, էջ 135-136:

18. Refugee Greece, p. 33.

19. Յակոբեան Յ., Աշխատանք, էջ 261:

20. Morgenthau H., I was sent to Athens, p. 2-3.

21. Ladas S., The Exchange of Minorities, Bulgaria, Greece and Turkey, New York, 1932, p. 621.

22. Աբրահամյան Ա. Աշխատանք, էջ 104:

23. 1923թ. յունուարի 30-ին ստորագրուեց «Թուրքիայի եւ Յունաստանի բնակչութեան փոխանակման» պայմանագիրը: Յունաստանի վարչապետ Էլեֆթերիոս Վենիզելոսն իր նախընտրական ելոյթում արտայատում է հետեւեալ կարծիքը. «... Խօսքը բոլորովին բնակչութեան փոխանակման մասին չէ: Թուրքիան այն պահին, երբ ստորագրուեց Պայմանագիրը, արդեն իր տարածքից վենդել էր մօտաւորապէս մեկ միլիոն փախստականներ... Հետեւանքը կը լիներ այն, որ Փոքր Ասիայի սարերում մօտաւորապէս 200.000 հայրենակիցներ կը բնաշնծուեն, եւ բնակչութիւնը, որը Յունաստան կը գար, շատ աւելին կը լիներ: Ո՞ր պիտի գևային մարդիկ այդ պահին, եթէ չկարողանայի հեռացնել Յունաստանից մուսուլմաններին: Քանի որ Պայմանագիրը ըստ Եութեան պիտի հետեւեալ անուանումը կուեր՝ «Թուրքիայից յունական տարրի վտարման պայմանագիր», որով Թուրքիան ստանձնում է պարտականութիւնը յունական տարածքից վերցնել [թուրք] հայրենակիցներին, Յունաստանի հպատակներին»: Սա է, ըստ Եութեան, Փոխանակման պայմանագրի իմաստը: Չեին կարող առաջ տանել պայմանագրի իսկական անուանումը, որովհետ- Թուրքիան չէր ընդունի եւ որոշեցինք անուանել այն փոխանակման պայմանագիր (...), Ակցոլու, Յ., Անհծուած առիթի բնաշնծումը, Ե., 2007, էջ 110-111:

24. Աբրահամյան Ա. Աշխատանք, էջ 105:

25. Edward Hale Bierstadt, The Great Betrayal, A Survey of the Near East Problem, N. Y., 1924, p. 52-54.

26. Morgenthau H., I was sent to Athens, p. 64.

27. Եռիհանսն Ա., Արսորեալ ժողովուրո, մեկ տարի հայոց պատմութիւնից, Ե., 2008, էջ 38:

28. Եռիհանսն Ա., Աշխատանք, էջ 38:

29. Ազատեան Լ., Աշխատանք, էջ 105:

30. Նոյն տեղում, էջ 202:

ՖՐԻՏԻԾ ՆԱՆՍԵՆԻ ԳՈՐԾՈՒԵՈՒԹԻՒՆԸ

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՍՆԵՐԻՆ

ԽՈՐՃՐՈՎԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁԵԼՈՒ ՈՒՂՈՒԹԵԱՄԲ

Առաջին համաշխարհային պատերազմի հետեւանքով շուրջ 3,000,000 մարդ գաղթական էր դարձել⁽¹⁾: 1921 թ. յունիսի 27-ին Ազգերի Լիկայի Խորհուրդը ստեղծեց փախստականների գծով գերագոյն յանձնաժողով, որի ղեկավար հաստատուեց Ֆրիտիֆ Նանսենը⁽²⁾:

Գաղթականների թռում էին նաև հարիւր հազարաւոր հայեր, որոնք Օսմանեան կայսրութեան կողմից իրականացրուած Յայոց ցեղասպանութեան արդիւրում զբկուել էին հայրենի հողում ապրելու հնարաւորութիւնից: Նրանցից շատերի համար ապաստանումն Արեւելեան Յայաստանում, Յայաստանի Յանրապետութիւնում, իսկ հետագայում Խորհրդային Յայաստանում դարձել էր փրկութեան միակ հնարաւորութիւնը: Արդեն 1916 թ. գարնանն Արեւմտեան Յայաստանից Արեւելեան Յայաստան էին գաղթել շուրջ 240,000 հայեր, որոնցից շուրջ 105,000-ը կենտրոնացել էր Երեւանի նահանգում:

Յայ գաղթականների թեման, ի թիւս ռուս, յոյն, պուլկարացի եւ այլ գաղթականների հարցերի, գտնուում էր նաև Ազգերի լիկայի օրակարգում: Առաջին իսկ նստաշրջանում (1920 թ.) յայտարարուեց հայ գաղթականների խնդրով զբաղուելու անհրաժշտութեան մասին: Երկրորդ եւ երրորդ նստաշրջանների ժամանակ (համապատասխանաբար՝ 1921 եւ 1922 թթ.) Ազգերի լիկայում դարձեալ միաձայն որոշում կայացուեց՝ Թուրքիայի հետ



բանակցութիւններում պնդել հայերի համար «ազգային օճախի» ստեղծման վրայ: Սակայն այս ամենին հետեւած Լոզանի կոնֆերանսում հայերի համար նկատելի արդիւրներ չգրանցուեցին: Յայ գաղթականների խնդիրը դարձեալ տեղափոխուեց Ազգերի լիկա⁽³⁾: Փոխարեւը Լոզանի կոնֆերանսում խորհրդային պատուիրակութեան ղեկավար, արտգործողներ Գ. Չիչերինը յայտարեց, որ խորհրդային իշխանութիւնները պատրաստ են ընդունելու զգալի թռուվ հայ գաղթականների⁽⁴⁾: 1923 թ. յունուարի 27-ին խորհրդային միացեալ պատուիրակութիւնը համապատասխան յուշագիր ուղղեց Լոզանի կոնֆերանսի նախագահութեանը⁽⁵⁾: Յայ ազգային պատուիրակութեան ղեկավար Նորատունկեանը 1923 թ. մի նամակ է ուղղում ԽՍՀՄ արտգործողների տեղակալ Լ. Կարախանին, որտեղ յայտնում է, որ մօտ 150,000 գաղթական հայեր ցանկանում են տեղափոխուել հայրենիք եւ որ արտասահմանում ընթանում է անհրաժշտ միջոցների հաւաքումը: ԽՍՀՄ Աշխատանքի եւ պաշտպանութեան խորհրդին կից արդիւնաբերական ու հողագործական ներգաղթի յանձնաժողովի նախագահ Վ. Սմոլեանինովը 1923 թ. սեպտեմբերի 4-ին պատասխան նամակ է յղում Գ. Նորատունկեանին, որտեղ նշում է, որ խորհրդային պետութիւնը պատրաստ է անյապաղ հող տրամադրել 50,000 հայ գաղթականներին⁽⁶⁾:



Ազգերի լիկայում հայ գաղթականների հայրենադարձութեան հարցը քիչ թէ շատ հետեւողական կերպով սկսուեց քննարկուել 1923 թուականից: Այդ տարուայ աշնան Ազգերի լիկայի խորհուրդը որոշում կայացրեց ուսումնասիրել շուրջ 50,000 հայ գաղթականներին Անդրկովկասում, մասնաւորապես Խորհրդային Հայաստանում բնակեցնելու հարցը⁽⁷⁾: Այդ ծրագրի իրականացումը բաւական իրատեսական էր թում՝ հաշուի առնելով այն փաստը, որ հարցում ներգրաւուած երեք կողմերն էլ՝ Ազգերի լիկան, խորհրդային կառավարութիւնը եւ գաղթական հայերի մի զգալի մասը, գոնե յայտարարութիւնների մակարդակով պատրաստ էին այն կեանքի կոչել: Սակայն սկսուեց քննարկումների հերթական փուլը:

Հայ գաղթականներին Խորհրդային Հայաստան տեղափոխելու հնարաւորութեանը մօտիկից ծանօթանալու համար 1924 օգոստոսին Հայաստան ժամանեց Նաևսեի ներկայացուցիչ ճոն Գորվինը⁽⁸⁾:

1924 թ. սեպտեմբերի 25-ին Ազգերի լիկայի Ասամպլեան մի բանաձեւ ընդունեց, որով իրաւիրում էր Աշխատանքի միջազգային կազմակերպութեանը Ֆրիտիոֆ Նաևսեի հետ համատեղ ուսումնասիրել բաւականաչափ թուով հայ գաղթականներին Կովկասում եւ այլ վայրերում վերաբնակեցնելու հնարաւորութիւնը: Այդ նպատակների համար 1925 թ. գաղթականների հարցերին ուղղուած պիտճեն աւելացուեց 50,000 ֆրան-քով: Ընդ որում նշտում էր, որ սոյն բանաձեւն ընդունուել էր՝ ի նկատի ունենալով

մինչ այդ եղած առաջարկները՝ գաղթական հայերին Կովկասում եւ այլուր վերաբնակեցնելու վերաբերեալ⁽⁹⁾: Բացի այդ Ասամպլեան յայտարարում էր, որ քանի դեռ չեր հիմնուել Հայկական ազգային օճախը (Armenian National Home), գաղթականներին պետք էր տրամադրել բոլոր հնարաւոր միջոցները՝ այլ երկրներում իրենց տեղաւորման համար՝ իրենց ազգային գոյութիւնը պահպանելու նպատակով⁽¹⁰⁾: Հարկ է նշել, որ ի սկզբանե Նաևսենը հրաժարում է ստանձնել այս գործը, սակայն հետագայում տալիս է իր համաձայնութիւնը⁽¹¹⁾:

Հայ գաղթականներին Խորհրդային Հայաստանում տեղաւորելու հնարաւորութիւններն ուսումնասիրելու նպատակով որոշուեց մասնագիտական մի յանձնաժողով կազմել՝ իրավիճակին տեղում ծանօթանալու համար: Յանձնաժողովի ղեկավար նշանակուեց Ֆ. Նաևսենը, քարտուղար՝ նորվեկիացի Վ. Քուիսլինկը: Յանձնաժողովի անդամներն էին՝ Ֆրանսայի գիւղատնտեսութեան նախարարութեան կողմից առաջարկուած գիւղատնտես Ժ. Կարլը, նախկինում Եգիպտոսի հանրային աշխատանքների նախարարութեան խորհրդական, հիմնդրուտեխնիկական կառոյցների մասնագետ անգլիացի Չ. Դիւպուին եւ Խորհրդայի արտագաղթի կոմիտեի կողմից առաջարկուած հիդրոտեխնիկական կառոյցների փորձագետ իտալացի Պ. Սաւիոն⁽¹²⁾:

Բնականաբար, յանձնաժողովի այցելութիւնը Խորհրդային Հայաստան պետք է երաշխաւորուեր խորհրդային իշխանութիւնների կողմից: 1925 թ. մարտի 26-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմը տուեց իր համաձայնութիւնը: Սակայն խորհրդային կառավարութիւնը երկու նախապայման դրեց՝ Նաևսենեան յանձնախմբի ժամանում արտօնելու համար՝

1. Այն գործելու էր ոչ Ազգերի լիկայի անունից,

2. Այն պետք է համագործակցեր Խորհրդային Հայաստանում գործող համապատասխան յանձնաժողովի հետ⁽¹³⁾:


Յանձնաժողովը Խորհրդային Հայաստան

Ժամանեց 1925 թ. յունիսի 17-ին: Յայաստանում գտնուելու ժամանակ այն ընդհանուր առմամբ չորս համատեղ ժողով անցկացրեց ժողովունորիին առջևթեր գաղթականական գործերի գլխաւոր վարչութեան հետ⁽¹⁴⁾, շրջեց Յայաստանի տարբեր վայրերում եւ ծանօթացաւ առկայ դրութեան հետ: Եթէ սկզբնական շրջանում նախատեսում էր լուծել Սարդարապատի դաշտի ոռոգման հարցը եւ այնտեղ տեղափոխել 50,000 գաղթականների, ապա ընթացքում նաև յանձնաժողովը կենտրոնացաւ աւելի փոքր ծաւալ ունեցող ծրագրի վրայ, ըստ որի նախատեսում էր ճահիճներից չորացնել եւ ոռոգելի դարձնել Երևանի մերձակայքում գտնուող Վրեւմտեան եւ Վրեւելեան որերը՝ 19,000 դեսետին, Սեւ-ջրի ճահիճները՝ 10,000 դեսետին եւ Զանգիբարի ճահիճները՝ 4,000 դեսետին⁽¹⁵⁾: Այդ տարածքներում կարող էին տեղաւորուել 20,000-25,000 հայ գաղթականներ, որոնցից 15,000-ը պետք է լինին նոր ներգաղթածները. 10,000 Յունաստանից եւ 5,000 Կոստանդնուպոլիսից, որոնց վիճակը առանձնապես ծանր էր⁽¹⁶⁾: Այդ ամենն իրականացնելու համար ըստ նախնական հաշուարկի անհրաժեշտ էր լինելու 8,000,000 ռուբլի, ընդ որում այդ գումարը չէր ներառելու հայ գաղթականներին մինչեւ խորհրդային սահման տեղափոխումը⁽¹⁷⁾: Յետազայում, կատարուած վերահաշուարկի արդիւնքում, նշուած գումարը դարձաւ 9,000,000 ռուբլի, որից 6,000,000 ուղղուելու էր չորացման եւ ոռոգման աշխատանքներին, իսկ մնացած 3,000,000՝ գաղթականների տեղաւորմանը⁽¹⁸⁾: Յեւս այդ գումարն է նշուած 1925 թ. յուլիսի 28-ի գեկուցագրում, որը Նախնանը ներկայացրել էր Ազգերի լիկային⁽¹⁹⁾: Ըստ Նախնանի, գումարը նախատեսում էր հայթայթել փոխառութեան միջոցով, որի մարման ժամկետը լինելու էր 10 տարուց ոչ պակաս⁽²⁰⁾:

Նախքան Ազգերի լիկայի 6-րդ նստաշրջանի մեկնարկը, որի ժամանակ պետք է քննարկուեին Նախնանաւ յանձնաժողովը ներկայացրած ծրագիրը եւ հայ գաղթականներին խորհրդային Յայաստան տեղա-

փոխելու հարցը, Նախնանը եւրոպական մամուլում հանդէս եկաւ մի շարք հրապարակումներով՝ այդ հարցերի շուրջ դրական հասարական կարծիքն ուժեղացնելու համար: Մասնաւորապէս, 1925 թ. օգոստոսի 8-ին Նորվելիկան «Tidens Tegn» թերթում լոյս տեսաւ Նախնանի «հայ ժողովուրդը» յօդուածը, իսկ 1925 թ. օգոստոսի 12-ին աւստրիական «Neue Freie Presse» լրագրում՝ «Յայաստանի տառապեալ պատմութիւնը» յօդուածը⁽²¹⁾: Առաջիկայ մի քանի տարիներին Նախնանաւ ծրագիրը եւ հայ գաղթականների հարցը պարբերաբար քննարկման առարկայ են դառնում Ազգերի լիկայում:

1925 թ. սեպտեմբերի 10-ին Նախնանը ժընեւում Ազգերի լիկային կից գործող Աշխատանքի միջազգային կազմակերպութեանը ներկայացրեց հայ գաղթականներին խորհրդային Յայաստան տեղափոխելու ծրագիրը, որը հաւանութեան արժանացաւ⁽²²⁾: Այսուհետեւ սեպտեմբերի 12-ին Նախնանը ելոյթ ունեցաւ Ազգերի լիկայի պլենար նիստում դարձեալ ներկայացնելով հայ գաղթականներին խորհրդային Յայաստան տեղափոխելու ծրագիրը: Արդիւնքում որոշում կայացուեց Նախնանաւ ծրագիրը քննարկումների համար տեղափոխել 5-րդ յանձնաժողովը: Տուեալ յանձնաժողովն իր նիստերը գումարեց սեպտեմբերի 17-ին եւ 18-ին: Երկրորդ նիստի ժամանակ դարձեալ ելոյթ ունեցաւ Նախնանը՝ ի թիւս այլ քայլերի առաջարկելով հայերին վերադարձնել Թուրքիայի կողմից հայերից առգրաւուած 5 միլիոն ֆունտ ստերլինկը: Նշուած նիստում ի պաշտպանութիւնը Նախ-



սենեան ծրագրի հանդէս եկան Չարլ Դիւպուին եւ Աշխատանքի միջազգային կազմակերպութեան նախագահ Ալպեր Թոման: Ծաւալուածքնարկումների արդիւնքում որոշուեց հարցի հետագայ ուսումնասիրման



համար ստեղծել 9 հոգուց բաղկացած ենթայանձնաժողով: Վերջինիս աշխատանքների ընթացքում ի յայտ եկան Նաևսենեան ծրագրի իրականացման հետ կապուած բարդութիւններ: Մասնաւորապես, Ենթայանձնաժողովի նախագահ, Մեծ Բրիտանիայի պատվիրակ դքսուիի Աթթուլը իր կառավարութեան անունից յայտարարեց, որ չի կարող փոխառութիւն տալ կամ երաշխաւորել այն որեւէ խորհրդային հանրապետութեան համար: Այդ յայտարարութիւնը հադիսանում էր Մեծ Բրիտանիայի ֆինանսների նախարար Ուիլսոնը Զըրչիլի դիրքորոշման արտացոլումը Նաևսենեան ծրագրի վերաբերեալ: Ֆրանսայի պատուիրակ ժորժ Պամսը յայտարարեց, որ ֆրանսական կառավարութիւնը կ'երաշխաւորի փոխառութիւնը միայն այն դեպքում, եթե նոյն անի Մեծ Բրիտանիայի կառավարութիւնը: Իտալիայի ներկայացուցիչ Կոնստի Ռոսսինին Նաևսենի եւ հայ պատվիրակների հետ ուսեցած մասնաւոր գրոյցում նշեց, որ իտալական կառավարութիւնը եւս սպասելու է Մեծ Բրիտանիայի կառավարութեան կողմից փոխառութեան երաշխաւորմանը: 1925թ. սեպտեմբերի 23-ին տեղի ունեցաւ Ենթայանձնաժողովի վերջին նիստը, որի ժամանակ առաջարկուեց Ազգերի լիկայի Խորհրդին իինգ յանձնակատարների նշանակել՝ հայկական կառավարութեան եւ այլ պետութիւնների հետ բանակցելու համար: Քարցը կրկին վերադարձուեց Ազգերի լիկայի 5-րդ յանձնաժողովը: 1925 թ. սեպտեմբերի 26-ին տեղի ունեցաւ Ազգերի լիկայի 6-րդ նստաշըրջանի 18-րդ նիստը, որի օրակարգում դարձ-

եալ հայ գաղթականների հարցն եր: Նիստի ժամանակ կրկին ելոյթ է ուսենում Նաևսենը՝ յորդորելով Ազգերի լիկայի անդամ պետութիւնների կառավարութիւններին գործնական քայլեր անելու հայ գաղթականներին

օգնելու ուղղութեամբ⁽²³⁾: Նոյն օրն Ազգերի լիկայի խորհուրդը որոշում է կայացնում ընտրել իինգ հոգուց բաղկացած մի յանձնախումբ՝ Նաևսենեան ծրագրի իրագործման տեխնիկական հնարաւորութիւններու ուսումնասիրելու, ինչպես նաեւ փոխառութեան հրացման եւ վերահսկիչ մարմնի ստեղծման վերաբերեալ Խորհրդային Յայաստանի եւ այլ երկրների կառավարութիւնների, ինչպես նաեւ այլ շահագրգիռ կազմակերպութիւնների հետ կարծիքների փոխանակման համար⁽²⁴⁾: Որոշ ժամանակ անց ընտրւում են վերը նշուած յանձնախումբի իինգ յանձնակատարները: Նրանք ներկայացնում են Նորվեգիան (ֆ. Նաևսեն), Ֆրանսան, Մեծ Բրիտանիան, Իտալիան եւ Գերմանիան: Յանձնաժողովի առաջին նիստը կայանում է 1925թ. հոկտեմբերի 30-ին Փարիզում, որին մասնակցում էր նաեւ Սիմոն Փիրումեանը՝ Ֆրանսայում ԽՄՀՍ դեսպանութեան առաջին քարտուղարը: Նիստի ժամանակ ըննարկուող առանցքային հարցը հանդիսանում էր հնարաւոր փոխառութեան համար երաշխիքների տրամադրումը: Յանձնաժողովը գումարեց եւս երկու նիստ՝ հոկտեմբերի 31-ին եւ նոյեմբերի 1-ին: Արդիւնքում որոշուեց, որ 1) տեղում տեխնիկական ինժիրներն ոստւմնասիրելու համար Յայաստան գործուղել անգիտացի ինժեներ Ջինդերին⁽²⁵⁾, 2) բանակցութիւնների մեջ մտնել Ֆրանսայի, Անգլիայի, Գերմանիայի, Իտալիայի, Յոլանտայի եւ Պեճիքայի կառավարութիւնների հետ՝ փոխառութիւնների երաշխիքներ ստանալու համար:

Նաև սենն Ազգերի լիկայում իր ելոյթներում մատևանշում էր այն գաղափարը, որ Խորհրդային Հայաստան ամենայարմար եւ գործնականում միակ երկիրն էր, որը պատրաստ էր ընդունելու բազմաթիւ հայ գաղթականների: Մասնաւորապես, այդ կարծիքը ևա ներկայացրել է 1925թ. սեպտեմբերի 12-ին՝ Ազգերի լիկայի 6-րդ նստաշրջանի հերթական 6-րդ նիստի ժամանակ⁽²⁶⁾, ապա ևաեւ սեպտեմբերի 26-ին՝ 18-րդ նիստի ժամանակ⁽²⁷⁾:

Հայ գաղթականներին Խորհրդային Հայաստան հայրենադարձելու տեսանկիւնից Նաև սենի ելոյթները շօշափելի արդիւնք չին տալիս: Փոխարենը դրանք ունեցան բաւական անսպասելի հետեւանք. Ազգերի լիկայում հայ գաղթականների՝ Խորհրդային Հայաստան հայրենադարձման ծրագիրն ակտիւրեն պաշտպանելու համար ումանք քննադատում էին⁽²⁸⁾ Նաև սենին եւ մեղադրում նրան՝ Խորհրդային համակարգը գովաբանելում եւ պիտակաւորում որպես «կարմիր կոմիսար»⁽²⁹⁾:

Ետագայ տարիներին Ազգերի լիկայում հայ գաղթականներին օգնելու հարցը պարբերաբար դառնում է քննարկումների առարկայ: Ընդհանուր առմամբ բոլորը կողմ էին գաղթական հայերին Խորհրդային Հայաստան հայրենադարձելու գաղափարին: Նաև սենի ներկայացրած ծրագիրը տեխնիկական առումով միշտ արժանանում էր բարձր գնահատականի: Սակայն երբ հերթը հասնում էր յստակ միջոցառումների իրականացմանը, մասնաւորապես հարցի ֆինանսական կողմին, միշտ ծագում էին անհամաձայնութիւններ եւ նախապայմաններ: Օրինակ, 1926թ. սեպտեմբերի 9-ին Ազգերի լիկայի ֆինանսական յանձնաժողովը մի բանաձեւ ընդունեց, որով ամրագրում էր «Հայաստանին փոխառութիւն տրամադրելու հարցի բացասական ելքը»⁽³⁰⁾: Բաևաձեւում նշում էր, որ 1925թ. սկսած ծրագրի ֆինանսական մասը եական փոփոխութիւն չի կրել, ինչի հետեւանքով էլ անհնար էր դրան ընթացք տալ⁽³¹⁾:

Երբեմն Նաև սենը բախւում էր ևաեւ Խորհրդային Հայաստանի իշխանութիւնների դանդաղկոտութեան կամ մերժողական դիրքորոշման հետ⁽³²⁾ այդիսիով յայտնուելով երկու կրակի արանքում:

Այս ամենի արդիւնքում Նաև սենը հակւում է Ազգերի լիկայում հայ գաղթականներին Խորհրդային Հայաստան հայրենադարձելու ծրագրի անպտուղ քննարկումները դադարեցնելու մտքին: Առաջին անգամ ևա այդ առաջարկն անում է 1927թ.: Սակայն Ազգերի լիկայում մերժում են այն եւ շարունակում քննարկումներն այդ հարցի վերաբերեալ⁽³³⁾: Նոր փուլ մտած զարգացումների արդիւնքում հնարաւոր դարձաւ 1929թ. մարտի 5-ին ստորագրել նախնական պայմանագիր Ս. Տեր Գաբրիէլեանի եւ ճ. Գորվինի միջեւ՝ Խորհրդային Հայաստանին 150,000 ֆունտ ստերլինկի վարկ տրամադրելու եւ դրա օգտագործման պայմանների վերաբերեալ⁽³⁴⁾: Մասնաւորապես, նախատեսում էր, որ վարկը տրամադրուելու էր 15 տարով, տարեկան 8 տոկոս տոկոսադրոյքով⁽³⁵⁾: Թեում էր, թէ բազմամեայ քննարկումները եւ բանակցութիւնները տուել են իրենց արդիւնքը: Սակայն շուտով խորհրդային կառավարութիւնը որոշում է հրաժարուել փոխառութիւնն ընդունելուց՝ գումարի չափի փոքրութեան եւ նախատեսուղ արտաքին վերահսկողութեան անընդունելիութեան պատճառաբանութեամբ⁽³⁶⁾:

Նման զարգացումներից յետոյ Նաև սենը այլեւս յոյսեր չեր կապում Ազգերի լիկայում հայ գաղթականներին Խորհրդային Հայաստան տեղափոխելու ծրագրի դրական լուծման հետ: 1929թ. սեպտեմբերի 21-ին ելոյթ ունենալով Ազգերի լիկայի Ասամպլեայի 10-րդ նստաշրջանում՝ Նաև սենին առաջարկեց Ազգերի լիկայի օրակարգի հանել այդ հարցը⁽³⁷⁾, ինչն էլ արուեց նոյն օրը⁽³⁸⁾:

Չնայած նրան, որ հայ գաղթականների հայրենադարձութեան խնդիրը դրական լուծում չգտաւ Ազգերի լիկայում, 1920-ական թուականներին Խորհրդային Հայաստան տեղափոխուեցին շուրջ 25,000 հայ գաղթականներ⁽³⁹⁾: Այս գործում մեծ էր Նաև սենի անձնական աւանդը: 1927-1929թ. ևա բազում հրապարակումների, հանդիպումների եւ դասախոսութիւնների միջոցով նպաստում էր հայ գաղթականների հայրենադարձման համար գումարների հաւաքման գործին⁽⁴⁰⁾: Մասնաւորապես, 1928թ. մայիսին ևա հասդիպումներով եւ դասախոսութիւններով այցելում է Միացեալ Նահանգներ⁽⁴¹⁾: Իր այդ գոր-

ծունեութեան շնորհիւ հաւաքուած միջոցները Նաևսենը տրամադրում է 7,000 հայ գաղթականների հայրենադարձանը⁽⁴²⁾:

ԱՐՎԱ ՄԻՐՉՈՅԵԱՆ

Պատմական գիտութիւնների թեկնածու,
Հայոց ցեղասպանութեան
թանգարան-ինստիտուտ

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Արգումանեան, Ա. (1977): Նաևսենը եւ Հայաստանը: Երեւան. «Հայաստան» հրատարակչութիւն, էջ 110-111:

2. http://www.nobelprize.org/nobel_prizes/peace/laureates/1938/nansen.html

3. Մելիքսեթեան, Յ. Ու. (1967): Սովետական Հայաստանը եւ սփիւռքահայութիւնը: Ծ. Պ. Աղայեան (պատ. խմբագիր), Հայ ժողովոյի պատմութիւն, հ. 7: Երեւան. ՀՍՍՀ ԳԱ հրատարակչութիւն, էջ 561:

4. Յարկ է նշել, որ տարբեր ժամանակներ խորհրդային իշխանութիւնների կողմից հայերի հայրենադարձութեան ծրագրի իրականացումը թերեւս հետապնդում էր Երկու նպատակ: 1. Ներգաղթողները նպաստում էին խորհրդային Հայաստանի աշխատաշուկան որակեալ մասնագետներով յագեցնելուն, 2. կազմակերպելով հայ գաղթականների ներգաղթ՝ խորհրդային իշխանութիւնները հետապնդում էին նաեւ քարոզական նպատակ. դա խորհրդային կարգերի իրայատուկ գովազդ էր:

5. Արգումանեան, Ա., նշ. աշխ., էջ 124:

6. Նոյն տեղում, էջ 129:

7. Մելիքսեթեան, Յ. Ու., նշ. աշխ., էջ 563: Տես նաեւ՝ Արգումանեան, Ա., նշ. աշխ., էջ 140:

8. Հայաստանի ազգային արխիւ (յետայսու՝ ՀԱԱՅ), ֆ.113, գ.3, գ.227, թ.18:

9. League of Nations (January, 1927). Scheme for the Settlement of Armenian Refugees. General Survey and Principal Documents. Geneva, էջ 132.

10. Նոյն տեղում:

11. Նաևսեն, Ֆ. (2000). Խաբուած ժողովուրդ: Երեւան. ԵՊՀ հրատարակչութիւն, էջ 11:

12. Տես Արգումանեան, Ա., նշ. աշխ., էջ 153-154; Նաևսեն, Ֆ., նշվ. աշխ., էջ 11-12; League of Nations, օր.cit., էջ 6:

13. Արգումանեան Ա., նշ. աշխ., էջ 152:

14. Յունիսի 17-ին (ՀԱԱՅ, ֆ.113, գ.43, գ.292, թթ.33-37), յունիսի 19-ին (ՀԱԱՅ, ֆ.113, գ.43,

գ.292, թթ.31-32), յուլիսի 1-ին (ՀԱԱՅ, ֆ.113, գ.43, գ.292, թթ.1-7) եւ յուլիսի 2-ին (ՀԱԱՅ, ֆ.113, գ.43, գ.292, թթ.8-10):

15. Դեսետինը մակերեսի չափման միաւոր էր, ընդունուած Ուսասատանում մինչեւ 1918թ.: Մեկ դեսետինը հաւասար է 1,0925 հեկտարի:

16. Յովսեփեան, Է., Մարտիրոսեան Մ., նշվ. աշխ., էջ 59, 62-63:

17. Արգումանեան, Ա., նշ. աշխ., էջ 191-192:

18. Յովսեփեան, Է., Մարտիրոսեան Ա., նշ. աշխ., էջ 62-63, League of Nations, նշ. աշխ., էջ 6-7:

19. ՀԱԱՅ, ֆ. 113, գ. 3, գ. 374, թթ.63-77:

20. Յովսեփեան, Է., Մարտիրոսեան Ա. (2005): Հայ դատի նույիրեալը. Ֆրիտինֆ Նաևսեն: Փաստաթղթերի ժողովածու (1920-1930): Երեւան. «Գիտութիւն» հրատարակչութիւն, էջ 63:

21. Արգումանեան, Ա., նշ. աշխ., էջ 208-209:

22. Նոյն տեղում, էջ 209-210:

23. Յովսեփեան, Է., Մարտիրոսեան Ա., նշ. աշխ., էջ 79:

24. Մելիքսեթեան, Յ. Ու., նշ. աշխ., էջ 567:

25. 1925 թ. դեկտեմբերի 6-ին Քինուերի փոխարէն Երեւան է ժամանում ինժեներ Ուիլիյմ Մակինսոնը:

26. Արգումանեան, Ա., նշ. աշխ., էջ 214-215:

27. Յովսեփեան, Է., Մարտիրոսեան Ա., նշ. աշխ., էջ 78:

28. Էգգե, Բ. (2003): Ֆրիտինֆ Նաևսենի պայքարը յանուս մարդու իրաւունքների եւ մարդկային արժանապատուութեան: Երեւան, էջ 16:

29. Ստեփանեան, Ա. (2010): XX դարի հայրենադարձութիւնը հայոց ինքնութեան համակարգում: Երեւան, «Գիտութիւն» հրատարակչութիւն, էջ 49-50:

30. Յովսեփեան, Է., նշ. աշխ., էջ 106:

31. Նոյն տեղում:

32. Յովսեփեան, Է., Մարտիրոսեան Ա., նշ. աշխ., էջ 260-261, 263-265, Յովսեփեան, Է., նշ. աշխ., էջ 108-109:

33. Յովսեփեան, Է., նշ. աշխ., էջ 109-110:

34. Յովսեփեան, Է., Մարտիրոսեան Ա., նշ. աշխ., էջ 256:

35. Նոյն տեղում:

36. Նոյն տեղում, էջ 262:

37. Նոյն տեղում, էջ 273:

38. Մելիքսեթեան, Յ. Ու., նշ. աշխ., էջ 569:

39. Ստեփանեան, Ա., նշ. աշխ., էջ 65-66:

40. Արգումանեան, Ա., նշ. աշխ., էջ 277:

41. Յովսեփեան, Է., Մարտիրոսեան Ա., նշ. աշխ., էջ 216:

42. Արգումանեան, Ա., նշ. աշխ., էջ 277:

ՀԱՅ ՏԱՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐԿՈՒՄԸ ՍՈՒՐԻԱՅԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՎՆՔՈՒՄ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԻՑ ՅԵՏՈՅ (1915-1925 ԹԹ.)

1 915 թ. երիտթուրքական իշխանութիւնն երի կողմից հայ բնակչութիւնն իր բնօրրանից բռնի տեղահանում է սիրիական անապատներ: Սուրիայի արաբներն ականատես են լինում հայերի տեղահանութեան ու իրականացնող ցեղասպանութեանը: Արաբների մարդասիրական վերաբերմունքը տարագիրներին ցեղասպանութիւնը վերապելու հարաւորութիւն է տալիս:

Դայ տարագիրների զանգուածային ներկայութիւնը Սուրիայում նորանոր խնդիրներ էր առաջացնում: Վերջիններս պետք է համարկուեն երկրի սոցիալական կեանքում, քանի որ բարեգործական ընկերութիւնների, միսիոնարական կազմակերպութիւնների հովանաւորութեամբ երկար չեն կարող գոյատեւել: Այս յօդուածում վերլուծում է հայ տարագիրների համարկումը Սուրիայի սոցիալական կեանքում ընդունած մինչեւ 1925 թ.: Ներկայացնում է տարագիրների առջեւ ծառացած սոցիալական խնդիրների աստիճանական լուծումները, հայ-արաբական փոխադարձ յարմարեցումը, համարկման ճանապարհին հանդիպող խոչընդոտները եւ միշարք յարակից այլ խնդիրներ:



Դարկ է նշել, որ Սուրիայում հայ տարագիրներն անցնում են համարկման մի քանի փուլեր: Յատկանշական է, որ եթէ սկզբնական շրջանում առաջ քաշուած հարցերն ու խնդիրները հիմնականում քննարկում են արաբների կողմից հայ տարագիրներին ցուցաբերուող օգնութեան, ապա 1920-ական թթ. սկզբից՝ հայ-արաբական համագործակցութեան եւ փոխօգնութեան համաթերսում, զուգահեռ ներկայացնում են նաեւ ֆրանսական մանդատային իշխանութիւնների ունեցած դերակատարութիւնն ու միջամտութիւնը Սուրիայում հայ տարագիրների համարկման եւ հայ-արաբական յարաբերութիւնների գործընթացում:

Անդրադառնալով հայ տարագիրների իրավիճակին՝ առաջին հերթին պետք է հաշ-



Ի առնել այս փաստը, որ նշուած ժամանակահատուածում դեռ Առաջին Յամաշխարհային պատերազմը չեղ վերջացել ու Սուրբիան համարուում եր Օսմանեան կայսրութեան մաս: Բացի այդ, հայ տարագիրները ցեղասպանութիւնը վերապրելուց յետոյ զգուշաւոր էին դարձել ու անվտանգութեան հարցին լուրջ էին վերաբերում: Սուրբիայում նրանք յայտնուել էին նոր միջավայրում, որտեղ կային մի շարք եթևիկական տարբերակիչներ՝ կրօնը, լեզուական, մշակութային եւ մի շարք այլ գործոններ:

Նոր հասարակութեան մեջ տարագիրների ներգրաւուումը ժամանակաւոր ու անցողիկ գործընթաց է, բայց նաեւ կարեւոր է, որ լինի երկուստեր, փոխադարձ յարմարեցումը: Տեղի բնակչութիւնը նոյնպէս չեր կարող իրեն լիովին անվտանգ զգալ՝ հաշուի առնելով այս փաստը, որ տարագիրները սկզբնական շրջանում նրանց համար անծանօթ էին: Նոր հասարակութեան մեջ տարագիրներին հարկաւոր եր կարգավիճակ՝ քաղաքացիութիւն, կեցութեան իրաւունք, աշխատանքի թոյլտուութիւն, անվտանգութիւն: Այստեղ կարեւոր է նաեւ տուեալ ժամանակահատուածի դեկավարների դիրքորոշումը, որոնք առաւելագոյնս պետք է շահագրգռուած լինեն տարագիրների պաշտպանութիւնն ու անվտանգութիւնն ապահովելու համար: Ֆեյսալի կառավարման տարիներին (1918-1920 թթ.) արդէն ծեւաւորուել եր ազգային փոքրամասնութիւններին ցուցաբերուող պետական աշակ-

ցութեան միտում: Այս ժամանակահատուածում հայ տարագիրները փորձում էին տնտեսապես կայանալ, որին մեծապես նպաստում է Ֆեյսալի ընդունած մի քանի որոշումները՝ պարտքերի յետաձգման, պիտմեից որոշ գումարներ հայերին տրամադրելու վերաբերեալ: Բացի այդ, ինչ-որ չափով մեղմացել էր ցեղասպանութիւնը վերապրելու ցցումը, նրանք սկսել էին յար-

մարուել ու իրացնել կենցաղը, տիրապետել լեզուին: Ֆրանսական մանդատի տարիներին նոյնպէս հայերի նկատմամբ վերաբերմունքը կարելի է դրական համարել:

1915-1916 թթ. աքսորը վերապրածների մեծ մասը կենտրոնացած էր Յալեպ ու Դամասկոս քաղաքների եւ Եփրատ գետի միջեւ ընկած տարածքի ճամբարներում, ուր տիրում էր կենցաղային ծանր վիճակ. սովը, համաճարակն ամենուր նոր մարդկանց կեանքեր էին խլում: Սկզբնական ժամանակահատուածում իշխանութիւններն արտօնել էին հայ տարագիրներին հող յատկացնել, որտեղ եւ ստեղծուել էին ժամանակաւոր վրանքաղաքները, բայց այդ հողերը պատկանում էին հայեացի հողատերներին: Վերջիններս ժամանակի ընթացքում սկսում են իրենց հողերը եւ պահանջել⁽¹⁾: «... Յայերը կ'ապրէին հոն առանց վարձք վճարելու եւ հողատերը նախապէս վարձք պահանջած էր, բայց ֆրանսական կառավարութիւնը արգելք եղած էր⁽²⁾»: Յողատերների պահանջների արդինքում հայ տարագիրները պետք է նրանց հողի վարձ ու ջրի տուրք վճարէին, բայց նրանց «արտօնուած չեր այդ հողերի վրայ տուն կառուցել⁽³⁾»: Բնական է, կառավարութիւնը երկար չեր կարող ստիպել հողատերներին հայ տարագիրներին իրենց հողերի վրայ պահել, քանի որ դա կարող էր յանգեցնել հայերի հետ տեղի արաք բնակչութեան հետ յարաբերութիւնների վատթարացմանը: Նման թաղամասերը նաեւ լուրջ առողջապահական

խնդիրներ էին ստեղծում: Ֆրանսական կառավարութիւնը փորձում էր հայ տարագիրներին հասկացնել, որ այս իրավիճակը երկար չի կարող շարունակուել, իսկ հայերն էլ փորձում էին որքան ինարաւոր է ժամանակ շահել:

Հայերը, 1915 թ. յայտնուելով Սուրբայում, ձգտում էին հասնել տնտեսական եւ սոցիալական փոքր-ինչ կայունութեան՝ առաջնորդուելով Ներիամայնքային համերաշխութեան մեքանիզմներով: Եւ պատահական չէ, որ շատ արագ ձեւաւորում են արդիւնաւետ գործող, բազմաթիւ ենթակառուցուածքներով արհեստակացական միութիւնները, կրօնական, բարեգործական, մշակութային, սպորտային կազմակերպութիւնները, դպուցները, առեւտրական պալատները: Հայերի շրջանում նկատւում է ազգային ինքնութիւնը պահպանելու մեծ ձգտում, երկրորդ անգամ ծնունդ են առնում կուսակցութիւնները: Փոխօգնութիւնն այս համակարգի բաղկացուցիչ մասն է, «անգամ գործիք ներքին սոցիալական վերահսկողութեան, կառավարման եւ կարգաւորման համար»:

Հալեպի «Աթ-թաքարդում» թերթը խոր անդրադարձ ու վերլուծութիւն է կատարել նաեւ հայերի՝ Սուրբայում ունեցած ներդրմանն ու ընդգծել նրանց կատարած գործը: «Տարագիրների ազդեցութիւնը» յօդուածում կարդում ենք. «Ճշմարտութիւնից շեղուած չենք լինի, եթէ յայտնենք մեր երկրի որոշ բնակիչներին ... հայ տարագիրներից շատերն արդիւնաբերական աշխատանքներում փորձ ունեն, աշխուժացնում են աշխատաշուկան: Եթէ չինեին նրանք, ովքեր ցանում են, հնձում, ապա շատ հողեր անմշակ կը մնային⁽⁴⁾:»

«Սուրբայահայ տարեցոյց»-ը 1924 թ. գրում է. «Սուրբայահայ իր մէջ կը պահէ 150 հազարի մօտ տարագիր եւ տեղագի հայութիւն, որուն տեղացին եւ ֆրանսական կառավարութիւնը հիւրասէր ընթացք մը կը ցուցնեն եւ հայերն ալ լաւագոյն յարաբերութիւններու մէջ են անոնց հետ⁽⁵⁾:»

Հայ տարագիրների՝ սոցիալական ոլորտում արձանագրած յաջողութիւնների փաստին են անդրադարձել ժամանակակից արար պատմաբանները: Վերջիններս հայ տարա-

գիրների եթևիկ վարքագծի մէջ նկատում են իրեն արագ վերագտնելու, համակերպութելու եւ դրան զուգահեռ ազգային ինքնութիւնը պահելու միտում: Սոցիալական ոլորտի յաջողութիւնները նաեւ սուրբայացի ժողովրդի դրական վերաբերմունքի արդիւնք էին: Հայերը օրուայ ապրուստ վաստակելուն զուգահեռ հիմնում էին դպրոցներ, մշակութային հաստատութիւններ եւ այլն: «Հայ տարագիրները գործում էին տարբեր բնագաւառներում՝ զուգահեռաբար ու արդիւնաւետ: Իրենց պահում են առողջ բանականութիւն ունեցող մարդու նման, մի երկրում, որն իրենց հոգատարութիւն է ցուցաբերել⁽⁶⁾»:

Սուսա Պրեսսը հայ տարագիրների համար նշում է երկու կարեւոր յատկանիշ, առանց որոնց դժուար կը լիներ յաղթահարել ցեղասպանութեան բարդոյթը: Հայկական եթևոհգերանական առանձնայատկութիւններն ուսումնասիրելով՝ նա եզրակացնում է, որ հայի տեսակն ունի ցեղային երկու բացարիկ յատկութիւն. առաջինը՝ «ընտելացումի յատկութիւնն է, երկրորդը՝ կենսունակութեան⁽⁷⁾»: Այս երկու յատկութիւններն են պայմանաւորում հայկական լինելիութիւնը:

Եթևոսցիոնոգ Ն. Միգիորիխնուն հայ տարագիրների համար ընդգծում է նրանց վճռականութիւնն ու ձգտումը Սուրբայում իրենց Հայաստանը կամ հայկականը վերականգնելու ուղղութեամբ: Հայ տարագիրների մօտ «վերականգնելու վճռականութիւնը բխում էր առկա համայնքի ուժեղ համախմբուածութիւնից ու այս փաստի գիտակցումից, որ ցեղասպանութիւնն, իրօք, կարող է ոչչացնել հայկական մշակոյթը⁽⁸⁾»:

Հայ տարագիրների սոցիալական իրավիճակի բարելաւման համար յարկ է մեշբերել Օսման Աթ-Թուրքի դիտարկումը. «Երբ նրանք ոտք դրեցին մեր հողի վրայ, սեփական ձեռքերից բացի ոչինչ ունեին: Նրանք իրենց կատարած ծանր աշխատանքով վաստակեցին իրենց ապրուտը: Եւ այդ դժուարութիւնների հետ մէկտեղ նրանք հասարակութեան մէջ իրենց յարգալի տեղը զբաղեցրին, մասնակցեցին երկրում արտադրութեան զարգացմանը, տնտեսութեան մակարդակի աճին⁽⁹⁾»:

Բացառութեամբ Կիլիկիայի մի քանի



շրջաններից եկած հայերի, միւսները հիմնականում թշուառ վիճակում էին հասել Սիրիա: «Յայերն այստեղ հաստատում են դատարկութեան եւ ուսայնութեան մէջ⁽¹⁰⁾»: Յայերը կարողանում են դուրս գալ ցեղասպանութեան զոհի կարգավիճակից ու աստիճանաբար իստեգրուել սոցիալական կեանքում: Յետազօտողների մեծ մասը հայ տարագիների վերոնշեալ յատկանիշներն են համարում նրանց վերապրելու եւ տարածաշրջանի ամենակենսունակ ու ծաղկող համայնքներից մեկը դառնալու նախապայմանը:

Իրավիճակը փոխվում է, երբ 1921 թ. հոկտեմբերի 20-ին Անգլիայի ֆրանս-թուրքական պայմանագրով Ֆրանսան պարտաւորում էր երկու ամսուայ ընթացքում հեռանալ Կիլիկիայից:

1922-1923 թթ. Կիլիկիայի հայաթափումից յետոյ Սուրիայի հայութիւնը ներկայացնում էր հետեւեալ պատկերը. Յալեպ եւ Յիւսիսային Սուրիա՝ 65,000, Ալեքսանտրե՛՝ 15,250, Դամասկոս՝ 12,500, Պէյլան-Անտիոք, Սուրա լեռ 10,500, Լաթարիա, Ջեսաա՛ 6500, Յամանում, Կենտրոնական Սուրիա՝ 1,500: Ընդհանուր՝ 111,250⁽¹¹⁾:

Յալեպի «Աթ-Թաքրադում» թերթն իր 1922 թ. «Յայ տարագիները Յալեպում» խորագրի տակ գրում է. «Ճարունակում է հայերի ու յոյների գաղթը դեպի Սուրիա արդէն յայտնի դեպքերի պատճառով»: Թերթը տեղեկացնում է, որ ֆրանսական կառավարութիւնը մեծ ուշադրութիւն է դարձնում հայ տարա-

գիրներին ապաստան եւ սնունդ տալու, ինչպես նաեւ բուժման համար միջոցառումներ կազմակերպելու գործին⁽¹²⁾: 1923 թ. կրկին նշում է. «Կառավարութիւնը, բարեգործական ընկերութիւնները, անհատները շանթեացնելու հայ տարագիրների վիճակը⁽¹³⁾»:

Կիլիկիայի դեպքերն ապացուցեցին, որ հայ տարագիրների՝ Արեւմբտեան Յայաստան վերադառնալու հաւասարական կեանքում է: Այնպես որ, Սուրիայում ապաստանած հայերը պետք է տեղում փորձեցին ինքնահաստատուել ու առաջ գնալ: Նոր ստեղծուած իրավիճակում փոխւում է հայ տարագիրների՝ Սուրիայում մնալու ձեւաչափը: Նրանք սկսում են մշտական քնակութեան մասին մտածել, որը խթանում է նրանց ներգրաւուածութիւնը Սուրիայի սոցիալ-տնտեսական եւ արդիւնաբերական կեանքում:

Յարկ է նշել, ըստ «Արեւելեան տարեգիր»-ի տուեալների՝ Առաջին Աշխարհամարտից յետոյ Յալեպի մեքենաշինական, մետաղագործական, կաշիի ու կօշիկի, ակնեղենի, հիւրանցային, ժամագործական եւ այլ ձեռնարկութիւնների 20-50 տոկոսի սեփականատերերը հայեր էին: Աւելի նշանակալից էր հայերի դերն առողջապահութեան ոլորտում⁽¹⁴⁾: Յայերի ձեռքում էին կենտրոնացած նաեւ ճարտարապետութիւնը, լուսանկարչութիւնը, գեղարուեստական բացիկների արտադրութիւնը, երաժշտական գործիքների, նուագարանների եւ ձայնապահկների առեւտուրը⁽¹⁵⁾: Յայ արհեստաւորները զգալիօրեն զարգացնում են արհեստագործութիւնը, յատկապես, գորգագործութիւնը, որը գրեթե նորութիւն էր Սուրիայում:

Բրիտանացի Ե. Բարթն իր գեկուցագրում տալիս է Յալեպում հայ տարագիրների աշխատանքային ներգրաւուածութիւնն ըստ մասնագիտութիւնների՝ նշելով. «Յալեպում 8 հազարը գրադաւում էին ասեղնագործու-

թեամբ ու գորգագործութեամբ, 6 հազարը բանուորսեր ու ծառայողներ էին, 5377-ն առեւտրականներ եւ 623-ը բժիշկներ, ատամ-նաբուժներ, դեղագործներ եւ ուսուցիչներ: Շուրջ 5 հազար երեխաններ դպրոց էին յաճախում⁽¹⁶⁾:

Յայ կանայք մեծ յաջողութիւնների էին հասել նաեւ ասեղնագործութեան բնագաւառում, ինչը նրանց մենաշնորհն էր: Այսպիսով, հայ տարագիրների՝ արհեստներին գերազանցապէս տիրապետելու փաստը «դառնում են նրանց ֆինանսական հիմնական աղբիլը⁽¹⁷⁾»:

Յայ տարագիրներն առաջատարներ են եղել աւտոմեքենաների սպասարկման եւ նորոգման բնագաւառներում: Յայ վարպետները «մեկսակետ հանդիսացան բազմաթիւ նոր վարպետներու ինքնայայտութեան»⁽¹⁸⁾: Յալեպում հաց թիելը հայերի եւ յատկապէս սասունցինների մենաշնորհն է եղել: Ցովհաննես Դաբբաղի (Դաբբաղեան) 1906 թ. Յալեպում հիմնած կաշեգործարանը մինչեւ 1921 թ. միակն էր Սուրբիայում եւ Լիբանանում: Նշենք նաեւ, որ Յալեպի Մազլումեան եղբայններին պատկանող «Օթել Պարոնը» եւ Ալթունեան հիւանդանոցը միակ շենքերն էին, որոնք 1920-21 թթ. ելեկտրականութիւն են ունեցել:

Սուրբիայի արաբները գնահատել են հայ արհեստաւորների վարպետութիւնն ու ձեռներեցութիւնը: Յայ տարագիրների Սիրիայի տնտեսական կեանքում տարագիրների ներդրմանն է անդրադել արաբ գորո, հասարակական գործիչ Ուալիս հիւլասը. «Կարեւոր է, որ հայ ժողովուրոջ կարողացաւ յաջողութեամբ համագործակցել հիւրընկալ սուրիացի ժողովորդի հետ: Դրա հետ մեկտեղ նա իր ինքնութիւնը փաստեց ու իր ծառայութիւնները մատուցեց մեր երկրին՝ ստեղծագործելով ու կառուցելով: Նա զարմացրեց սուրբիացի ժողովորդին իր վարպետութեամբ, ձեռքի շնորհընը⁽¹⁹⁾»:

Յայ տարագիրների սոցիալական ծանր վիճակից դուրս գալուն եւ փոքր-ինչ կայանալուն ոչ պակաս ձեւով է նպաստել հայրենակցական միութիւնների գործունեութիւնը: Յամայնքի ձեւաւորման տարիներին՝ քսանական թուականների առաջին կեսերին, պատահական երեւոյթ չեր հայրենակցական միութիւնների նախաձեռնութեամբ եւ համայնքային հիմունքներով կազմակերպուած կրթօճախների եւ հայկական տպարանների վերաբացումն ու հիմնումը:

Յայ տարագիրների սոցիալապէս կայանալուն, տնտեսութեան ոլորտում մենաշնորհներ ձեռք բերելուն զուգահեռ հայ տարագիրների նկատմամբ որոշակի դժգոհութիւններ են առաջ գալիս Սիրիայի քաղաքային բնակչութեան շրջանում: Չնայած սուրբիական մամուլում տպագրուել են նաեւ հակառակ կարծիքներ: Յալեպի «Աթ-թաքադդոմ» թերթն այդ կապակցութեամբ գրում է. «Յայերին տարբեր տեղերից (հայրենակիցներ, ընկերներ, բարեգործական ընկերութիւններ) ֆինանսական օգնութիւն են ուղարկում, որը մեր երկրում է ծախսում, թեթեւացնում ֆինանսական սղութիւնը ... Այսպէս որ, դժգոհութեան որեւէ գիտակից պատճառ չենք տեսնում, անգամ եթե մեր շահերը հաշուի առնենք, ապա թոյլ կը տանք նրանց մեզ մօտ մնալ⁽²⁰⁾»: Յայ տարագիրները նոյնպէս գիտակցում էին արաբների դժգոհութիւնների պատճառներն ու փորձում էին աւելորդ լարւածութիւն չմտցնել հայ-արաբական յարաբե-





րութիւններում: «Սուրբահայ տարեցոյց»-ում սիրիահայ տարագրիրներն այսպէս են բնորոշում իրենց կեանքը. «Այս տնտեսական տագնապի շրջանում ամենէն մտահոգիչ տարրը Սուրբահայն է: Մենք՝ որպէս իհլր ուրիշին տան մէջ, որքան ալ վերապահութեամբ շարժուինք, վերջապէս ծանրութիւն մ'ըլլալէ չենք դադրիր, մանաւանդ, տանտէրն իսկ համաշխարհային քայլայուած տնտեսական տիրող դրութենեն նեղուած, անգործութեամբ կը տառապի: Այս կացութեան մէջ բարեկեցիկ կեանք մը յուսալ անխոհեմութիւն է պարզապէս⁽²¹⁾»:

Բայց այդ ամենով հանդերձ, հարկ է փաստել, որ հայ տարագրիրների բերած դրական տեղաշարժերը երկոր տնտեսութիւնում եւ նրանց յաջող փորձերը՝ ներգրաւուելու Սուրբահայի սոցիալ-տնտեսական կեանքում, յանգեցնում են վերջիններիս վիճակի բարելաւմանը: Կիլիկիայի դեպքերից յետոյ առաւել եւս հայ տարագրիրները «Սուրբիոյ արար կառավարութեան եւ ֆրանսական մանդատի հոգատար իշխանութեան ցոյց տուած իիւրընկալ եւ մարդասեր ասպանշականութիւնը զիսքը թողուած են յաւետ երախտապարտ, որը կարելի է փոխարինել միայն լուրջ ու շրջահայեաց ոգիով մը, խաղաղ ու կարգապահ կեանքով մը⁽²²⁾»:

Համայնքի առջեւ ծառացած իիմսախնդիրներից առաւել կարեւոր էր ազգային ինքնագիտակցութեան, մշակոյթի եւ լեզուի պահպանման խնդիրն էր, որն իր վրայ էր վերցրել

եկեղեցին: Ցեղասպանութիւնը վերապրելու փաստը նոր պահանջներ էր դնում. ոչ միայն պահպանել նախորդ շրջանի մշակութային եւ հոգեւոր արժեքները, այլ նաև ստեղծել նորը եւ ժառանգել սերունդներին: Այս փաստը համայնքը սահմանող եւ բնութագրող կարեւոր որակումներից է:

Սուրբահայում հայ տարագրիրների սոցիալական կայացման համար կարեւոր նշանակութիւն ուներ նրանց իրաւական կարգավիճակի հարցը: Ազգերի լիկայի խորհուրդը 1924 թ. յունիսի 12-ի որոշմամբ հաստատում է Ֆ. Նանսենի նախաձեռնութիւնը՝ հայ գաղթականներին «Նանսենեան անձնագրեր» տալու վերաբերեալ⁽²³⁾: 1924 թ. օգոստոսի 1-ին իրապարակում է Սուրբահայի քաղաքացիութեան օրենքը: Քինգ տարի անընդմեջ Սուրբահայում բնակուող անձանց շնորհում էր քաղաքացիութեան իրաւունք, որով վերջ էր տրուում նախկին օսմանահպատակ հայ գաղթականների անորոշ իրաւական դրութեանը⁽²⁴⁾: Այժմ նրանք կարողանում են օգտուել համայնքային իրաւունքներից ու արտօնութիւններից, ստանում են կրթական հաստատութիւններ ունենալու առաւելութիւն, հաւասար իրաւունքներ դատարանում, ազատ տեղաշարժուելու իրաւունք, տնտեսական ազատութիւն, վարչական, կառավարական քաղաքական դիրքերի հասանելիութիւն:

Այսպիսով, սուրբահայ համայնքը ազգային գործունեութիւնը կազմակերպել եւ կարգաւորել է համայնքային հաստատութիւնների՝ եկեղեցական, ազգային կուսակցական, կրթական եւ մշակութային համակարգի միջոցով: Սուրբահան դառնում է երկու ժողովուրդների միաւորման վայրը, որտեղ երկու կողմերն էլ ինարաւորութիւն են ունենում ապրել փոխհասկացողութեան մթնոլորտում եւ համատեղ պայքարել միասնական գաղափարների համար: Հայ-արաբական համատեղ

շանքերով հայ տարագիրներն աստիճանաբար վերածում են կազմակերպուած համայնքի: Վերապրելու խնդիրը լուծելուց յետոյ, տնտեսապես կայանալով, հայերը ձգուում են ոչ միայն պահպանել իրենց ազգային ինքնութիւնը, այլ ներդրում ունենալ նաեւ Սուրիայի տնտեսական եւ հասարակական-քաղաքական կեանքում՝ որոշակի դիրքեր գրադեցնելով և նաեւ Սուրիայի իշխանական համակարգում:

ՆԱՐԻՆԵ ՄԱՐԳԱՐԵԱՆ

Պատմական գիտութիւնների թեկնածու,
Հայոց ցեղասպանութեան
թանգարան-ինստիտուտի
աւագ գիտաշխատող

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Կրինչիլսո Թ., Հայ Գաղղականներու տեղայրումը Հալէպի մէջ 1920-1939, տե՛ս «Գեղարդ», 1976-1978 միացեալ թիւ, Հալէպ, 1978, Բ. գիրք, էջ 262:

2. Նոյն տեղում, էջ 262-263:

3. Վարժապետեան Ս. Յ., Հայերը Լիբանանի մէջ, Լիբանանահայ նորոգ գաղութին կազմաւումը, Պեյրութ, 1981, հ. Բ., էջ 40:

4. Սաֆաաթ ուուասաիթ մին ժերիտէ Էլթագատուում էլ հալապիէ ան Էլեհուալ Էլերմենիէ ուալարապիէ ֆի Էլսուալ Էլուամանիէ ուալապուտեն. Էլշամիէ, Հալէպ, 1992, էջ 187:

5. «Սուրիահայ տարեցոյց», Գահիրէ, 1924, էջ 295:

6. Սամիր Արպաջ, Արմինիա, արտ ուաշաապ, Պեյրութ, 1991, էջ 213:

7. Պրեսս Ս., Հայկական լինելիութիւնը, տե՛ս «Ազդակ», 19.08.1967:

8. Migliorino N., (Re)constructing Armenia in Lebanon and Syria: Ethno-cultural Diversity and the State in the Aftermath of a Refugee Crisis, Studies in Forced Migration, Oxford, 2008, vol 21, p. 47.

9. Ուսման Էլթուրք, սաֆաաթ մին թարիխ Էլումմէ Էլերմենիէ, Հալէպ, 1960, էջ 284:

10. Էլերմեն 1917-1939, ժամանակակից Եռություն, Համազգային 2010, թայյարի քոշոյթ, պահսան ան մեքան, ինտիմած Էլերմեն Էլիքտիսատի ֆի Լուանան, էջ 245:

11. Եղիայեան Բ., Ժամանակակից պատմու-

թիւն կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ 1914-1972, Անթիլիաս, 1975, էջ 248:

12. Սաֆաաթ ուառուսաիթ մին ժերիտէ Էլթագատուում էլհալէպիէ ան Էլսուալ Էլերմենիէ ուալարապիէ ֆի Էլսուալ Էլուամանիէ, էջ 177-178

13.- Նոյն տեղում, էջ 186-187:

14.- Նաճարեան Ե., Հայ-արաբական փոխարաբերութիւնները Սուրիայում, տե՛ս «Սերծաւոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ», Երեւան, 1974, հ. 6, էջ 136:

15. Նոյն տեղում:

16. Burtt J., F. R. G. S., The people of Ararat, London, 1926, p. 109.

17. Տիրան Պապիրեան, մեսիրէ Էլերմենի մին Կիլիկիա լէժէ իլէ Լուանան, էջ 244, Էրմեն 1917-1939:

18. Զարիկեան Ե., Մերենագործութիւնը Հալէպի մէջ եւ Առաջին հայ վարպետները, տե՛ս «Գեղարդ», գիրք Բ., էջ 299:

19. Արիսեան Նորա, դէուաիլ Էլմերմեն ֆի Էլթիրը Էլսուալ, Դամասկոս, 2002, էջ 166-167:

20. Սաֆաաթ ուառուսաիթ մին ժերիտէ Էլթագատուում էլհալէպիէ ան Էլսուալ Էլերմենիէ ուալարապիէ ֆի Էլսուալ Էլուամանիէ, էջ 187:

21. «Սուրիահայ տարեցոյց», Հալէպ, 1925, էջ 191:

22. Գապպաճեան Գ. Սուրիա, քաղաքական, կրօնա-պատմական, կրթական եւ տնտեսական տեսակետով տե՛ս «Տարեւ» տարեցոյց, կրօնաբանասիրական-գրական. Բ տարի, Հալէպ, 1926, էջ 277:

23. Նանսենը դիմում է Ազգերի լիկայի անդամապետութիւններին՝ դրական լուծում տայլու այդ հարցին: Անհրաժեշտութեան դեպքում առաջարկում է այդ հարցի շուրջ յատուկ կոնֆերանս հրավիրել: Սեպտեմբերի 9-ին Նանսենը զեկուցում է, որ բազմաթիւ պետութիւններ արդէն տուել են իրենց համաձայնութիւնը, ուստի, կոնֆերանս գումարելու յարկ չի լինում: Մանրամասն տե՛ս Ս. Արգումաննեան, Նանսենը եւ Հայաստանը, Երեւան, 1977, էջ 113-114:

24. Թոփուզեան Յ., Սուրիահայ եւ Լիբանանի հայկական գաղթօճախների պատմութիւն (1841-1946), Երեւան, 1986, էջ 178:

ՕՍՄԱՆԵԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԴԵՄՀԱՅ-ՅՈՒՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ՓՈՐՁԵՐԸ (XX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴ)

Օսմանեան տիրապետութեան տակ գտնուող երկու քրիստոնեայ ժողովուրդների՝ հայերի եւ յոյների՝ սովորանական բռնատիրութեան դեմ համագործակցութեան վաղ օրինակները հասնում են 17-րդ դար⁽¹⁾: 1821 թ. սկսած յոյների ազատագրական պայքարը գլխաւորած «Ֆիլիկի Եթերիա» գաղտնի կազմակերպութեանն անդամագրուել են նաեւ հայեր, որոնք այդ ապօտամբութեան նպաստաւոր ելքի հետ էին կապում հայ ժողովորդի ազատագրութիւնը⁽²⁾:

Հայ-յունական համագործակցութեան նոր շրջան է սկսւում 1890-ական թթ. ապտիկիամիտեան «զուլումի» տարիներին: 1890 թ. յուլիսին Գում Գափուի ցոյցից յետոյ Յունատան են անցնում հայ փախստականների բազմաթիւ խմբեր: Կ. Պոլսից Աթենք է տեղափոխում նաեւ Յնչակեան կուսակցութեան

կենտրոնական վարչութիւնը, որը պաշտօնապես միանում է «հոչակաւոր Արևելեան դաշնակցութեանը (Անատոլիի Օմոսպոնդիա - Confederation Orientale)՝ կազմուած մակեդոնական, ալպանական եւ կրետական յոյն յեղափոխական մասնախմբերից»⁽³⁾: Դրա նպատակը թուրքական բռնատիրութեան դեմ միասնաբար հանդէս գալն էր: 1897 թ. յոյնթուրքական պատերազմի ժամանակ Յունաստանի տարածքում Յնչակեան կուսակցութիւնը կազմակերպում է 600 հոգուց բաղկացած հայ կամաւորների մի խումբ՝ խմբապետ Նշան Սիրաքեանի հրամանատարութեամբ, որն ակտիւ մասնակցութիւն է ունենում պատերազմական գործողութիւններին եւ պարգեւատրուում յունական բանակի հրամանատարութեան կողմից⁽⁴⁾:

Հայ եւ յոյն ժողովուրդների համատեղ պայքարելու ձգտումը լայնօրէն դրսեւորուեց նաեւ պալքանեան պատերազմների ժամանակ: Յայտնի է, որ Առաջին պալքանեան պատերազմի ժամանակ բուլղարական բանակի կազմում թուրքերի դեմ մարտնչում էր հայկական մի զօրամիաւորում («Հայկական վաշտ») Անդրանիկի եւ Գարեգին Նժդեհի գլխաւորութեամբ: «Հայկական վաշտը» մասնակցեց բազմաթիւ յունա-



կան թևակավայրերի ազատագրութեանը: Իսկ մինչեւ Երկրորդ պատերազմի սկսուելը զօրամասն ինքնակազմալուծում է՝ չշանկանալով մասնակցել յունական բանակի դեմ մղուած ռազմական գործողութիւններին: Անգամ օսմանեան եւ պուլկարական բանակներ զօրակոչուած հայ գինուորները հարիւրներով անցնում էին յունական բանակի կողմբ: Միայն Սալլիսիկում 1913 թ. հաստատուել էր 700-800 յոյների կողմն անցած հայ գինուոր⁽⁵⁾:

Չուաշին Յամաշխարհային պատերազմի տարիներին Օսմանեան կայսրութեան տարածքում գրեթե զուգահեռաբար իրականացնում էր Երկու ժողովուրդների զանգուածային կոտորածների եւ արտաքսումների քաղաքականութիւն: Երկու բախտակից ազգերը, տեսնելով եւ հասկանալով իրենց դրութեան ընդհանրութիւնը, համագործակցում էին: Շատ վայրերում նրանք օգնում էին միւնաց, կամ միասնաբար հանդէս գալիս:

Այս վայրերում, ուր հայ եւ յոյն թևակչութիւնն ապրել է հարեւանութեամբ, Ցեղասպանութեան ժամանակ ցուցաբերել են ինքնապաշտպանութեան բազմաթիւ օրինակներ: Դա դրսեւորուել է Տրապիզոնում, Սամսոնում, Փոքր Յայքի Եղողաթի շրջանում: 1916-1922 թթ. այդ վայրերում կազմուել են հայ-յոյնական միացեալ մարտախմբեր: Յատկանշական է Զանզի լեռներում (Ամիսոսի եւ Սամսոնի միջեւ) հայկական հայդուկային մարտախմբերի մղած Երկարատեւ գոյամարտը, որի ընթացքում՝ 1916 թ. նոյեմբերին, ծանր կորուստների գնով փրկուել եւ ռուսական գրաւման գօտի է փոխադրուել մօտ 200 յոյն ընտանիք⁽⁶⁾:

Յոյները եւս իրենց հերթին հնարաւորութեան սահմաններում օգնում էին հայերին՝ թուրքական եաթաղանից փրկուելու համար: Բազմաթիւ հայեր ապաստան գտան յոյների տներում, հայ Երեխաներ էլ յունական ուղղա-



փառ եկեղեցու հաստատութիւններում⁽⁷⁾: Այս առումով յատկապես աչքի ընկաւ Տրապիզոնի յոյն մետրոպոլիտը, ով 1915 թ. փրկեց Երկու հարիւր հայ տղայի եւ նրանց տեղաւորեց որբանոցներում⁽⁸⁾: Նրա շնորհիւ նաեւ 150 հայ աղջիկ տեղաւորուեց յունական ընտանիքներում: Սակայն թուրքական կառավարութիւնը, իմանալով այդ մասին, գինուորականների միջոցով նրանց դուրս բերեց իրենց թաքստոցներից, բոլորին բռնաբարեցին կամ խողխողեցին, ոմանց բացեիրաց փողոցի մէջ՝ հենց մետրոպոլիտի դրան առջեւ⁽⁹⁾:

Մետրոպոլիտը կատարեց հայասպաստայլ քայլեր եւս: Երբ ջարդերից յետոյ Տրապիզոնի հայերի գոյզը հանուեց իրապարակային աճուրդի, ինչպէս դա եղել էր Կարինում, իթթիհատականներին, ապա միւս թուրքերին վաճառելուց յետոյ, թոյլ տրուեց, որ յոյները եւս մասնակցեն գնումներին, սակայն սա արգելեց յոյներին գնել հայերի իրերը⁽¹⁰⁾:

Չուաշին Աշխարհամարտի տարիներին հայ եւ յոյն ժողովուրդների բարեկամութիւնը մէկ անգամ եւս դրսեւորուեց կապուած Յունաստանում հայ գաղթականների գինուորագրման խնդրի հետ: Տեղի հայկական համայնքի ներկայացուցիչները դիմում են Ե. Վենիգելոսին՝ խնդրելով նրան, որ հայ գաղթականները յոյն գաղթականների նման չգինուրագրուեն յունական բանակ: Վենիգելոսը, լսելով հայ պատուիրակների խնդրանքը, Պատերազմական և ախարարութեանը յատուկ իրաման է իշեցնում, որի համաձայն



գաղթական հայերն ազատում են զինուորական ծառայութիւնից⁽¹¹⁾:

Այսուամենային, պէտք է նշել, որ համագործակցութեան փորձերը մինչեւ Առաջին Համաշխարհային պատերազմի աւարտը կրում էին «մասնաւոր բնոյթ» եւ հանդէս գալիս առանձին դրուագներով: Միայն Օսմանեան կայսրութեան պարտութիւնից յետոյ իրական հևարաւորութիւններ ստեղծուեցին յարաբերութիւններ հաստատելու եւ կառուցելու ուղղութեամբ: Այս շրջանում հայ-հունական համագործակցութեան առաջին քայլերը⁽¹²⁾ ձեռևսարկուեցին 1918 թ. սեպտեմբերին Աթենքի փոքրաթիւ հայկական գաղութի (շուրջ 300 հոգի) դեկավարութեան կողմից: Նրանք շիման մէջ մտան յոյն «իոնեթեստիստների» դաշինքի հետ, որպեսզի ստեղծուի յոյն-հայկական լիկա: Երկու երկրների կառավարութիւններն սկսեցին ուղիներ փնտռել ընդհանուր գործողութիւնների համար: Յունական խորհրդարանն իր հիացմունքն արտայայտեց «հայ ազգի վերածնութեան» պայքարի համար եւ համոզմունք յայտնեց, որ Յունաստանը Հաշտութեան վեհաժողովում կը պահանջի հայ ժողովրդի արդարացի բաղձանքների վերջնական ճանաչումն ու սրբագրութմը⁽¹³⁾: Եւ, իսկապէս, 1919 թ. փետրուարի 3-ին եւ 4-ին Փարիզի վեհաժողովում Յունական խնդիրը ներկայացնելիս վարչապետ Շ. Վենիգելոսը բարձրացրեց նաեւ Հայկական հարցը: Ըստ Վենիգելոսի «Հայկական հարցը հևարաւոր կը լինի լուծել միայն վիլսունեաւ

սկզբունքների «լայն եւ մեծահոգի մեկնաբանութեամբ» եւ, այդպիսով, դադարեցնել այդ ժողովրդի տառապանքները, որը պատերազմի ընթացքում շարդերի պատճառով կորցրեց աւելի քան մեկ միլիոն մարդ»⁽¹⁴⁾:

Յունական խորհրդարանի՝ Հայաստանին աջակցելու պատրաստակամութիւնն արտայայտուեց նաեւ յունական արքայ Ալեքսանդրի՝ Պօղոս Նուպարին ուղղուած հաղորդագրութեան եւ Հայաստանի անկախութիւնը ճանաչելու մէջ: Փաստօրէն, Յունաստանը դարձաւ նաեւ առաջին երկրներից մէկը, որը ճանաչեց Հայաստանի Հանրապետութիւնը:

1918 թ. աշնանը սերտ համագործակցութիւն սկսուեց Կ. Պոլսի երկու՝ հայոց եւ յունաց տիեզերական պատրիարքարանների միջեւ: Յատկապէս կարեւոր է, որ երկու եկեղեցիների ներկայացնելիքիցիների՝ Գ. Չոնեսովի եւ Դաւթեանի համատեղ յայտարարութեամբ որոշում ընդունուեց ստեղծել միասնական կոմիտէ, որը պէտք է զբաղուէր իրենց հողերից տեղահանուած հայերի եւ յոյների վերադարձի հարցերով: Ուշադրութիւն էր դարձըն Թուրքիայի նկատմամբ տարածքային պահանջներ ներկայացնելիս երկու ժողովուրդների փոխօգնութեան վրայ եւ որոշեց, որ հայերը պէտք է օժանդակէին յոյներին Թրակիայի, Կ. Պոլսի, Սիկոմետիայի սանչակի, Պրուսայի եւ Այտընի վիլայեթների պահանջատիրութեան հարցերում, իսկ իր հերթին յունական կողմը երաշխաւորում էր իր աշակցութիւնը Արեւմտեան Հայաստանի վեց վիլայեթների վերադարձման հարցում (Սեբաստիա, Խարբերդ, Էրզրում, Տիարպերի, Պիթլիս, Վան եւ Ելք Ատանայի հատուածով)⁽¹⁵⁾:

1919 թ. ընթացքում շարունակուեց հայ-յունական յարաբերութիւնների բնականոն զարգացումը, սակայն կային որոշ «անհարթութիւններ»՝ կապուած Պունտոսի խնդրի

հետ: Յունաստանի վարչապետ Է. Վենիգելու ը համաձայնել էր, որ Տրապիզոնի վիլայեթն ընդգրկուի Յայաստանի մեջ: Եւ իրօք, 1919 թ. փետրուարի 3-ին եւ 4-ին Փարիզի հաշտութեան վեհաժողովում յունական պահանջը ներկայացնելի ընդգծեց, որ Տրապիզոնի նահանգը պետք է ընդգրկուի Յայաստանի կազմի մեջ՝ չնայած որ այստեղ յոյները շատ աւելի են հայերից, սակայն Պոնտոսի յոյն ազգաբնակչութեան համար, անկասկած, կ'ապահովուեր իրաւահաւասարութեան եւ ինքնավար զարգացման իրաւունք⁽¹⁶⁾: Այդ պահանջը տեղ գտաւ նաեւ հայկական երկու պատուիրակութիւնների կազմած միացեալ յուշագրում⁽¹⁷⁾:

Սակայն շուտով պարզ է դառնում, որ Պոնտոսի խնդրի կարգաւորման նման տարբերակը բուն Յունաստանում որոշ ընդդիմութեան է հանդիպում այն յոյն քաղաքական գործիքների կողմից, որոնք կողմնակից եին անկախ յունական «Պոնտոսի պետութեան» ստեղծմանը: Սակայն Վենիգելոսի դիրքորոշումն ամենեւին էլ հասարակ հայասիրութիւն չէր: Բնականաբար, նրա համար առաջնայինը յոյն ժողովրդի շահերն եին: Սակայն Վենիգելոսի լայնախոհութիւնը եւ քաղաքական հեռատեսութիւնը հնարաւորութիւն եին տալիս նրան հասկանալու, որ հայ-յունական տարածքային ցանկացած հակասութիւնը կ'ուժեղացնի երկու երկրների վրայ դաշնակիցների ճնշումը, որից կը շահի թուրքիան, իսկ կը տուժեն ե՛ւ յոյները, ե՛ւ հայերը:

Այնուամենայնիւ, Պոնտոսում տեղի յոյները նպատակ ունեին ստեղծել անկախ պետութիւն: Նրանք եւս կազմում են պատուիրակութիւն, որը Փարիզի հաշտութեան վեհաժողովին է ուղղում յուշագիր⁽¹⁸⁾: Սակայն հարցի նման լուծումն իրական հնարաւորութիւններ չուներ, ուստի պոնտոսի յոյները բանկցութիւններ են սկսում նաեւ Յայաստանի կառավարութեան

հետ: Այդ նպատակով 1920 թ. յունուարին Երեւան է ժամանում նաեւ մետրոպոլիտ Խրիստոնոսը (Ֆիլիպիդես, 1882-1949)՝ Տրապիզոնի վերջին մետրոպոլիտը (1913-1923):

Ի վերջոյ, բանակցութիւնների արդինքում Յայաստանի կառավարութեան նախագահի (Ալ. Խատիսեան) եւ Խրիստոնոսի ստորագրութեամբ նամակներ ուղարկեցին Յունաստանի կառավարութեան նախագահ Ե. Վենիգելոսին ու Խաղաղութեան վեհաժողովում Յայաստանի ու Պոնտոսի պատուիրակութիւններին: Մասնաւորապես նշում էր.

«1) (Երկու երկրները - Գ. Վ.) խնդրում են Խաղաղութեան կոնֆերանսի մանդատառու տերութեանը հնարաւորին չափ շուտ դաշնակցային գործեր ուղարկել, որոնք ի վիճակի կը լինեն կասեցնելու բոլշեվիկների անխուսափելի առաջինադացումը:

2) Յելլենական կառավարութիւնը նոյն ձեռվ վարուի՝ օգնելու համար Պոնտոսի յոյներին, որոնք հայերի հետ համաձայնութեան են եկել, որ ափ ելած գործերը կ'առաջանան դեպի Երգևկա եւ Երգրում, ընդդիմակայելու թուրքական կանոնաւոր գործին, իսկ հայկական բանակը կ'աշխատի կանգնեցնել բոլշեվիկների հնարաւոր առաջինադացումը Կովկասում:

3) Խնդրում են Յելլենական կառավարութեանը, որ Յունաստանից անյապաղ մարդիկ եւ ռազմամթերք առաքուեն՝ համալրելու հայկական բանակը»⁽¹⁹⁾:

Ի կատարումն այդ խնդրանքի՝ շուտով





«Ելեֆթերիա» առեւտրական շոգենաւով Յունաստանից բերուում են «րա» մակնիշի 10.000 հրացան եւ 4 միլիոն փամփուշտ: Բացի այդ յունական բանակի գլխաւոր հրամանատար Լեռնիդաս Պարասկեւոպուսի կողմից 1920 թ. սեպտեմբերի 16-ի հրամանագրով «Պատերազմական խաչ» 2-րդ աստիճանի շքանշան է շնորհուում ազգային հերոս Անդրանիկ Օզանեանին:

Փարիզում Վենիգելոսը մշտապէս տեղեկութիւններ էր հաղորդուում Պօղոս Նուպարին եւ Ալ. Կհարոնեանին դաշնակիցների՝ գերագոյն խորհրդուում տեղի ունեցող քննարկումների մասին եւ խորհրդներ տալիս հայկական հարցերի պաշտպանութեան վերաբերեալ: Միաժամանակ յունական կառավարութիւնը երախտագիտութեան մեծ զգացում ուներ դաշնակցական պատուիրակ Միքայէլ Վարանդեանի՝ Սոցիալիստական 2-րդ Խնտերնացիոնալի ժամանակ հնչեցրած ելոյթի համար, որն արդարացնուում էր Զմիւնիան յունական գինուած ուժերի կողմից զբաղեցնելը եւ Փոքր Ասիայում յոյների նպատակները:

Սեւրի պայմանագրի ստորագրումը 1920 թ. օգոստոսի 10-ին Երկու ժողովուրդների հղձերի հրականացումն էր: Երկարատեւ հալածանքներից, զրկանքներից ու կոտորածներից յետոյ, ի վերջոյ, կարծես արդարացի լուծում տրուեց նրանց ազգային ծգտումներին: Այդ ժամանակ Յունաստան է այցելում Ալեքսանդր Խատիսեանը եւ հանդիպումներ ունենում վարչապետ Է. Վենիգելոսի եւ արտաքին

գործերի նախարար Նիկոլաս Պոլիտիսի, ինչպէս նաեւ Աթենքի ու Զմիւնիայի հայ համայնքների հետ: Յունաստանում սկսում է գործել Յայաստանի դիւնագիտական առաքելութիւնը, որի գործառյթներն սկզբում իրականացնում էին Յունաստանի խորհրդարանի պատգամաւոր Գերգ Փափազեանը եւ դեսպանատան գործակատար Յարութիւն Գրլընեանը:

Շուտով Յունաստանում Յայաստանի դեսպան է նշանակուում Տիգրան Չայեանը: Իր հերթին Յունաստանի կառավարութիւնը դիւնագիտական առաքելութիւն է հիմնում Երեւանում, եւ առաջին դեսպան է նշանակուում Իոաննիս Պապասը:

Սակայն Յայաստանի առաջին հանրապետութեան անկումից եւ խորհրդայնացումից յետոյ, արդէն, Յայաստանը չէր կարող առանձին արտաքին քաղաքականութիւն իրականացնել, իսկ խորհրդային Ռուսաստանն ուներ ընդգծուած թուրքամետ կողմնորոշում: Չնայած պետական մակարդակի համագործակցութիւնը դադարեց, այնուամենային, 1919 թ. սկսուած եւ մինչեւ 1922 թ. շարունակուող յոյն-թուրքական պատերազմի տարիներին մեծ թուռու հայեր մարտնչում էին յունական բանակի կազմում: Այս շրջանում ակտիւ գործունեութիւն է ծաւալում զօրավար Թորգոմը (Արտեն-արշակ Նազգաշեան): Նա Յունաստանի արքայ Կոստանդինից 1920 թ. վերջին արտօնութիւն էր ստացել հայկական մի զօրամասի՝ «Յայկական լեգենի» կազմակերպան համար: Շուտով Յայկական լեգենի շաքերում կռուողների թիւը հասնում է 1.700 հոգու⁽²⁰⁾: 1922 թ. դրութեամբ արդէն հայ կամաւորական զօրքերի թիւը հասնում էր 2.500-ի, որից 1.500-ը գործում էր Մազնեսիա - Աֆիոն-Գարահիսարի եւ Էսկիշեհիրի տեղամասերում, 1.000-ը՝ Պրուսայի շրջանում⁽²¹⁾: Այս տուեալները չեն ներառում յունական բանակի կազմում ծառայող առանձին հայ սպա-

Ներին ու զինուորերին: Զօրավար Թորգոմը մեծ դերակատարութիւն ունեցաւ ռազմական գործողութիւնների գոտում յայտնուած մեծաթիւ յոյն եւ հայ ազգաբնակչութեան պաշտպանութեան գործում: Արդէն յունական բանակի նահանջի ժամանակ, երբ յունական հրամանատարութիւնը հրաման է տալիս լուծարել լեզենը, Թորգոմն իր պատասխանում՝ ուղղուած գեներալ-Լեյտենանտ Գեորգիս Խաձիանեստիսին, անգամ հրաժարուում է կատարել հրամանը եւ խնդրուում թոյլ տալ շարունակելու իրենց գործողութիւնները եւ «զոհուելու յանուն Յունաստանի եւ Հայաստանի»⁽²²⁾: Զմիւռնիայի աղետից յետոյ, ի վերջոյ, Հայկական լեզենի հետ զօրավար Թորգոմն անցնում է Քիոս կղզի՝ ապա՝ Աթէնք:

Յոյն-թուրքական պատերազմի տարիներին աչքի ընկան բազմաթիւ այլ հայ ռազմական գործիչներ (Յաջի Օնսիկ Ազատեան, Գրիգոր Վարլեան եւ այլն), որոնցից առանձնանում էր Արամ Կայծակը (Արամ Թերզեան) իր ջոկատով, որը յայտնի էր որպես «5-րդ անկախ հայ կամաւրական խումբ»՝ կազմուած Յաճընի եւ Կիլիկիայի այլ վայրերից սերող հայ մարտիկներից: Զոկատը մասնակցել է Մագնեսիայի ու Աֆիոն-Գարահիսարի ճակատներում մղուած մարտերին⁽²³⁾:

Թուրքական ուժերի՝ Զմիւռնիա մտնելուց յետոյ էլ՝ 1922 թ. սեպտեմբերի 9-12-ը տեղացի հայերի որոշ խումբ Արսէն Չաւուշի, Բիւզանդ ճամբարեանի եւ այլոց դեկավարութեամբ դիմում էն հերոսական ինքնապաշտպանութեան, փրկում բազմաթիւ հայերի ու յոյների կեանքեր, վերջում էլ կարողանում են հասնել յունական եւ օտարերկրեայ նաւերին ու տեղափողուում Յունաստան⁽²⁴⁾:

Յոյն-թուրքական պատերազմի աւարտից եւ, յատկապէս, Լո-

գանի պայմանագրից յետոյ իրավիճակը փոխուեց: Ամբողջ Փոքր Ասիան եւ Վրեւմըտեան Հայաստանը հիմնականում գրկուեց իր հայ եւ յոյն բնակչութիւնից, պահպանուեցին միայն առանձին բեկորներ: Հայ-յունական համագործակցութիւնն այս փուլում աւարտուեց:

Ամփոփելով, պէտք է նշել, որ Օսմանեան թռնատիրութեան դեմ հայ-յունական համագործակցութիւնն իր առջեւ դրած խնդիրներով կարելի է բաժանել հետեւեալ փուլերի.

ա) Կաղ շրջան՝ մինչեւ 19-րդ դարի վերջը: Այս փուլում գիտակցուեց եւ զարգացուեց Երկու ժողովուրդների գործակցութեան անհրաժշտութիւնը: Այն հիմնականում դրսեւորում էր յունական ազգային պատագարական շարժումներին հայերի ակտիւ մասնակցութեամբ: Նպատակը Երկու ժողովուրդների պատագարական ուժերի միաւորումն էր եւ օսմանեան լծի թօթափուլը:

բ) 19-րդ դարի վերջից մինչեւ Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը: Կապեր են ստեղծում հայկական եւ յունական յեղափոխական կազմակերպութիւնների միջեւ, մշակում համատեղ գործողութիւնների նախագծեր: Իսկ Պալքանեան պատերազմին ժամանակ հայերը մասնակցում են պատերազմական գործողութիւններին եւ հանդիսավոր գործութեան,

գ) Առաջին համաշխարհային պատերազմի տարիները: Բազմաթիւ վայրերում հայերն ու յոյները հանդիս են գալիս միասնաբար, դիմագրաւութեան մասնակի կամաց առաջնային դիմում եւ օժանդակում են միմեւանց, փրկում մեկը միւսի կեանքը: Համագործակցութիւնն այս փուլում կարելի է բնորոշել որպէս ինքնապաշտպանութեան ականական ճակատի կազմակերպման փորձ:



Դ) Մուդրոսի գիլաղադարից մինչեւ Հայաստանի Հանրապետութեան անկումը: Այս փուլը առանձնանում է միւսներից նրանով, որ համագործակցութիւնը հիմնականում տեղի էր ունենում ամենաբարձր՝ պետական մակարդակով: Ակտիւ դիւանագիտական յարաբերութիւններ են հաստատում Յունաստանի եւ Հայաստանի միջեւ: Խաղաղութեան վեհաժողովին ներկայացուելիք պահանջների հետ կապուած լուրջ բանակցութիւններ են տեղի ունենում հայկական եւ յունական կողմերի միջեւ: Փարիզում երկու պատուիրակութիւնները հանդէս էին գալիս համերաշխ՝ համագործակցելով միմեանց հետ:

Ե) Յոյն-թուրքական պատերազմի տարիներ: Հայկական կամաւորական զօրախըմբերն ակտիւ մասնակցութիւն են ունենում պատերազմական գործողութիւններին: Հայկական ուժերի կողմից բազմաթիւ յոյներ եւ հայեր փրկում են քեմալականներից:

ԳԵՂՐԳ ՎԱՐԴԱՆԵԱՆ

Պատմական գիտութիւնների թեկնածու,
Հայոց ցեղասպանութեան
թանգարան-ինստիտուտ

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Կրետէի պատերազմի ընթացքում (1645-1669) հայերը՝ տուեալ դեպքում բաղիշեցի Սահսրահ Մուրադի գործունեութիւնը դրա վառ ապացոյցն է: Նա կարեւոր գործունեութիւն ծառալեց ֆրանսական արքունիքում՝ վստահեցնելով Լիւդովիկոս 14-րդին, որ Օսմաննեան կայսրութեան հայերն ու յոյները, եթէ նրանց օգնութիւն ցոյց տրուի, կը թօթափեն թուրքական լուժը: Տես՝ Անասեան Յ., հայ-յունական ազատագրական պայքարի մի էջ Կանդիայի պատերազմի շրջանից (XVII դար), ՀՍՍԸ ԳԱ «Տեղեկագիր» հասարակական գիտութիւնների, 1954, թիւ 3, Երեւան: ՀՍՍԸ ԳԱԱ հրատ., էջ 95:

2. Բարթիկեան Յ. Մ., Յունական «Հիդրա հանրագիտարանը Հայաստանի եւ հայերի մասին», Պատմաբանասիրական հանդես, 1981, թիւ 2, Երեւան: ՀՍՍԸ ԳԱԱ հրատ., էջ 290:

3. Կոկինսո Պ., Յունահայ գաղութի պատմութիւնից (1918-1927), Երեւան: ՀՍՍԸ ԳԱ հրատ., 1965, էջ 11:

4. Նոյն տեղում, էջ 14:

5. Ռամազեան Ս., Հայ-յունական ռազմական առևտութիւնների եւ համագործակցութեան պատմութիւն, Արենք, 2010, էջ 143:

6. Նոյն տեղում, էջ 145:

7. Hassiotis I., «The Armenian Genocide and the Greeks: Response and Records (1915-1923)», The Armenian Genocide; History, Politics, Ethics (ed. R. Hovhannisyan), New York: St. Martin's Press, 1992, p. 130.

8. Պառափի Յ., Սարսափի երկրին մեջ: Նահատակ Հայաստան / Թարգմ.՝ Միքայել Շամտանեան / Կ. Պոլիս: Տպագր. Յ. Ասատուրեան եւ որդիք, 1919, էջ 30 -31:

9. Հայերի ցեղասպանութիւնը Օսմաննեան կայսրութիւնում, Փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու Մ. Գ. Ներսիսեանի խմբագրութեամբ, Երեւան: Հայաստան, 1991, էջ 543:

10. Պառափի Յ., Աշ. աշխ., էջ 32:

11. Սակարեան Ա., Յուշագիրը Թրակիոյ եւ Սակեղոնիոյ հայ գաղութերու, Սելանիկ: Տպ. «Յորիզոն» օրաթերթի, 1929, էջ 105:

12. Ա. Ուլունեանը հայ-յունական համագործակցութիւնը բաժանում է երեք փուլի՝ 1. 1918 թ. սեպտեմբեր-դեկտեմբեր, 2. 1919 թ. յունուար-1919 թ. աշուն, 3. 1919 թ. աշուն-1920 թ.:

13. Յովհաննիսեան Ո. Գ., Հայաստանի Հանրապետութիւն, Յատոր Ի. Առաջին տարին, 1918-1919 / ՀՀ ԳԱԱ Պատմ. ինստ., Խմբ.՝ Ա. Խառատեան/, Եր.: Տիգրան Սեծ, 2005, էջ 299:

14. Նոյն տեղում, էջ 299:

15. Hassiotis I., Shared Illusion: Greek - Armenian Co-operation in Asia Minor and the Caucasus (1917-1922)-, Greece and Great Britain During World War I, Thessaloniki: Institute of Balkan Studies, 1985, p. 144.

16. Յովհաննիսեան Ո., Աշ. աշխ., էջ 304:

17. Հայկական հարցը Հաշտութեան կոնֆերանսի առաջ, Հայոց ցեղասպանութեան պատմութեան եւ պատմագրության հարցեր, թիւ 5, Երեւան: Հայոց ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտի հրատ., 2002, էջ 159:

18. [National Delegation of the Euxine Pontus], Memorandum submitted to the Peace Conference, Manchester: Norbury, Natzio & Co. Ltd., 1919.

19. ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 182, թ. 16:

20. Նոյն տեղում, էջ 200-201:

21. Նոյն տեղում, էջ 208-209:

22. Նոյն տեղում, էջ 214-215:

23. Նոյն տեղում, էջ 206-207:

24. Նոյն տեղում, էջ 222-223:


«ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄՈՏԵԼՆԵՐԸ» ՈՐՊԵՍ ԱՄԲՈԽԻ ՎԱՐՁԻ ԿԱՇՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՇԴԱԿՆԵՐ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԳԹԵՔՍՈՒՄ

Մինչեւ 1920-ական թթ. գիտական շրջանառութեան մէջ երայն տեսութիւնը, որ մարդկային բնութիւնն (բնազդն) է ձեւաւրում մարդու վարքը, իսկ 1930-ական թթ. պիհեւիորիստներն առաջ քաշեցին այն տեսակետը, որ մարդկանց վարքի կազմակերպման հիմքում ընկած է մշակոյթը՝ որպէս մարդկային վարքի պատճառային ենթաթեքստ⁽¹⁾: Արդեօք մշակութային միջավայրում առաջացած սահմանային իրավիճակներում հասարակութեան հասարակ անդամն իր վարքը կազմակերպում է հիմնային բնագրներով առաջնորդուելո՞վ, թէ՞ մշակութային միջավայրն է պայմանաւորում այն: Ինչպէս է անհատը հասարակութեան խաղաղ անդամից վերածում մարդասպանի եւ մասնակից դառնում զանգուածային բռնութիւններին, եւ ի՞նչ դեր են կատարում դրանում սոցիալիզմացիայի ընթացքում իրացուած «մշակութային մոտելները»:

Ինչպէս պատմութեան մէջ բոլոր յեղափոխութիւնները, պատերազմները եւ կոտորածները, այսպէս էլ Օսմանեան կայսրութիւնում հայերի նկատմամբ իրականացուած ցեղասպանութիւնն սկսուեց ոչ թէ զենքով, այլ յայտնի խօսքային ձեւաչափումներով: Ժողովրդական զանգուածների վարքը կազմակերպելու եւ ցեղասպանութեանը մասնակից դարձնելու համար իշխանութիւններն օգտագործում եին «մշակութային մոտելները» որպէս քարոզութեան ենթաթեքստ եւ ստեղծում այսպիսի հոգեբանական մթնոլորտ, որում ան-



հատները կորցնում են առանձնայատուկ ընդունակութիւնները եւ արմատապէս վերափոխում իրենց վարքը: Դեռևս 1890-ական թթ. սկսած թուրքական ազգայնական շարժումը, որը քաղաքական բնոյթ ստացաւ 1904 թ. Եռուսոֆ Ակչուրայի՝ «Զաղաքականութեան երեք ձեւերը» յօդուածով, զուգակցում էր երեք կարեւոր գործուներով՝ նուաճողական բարդոյթ, թերարժեքութեան բարդոյթ, թշնամու կերպարի ստեղծում: Այն յանգենում է victimisation-ի՝ ընտրուած զոհի ոչնչացմանը⁽²⁾: Օսմանեան կայսրութիւնում ստեղծել էր այսպիսի անկայուն մթնոլորտ, որի պայմաններում հեշտ էր ձեւաւորել այն գաղափարը, որ հայերը ներքին ամենավտասգաւոր թշնամիներն են: Այն հանգամանքը, որ հայերը քիչ են յարկեր վճարում, զինուորական ծառայութեան չեն ենթարկում, աւելի լաւ են իրենց դրսեւորում առեւտրում,



կազմում են Օսմանեան բիլովկրատիայի մեկ երրորդ մասը, օգագործուում եր իշխանութեան կողմից հայերի նկատմամբ վրդովմունք առաջացնելու համար: Դեռ Ապտիլ Յամիտ Բ. յայտարարեց, որ «հայերը դեգեներատ համայնք են... մշտապէս շողոքորթ...»⁽³⁾: Ներշնչանքը գործում է այսպիսի պայմաններում, երբ առկայ են գաղափարներ, զգացողութիւններ, որոնք բացատրութիւն եւ տրամաբանութիւն չեն պահանջում, բայց ստեղծում են խմբային հաւաքական մտածողութիւն, ինչն ել իր հերթին եապես տարբերում է անհատականից: Ամբոխի գործողութիւնները բոլոր ժամանակներում եւ տարբեր երկրներում կրկնուում են ստերիոտիպերով: Որպէսզի հասարակութեան անդամները համախմբուեն եւ մասնակից դառնան զանգուածային անկարգութիւններին կամ կոտորածներին անհրաժեշտ է, որ առաջնորդ հասարակութեան մեջ ունենայ հեղինակութիւն, ընկալուի որպէս փրկիչ, օժտուած լինի միֆական ուժով եւ ամբոխի մեջ հաւատ արթացնելու համար ինքը բուռն հաւատայիր քարոզած գաղափարին: Այսպիսով, Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանեան կայսրութեան տարածքում հայերի ցեղասպանութիւնը ծրագրաւորող անհատները միֆեր են ստեղծում ոչ միայն Մեծ Թուրանի վերաբերեալ, այլև իրենց անձի շուրջ: «Միութիւն եւ առաջադիմութիւն» կուսակցութեան երկրորդ քարտուղար Պեհաւութիւն Շաքիրն իր ու իր գործընկերներին համեմատում էր Զրիստոսի, Մովսեսի, Մու-

համետի հետ⁽⁴⁾: Այսպիսով, տեղի է ունենում սուպերեգոյի փոխակերպում առաջնորդի կերպարի⁽⁵⁾: Նոյնիսկ ոչ սահմանային իրավիճակներում գտնուող մշակութային միջավայրում անհնար է պատկերացնել խմբային կեանքն առանց հեղինակային կողմնորոշման: Վերջինս պայմանաւորում է նաեւ հասարակութեան աւանդական ուղղահայեաց կառուցուածքով:

Ամբոխի վարքը կազմակերպելու համար ազդակ հանդիսացող «մշակութային մոտելսերից» մեկը «օտարի» կերպարի շուրջ պաթոգեն գործողութիւն պարունակող միֆական տեղեկատուութիւնն է: Ազրեսի վարքի կազմակերպման համար կարեւոր է այն, թէ ինչպէս է «օտարի» կերպարը տեղաւորում կոտորածներ իրականացնելու աշխարհընկալման մեջ: Օսմանեան կայսրութեան մահմետական մշակութային միջավայրում հայերն ընկալում են որպէս «թշնամի», որը բնորոշող ամենատարածուած թեքստերից են՝ «ոչ մարդ», «մակաբոյծներ», «անհաւատներ»-(կեաւուր), «շարժուող իրեր», «թափառական իրեաներ», «ռայա»: Այս կոչումները հանդէս են գալիս ոչ թէ որպէս տեքստեմա, այլ իրականութիւնն արտադրանք, անհատի հոգեկան վիճակի արտայայտութիւն: Անգլիացի հետազոտող Կ. Ս. Մաքկոլի հետեւութիւնն այն է, որ մուսուլմանները ռայային չեն ճանաչում որպէս նոյն մարդկային ցեղին պատկանող անձ, ինչպիսին ինքն է, նրանց սեփականութիւնը, կեանքն ու կանանց համարում են իրենց օրինական աւարը: Նոյնն է վկայում նաեւ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանեան կայսրութիւնում ամերիկեան դեսպան Ռ. Սորկընթառուն⁽⁶⁾:

Նմանօրինակ թեքստերը դառնում են յայտնի լոգունգներ, որոնց միջոցով կազմակերպիչ ուժերը հաղորդակցութեան մեջ են մտնում ժողովրդական զանգուածների հետ: Ինչպէս յայտնի է, հաղորդակցութեան ընթացքում մի մասնակիցը ծգտում է որոշակի օրեն փոխել գրուցակցի վերաբերմունքն որեւէ օբյեկտի նկատմամբ, ինչն ել իր հերթին

կարող է յանգեցնել վարքի վերակազմակերպման:

Ժողովրդական զանգուածներին համախմբող մշակութային մոտելներից է նաեւ Յայրենիքի գաղափարը: 1910 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Սալոնիկում 13 օր տեւած իթթիհատի համագումարի կարգախոսն էր «Թուրքիան միայն թուրքերի համար»: Առաջ քաշելով «Ետ դեպի Թուրան» լոգունգը՝ թուրք շովինիստները հանդէս էին գալիս թուրքական իին սովորութիւնների վերականգման օգտին: Յատկապէս Զեա Կեօր Ալփին «Թուրան» բանաստեղծութեան մէջ ինսդրում է Աստծուն թուրքերին վերադարձնել «ոսկէ դարաշշանը», որպէսզի «թուրքերի հայրենիքը լինի միասնական...»⁽⁷⁾: Դեռևս 1911 թ. նա գտել էր այս հարցի պատասխանը, թէ որն է լինելու թուրքերի նոր հայրենիքը: Ըստ նրա՝ այդ հայրենիքը ո՛չ Թուրքիան էր, ո՛չ Թուրքեստանը, այլ՝ Թուրանը: Թուրանի սահմանները պէտք է ձգուէր այնքան հեռու, որքան տարածում էր թուրքերնը եւ թուրքերի քաղաքական մշակոյթը⁽⁸⁾:

Վաղ անցեալում «ոսկէ դարի» փնտռումը, նախնիների գովքը պատմաբան Ծիրելման անուանում է «սփիւրքեան ախտանիշ»: Սակայն այս յատուկ է ոչ միայն սփիւրքի ձեւաւրման գործընթացին, այլեւ ազգային գիտակցութեան կերտմանը: Այդ միֆերի մէջ առաջին հերթին պէտք է ներդրուեն գաղափարներ, որոնք մեխանիկորեն գունաւորում են եթոնգեն առասպելները, ինչն էլ վառ գյուներ է հաղորդում ազգի ինտելեկտուալ կեանքին, օժտում իրայատկութեամբ եւ գերակայութեամբ այլ ժողովուրդների նկատմամբ: Մարդիկ օգտագործում են այս ախտանիշը յաղթահարելու համար հոգեբանական ցնցումները: Այս տեսանկիւնից վերադարձն ոսկէ անցեալին ունի գործառութային նշանակութիւն, քանի որ փառաւոր անցեալում է նշմարում յուսալի ապագան:

Փաստորէն առկայ էր մտածողութիւնների ու զգացողութիւնների կենտրոնացում մի ուղղութեամբ: Այդպիսի ներշնչանքի ազդեցութեամբ մարդիկ կատարում են կրկնակի պարտականութիւն՝ դատաւորի եւ դահճի, եւ իրենց յանցագործներ չեն համարում: Նրանք համոզուած են, որ կատարում են պարտքը

Յայրենիքի նկատմամբ, որի դիմաց սպասում են նաեւ պարգեւատրութիւն եւ յաւերժական կեանքի ապահովագրութիւն: Սապահ Գուլեանը գրել է, որ Ատանայի կոտորածի առթիւ թուրքերի ցնծութիւնը սահման չուներ: Կ. Պոլիս էին լցուել Ատանայի ջարդի բոլոր գլխաւոր գործակատարները: Փողոցների երթեւեկողները հպարտութեամբ մատնանշում էին նրանց, սրճարանների մէջ խօսակցութեան ընդհանուր առարկայ էին այս «հայրենասերները», ովքեր Ատանայի կոտորածների ժամանակ դարձել էին նշանաւոր եւ աչքի ընկնող դեր էին կատարել: Զարդարարները պարծենում էին, որ այդ գործն իրենց բերեց պաշտօնի բարձրացում⁽⁹⁾:

Զանգուածային կոտորածներ իրականացնող ամբոխի մասնիկը կազմող անհատներին բնորոշ խառնուածքային գծերից է գերակայութիւն ձեռք բերման ձգտումը: Ծրչանառութեան մէջ գոյութիւն ուներ նաեւ ծայրայեղ պատկերացումներ այս մասին, որ հայերն աշխատասեր, ստեղծագործ ժողովուրդ են եւ առաւելութիւններ ունեն թուրքերի նկատմամբ: Խնդիր է առաջանում որպէս «ընտրեալ ազգ» վերականգնելու արդարութիւնը: 1911 թ. Յենի Hayat (Սոր կեանք) ամսագրի յօդուածում Զ. Կեօր Ալփին գրում է, որ «գերմանացի փիլիսոփայ Նիցշէի պատկերմամբ թուրքերը սուփըրմէն են... նոր կեանքը ծնուելու է թրջութիւնից»⁽¹⁰⁾: Ահմետ Աղայեւը, Մեհմետ Էմին Ռասուլզատեն իրենց գրուածքներում հասնում էին ծայրայեղ ռասիզմի, թուրքերի բացարիկութեան քարոզ էին կարդում: Երիտրուրքական մամուլում շուտով թուրքերի հասցեին աւելի ու աւելի յաճախ սկսեց լսուել «Միլլեթ ի հաքիմի» (տիրապետող ազգ) արտայայտութիւնը: Ըստրեալ ազգի գաղափարը եւս «մշակութային մոտել» է:

Ժողովրդական զանգուածների վարքը կառուցող մէկ այլ մշակութային մոտել է «սրբազն պատերազմը» (շիհադ): Կոտորածների նկարագրութիւններում յաճախ հանդիպում ենք այնպիսի դեպքերի, երբ հայերի վրայ յարձակուող մահմետականները կրօնական բնոյթի կոչեր են անում: Օրինակ, ըստ Խարբերդի նահանգում տեղի ունեցած դեպքերի նկարագրութեան, քրտերը հայերի վրայ յարձակուելիս բղաւում էին «Կեցցէ՛ Մուհամե-

տը»: Խարբերդ քաղաքի հայութեան տեղահանութիւնից յետոյ տեղի բնակչութիւնն ասում էր. «Սուհամետը յաղթեց Զրիստոսին»⁽¹¹⁾: Կամ մահացած զրիստոնեաների վերաբերեալ ասում էին, թէ Զրիստոսը մոռացել է նրանց⁽¹²⁾: Ուրֆայում սպանութիւններ իրականացնելուց առաջ մուտքմաները հատուածներ էին կարդում Չուրալսից:

Որպեսզի հասարակութեան անդամը փոխակերպուի մարդասպանի, մասնակից դառնայ կոտորածներին, պետք է իր գործողութիւնները մտովի պատկերացնի: Ստեղծուած նոր սոցիալական միջավայրի հետ փոխգործունեութեան մեջ մտնելու համար, նրան անհրաժեշտ են գործողութեան նոր ու բարդ կառոյցներ: Այդ կառոյցները՝ անհատին ներշնչած գաղափարները, նրա համար չպետք է լինեն նոր եւ պետք է համապատասխանեն նրա՝ սոցիալական միջավայրի մասին ուսեցած պատկերացումներին: Մարդու միտքը հասկես է գալիս որպես տարածութիւն, որտեղ բախւում են կենսաբանական բնագդները եւ սոցիալական իրականութիւնը: Յատկապես թեքստերին արդիւնաւետ են լինում, եթէ դրանք ընկալուելու են այսպիսի մարդկանց կողմից, ովքեր տիրապետում են թեքստերում ներդրուած կողմիտիւ ստրուկտորաներին⁽¹³⁾: Սա նշանակում է, որ խմբի անդամ հանդիսացող անհատները համախմբւում են ոչ թէ «Վոհմակային բնագդով»⁽¹⁴⁾, այլ որպես կազմակերպուած խումբ, եթէ անգամ նրա անդամները գործում են անհատականօրէն: «Վոհմակային բնագդն» ընդհանրապես տեղ չի թողնում առաջնորդի համար, և այսպիսի պատահական է գալիս վոհմակ, սակայն ամբոխի վարքի կազմակերպման վերլուծութիւնը ցոյց է տալիս, որ այս կամ այս պատմական ժամանակաշրջանում ժողովրդական զանգուածներին յատուկ ոգեւորուածութիւնն ու ֆանատիզմն իրենցից ներկայացնում են հոգեկան համաճարակներ, որոնք զարգանում են առաջնորդների կողմից խօսքի ներշնչման շնորհիւ:

Չնայած 1970-ական թթ. կողմիտիւ հոգեբանութիւնը, Եվոլիւցիոն կենսաբանութիւնը, պալեոնթոպոլոկիան վերադարձան տարուինեան այս ուսմունքին, թէ բնագդը շարունակական բնոյթ է կրում կենդանիների ու

մարդկանց մեջ, սակայն, ամբոխի վարքի կազմակերպման գործընթացը ցոյց է տալիս, որ այս երկու տեսութիւնները սերտաճած են միմեանց: Ոչ թէ մշակոյթը կամ բնագդն է ձեւարում վարքը, այլ «մշակութային մոտելներն» ազդակներ, գրգիռներ են հանդիսանում բնագդի արթնացման համար:

ՅԱՍՍԻԿ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Դայոց ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտ

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹԻՒՆԵՐ

1. Waller J., *Becoming evil, second edition*, Oxford, 2007, p. 147-148.

2. Յովհաննիսեան Ա., Ռասիզմ եւ ցեղասպանութիւն 1915թ., Դայոց ցեղասպանութիւնը, պատմութեան եւ պատմագրութեան հարցեր, յօդուածների ժողովածու, Երեւան, 1995, էջ 39:

3. T. Akcam, *A shameful act*, New York, 2006, p. 143, Ali Vehbi Bey, Abdulhamit, pp.12, 31, E. Z. Karal, Osmanli Tarib, vol. 13, (Ankara, 1988), p. 484.

4. Ռիֆատ Մելքան Չաղէ, Օսմանեան յեղափոխութիւնը եւ մութ ծալքերը, Պէյրութ, 1990, էջ 99:

5. Սուլեյմանի՝ առաջնորդի կերպարի վոխակերպման տեսութեան հեղինակն է աւտորիացի հոգեբան Զ. Ֆրեյտը:

6. Դեսպան Մորկընթառուիի պատմածները, թարգմանեց Մ. Շամտաճեան, Կ. Պոլիս, 1919, էջ 276:

7. Դազարեան Հ., Ցեղասպան թուրքը, Պէյրութ, 1968, էջ 16-17:

8. T. Akcam, նշ. աշխ., p. 92.

9. Սապահ Գուլեան Ա., Պատասխանատուները, Պրովիդենս, 1916, էջ 41:

10. T. Akcam, նշ. աշխ., p. 88:

11. Փիրունեան Ն., Խարբերդի եղեռնը, Պութըն, 1937, էջ 302:

12. Մարտիգանեան Ա., Յօշոտուած Դայաստան, Լու-Անճելըն, 1995, էջ 94:

13. Կողմիտիւ ստրուկտուրաներն անհատի համոզմունքների համակարգ են, որը ձեւարում է նրա գիտակցութեան մեջ բնաւրութեան, դաստիարակութեան, ուսման եւ շրջակայ միջավայրի ուսումնասիրման ու վերլուծութեան արդիւնքում, <http://dic.academic.ru>, 08.04.2010.

14. Այս տեսութեան հեղինակն է անգլիացի բժիշկ Ու. Թրոթերը:


«ԳՐքԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ»

«ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՕՍՄԱՆԵԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԵԶ 1878 - 1923»

ՀԵՂԻՆԱԿ ԴՈԿ. ՄՈՀԱՄԵԴ ՌԻՖԱՎԱՋ ԱԼ ԻՄԱՄ
ԱՐԱԲԵՐԵՆԵ ԹԱՐԳՄԱՆԵՑ՝ ԴՈԿ. ՀՈՒՐԻ ԱԶԵԶԵԱՆ

Յայոց պատմութիւնը հազարամեակներ շարունակ մշտապէս հետաքրքրել է հարեւան ժողովրդների պատմիչների, փիլիսոփաների եւ զանազան այլ մասնագիտութեան տեր անձանց: Դա պայմանաւորուած է նաեւ այն հանգամանքով, որ հայկական աղբիւրները հարուստ նիւթ պարունակելով դրկից ազգերի մասին եւ մեծապէս օգնելով նրանց պատմութիւնը լուսաբանելու համար, որոշակի հետաքրքրութիւն են առաջացող դեպի մեր երկրի հարուստ մշակոյթն ու նրա ստեղծագործ մարդիկը:

Այդ իմաստով բացառութիւն չէ ոչ միայն որոշակի գրաւչութիւն պարունակող իին եւ միշնադարեան Հայաստանի, այլև նրա նոր դարաշրջանի, մասնաւորապէս 19-րդ դարի վերջին քառորդի ու 20-րդ դարի առաջին տասնամեակների մեր պատմութեան խռովայոց շրջափուլը, երբ Օսմանեան կայսրութիւնում Երոպական տերութիւնների կողմից առաջ քաջուեց Արեւմտահայաստանում հայութեան համար բարեփոխումների իրականացման ծրագիրը, հայերիս ընկալմամբ՝ արեւմտահայութեան ազատագրութեան խնդիրը, միջազգային դիւանագիտութեան մեջ մտած՝ Հայկական հարցը: Այս դժուարին ու չարչրկուած խնդիրը մօտ 40 տարի մաս



կազմեց Եւրոպա-Թուրքիա կնճռոտ դիւանագիտական յարաբերութիւններին եւ Առաջին Աշխարհամարտի տարիներին ողբերգական վախճան ունեցաւ հայութեան համար. աւարտուեց հայերի նկատմամբ ցեղասպանութեան իրականացմամբ:

20-րդ դարի սկզբին օսմանեան Թուրքիայում տեղի ունեցած արեւմտահայութեան երեսնագործութեան մասին երկարատեւ լրութիւնից յետոյ «քաղաքակիրթ» աշխարհից կրկին խօսեց միայն 20-րդ դարի վերջին տասնամեակներին: Վերջապէս տարբեր երկրների գիտական ու քաղաքական շրջանակներ սկսեցին բարձրաձայնել այս հարցը. լոյս տեսան բազմաթիւ ժողովածուներ ու մենագրութիւններ, որոնք նոր լոյս սփոռեցին 1915-1923 թթ. հայոց Մեծ Եղեռնի դաժան իրողութեան վրայ:

Ի թիւս աշխարհի շատ հումանիստների, քաղաքական գործիչների ու գիտնականների՝ համաթրքականութեան զոհ դարձած հայ ժողովրդի ողբերգութեան արձագանգեցին արաբ ժողովրդի բազմաթիւ ազնիւ զաւակներ: Արաբները, որոնք հարիւրամեակներ շարունակ ճաշակել են օսմանեան դժողակ տիրապետութեան բոլոր դառնութիւնները եւ որոնց աչքի առաջ եր տեղի ունեցել Հայոց ցեղասպանութիւնը, չեն կարող անտարբեր

մնալ մի ողջ ժողովորի ճակատագրի հանդեպ:

Յատկանշական է, որ դեռ Մեծ Եղեռնի օրերին մի շարք արար գործիչներ իրենց բողոքի ձայնը բարձրացրին արեւմտահայութեան զանգուածային կոտորածների դեմ, վտանգելով իրենց կեանքը՝ բազմահազար արար մարդիկ ապաստան տուեցին հայ տարագիրներին, որդեգրեցին հայ որբուկներին, մահուան ճիրաներից փրկեցին գաղթական արեւմտահայերին: Յետազայ տարիներին արար մտաւորականների հեղինակած գործեն իրենց ուրոյն տեղն ունեցան հայոց գենոցիդի միջազգային ճանաչման ու դատապարտման գործընթացում:

Յայկական հարցի ու Յայոց ցեղասպանութեան թեման արծարծած արար հեղինակների շարքում, վերջին ժամանակաշրջանում առանձնացաւ Այն Շամս համալսարանի փիլիսոփայութեան դոկտոր, Աղեքսանորիոյ համալսարանի արդի եւ ժամանակակից պատմութեան դասախոս, Եգիպտական պատմական ուսումնասիրութիւնների ընկերութեան անդամ, հայագիտական բազմաթիւ աշխատութիւններ հեղինակած՝ Մոհամետ Ոհֆաաթ Ալ Իմամը:

Սոյն աշխատութեան յառաջաբանում արար գիտնականը պարզաբանում է այս բարդ խնդրով գրաղուելու դրդապատճառը՝ արարական պատմագրութեան մեջ դեռ «հակադրութիւններով եւ հակասութիւններով» ներկայացող Յայկական հարցի գիտաքաղա-

քական եւ ճանաչողական կարեւորութիւնը: Ուստի պատահական չէ, որ արդեն Եգիպտոսի հայ գաղութի պատմութեանը նուիրուած Ալ Իմամի համալսարանական աւարտաճառում այս թեման դառնում է աշխատութեան տպաւորիչ մեկ մասը: Յետազօտողի պատմագիտական բացառիկ ունակութիւններն արդեն ի յայտ են զալիս բազմալեզու հարուստ գրականութեան քննութեամբ գրուած այս մենագրութեան կառուցուածքի ու ժամանակագրական շրջանակների ճիշդ ընտրութեան մեջ: 1878-1923 թթ., այսինքն՝ Յայկական հարցի միջազգայնացումից մինչեւ Լոգանի խորհրդաժողով, այսինքն հարցի թաղումը: Յեղինակը լաւ է պատկերացնում իր առջեւ դրուած խնդրի բարդութիւնը, թեկուցեւ նկատի ունենալով հարցի հանդեպ հայկական եւ թրքական կողմերի մօտեցումների արմատական տարրերութիւնները, եւ դրանցում ճշմարտութիւնը բացայայտելու իր պատասխանատու յանձնառութիւնը:

Առաջին գլխում, որը նուիրուած է սուլթան Յամիտ Բ.ի գահակալութեան շրջանին (1876-1909 թթ.), ոչ պատահականորեն արար գիտնականն արծարծում է Վրեւմտեան Յայատանում դեռ 16-17-րդ դարերից՝ օսմանեան տիրապետութեան հաստատման ժամանակներին վերաբերող հարցեր, երբ հայ ժողովուրդը դրուեց թրքական ծանր ու իրաւագործ վիճակի մեջ, ընդ որում շարունակելով մնալ այդ կայսրութեան «հաւատարիմ համայնք»-ը: «Եւ որպէս երկրին փոքրամասնութիւններէն մեկը՝ պաշտօնապէս խտրականութիւնը պարտադրուած էր, եւ գրում է Ալ Իմամը, եւ անոնց հետ վարուած էին իբրեւ երկրորդ կարգի քաղաքացիներու» (Եջ 35): Դրանով իսկ Մոհամետ Ոհֆաաթ Ալ Իմամը անմիջապէս հերքում է թրքական պատմագրութեան եւ քաղաքական շրջանակների այն կեղծ դրոյթը, թէ իբր հայերը թեեւ օգտուել են սուլթանի առանձնաշնորհում-



Ներից, բայց իբրեւ տերութեան անհաւատարիմ ու ապերախտ քաղաքացիներ, 19-րդ դարավերջից ձգտել են փլուզել Օսմանեան կայսրութիւնը, որն ել թուրք հասարակութեան մեջ խորացրել է անվստահութիւնը դեպի հայեր, իսկ իշխանութիւններին մղել է հայերի «պառակտիչ» գործողութիւնները կանխարգիլող քայլերի: Այս գլխում հետագոտողը իրաւացիօրեն նկատում է, որ 16-րդ դարի սկզբից, երբ սկսուել են թուրք-պարսկական երկարատեւ ու արիւնալի պատերազմները, ամենից շատ տուժել է հայութիւնը, որի հայրենիքը վերածել է երկու ախոյեան երկրների անզիջում պայքարի թատերաբեմի: Ուշագրաւ է, որ այստեղ հեղինակն ընթերցողին ծանօթացընում է ինչպես «Արեւմտեան Յայաստան» եզր՝ որպես հայութեան արեւմտեան հատուածի հայրենիք, այնպես էլ Ղարաբաղ-Վլոցախը՝ որպես Յայաստանի պատմաաշխարհագրական նահանգներից մեկը:

Արար գիտսականը կարողանում է բացայատել Յայկական հարցում Եւրոպական մեծ տերութիւնների խարդաւանքները, հայոց բարեփոխումների խնդիրն ի շահ իրենց օգտագործելու նրանց քաղաքանութիւնը: Նա ճիշտ է նկատում, որ Եւրոպայի երկրիմի գործելակերպի հետեւանքով սովլանական կառավարութիւնն աւելի է սաստկացրել հայկական հալածանքները, իսկ 1894-1896 թթ. սանձագերծել է զանգուածային կոտորածներ:

Ծատ ուշագրաւ են Ալ Իմամի դիտարկումներն Արեւմտեան Յայաստանում սովլանական կառավարութեան վարած



ժողովրդագրական քաղաքականութեան վերաբերեալ, որի նպատակը դարեր շարունակ եղել է օտար եթևիկ տարրերի մուտքն Արեւմտեան Յայաստան՝ իրախուսելով հասնել հայ բնակչութեան տեսակարար կշռի նուազմանը:

Յայ ժողովրդի հետ տեղի ունեցած համագգային ողբերգութեան բուն պատճառները փորձառու հետազոտողն իրաւացիօրեն տեսնում է սովլան Յամիտ Բ.ի կառավարման տարիներին պաշտօնական գաղափարախօսութիւն դարձած համաթրքականութեան մեջ: Դրանով պիտի բացատրել այն հանգամանքը, որ աշխատութեան երկրորդ գլխում այդ թեման դառնում է յատուկ ուսումնասիրութեան առարկայ: Ընթերցողի ուշադրու-





թիւնը հեղիսակը հրաւիրում է այս իրողութեան վրայ, որ այդ քաղաքականութիւնը նոյնութեամբ ընդօրինակուել եւ աւելի բիրտ եղանակներով իրագործուել է երիտասարդ թուրքերի կողմից:

Զայնց Մեծ Եղեռնին յատկացուած Եջերում, որն ազնիւ գիտնականի կողմից անուանում է «ողբերգութիւնների մայրը», հերքում են թրքական կողմի այս պնդումները, թէ Համաշխարհային Ա. պատերազմի ժամանակ հայերը դաւաճանելով կայսրութեանը, իշխանութիւններին չթողեցին այլընտրանք, քան նրանց տեղահանութիւնն էր: Նրա կարծիքով, ոչ Սարընամիշի ճակատամարտում թուրքերի պարտութիւնն էր կապուած հայերի շինծու «դաւաճանութեան» հետ, եւ ոչ էլ 1915 թ. ապրիլի սկզբին Վանում սկսուած հայերի ինքնապաշտպանութիւնն էր ապստամբական գործողութիւն. «... Վանի մէջ պատահածը,- կարդում ենք այս մեսագրութիւնում,- յեղափոխութիւն մը չէր, այլ սոսկ ինքնապաշտպանական արարք մը՝ դիմագրաւելու համար օսմանեան պաշարումը» (Եշ 105): Պարզ է, որ հայերին բնաշնչելու ծրագիրն արդէն վաղուց պատրաստ էր եւ ցանկացած դէպքում կարող էր միայն առիթ ծառայել ծրագրուածը իրագործելու համար:

Ինչ վերաբերում է թուրքերի այս տեսակետին, թէ իրենց կառավարութիւնը միայն ռազմաճակատի գծին մօտ ապրող հայութեանը հարկադրուած է տեղահանել եւ կոտորելու մտադրութիւն չի ունեցել, Մոհամետ Ոհֆաաթ

Ալ Իմամ փաստերի վերլուծութեան արդիւնքում տալիս է հետեւեալ պատասխանը. «Հետեւաբար, կը բացայատուեր թէ՝ աքսորը (կամ բռնգաղթը) համահաւասար եղած էր բնաշընջման» (Եշ 109): Աւելի քան դիպուկ ու տեղին է գիտնականի միւս հետեւութիւնը՝ ցեղասպանութեան նպատակը հայերին հայրենազրկել էր. «Իթթիհատականները կատարելապես յաջողած

եին լուծարքի ենթարկելու հայերը, իրենց պատմական հողերէն բռնի հեռացնելով զանոնք, ուր ապրած էին մօտաւորապէս երեք հազար տարիներ...: Իթթիհատականները գործած էին հաւաքական առաջին ցեղասպանութիւնը, քաներորդ դարու արշալոյսին, կանխամտածուած եւ կանխատրամադրուած կերպով բնաշնչելով ամբողջ ժողովուրդ մը» (Եշ 106):

Գիտականօրէն հիմնաւորուած է Ալ Իմամի նաեւ մէկ այլ պնդումը, որ Զայնց ցեղասպանութիւնը չի սահմանափակւում 1915 թուրականով. այս ուսեցել է իր շարունակութիւնը հետագայ տարիներին, իսկ 1918 թ. ընդգրկել է նաեւ արեւելահայութիւնը: Ընդ որում, արեւելահայութեան զանգուածային կոտորածների ընդհանուր ծիրի մէջ հեղիսակը չի մոռացել կովկասեան թաթարների, այս Է՝ ազրպէճանցիների հակահայ ձեռնարկումներն ու Պաքում, Շուշիում եւ այլուր իրականացած հայկական շարդերը: «Ազերիները,- գրում է պատմաբանը,- պետութիւն մը կը պատկերացնէին, որ կը տարածուեր Կասպից ծովէն մինչեւ Մեծ ծով, ուր Զայաստանը մնացած էր Ազրպէճանի եւ օսմանեան պետութեան միշեւ» (Եշ 150):

Մեծ հետաքրքրութեամբ են կարդացուում սոյն մեսագրութեան մէջ Մերի դաշնագրին նուիրուած Եջերը: Այս ուսումնասիրողը ճիշդ է նկատում, որ Եւրոպայի համար այդ դաշնագրին միայն թղթի կտոր էր եւ դրա կենսագործման իրական հեռանկարներ չկային:

Պատահական չէ, որ շուտով նոյն Եւրոպան հրաժարուեց իր իսկ ստորագրած այդ փաստաթղթից եւ իր երբեմնի դաշնակից Հայաստանի թողեց բախտի քմահաճոյքին. «Արդ, կարծեք թէ բացարձակապես Հայկական հարց մը բնա՛ւ գոյութիւն չէր ունեցած,- իբրւեւ մեղադրական խօսք դառնաբար գրում է Մոհամետ Ոհֆաաթ Ալ Իմամը,- կամ նոյնիսկ հայերը գոյութիւն չէին ունեցած օսմանեան պետութեան տարածքին: Եւ այսպէս, «մեծ Դաշնակիցները՝ Լոգանի սեղանին վրայ անհետացուցած եին «փոքր դաշնակիցին» հարցը, եւ իրենց ձեռքերը լուացած եին հայերուն եւ զիւրտերոն արեամբ» (Եջ 176):

Կ'ուրգեինք մատնանշել աշխատութեան մէջ տեղ գտած եւս երկու կարեւոր նկատառում. հեղինակը համոզուած է, որ ա) ցեղասպանութիւնն ունեցել է նաեւ տնտեսական դրդապատճառ, հայերին բնաշնչելով թուրքերը նպատակ են ունեցել ազատուել նրանց մրցակցութիւնից (Եջ 197-198), բ) սփիւրքի ստեղծումը ցեղասպանութեան անմիջական հետեւանք է եղել, ուստի սփիւրքահայութիւնն ունի բոլոր հիմքերն իր բռնադատուած իրաւունքների դիմաց հատուցում պահանջելու համար (Եջ 202-203):

Յատկանշական է, որ ոչ միայն Հայկական հարցին ու ցեղասպանութեան խնդրին, այլեւ հայոց պատմութեան հանգուցային այլ փուլերին ընդհանուր գծերով՝ արար ընթերցողին ծանօթացնելու համար հեղինակն աշխատութեան յաւելուածում գտտեղել է հետաքրքրական քարտեսներ, որոնք որոշակի պատկերացում են տալիս Սան Մթեֆանոյի պայմանագրից մինչեւ Լոգան ընկած ժամանակաշրջանի, ինչպէս եւ Խորհրդային Հայաստանի սահմանների մասին: Գնահատելի է նաեւ երկրորդ եւ երրորդ յաւելուածներում Հայկական հարցի ժամանակագրական ցանկը եւ հայ նշանաւոր գործիչների մասին համառօտ



կենսագրականներ տեղադրելու Ալ Իմամի մօտեցումը:

Ամփոփելով վերոնշեալը, կարելի է հաստատապես պնդել, որ դոկտոր Մոհամետ Ոհֆաաթ Ալ Իմամ արաբալեզու, այսօր էլ շնորհիւ հալեպահյ հետազօտող-թարգմանչուիի Յուրի Ազգեանի՝ հայ ընթերցողի սեղանին է դուել մի համապարփակ ու ծանրակշիռ աշխատութիւն Հայկական հարցի ու Հայոց ցեղասպանութեան մասին, որը նոր խօսք է նաեւ առհասարակ միջազգային ցեղասպանագիտութեան մէջ, եւ յաւակնում է Արեւելքի ժողովրդներին սոյն խնդրին ծանօթացնելու գործում լինելու լաւագոյն մենագրութիւններից մէկը: Մաղթենք եգիպտացի հեղինակին նորանոր յաջողութիւններ իր գիտական գործունեութեան մէջ եւ յոյս յայտնենք, որ նրա միւս աշխատութիւնները եւս հասու կը դառնան հայ ընթերցողին:

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆԵԱՆ

Փրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ պատմութեան
ինստիտուտի տնօրին

Երեւան

ՀԱՅ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԵՒ ԱՆԶԱՓԱՀԱՍՆԵՐՈՒ ՈՂԻՍԱՎԱՆԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՏԱՐԻՆԵՐՈՒՆ

Յայոց ցեղասպանութիւնը, այլ խօսքով՝ հայ ժողովուրդի բնաշնչումը յղացուեցաւ, որոշեցաւ, ծրագրուեցաւ եւ կազմակերպուեցաւ թուրք ազգայնամոլ քաղաքական եւ զինուրական դեկավարներու կողմէ ու գործադրեցաւ թուրք ջարդարար եւ արիւնաբրու զինուրականներու, բժիշկներու, քաղաքական անձնաւորութիւններու, պետական պաշտօնեաններու եւ ամբոխին կողմէ:

Ցեղասպանութիւնը տեղի ունեցաւ համայն աշխարհի աչքերուն դիմաց, քաղաքակիրթ ժողովուրդներու լրութեամբ եւ կարգ մը պետութիւններու քաջալերանքով ու անմիշական մեջսակցութեամբ:

Ցեղասպանը 1915-ին առաջ արդէն անցած էր գործի եւ կազմակերպած էր մեծ ջարդեր հայկական գաւառներու մէջ 1894-1896 ժամանակաշրջանին եւ 1899-ին: Ոճրագործ թուրքը այս ջարդերուն ընթացքին մասամբ խնայած էր մանուկները եւ կիները:

1915-ի Յայոց ցեղասպանութեան սկզբանաւորութեան, թուրքը յայտարարած էր հետեւեալը. «Այս անգամ ամբողջական պիտի ըլլայ մեր մաքրագործումը», այլ խօսքով՝ պիտի չխնայուեր նաեւ մանուկներուն եւ կի-



ներուն, ինչպէս կը հաստատէ Թուրքիոյ ներքին գործոց նախարար Թալեաթի նամակը Յալեափի կուսակալութեան՝ «Նոյնիսկ մանուկներ չգել օրօրոցներուն մէջ, կամ անոնք որոնք անկարող են շարժելու՝ հանեցեք բոլորը»: Այս որոշումը որդեգրուած էր իթթիհատականնե-

րու Սելանիկի գաղտնի ժողովին (1911), ուր բանաձեւուած էին սահմանկեցուցիչ շարք մը որոշումներ, որոնցմէ յատկանշական են՝

1. «Զինուրական անհրաժեշտութիւն մըն է ժողովուրդներու ջարդը, առանց տարիքի եւ սերի խտրութեան»:

2. «Թշնամի ցեղի մը մանուկները ջարդելը կանխարգելիչ միջոց մըն է ազգային պաշտպանութեան»:

1915-ի Յայոց ցեղասպանութեան նախօրեակին, հազարաւոր թուրք ոճրագործ եւ դատապարտեալ բանտարկեալներ բանտերէն ազատ արձակուեցան իրագործելու համար այս ահարկու եւ աննախընթաց անմարդկային որոշումը: Օսմանեան կայսրութեան բանտարկեալները ներառուեցան աւազակային ջարդարար յատուկ խումբերու մէջ՝ իրականացնելու համար այս որոշումը: Անոնց իրահանգուած էր՝ ոչ մեկ գութ կամ կարեկցութիւն ցուցաբերել մանուկներուն եւ կիներուն,

նոյնիսկ անկարևերուն, որոնք մաս պիտի կազմեին հայ ժողովուրդի ամբողջական բնացնչումին:

Հայ մանուկները եւ անչափահասները բաժնեկից դարձան տարեցներու եւ չափահաս կիներու տարագրութեան ծայրագոյն աստիճանի դժուարութիւններուն, փոթորկալից տեղահանութեան եւ անվերջանալի տարագրութեան դեպի անապատային հեռաւոր վայրեր: Հայ մանուկները եւ անչափահասները արդէն կորսնցուցած էին իրենց հայրերը եւ մնացած էին միայն մայրական հոգատարութեան տակ: Անոնք ենթարկուեցան ցեղասպանութեան հրեշային ամեն տեսակի բռնարդըներու, միջոցառումներու եւ կացութիւններու: Անոնց ոդիսականը եղաւ անբաժանելի մեկ օդակը Հայոց ցեղասպանութեան անծայրածիր շղթային: Անոնց որոշ մեկ տոկոսը ենթարկուեցաւ մարմնական, ֆիզիքական, հոգեկան եւ մտային ճնշումներու եւ չարչարանքներու, իսկ մնացեալը խողխողուեցաւ, սպանուեցաւ եւ ոչնչացաւ ու մաս կազմեց հայ ժողովուրդի նահատակներու մեծ խմբակին:

Հայոց ցեղասպանութեան ընթացքին հայ մանուկներու եւ անչափահասներու ոդիսականը եղաւ հետեւեալներէն մեկը կամ միւսը՝

ՈՉՆՉԱՑՈՒՄ ԹՈՒՐԵՐՈՒ ԿՈՂՄԵ, ՈՐ ԻՐԱԳՈՐԾՈՒԵՑԱՌ ԶԱՆԱՉԱՆ ՁԵՒԵՐՈՎ

ա. Սպանութիւն հրեշային զանազան միջոցներով՝

1. Յրացանով գնդակահարում.
2. Կացինահարում.
3. Գլխահատում՝ գենելով-մորթելով.

Ըստ Մարիա ճեյքըպսընի՝ հարիւրաւոր հայ փոքրիկներ իրենց վիզերէն մորթուած են զանազան վայրերու մէջ:

Ըստ Նաևսէնի՝ Տիարպէքիրի հայերու զաղթականութեան ընթացքին հազարաւոր մանուկներ մորթուած են եւ ապա նետուած Եփրատ գետ, իսկ հազարաւոր մանուկներ ալ մորթուած են քեմեխի կիրճին մէջ:

4. Դաշունահարում.
5. Սուլինահարում.
6. Զանազան տեսակի չարչարանքներ եւ հրեշային միջոցառումներ.



Ըստ Արամ Անտոնեանի՝ թուրք զինուորները 10 տարեկան հայ տղայ մը բռնած են, որովհետեւ ան չէ ենթարկուած իրենց հրահանգներուն եւ մագլցած է բլուրի մը վրայ: Զինուորները երկար չուասի մը մեկ ծայրը կապած են խեղճ տղուն վիզեն, իսկ միւս ծայրը կապած են ծիու մը վիզեն: Զին գրգռուած վագած է արագընթաց եւ տղուն մարմինը կլոր-կլոր դառնալով ճօնուած է օդին մէջ ու քանի մը անգամ շրջապատի ժայռերուն զարնուելով ի վերջոյ գլխահատուած է իր մօրը աչքերուն դիմաց:

Երկրորդ վկայութիւն մը Արամ Անտոնեանւ՝

«Հաֆըզ անունով կիլիկեցի կառապան մը, որ այդ օրերուն մարդակերպ գազան՝ թուրք Յաքքըն Տէր Զօր տարած էր, կը պատմէր, թէ ան ճամբու ընթացքին դիտմամբ իրենց վերջին վայրկեանները ապրող եւ գետին ինկած հայ մանուկներուն վրայէն քշել կու տար կառը, սարսափելի հայույանքներ արձակելով եւ բացայատ հրճուանք մը արտայայտելով, իսկ անդին բլրակի մը վրայ տեսնելով լքուած եւ ցաւերէն տնքացող փոքրիկ մը, կատղած՝ անմիջապէս կը հանէ ատրճանակը եւ երեք գնդակ կը պարպէ խեղճ փոքրիկին վրայ»:

բ. Զրահեղծութիւն-խեղդամահութիւն

Հազարաւոր անմեղ հայ մանուկներ թուրք դահիճներու ծեռամբ ջրամոյն եղած են ծովու, գետերու եւ լիճերու ջուրին մէջ: Յու կ'արժէ մէջքերել կարգ մը վկայութիւններ.

1. Բիլգանդ Եղիայեան՝ Տրապիզոնի եւ Խարբերդի մէջ թուրքերը հայ որբերը Սեւ ծով

Եւ Եփրատ գետ թափած են.

2. Թուրք փաստաբան եւ Տրապիզոնի երեսփոխան Յաֆիզ Մեհմեթ՝ թուրքերը Տրապիզոն գետին մէջ մեծ թիւռվ հայ մասուկներ խեղդամահ զրած են.

3. Թուրք բարձրաստիճան գինուորական զօրավար Մահմուտ եւ Տրապիզոնի կառավարիչը՝ ճեմալ Ազմին եւ իր օգնականը, Ենիպահելի Նայելը խեղդամահ ընել տուած են հազարաւոր հայ մասուկներ Սեւ ծովուն մէջ.

Արշաւիր Շիրակեան իր «Կտակն եր նահատակներուն» հատորին մէջ մանրամասն կը պատմէ, թէ ինչպէս ինը եւ Արամ Երկանեան 1922-ի ապրիլին Պերլինի մէջ ահաբեկեցին ճեմալ Ազմին եւ Պեհաւտտին Շաքիրը:

Իսկ Նայելը կահաղան բարձրացած է 1926-ին ո՞չ թէ Յայոց ցեղասպանութեան մասնակցած ըլլալով, այլ՝ թեմալ Աթաթուրքը սպաննելու յանցանքով:

4. Խարբերդի ամերիկեան դեսպան Լեսլի Տէյվիս՝ Խարբերդին 20 քմ. հեռու Կիւճիւր լիճին մէջ թուրքեր խեղդամահ զրած են սուխնահարելէ ետք հազարաւոր հայ մասուկներ.

5. Դեսպան Սորկընթառու Եփրատ գետին մէջ Երգրում նահանգի թեմաց Կիրճին մօտերը հարիւրաւոր մասուկներ խեղդամահ եղած են.

6. Յայ Վերապրոդ մը՝ Եփրատ գետին մէջ Տէր Չօրի ոստիկանապետ Մուսթաֆա Սիսթի 1916-ի օգսոսոսին գեղեցիկ հայ դեռատի աղջիկները բռնաբարելէ ետք խեղդամահ զրած է: Նոյն ոճրագործը 2000 հայ մասուկներ ուղղած է դեպի Եփրատ գետ, կապելէ ետք անոնց ոտքերը եւ ձեռքերը, զոյգ-զոյգ նետած է զանոնք Եփրատ գետին մէջ ու մեծ հաճոյքով երկար ժամեր դիտած է այդ քստմանից տեսարանը.

7. Արաբ գինուորական Սայիտ Ահմետ Սուլիմար Պաած՝ Տրապիզոնի մէջ մասուկները մակոյկներով տարած են ծովու խորերը, սպաննելէ ետք բոլո-

րը, գետեղած են տոպրակներու մէջ եւ ապա նետած են ծովուն յատակը.

8. Նաևսէն՝ հազարաւոր մասուկներ խեղդամահ եղած են թուրքերու ձեռքով, մասնաւորապես պիթլիսից հայ մասուկներ Տիգրիս գետին մէջ.

9. Վարդան Պետոյեան «Յեղափոխական ալպու»-ի մէջ կը յուշէ՝ «Մուրատ գետի եզերքը թուրք ոստիկաններ մօտ 1000 հոգի կիներ եւ մասուկներ բոլորն ալ հրացանաձգութեան ենթարկեցին, ոմանք ողջ-ողջ գետի ալիքներուն յանձնուեցան եւ ոմանք գնդակահար գետին ինկան»:

10. Սեբաստացի Մարիամ Մասուկեան «Վերապրոդները կը վկայեն» գիրքին մէջ կը յուշէ՝ «Կարմիր գետը լեցուած էր մասուկներով, թուրքերը հայ մասուկները սուրերու վրայ ճօճելէ ետք կը նետեին գետը: Մօրս քերիին զոյգ կադ դեռատի աղջիկները փախչելով գինուորներուն ձեռքէն նետուեցան գետը, զինուորները դուրս քաշեցին զանոնք ջուրէն ու բռնաբարելէ ետք մորթեցին մեր աչքերուն առջեւ»:

11. Արամ Ալսոտնեան իր «1,5 միլիոն հայերու ջարդը» գիրքին մէջ կը յուշէ՝ Տիգրանակերտի տեղահանութեան կառավարիչը 1-3 տարեկան հայ երկու սեռ որբերը կը հաւաքէր եւ կը տեղաւորէր զանազան տեղեր: Զանի մը ամիս ինսամք կը տարուի անոնց, երբ յանկարծ օր մը, զանոնք դնելով կազքերու մէջ, կը տանին Տիգրիս գետին մօտ եւ ողջ-ողջ բոլորն ալ բռնելով իրենց ոտքերէն կամ գլուխներէն, կը նետեն գետին մէջ: Ուրիշ հարիւրաւոր որբեր ալ քաղաքէն մէկուկս ժամ հեռու, Գարապաշ շրջանին մէջ, զանոնք երկուքի կը ճեղքեն, կտոր-կտոր կ'ընեն, շատ որբեր կը նետեն կատղած շուներու առջեւ եւ կը յօշուլին:

**գ. Ողջակիզում՝
ողջ-ողջ այրելով եւ
կրակի տալով**

Տիգրանակերտի, Խարբերդի, Պիթլիսի



Եւ Յալեպի մեջ թուրքերը ողջ-ողջ այրած են հարիւրաւոր հայ մանուկներ:

Տիգրանակերտի նահանգապետ բժիշկ Ռեշիտ 800 մանուկներ շնչի մը մեջ զետեղելէ ետք՝ կրակ տալով այրած է բոլորը:

Խարբերդի մեջ քաղաքական անձնաւորութիւնն մը՝ Զատրի, այրած է Բալուէն բերած 800 հայ անչափահասներ:

Տեր Զօրի մեջ, իսլամական տօնին, թուրքերը հաւաքած են հազարաւոր հայ մանուկներ եւ քաղաքէն դուրս վայրի մը մեջ բոլորը այրած են:

Ահաւասիկ կարգ մը ցաւալի վկայութիւններ՝

1. Տոքթ. Մեհմետ հաւաքելէ ետք 800 անմեղ հայ մանուկներ հաւաքավայրի մը մեջ հրոյ ճարակ կը դարձնէ վայրը եւ հպարտանքով կը դիտէ խեղդամահ 800 մատղաշ մանուկներու դիակները:

2. Գերման պաշտօնակատար զինուորական Լուտֆիկ Շրոտընպախ՝ Պիթլիսի կառավարիչ Մուսթաֆա Ապտիկ Յալիք՝ Թալեաթ փաշայի փեսան 1000 մանուկներ այրած է:


3. Կրամ Անտոնեան՝ Տեր Զօրի մեջ 1916-ին գուրապան պայրամի օրը թուրքերը հազարաւոր հայ նահատակուածներուն պատիկները հաւաքած են եւ որբանց մը դրած են, սակայն ի վերջոյ զանոնք խարոյկէ անցուցած են, անոնց ցլցուտիները քարիւղելէ ետք:

4. Կրաք բարձրաստիճան զինուորական Յասան Մարրուֆ՝ թուրքերը Մուշի, Պիթլիսի եւ Երզնկայի մեջ հայ մանուկները ողջ-ողջ այրած են բանտի խուրձերուն կրակ տալով:

5. Շուտական միսիոնարական կազմակերպութեան պաշտօնեայ Ալմա Ճոհանսոն, որ պատասխանատուն եղած է Մուշի որբանցին, եւ վենեգուելլացի զինուորական մը, որ ծառայած է թրքական բանակին մեջ՝ Մուշի որբանցին թուրք պաշտօնեաները որբանցի բոլոր հայ որբերը հաւաքած եւ այրած են:

6. Թրքական բանակի բարձրաստիճան զինուորական Մեհմետ Վահիտ՝ Մուշի Զիւրիկ գիւղին մեջ թուրքերը շատ մը հայ որբ մանուկներ տուներու մեջ բանտարկած են եւ ապա տան մացառներուն մեջ այրած են:

7. Մարիա ճեքըպան՝ հազարաւոր հայ որբ մանուկներ թուրք տուներու մեջ պահ-



ւած են եւ ապա մօտակայ անտառներուն մեջ ողջ-ողջ այրուած են:

8. Նաևսէն՝ թուրք զինուորներ շատ մեծ թիւով հայ մանուկներ զանազան շրջաններու մեջ այրած են թուրքերու տուներու մեջ:

9. Վրամ Անտոնեան՝ «Դժիսային պայմաններու մեջ սպանուեցան 3000 որբեր Տեր Զօրի անապատներուն մեջ: Այս որբերը զոհը գացին Ապտիկա կոչուած հրեշին, որ անապատի ամենեն ամայի մեկ անկինը քշեց խեղճերը: Ու հոն, անոնց մեկ մասը օդը հանեց հետք բերած պայթուցիկ նիւթերով, մեկ այլ մասը թիւց աւազակոյտերով կազմուած որշերու մեջ եւ թրջուած յարդի ու թաց փայտերու ծովանով խեղճեց զանոնք, իսկ մսացածներն ալ քով-քովի եւ վրայ- վրայի պառկեցու գետին, վրանին յարդ ու քարիւղ թափեց եւ ողջ-ողջ այրեց»:

Դ. Թունաւորում զանազան ձեւերով

Մարդակերպ թուրք գազանները սպանած են հազարաւոր հայ մանուկներ՝ օգտագործելով թունաւորումի զանազան ձեւեր, որոնք գործադրուած են մասնաւորաբար թուրք բժիշկներու կողմէ:

Ահաւասիկ ողբերգական վկայութիւններ՝

1. Թուրք երկու բժիշկներ Զիա Ֆուատ եւ բժիշկ Ատնան՝ «Տոքթ. Ալի Սայիիպ, Տրապիզոնի առողջապահական ծառայութիւններու տնօրենը պատճառ դարձած է հազարաւոր հայ մանուկներու, որբերու, չափահասներու եւ յոյն կիներու թունաւորումին Տրապիզոնի Կարմիր Մահիկի հիւանդանոցին մեջ եւ դպրոցական շատ մը հաւաքավայրերու մեջ:

Թուրք բժիշկներ այս անմեղ հայերուն թոյն սրսկած են՝ դեղորայք ըսելով: Գտնուած են հայեր, որոնք մերժած են սրսկումները եւ տոքթ. Սայիհա զայրացած անոնց բոլորը խեղդամահ ընել տուած է ծովու մէց»:

2. Տոքթ. Ատնան, Տրապիզոնի առողջապահութեան թուրք տնօրէնը, 1919-ի թրքական գինուորական դատավարութեան ընթացքին վկայած է՝ «Յայ մանուկներուն թունաւորումը տեղի կ'ունենար թէ՛ Կարմիր Մահիկի հիւանդանոցին մէջ եւ թէ՛ դպրոցներուն մէջ: Անոնց մարմինները սպանութենէ ետք կը գետեղուէին խոշոր կողովներու մէջ եւ ապա կ'ոչնչացուէին»:

3. Մանսիկ Երազեան 26 ապրիլ 1919-ին թրքական գինուորական դատավարութեան ընթացքին մանրամասն նկարագրած եւ վկայութիւններ տուած է անչափահաս եւ մանուկ հայերու թունաւորումով ոչնչացման մասին:

4. Արամ Անտոնեան՝ կիրասոնցիները ականատես եղած են Ալսի որբանոցներէն մէկուն մէջ գետեղուած 500 որբերու թունաւորման եւ Եփրատ գետին մէջ նետուելուն:

Ե. Բաղսիքներու մէջ տաք շոգիով շնչահեղձութիւն

Ըստ Երկու թուրք բժիշկներու՝ Զիա Ֆուատի եւ Ատնանի, Տրապիզոնի մէջ տոքթ. Ալի Սայիհի հրամանով հազարաւոր հայ մանուկներ տաք շոգի ենթարկուելով շնչահեղձ եղած են եւ մահացած են, ապա անոնց դիակները նետուած են Սեւ ծովուն մէջ:

գ. Ողջ-ողջ փոսերու մէջ թաղում-սպանութիւն

Մալաթիոյ մէջ մօտ 100 հայ մանուկներ ողջ-ողջ բոլորը միասին թաղուած են փոսի մը մէջ:

Կարապետ Գաբրիելան «Եղեռնապատում»-ի մէջ կը գրէ՝ «ճանտարմաները աչքի եկող Երիկմարդոց ընդարձակ փոս մը փորել տուին եւ այդ փոսին մէջ լեց-

նել տուին «չոճուգլար-պաշչեսիի» լքեալ հայ մանուկները եւ հողով ծածկեցին եւ կենդանի թաղեցին հայ մանուկները»:

Դայ մանուկներու ոչնչացումը՝ սպանութեամբ, խեղդամահութեամբ, ողջակիզումով, թունաւորումով, շնչահեղձութեամբ եւ ողջողջ թաղելով կատարուած են թուրքերու կողմէ հետեւեալ պատճառաբանութիւններով.

1. Յայ անչափահասները եւ մանուկները մերժած են իսլամութիւնը:

2. Անոնք մերժած են բաժնուիլ իրենց մայրերէն եւ դիմադրած են թուրքերուն:

3. Անոնք դիմադրած են առեւանգումներու եւ պետական որբահաւաքումի ընթացքին դէմ:

4. Յայ մայրեր դիմադրած են թուրք գինուորներուն եւ մերժած են յանձնել իրենց մանկիկները ջարդարար թուրքերուն:

5. Պետական յստակ որոշումով՝ ոչնչացնել հայ ժողովուրդը ամբողջութեամբ ներառեալ՝ հայ մանուկները:

**ՄԱՅ ԵՐԿԱՐԱՏԵՒ ՅՈԳՆՈՒԹԵԱՆ,
ԱԽՈԹՈՒԹԵԱՆ, ԶՐԱՉՐԿՈՒՄԻ,
ՈՒԺԱՍՊԱՌՈՒԹԵԱՆ, ՅԻՒԱՆԴՈՒԹԵԱՆ,
ՀԱՄԱՃԱՐԱԿՆԵՐՈՒ ԵՒ
ԱՐԵՒԱՅԱՐՈՒԹԵԱՆ ՊԱՏճԱՌՈՎ**

Ահաւասիկ կարգ մը վկայութիւններ՝

ա. Արամ Անտոնեան՝ թուրք գինուորներ 3-10 տարեկան 7000 հայ տղաք բանտարկած են գարշահոտ վայր մը, անոնք բոլորը անօթութենէ եւ ծարաւէ մեռած են:

բ. Նաևսէն՝ հազարաւոր մանուկներ մահացած են անօթութենէ, ծարաւէ եւ հիւանդութիւններէ՝ ամբողջ տարագրութեան տարիներուն:

գ. Մարիա ճեյքըպսըն՝ հազարաւոր հայ մանուկներ մահացած են չքաւորութենէ, անօթութենէ եւ զանազան տեսակի հիւանդութիւններէ:



դ. Պետրոս Պողոսի, Փուռնուզի աներիայու՝ «Ես 10 տարեկան եմ գաղթականութեան օրերուն: Յայրս, մայրս, ես եւ չորս տարեկան ծաբք քոյրս ֆուռնուզին տարագրուեցանք: Երկու ամիս կարաւանով գիլդէ գիլդ թափառելէ Ետք հասանք անապատային վայր մը: Մինչ այդ քոյրս անօթութենէ եւ ծարաւէ կը տառապէինք: Քոյրս եւ ես շատ նիհարցած էինք, ծաբքն կմախցի վերածուած էր: Քոյրս անկարող էր ոտքի կենալ, հետեւաբար ես եւ հայրս փոխս ի փոխ զինք կը շալկէինք: Ան խօսելու ուժ չուներ, միայն պուտ մը ջուր կը խնորդի մեզմէ: Յայրս կաւէ պատիկ սափոր մը տուաւ, որպեսզի երթամ եւ ջուր մուրամ վրաններէն: Երկար մուրացի, սակայն չկարողացայ ջուր ունենալ եւ պարապ սափորով վերադարձայ: Ծաբք քոյրս ծարաւութենէ աւանդած էր իր հոգին հօրս գիրկը: Մինչեւ այսօր խիդոս հանդարտ չէ, որովհետեւ չկարողացայ պուտ մը ջուր հասցել ծաբք քրոջս»:

Ե. Արմին Վեկսներ՝ «Մանուկները լալով ճշալով կը մեռնեին անօթութենէ եւ ծարաւէ»:

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԶՐԱՄԱՐՈՒԹԻՒՆ- ԽԵՂԱՄԱՐՈՒԹԻՒՆ ԻՐԵՆՑ ՄԱՅՐԵՐՈՒՆ ԶԵՇՔՈՎ

Շատ մը խելագար հայ մայրեր Եփրատ գետին զոհած են իրենց զաւակները, որպեսզի թուրքին չյանձնեն զանոնք:

Արմին Վեկսներ գրած Է՝ «Մայրերը գրկած իրենց մանկիկները կը նետեին առուակներու մէջ, ուրիշ մայրեր զաւակները գրկած երգելով կը նետուեին Եփրատ գետը»:

ԱՆՁԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ

Յազարաւոր դեռատի հայ աղջիկներ գետ նետուելով անձնասպան եղած են հեռու մնալու անպատութենէ, բռնապղծում եւ առեւանգում է:

ԲՈՆԱԲԱՐՈՒՄ, ՊՂԾՈՒՄ ԵՒ ՄՊԱՆՈՒԹԻՒՆ

Անչափահաս դեռատի հայ աղջիկներ

թուրք ճիւաղներու ձեռամբ բռնաբարուած են, պղծուած են եւ ապա սպաննուած են զանազան վայրագ միջոցներով:

Թուրք զինուորներ դեռատի հայ աղջիկներ բռնի ուժով փոխադրած են Պոլիս, որպես նուեր Պոլսոյ կեդրոնական հրամանատարութեան անձնակազմի անդամներուն:

Կարգ մը թուրք բժիշկներ կատարած են նաեւ անմարդկային եւ հրեշային անդամահատումներ շատ մը հայ աղջիկներու՝ յագեցընելու համար իրենց սեռային վատառողջ փափաքը: Շատեր խոստովանած են, թէ ինչ մեծ հաճոյքով եւ միլեգնօրէն իրենց պապակը կը յագեցնեին անչափահաս, 12 տարիքը քրոլորած հայ պարմանուիհներու կուսութիւնը ըմբռշինելով եւ դիտելով իրենց պղծած հայ անմեղուիհներու զոհաբերումը իրենց ձեռքով սարքուած բագիներու վրայ:

Ղաւասիկ կարգ մը վկայութիւններ՝

ա. Մեհմետ Ալի ձեւականօրէն թրքացած հայ մը՝ Տրապիզոնի Կարմիր Սահիկի հիւանդանոցին մէջ, Տրապիզոնի նահանգապետը՝ Քեմալ Ազմի տասնեակ մը հայ դեռատի աղջիկներ քանից բռնաբարած եւ պղծած է, յագեցնելով իր սեռային վայրագ պապակը: Ճեմալ Ազմի խոստովանած է նաեւ՝ «10-13 տարեկան գեղեցիկ հայ աղջիկներէն զատեցի քանի մը հատը եւ յանձնեցի 14 տարեկան տղուս որպես նուեր, իսկ մսացեալները բռլոր պղծելէ Ետք՝ խեղդամահ զրի Սեւ ծովուն մէջ»:

բ. Տիարպեքիրի Սիլվանի գինուորական հիւանդանոցի բժշկապետ տոքթ. Ֆեթիի կիրքերուն զոհ գացած են շատ մը անմեղ հայ որբուիհներ:

գ. Գերմանացի պաշտօնեայ Պասթէնտորֆ՝ Ռասուլայնի հայերու հսկիչը, Նուրի Շաուլս բժիշկ Ֆարախին խոստովանած է, որ ինք կը զուարճանար տասներկու տարեկանեն վար հայ աղջիկները կուսութենէ զրկելով:

դ. Արամ Անտոնեան՝ Մուշի մէջ թուրքերը 8 տարու շատ մը աղջիկներու կուսութիւնը բռնաբարած են եւ այս վիճակին մատնուողներէն անոնք որ չեն կոցած քալել հրացանի բռնուած են:


ե. Արամ Անտոնեան՝ «Տէր Զօրի մերքեց մէմուրը՝ իրեշ Գաւատար օղլու Մուսթաֆան 1917-ին Տէր Զօրի սուրբանիներու Եկեղեցին

հանրատուն դարձուց, քաղաքին մէջ վերապրող հայ դեռատի աղջիկները բռնի այդ եկեղեցին լեցուց եւ օրինակը ինք տալով, մղեց բոլորը, որպեսզի լկեն ու պիծեն զանոնք անխնայորեն»:

գ. Մարիա ճեյքըպսըն՝ «Ճատ մը որը աղջիկներ եւ տղաք թուրքերու կողմէ տուն կը տարուեին. հայ աղջիկները հարեմներու մէջ կը բռնաբարուեին զինուորներու կողմէ»:

Ե. Նաևսէն՝ «Ճատ մէծ թիւով դեռատի հայ աղջիկներ առեւանգուելէ ետք կա'մ պիծուեցան եւ կամ աճուրդով ծախուեցան: 20 դուրուշ կը վճարուեր առեւանգողներուն եթէ պիծուող դեռատի հայ աղջիկը կոյս էր եւ 5 դուրուշ եթէ արդէն պիծուած էր»:

ը. Արմին Վեկսէր՝ «Թուրքերը դպրոցներէն կը խլէն փափկասուն որբուիիները, իրենց անանական կիրքերուն յագուրդ տալու համար»:



ընտանիքներու եւ թուրք որբանցներու մէջ:

ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌԵ

Ճատ մէծ թիւով հայ մանուկներ աճուրդով հրապարակներու վրա ծախւած են թուրք առեւանգող զինուորներու կողմէ.

Ահաւասիկ կարգ մը քստմնելի վկայութիւններ՝

ա. Եռհաննես Լեփսիուս՝ հայ մանուկներէն շատերը ծախուած են ժանտարմաներու կողմէ: Յազարաւոր հայ տղաք եւ աղջիկներ ծախուած են հալեպցի արաբներու, թուրքերու եւ հրեաներու: Ըսդհանրապէս փոքր տղաքը յարգի եղած են, մանաւանդ՝ աղջիկները:

բ. Աւետիս Թեքեան՝ Պէհեսնի հայերը տարագրութեան ընթացքին երբ Նեովեկ հասած են, թուրք ոստիկաններ հայ փոքրիկները ծախու հանած են, երեք տարեկաննեն վարպատիկները առեւանգած են անոնց մայրերու գիրկեն եւ նետած են թուրք ազգակից յաճախորդներու թեւերուն մէջ: Աւետիսի երկու տարեկան քոյրը՝ Կիլէնիան առեւանգուող փոքրիկներուն մէջ եղած է: Ամէն մէկ փոքրիկի փոխարէն թուրք կիները ոստիկաններուն տուած են թրքական մէկ մէճիտ:

գ. Բիւզանդ Եղիայեան՝ Եղած են թուրք կողոպտիչներ, որոնք շարդուած հայկական խումբներուն մէջ գտնուող որբ մանուկները հաւաքած են, ծախու հանած եւ ցուցադրած հրապարակաւ, իսկ թուրք ընտանիքներ ընտրելով գնած են հայ մանուկները եւ տարած են տուն:

դ. Արմին Վեկսէր՝ «Մանուկները կը ծախւին հրապարակով»:

ՈՐԲԱՑՈՒՄ

Հայ մանուկներ առեւանգուած են թուրքերու եւ քիւրտերու կողմէ:

Հազարաւոր գեղեցիկ դեռատի հայ աղջիկներ խլուած են թրքական հարեմներու համար:

Ըստ Բիւզանդ Եղիայեանի, հայ մանուկները առեւանգուելէ ետք հաւաքուած են թուրք

Հայ մանուկներ որբացած են զանազան

ձեւերով, պատճառներով եւ պայմաններու թերումով՝

ա. Մայրերու ոչնչացում-սպանութիւն թուրքերու կողմէ:

բ. Մայրերու անձնասպանութիւն գետամահ ըլլալով։ Մայրեր կատարած են այս արարքը, որպէսզի չնշարկուին արիւնարբու թուրքին առեւանգումին, բռնաբարումներուն եւ անպատութեան։

գ. Մանուկներու առեւանգում եւ վաճառք թուրքերու կողմէ:

դ. Յայ մայրեր իրացանի եւ խարազանի հարուածներու տակ ստիպողաբար ծգած են իրենց անմեղ մանուկները եւ առանձին քայած են գաղթականութեան գողգոթան։ Օրինակ՝ Տրապիզոնի մէջ 3000 մանուկներ բաժնուած են իրենց ծնողներէն եւ գետեղուած են թրքական որբանցներու մէջ, որպէս որբեր։

ե. Սնունդի չգոյութեան պատճառով հայ մայրեր կամովին յանձնած են իրենց զաւակները թուրք ընտանիքներու։

զ. Մանուկներու ստիպողական հաւաք՝ պետական մակարդակով։

ԿՐՈՆԱՓՈԽՈՒԹԻՒՆ, ԻՍԼԱՄԱՑՈՒՄ ԵՒ ԶՈՒՅՈՒՄ

Յայ որբեր ենթարկուած են կրօնափոխութեան, իսլամացումի եւ ծովումի։

Անոնց իսլամացումը եւ ծովումը կատարած է երկու մակարդակով՝

ա. **Պետական մակարդակով**, որ իրականացած է երկու գործընթացով՝

1. Որբացած հայ մանուկներու հաւաքումը կատարուած է պետական իրահանգով։ Յայկական շարդերը կազմակերպող կեդրոնական մարմինները եւ ղեկավարները իրահանգած են թուրք իսլամ ժողովուրդին եւ թուրքիոյ որբանցներու թուրք պատասխանատուներուն՝ հաւաքել հայ մանուկները, պահել եւ մեծնել զանոնք, հարստացնելու համար թուրք ազգը հայ մանուկներով, նկատի առած հայ մանուկներու ցեղային արժեքները։ Յաւաքուած հայ մանուկներու մեծամասնութիւնը տեղաւորուած է թրքական որբանցներու մէջ եւ մասամբ մըն ալ թուրք ընտանիքներու մէջ։

Պետական իրամանով եւ կարգադրութեամբ հայ որբերը հաւաքուած եւ դրկուած են այնպիսի վայրեր, ուր հայու հետք չէ մնացած, որպէսզի ապագային անոնք մեծնալով հայու չհանդիպին։ Անոնք բաժնուած են թուրք ունետոր եւ աղքատ ընտանիքներու մէջ։ Պետութիւնը նոյնիսկ նիւթապէս օգնած է տնտեսապէս տկար ընտանիքներու, որպէսզի անոնք կարողանան պահել, մատակարարել եւ իսլամացնել հայ որբերը։

2. Պետութիւնը ինք տեղաւորած է հայ որբերը գոյութիւն ունեցող թրքական որբանցներու մէջ եւ իր կողմէ նոր հաստատուած որբանցներու մէջ։ Այս որբանցներուն մէջ թուրքերը իսլամացուցած են հայ որբերը, իսլամական կրթութիւն տուած են անոնց եւ ամեն միջոցի դիմած են զանոնք ծովելու համար թուրք ազգին մէջ։

Այս որբանցներէն յատկանշական է ճեմալ Փաշայի ստեղծած Լիբանանի Այսթուրայի որբանցը։ Ճեմալ Փաշան Պոլիսէն կը իրաւիրէ փանթուրքիստ կին գրող Յալիտէ Ետիպին, որպէսզի իրականացնէ հայ որբերու իսլամացումը։

բ. Ժողովրդային մակարդակով

Թուրք ընտանիքներ, որպէս թէ բարեգթութիւն, որբացած հայ մանուկները հաւաքած եւ պահած են իրենց տուներուն մէջ, սակայն անոնք ըրած են զուտ տնտեսական նկատառումներով՝ օգտագործելու համար զանոնք որպէս անվճար ծառաներ եւ սպասաւորներ, ինչպէս նաև վաճառելու զանոնք մեծահարուստ ուրիշ թուրք ընտանիքներու։

Յայ որբերու իսլամացումը տեղի ունեցած է յատուկ դասընթացքներով եւ ծիսական արարողութիւններով՝ հայ անուններու թրքացում, տղոց թլփատում եւ իսլամական կրօնի ուսուցում։

Ահաւասիկ կարգ մը սրտաճմլիկ վկայութիւններ՝

ա. Գերման հայասեր Ենիաննես Լեփսիուս՝

1. Սեբաստիոյ մէջ, թուրք զինուորները ստիպած են մանկամարդ հայ աղջիկներուն, որ իսլամանան։ Անոնք, որոնք մերժած են՝ բռնաբարուած են ապա չարչարանքով սպաննուած են։

2. Մանկամարդ բազմաթիւ աղջկներ անձնասպան եղած են գետը նետուելով՝ խուսափելու համար անպատճելքեն, բռնապղծուելէ եւ կամ իսլամութիւնը ընդունելէ:

3. Բարերդի մէջ, թուրք սպաներու կիսերը իրենց փոխադրակառքերուն մէջ գրաւած են հայ աղջկներ, փոխած են անոնց հայկական անունները իսլամական անուններով եւ մարգած են զանոնք իսլամական սովորութիւններով:

4. Ենկիւրիի մէջ, սուլթանին տարեդարձ տօնակատարութեան առիթով 136 հայ մանուկներ իսլամացուցած են թլփատում կատարելով:

5. Չիլէի մէջ, հայ մանուկներ ականատես եղած են իրենց մայրերու սուլիսներու հարւածներով սպանութեան, որովհետեւ անոնք մերժած էին իսլամանալ:

թ. Մարիա ճեյքըսըն՝ «Թուրքերը հիմա յայտարարեցին, որ բոլոր հայ մանուկները եւ անչափահասները պէտք է իսլամանան եւ տղոց թրքացումը պիտի ըլլայ թլփատումով»:

գ. Գառնիկ Բանեան՝

«Այնթուրայի որբանոցին մէջ հազարի հասնող հայ որբեր կենաց եւ մահու պայքար մղեցին թրքացման մահաշունչ մթնոլորտին դէմ: Այդ որբերուն անունները փոխուեցան, մայրենի լեզուն խօսելու իրաւունքը առնուեցաւ անոնց ձեռքեն, իսլամական կրօնքը պարտադրելու դժոխային եղանակներ գործադրուեցան, սակայն հակառակ այդ բոլոր խժդութիւններուն, թրքավայել սարսափներուն, սովահար այդ սերունդին քանի մը հարիւր հոգիի մահուան գիրկը երթալուն, միւսները դիմացան՝ ներելի եւ անսերելի մեղքը գործեցին, միայն եւ միայն ապրելու համար»:

«Որբանոցին մէջ հարցուցին անունս, մեքնաբար պատասխանեցի՝ Գառնիկ: Ահելի ապտակ մը եւ ես լաց ու ճիշով գետին ինկած կը գալարուի, երբ թուրք պաշտօնեայի կօշիկին քիթով կողիս տրուած հարուած մը բաւական եղաւ, որ ուշակորոյս՝ փռուիմ գետին մեռելի պէս: Անունս այլեւս Գառնիկ չէր, այլ՝ Մահմուտ, թիւս ալ 551: Զայերէն խօսիլը շնչուած էր»:

«Զինուորներու բիրու բազուկները իսկոյն կը նետուեին Մանուելին եւ Մկրտիչին վրայ, մորթուելու տարուող ոչխարներ ըլլային կարծէք, ու կը պառկեցնեին գետին, Փալախան կ'անցնեին ոտքերնուն, ամուր կը կապէին, Փալախայի երկու ծայրերէն բռնած՝ կը բարձրացնեին վեր, աւելի վեր, հազիւ գլուխները գետին դաշելու աստիճան ու կը սկսէր սրբազան արարողութիւնը. թրքացնելու նպատակով հոս բերուած տղաքը, իլու հպատակ թուրքեր դարձնելու առհաւական ճիգով, անխնայ կը խոշտանգուէին»:

«Գիշեր մը, երազիս մէջ բերնես դրւոս թռեր եր՝ մայրիկ բառը, հայերէն խօսելուս համար Փալախայի համը ճաշակեցի երկրորդ անգամ»:

ՈՐԲԱՆՈՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՒ ՈՉ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՇԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԿՈՂՄԵ

Զինադադարէն ետք, հայ որբերը հաւաքած են Պոլսոյ, հայկական գաւառներու, Յայաստանի, Սուրիոյ, Լիբանանի եւ Յունաստանի հարիւրաւոր հայկական որբանոցներուն եւ եւրոպական ու ամերիկեան բարեսիրական շատ մը կազմակերպութիւններու որբանոցներուն մէջ:

ՀՈԳԵԿԱՆ ԵՒ ՄՏԱՅԻՆ ԿԱՆԳԱՐՈՒՄ ՈՒ ՄԹԱԳԱՆՈՒԹԻՒՆ

Հազարաւոր հայ մանուկներ ականատես ըլլայով իրենց մայրերուն եւ դեռատի քոյրերուն բռնաբարումին, պղծումին, չարչարակներուն եւ ողջակիզումին՝ ունեցած են զանազան մակարդակի հոգեկան եւ մտային խանգարումներ, որոնք ազդած են անոնց առողջ կազմաւորման վրայ:

Սուշեղ հշխանի հետեւեալ տողերը կը մարմնաւորեն Ցեղասպանութեան օրերուն որբացած հայ մանուկներուն հոգեվիճակը՝

ՉԵ՞Ր ճանչնար զիս, ես այս մանչուկն եմ սիրուն

Որ յոգնասպառ, կիսամերկ

Անապատին մէջ Տեր Զօրի մտաւ քուն

Եւ չարթնցաւ ալ երբեք:

Մի սարսափիք կմախակերա իմ տեսքես,
Ճող չեմ մտած ես բնաւ
Կը շրջէի դիակներու մէջ այսպէս,
Միշտ անօթի ու ծարաւ:

Օրեր անվերջ, կարօս պատառ մը հացի,
Տեսայ արիւն, տեսայ մահ:
Քոստու այժի պէս միայն խոտ ծամեցի,
Խոտն ալ յետոյ չգտայ:

Յայց ցեղասպանութեան հայ մանուկներու եւ անչափահասներու սարսափահար եղեռնապատումին եւ ողիսականին անդրադառնալով, այսօր կը խոնարիինք հարիւր հազարաւոր նահատակ եւ որբացած հայ մանուկներու հոգիներուն դիմաց յայտարարելով՝

Դուք անմահութեամբ նահատակուեցաք եւ որբացաք:

Մենք կտակատարներն ենք ձեր կանչին՝
ՉՍՈՌՆԱԼ ԹԱՎՈՒԾ ԱՐԻՒԾ ԵՒ ՐԱՅ ՄԱ-
ՑՈՒԿՆԵՐՈՒ ՈՒ ԱՆՉԱՓԱՐԱՎԱՆԵՐՈՒ ՃԻՒՂԱ-
ՅԻՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒԾ:

Այո՞ պիտի չմոռնանք ձեր կանչը:
Պիտի հետապնդենք Յայ դատը:
Պիտի մնանք պահանջատէր մինչեւ հա-
տուցում:

Փառք ու պատիւ նահատակ եւ որբացած
Յայ Մանուկներուն:

ԲԺԻԾԿ ԿԱՐՊԻՍ ՀԱՐՊՈՅԵԱՆ

Մոնրեալ

4. The Armenian Refugee Camps in Aleppo (1922-1936), Aleppo, 1986.
5. «Ազգը չէ մեռած եւ անհնար է որ մեռնի, բաստի եւ աքսորի տարիներ», Թեոդիկ, 1919, վերահրատարակուած 1985, Անթիլիաս.
6. «Ամենուն Տարեցոյցը», Թեոդիկ, 1921, 1928.
7. «Մէկուկես միլիոն հայերու ջարդը», Արամ Անտոնեան, Պոլիս, 1921, վերահրատարակուած Պէյրութ, 1978:
8. «Ժամանակակից պատմութիւն Կաթ. Յայց Կիլիկիոյ (1914-1972)», Բիւզանդ Եղիայեան, Անթիլիաս, 1975.
9. «Դրուագներ Ապրիլեան Եղեռնեն, Պեհեսի հայութեան գողգոթան», Աւետիս Դ. Թեքեեան, Պէյրութ, 1956.
10. «Այն սեւ օրերուն», Արամ Անտոնեան, վերահրատարակուած Պէյրութ, 1985.
11. «Վերապրողներ կը վկայեն», Սեղա Զիլեճեան, Պէյրութ, 2005.
12. «Ապրիլեան Եղեռնի բացառիկ», Յեղափոխական Ալպոմ, Պէյրութ, 1975.
13. «Խորշակահար Մանկութիւն», Ա. գիրք, Ներսէս արք. Բախտիկեան, Անթիլիաս.
14. «Կտակն էր նահատակներուն», Արշաւիր Շիրակեան, Պէյրութ, 1965.
15. «Յուշեր-Այնթուրայի որբանոցը», Գառնիկ Բանեան, Պէյրութ, 1992.
16. «Կեանք մը ազգիս կեանքին մէջ», Մատթէոս Եպիղաթեան, Անթիլիաս, 1987.
17. «Ազգային խնամատարութիւն», Մատթէոս Եպիղաթեան, Անթիլիաս, 1985.
18. «Օրագրութիւն-Մարիա ճեյքըպը (1907-1919)», Խարբերդ, թարգ. Ներսէս Եպիսկոպոս Բախտիկեան, Անթիլիաս, 1979.
19. «Յուշամատեան Ժիպէլի Ամերիկեան որբանոցին. 1920-1925», Պէյրութ, 1965.
20. Armenia and the Near East, F. Nansen. 1928.

ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԱՂԲԻՒՐՆԵՐ՝

1. Children as victims of genocide, the Armenian case, Vahan Dadrian, Journal of Genocide research 5, No. 3 (Sept. 203).

2. Recognizing the Armenian Genocide, Vol.1, booklet by United Commemoration Committee of Canada, 1995.

3. The role of Turkish physicians in the world war I Genocide of Ottoman Armenians, Holocaust and Genocide studies 1,2 (1986), Dr. Vahagn N. Dadrian.

ԱՆՏԻԴ ԷԶԵՐ ՄԸ ԳԵՂՐԳ ԱԲԵԼԵԱՆԵՆ

ՊԻԼԻՆՏԱ ԲԺՇԿՈՒՆԻՒՆ

Եթե Յասաքը քաղաքին մեջ այլեւս դուրս պիտի ելլեինք Չեքիներու տունեն, Սաատիէ Ապտէլ Ռահման դարձեալ կը կրկնէ իր խնդրանքը, թերեւս՝ պահանջը:

- Պարոն, չմոռնաս. հաճիս անպայման այցելէ տոքթորա Պիլինտայիս: Շատ պիտի ուրախանայ ան: Չմոռնաս՞ս:

Սաատիէն հպարտ մայր մըն է: Յապարտ է իր բժշկուիի դուստրով: Կը բացատրէ, որ իր Պիլինտան Դամասկոսի մանկական հիմանդրանցին քաղցկեղի քածանմունքին մեջ բժշկուիի է: Ես խոստացայ իր Պիլինտան տեսնել:

- Գիտես Պիլինտա ի՞նչ կը նշանակէ:

Չեի գիտեր. առաջին անգամն էր, որ քրտերն այդ անունը կը լսէի:

- Պիլինտա վե՛հ կը նշանակէ, պարոն: Ի՞ն Պիլինտաս բժշկուիի է:

Յակառակ Պիլինտան տեսնելու խոստումիս, աւելի քան երկու տարի պետք եղաւ կնոջ խնդրանքը կատարելու համար: Մերթ ընդ մերթ, երբ կը հեռածայնէի Սաատիէին, չեր մոռնար յիշեցնել. «Գևա տե՛ս իմ Պիլինտաս»:

Երկուքուկես տարի ետք միայն կարելի եղաւ Պիլինտան տեսնել: Դամասկոս տուած այցելութեան մը ընթացքին ուզեցի անպայման գտնել այդ բժշկուիին: Մինչ այդ հեռածայնով քանի մը անգամ խօսած էի իրեն հետ:

Յասցէն առնելու եւ ժամադրութիւնը ճշդելու համար, հեռածայնէցի իրեն:

- Ո՞վ է,- հարց տուաւ քիչ մը չոր եւ խիստ ոճով:



Սաատիէ
Ապտէլ Ռահման

Իրաւունք ուներ. ա'յր մըն էր հետը խօսողը:

- Ճորճ՝ Լիբանանէն,- պատասխանեցի քիչ մը զգուշաւորութեամբ:

- Խալօ Ճո՞րճ:

Այս անգամ, հեռածայնին մեծն իսկ, ձայնին շերմութիւնը եւ Պիլինտային ուրախութիւնը շատ ակներեւ էին:

- Ո՞ւր ես խալօ, ե՛րբ պիտի գաս ինծի տեսնելու:

- Ո՞ւր կրնանք տեսնուիլ, բժշկուիի: Դուն տեղ մը ճշդէ: Երկու ժամեն կը տեսնուիլս:

Խնդրեց, որ իր հանրակացարանը երթամ' մանկական հիմանդրանցին կից: Անիրաժեշտ բացատրութիւններ տուաւ: Ժամը ճշդեցիլս:

Մինչեւ քովը երթալս, երկու-երեք անգամ հեռածայնէց, հարց տալու համար, թէ ե՛րբ պիտի հասնեի իր մօտ: Թէ՛ ուրախութիւն եւ թէ մտահոգութիւն կար այդ հարցումին մեջ: Այդպէս կը զգայի:

Վերջապէս, թաքսիին վարորդը ինքնաշարժը կանգնեցուց հանրակացարանին գլխաւոր դարպասին առջեւ: Ճամբու ընթացքին մարդը մտահոգութիւն յայտնած էր, թէ արդեօք հիմա՞նդ ունեի հիմանդրանցին մեջ: Երբ կատահեցուցած էի, որ պարզապէս ինծի ծանօթ բժշկուիի մը տեսնելու կ'երթայի, մարդը քանից փառք տուած էր Ալլահին:

Դարպասին առջեւ դարձեալ օգտագործեցի բջջային հրաշալիքը:

- Ներս մտիր դարպասէն, ես քեզ կը դիմաւորեմ:

Ներս կը մտնեմ. հազիւ քանի մը մեթր յառաջացած, կը տեսնեմ դիմացն յառաջացող

հասակաւոր երիտասարդուիին: Ան է, Պիլինտան: Կասկած չկայ: Երբ հարց կու տամ՝

- Տոքթորա Պիլինտա...»

- Այո՛, խալօ ճորճ:

Զերմութեամբ կը սեղմէ ձեռքս, որ քիչ մը վարանումով, կէս մը երկնցուցած էի իրեն:

Կարծէք իին ծանօթներ եղած ըլլայինք եւ իսկապէս ես իր քերին եղած ըլլայի: Այսքան անմիջական եւ շերմ եր իր վերաբերումը: Յրաւերեց զիս հանրակացարանի քաֆիթեային մէջ նստելու: Անմիջապէս խմելիք մը ապսպեց:

Նստանք դէմ դիմաց: Անմիջապէս, առաջին իսկ ակնարկով, իրաւունք տուի աղջկան մօր: Ի զուր չ'ը, որ Սաատիէն քանիցս պահանջած էր, տեսնել իր Պիլինտան: Իսկապէս հրաշալի աղջկի մըն էր, բարձրահասակ, անուշ դիմագիծով եւ շերմ: Դէմքին վրայ կարելի եր կարդալ այդ շերմութիւնը, երջանկութիւն եւ նաեւ՝ որոշ յուզում:

Պատմեց ինքնիր մասին եւ՝ բժշկական հաստատութեան: Մասնագիտութեան ընթացք աւարտելու վրայ է: Ջիշ մը շատ ծանրաբեռնուած է դասերով եւ մանաւանդ տոքթորական թէզով: Կը սիրէ իր ընտրած ճիւղը:

Երբ նոր հրատարակուած գիրքս՝ «Վղբարիկ ափիկ մը ջուր»-ը երկարեցի իրեն եւ ցոյց տուի մեծ հօր՝ Մովսէս Թիրաբեանի նկարը, աչքերը լայս-լայս բացաւ, ու այսքան անուշ ժախտը մը պատեց սիրուն դէմքը: Ապա, ակներեւ ուրախութեամբ ըսաւ.

- Ասիկա ժոտոս է...

Ուրախացաւ տեսնելով մօր լուսանկարը եւս: Թերթատեց գիրքը: Յիմա շատ ակներեւ է դէմքին վրայի խորացող յուզումը... Առաջին անգամն է, որ ձեռքին մէջ հայերէն գիրք կը բռնէ:

- Ավխոս չէ՞, ասիկա իմ լեզուս է, իմ մօրս լեզուն, եւ ես մէկ բառ իսկ չեմ կրնար կարդալ:

Գեղեցիկ աչքերուն մէջի տամկութիւնը հաստատեց ափսոսանքին անկեղծութիւնն ու խորութիւնը: Այո՛, իր մօր լեզուն չի գիտեր: Նաեւ իր մայրը, Մովսէս Թիրաբեանի դուստր՝ Սաատիէն եւս չի գիտեր ինքնիր լե-

զուն: Նոյնինքն ուրֆացի Մովսէսն ալ չէ կրցած սորվիլ, խօսիլ ու կարդալ իր մայրենի լեզուն, հակառակ այնքան ուսումնատենչ եւ ուշիմ ըլլալուն: 95 տարիներ առաջ, այդպէս կամեցած են թաւալեթը, Ենվերն ու իթթիհատը... Անոնք ալ ափսոսանքով հեռացած են այս աշխարհին, որովետեւ չեն կցած սրբել հայն ու հայութիւնը եւ անոր լեզուն:

Պիլինտային ափսոսանքը յուզեց զիս: Դիմացս նստած է այս գեղեցկուիին, եւ ներքնապէս փոթորկած՝ ի տես իր տգիտութեան հին ու սեկական, բո՛ւն լեզուին, որ բնաւ չէ հասած իրեն: Կը մտաբերէմ բազմահազար հայորդիներ, որոնք միջոցը ունին սորվելու եւ բարբառելու իրենց հասած Ոսկեղնիկը, բայց կոնա՞կ կը դարձնեն անոր: Կարեւորը «մարդ» ըլլալն է, ապրիլն է, «արժանապատիւ» կեանքն է: Այդ «արժանապատութիւն»ը կարելի է գտնել միայն մե՛ծ ազգերու լեզուներուն մէջ, անգլերէն, ֆրանսերէն, ռուսերէն... Տակաւին թարմ է մեր անկախ հայրենիքի պետութեան այնքան փութեկոտութեամբ ծրագրած եւ արտօնած օտար դպրոցներ հաստատելու անկոտրում որոշումը: Ծատ աւելի կենսական ծրագիրներ որքան կ'ուշացուին եւ կամ սեղանի վրայ չեն իսկ դրուիք: Իսկ հոս, դիմացս նստած Պիլինտան կ'ապրի անկեղծ յուզում եւ ափսոսանք...

Ինքնիր մասին տեղեկութիւններ տուաւ: Ընտանիքին մէջ ինք եւ իր մայրն են, որոնք իրենց արմատով հետաքրքրուած են: Իրեն պէս անհատ մը, որուն մէկ կողմը հայ է, իսկ միւսը՝ քիւրտ, ունին յատուկ որակում՝ պաֆլա: Ոչ զտարիւն քիւրտը՝ պաֆլան, այնքան ալ սիրով չէ որ կ'ընկալուի մսացեալներուն կողմէ: Այդպիսիք ենթակայ կրնան ըլլալ խտրականութեան եւ մերժումի: Ամուսնութիւնն ալ հա՛ց կը դառնայ:

Պատմեց իր մեծ հօրը մասին, որուն կապած եղած է շերմ սիրով: Բայց անոր ապրած ահաւոր տառապալից կեանքին մանրամասնութեանց ծանօթ չէ: Յաւանաբար մեծահոգի Մովսէս չէ ուզած իր թոռներուն ու թոռնուիիներուն յաւելեալ տառապանք պատճառել:



Կը հաւաքէ իր մօր հեռաձայնի թիւը: Աւետելու ոճով եւ խանդապառութեամբ կը յայտնէ, որ ճորճ **խալօն** հոն է: Օ՛, որքան ուրախացաւ Սաատին: Վերջապէս, աւելի քան երկու տարի ետք, իր պատուերը կատարուած էր, իր տոքթորա աղջիկը «գտած» էր իր «քեռին»...

Պիլինտան հեռաձայնը երկարեց ինծի: Սաատին շնորհակալութիւն յայտնեց: Ուրախութիւնը անսահման է: Խորիտց միշտ այցելել իր բժշկուիի աղջկան...

Աւելի քան մեկ ժամ սահած էր. չեինք անդրադառնար ատոր: Այլ ժամադրութիւն ունեի ուրիշ հայրենակիցի մը հետ: Երբ Արմեն հեռաձայնվ հարց տուաւ, թէ՝ հ՞ր էի, բացարեցի գտնուած վայրու եւ թելադրեցի, որ հոն գայ: Պիլինտան մեր գտնուած վայրին մասին հարկ եղած ցուցմունքները տուաւ:

Բժշկուիին ուրախացաւ, որովհետեւ նոր «քեռի» մը եւս գտաւ: Դուրս ելայ՝ Արմենը ներս առաջնորդելու համար: Զերմութիւնը նաեւ փոխանցուեցաւ Արմենին: Անկեղծօրեն, Արմենն ու ես ալ նոր կը ծանօթանայինք իրարու: Երեք հայորդիներ, հիւանդապահուիիներու հանրակացարանի **քաֆիթերիային** մէջ խօսակցեցանք: Ուրախութիւնն ու յուզումը որքան ակներեւ են: Հաստատեցինք, որ Պիլինտան հարկ է որ կապի մէջ մտներ տեղույն իր «հարազատ»ներուն հետ:

Հասաւ բաժանումի պահը: Պահանջեցի Պիլինտային, որ գտնէ եւ ինծի տրամադրէ իր մեծ հօր՝ Մովսեսի հետ նկար մը, հաւանաբար ընտանեկան: Նաեւ առաջարկեցի, որ սրտի խօսք մը գրէ իր մեծ հօր մասին:

Երբ ոտքի ելայ եւ ձեռքս երկարեցի հրաժեշտի համար, ինք գրկեց ուսերս ու շերմ համբոյրով շանաց պահը վերջացնել: Դուրս ելանք, դարձեալ մօտեցաւ եւ անկեղծ ու հարազատներու շերմութեամբ համբոյրուեցանք: Ես իր խալօն եմ չե՞: Խոստացանք միշտ կապի մէջ մնալ: Պնդեցի, որ Այնձար գայ այցելութեան: Խոստացաւ, բայց իր առջեւ ունի թեզի հարցը:

Այսօր, դարձեալ հեռաձայնեցի: Նախապէս քանի մը անգամ հեռաձայնած էի, բայց անջատուած էր գիծը: Մօրը հեռաձայնվ հարց տուած էի, թէ ինչո՞ւ գոց էր Պիլինտայի գիծը:

- Աղջիկս բնաւ ժամանակ չունի: Թեզ կը պատրաստէ. գոց կը պահէ հեռաձայնը, որպէսզի չխանգարուի: Ճատ կը յոգնի աղջիկս, բայց փառք Աստուծոյ: Աստուծմով, ամեն բան լաւ պիտի ըլլայ:

Երբ այս վերջին անգամ հեռաձայնը կը կապէ զիս Պիլինտային, հազիւ **ալլօ** ըսած, անմիջապէս կը պատասխանէ ըսելով.

- **Խալօ'** ճորճ, ինչպէ՞ս ես. ո՞ւր ես:

Պատասխանին մէջ կայ հրճուանք եւ կարուտ: Անկեղծութիւնը այնքան ակներեւ է, այսքան: Իր «հարազատ քեռի»ին հետ կը խօսի: Քարց կու տայ, թէ Ե՞րբ պիտի երթամ Դամասկոս: Կը պատասխանէմ, որ Ապրիլ 24-ին հոն պիտի ըլլամ:

- Ա՛, նահատակաց օրուան առիթով, չԵ՞:

- Այո՞, Պիլինտա, այդ օր ես խօսք պիտի արտասանեմ:

Ստադրած էի հարցնել, եթէ Երբեք պիտի ուզե՞ր ներկայ գտնուիլ ձեռնարկին... Յարցումին չի սպասեր...

- Ես ալ կ'ուզեմ գալ, կարելի՞ Ե...

Անշուշտ որ կարելի էր, ինչպէ՞ս կարելի ըլլար...

Չէ որ իր մեծ հօրը, Մովսեսի, որբացած ու քրտացած, յիշատակի օրն ալ պիտի ըլլար այդ: Մովսես փրկուած էր, կոտորման չեր Եւթարկուած, բայց ցմահ նահատակուած էր: Եւ իր թոռնուիին, ուրիշ հայորդիներու հետ, կը խոստանար իր մեծ հօր եւ ուրիշ հայորդիներու յիշատակը յարգել...

Դեռ աւելին ալ կար. այդ օրերուն թեզը պիտի ներկայացուեր եւ իր ասպարեզը ճշդուեր: Անկախ ամեն բանէ, ինք պիտի գար: Նաեւ, հաւանաբար, մայրն ալ գար... Ան ալ ներկայ պիտի գտնուեր իր եւ հազարաւոր ուրիշներու հայրերուն յիշատակի հանդիսութեան...


Աւա՞ղ, այդ ձեռնարկին ո՞չ ես, ո՞չ Պիլինտան, ո՞չ ալ Սաատին ներկայ պիտի գտնուիինք: Ափսո՞ս: Յիմա օրերը աղուոր չեն. Պիլինտան, որ առաջին անգամ ըլլալով իր արենակիցներուն հետ մեծ հօր յիշատակը պիտի նշեր, հարկ է որ սպաս ուրիշ առիթի:

ԳԵՈՐԳ ԱԲԵԼԵԱՆ

Մարտ, 2011

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԱԿԱՆԱՏԵՍ-ՎԿԱՆ՝ ԾՈՐԾ Է. ՈՒԱՅԹ. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԲԱՐԵԿԱՄԸ

Արեւմտեան Յայաստանում, ինչպես նաև Օսմանեան կայսրութեան ամբողջ տարածքում, եւ Յամինեան ջարդեղի (1894-96 թթ.), եւ 1915 թ. Յայց ցեղասպանութեան ընթացքում, հայերի զանգուածային կոտորածների առաջին ականատեսների թուրմ էին ամերիկեան բողոքական եկեղեցու միսիո-



«Անատոլիա» քոլեճի ուսուցչական
անձնակազմը եւ դր. ճորժ Ուայթը, 1914 թ.

ներները: Նրանց թողած ականատեսի վկայութիւնները արժեքաւոր են Յայց ցեղասպանութեան վաւերագրերի շարքում: Այս է պատճառը, որ պատմաբանների դիմակ-պիտակի տակ հանդիս եկող պատմութեան կեղծարարները՝ թուրք ժխտողականները, ջանքու եռանդ չեն խնայում վարկաբեկելու ու արատաւորելու բոլոր նրանց անունները, ովքեր յանդգնել են ժամանակին ասել ճշմարտութիւնը: Ոչ մի հիմնաւորում չունենալով՝ նրանք ուղղակի յայտարարում են, որ ցեղասպանութեան վերաբերեալ այս վկայութիւնները կեղծ են, եւ, որ դրանք բոլորը միայն երեւակայութեան արդիւնք են ու հայկական քարոզութեան հետեւանք: Այդ պնդումներն այնքան անհեթեթ են, որ որեւէ ողջամիտ մարդ չէր ցանկանայ անդրադառնալ դրանց, այն էլ ներկայումս, երբ Յայց ցեղասպանութեան եղելութիւնն արդէն համաշխարհային պատմագիտական մտքի գնահատմամբ անժխտելի պատմական փաստ է: Ցաւօք,

նի (հայերէնով՝ Մարզուանի)⁽¹⁾ ամերիկեան քոլեճի նախագահը» (2009 թ.)⁽²⁾: Բնաւ հարկ չիամարելով բացայատել այդ յօդուածում շարադրուած անհեթեթութիւնները, կամ մեկ առ մեկ ապացուցել բերուող «փաստարկների» շինծու լինելը, համառօտակի անդրադառնանք միայն այն հարցին, թէ ո՞վ էր իրականում ճորժ Է. Ուայթը եւ ի՞նչ առևոլթիւն ուներ Մարզուանի «Անատոլիա» քոլեճը հայերի հետ մինչեւ 1915 թուականը:

Վերապատուելի, դոկտոր ճորժ Էնուար Ուայթը ամերիկեան բողոքական եկեղեցու միսիոնար էր, որն 1890 թ. իր կոչ՝ Էսթեր Ռուպիսի հետ Միացեալ Նահանգներից գալիս է Թուրքիա, Մարզուան (թուրքերէնով՝ Մերզիֆոն) քաղաքը՝ դասաւանդելու «Անատոլիա» ամերիկեան քոլեճում: Մինչեւ 1882 թ. նա ուսանել էր Գրինսել քոլեճում, ապա՝ 1887 թ. աւարտել Շիքակոյի հոգեւոր ճեմարանը: Իբրեւ հոգեւորական երեք տարի ծառայել էր Վեյուերլիի բողոքական միաբանու-



թեան Եկեղեցում, որը գտնվում էր Վյովա Նահանգում: Դր. Շ. Ուայթը 1901թ-ին դառնում է «Անատոլիա» քոլեճի փոխնախագահը: Այդ հաստատութեան առաջին նախագահն է եղել հայ ժողովորի մեծ քարեկամ դր. Չարլզ Չեյպին Տրեյսին՝ 1886-1913 թուականներին: 1913 թ-ին Տրեյսին հիւանդութեան պատճառով վերադառնում է Միացեալ Նահանգներ, իսկ քոլեճի ղեկավարութիւնը ստանձնում է դր. Շ. Ուայթը:

Զոլեճի ուսուցչական անձնակազմի գերակշռող մասը հայեր էին, իսկ աշակերտները՝ գրեթե միայն հայեր եւ յոյներ: Ի դեպ՝ 1898-1901 թթ. այս քոլեճում է ուսանել հայ դասական ընարեգութեան ամենալուսաւոր դեմքերից մեկը՝ Մեծատաղանդ վաղամեռիկ բանաստեղծ Միսաք Մեծարենցը (1886-1908 թթ.): Մեծարենցի կենսագիր, գրականագետ Ա. Շարուրեանը (1931-2007 թթ.) իր «Միսաք Մեծարենցի ուսումնառութիւնը» (Պատմաբանասիրական հանդես, 1979, թիւ 2, էջ 102) յօդուածում յիշատակում է ժամանակակիցների այն կարծիքը, թէ դր. Տրեյսին «հմուտ հայագետի» համբաւ ուներ, իսկ դր. Շորճ Ուայթը իր «Չարլզ Չեյպին Տրեյսի, միսիոներ, քարեգործ, մանկավարժ» (The Pilgrim press, 1918, Boston) գրքում գրում է, որ ինքը՝ Տրեյսին, սովորել էր հայերէն եւ յաճախ էր կատակով ասում. «Այս (հայերէնը) իմ մայրէնի լեզուներից մեկն է»: Նա այնքան է հմտանում հայոց լեզուի մեջ, որ հայերէնով իրատարակում է «Նամակներ ընտանիքներին» գրքոյնքը:

Թեւ քոլեճը Ամերիկեան բողոքական Եկեղեցն կրթական հաստատութիւն էր, սակայն հայազգի աշակերտներին չէր արգելում յաճախել հայ առաքելական Եկեղեցի: Այս կապակցութեամբ գրականագետն Ա. Շարուրեանը վերոյիշեալ յօդուածում վկայակոչում է «Բիւզանդիոն» եւ «Արեւելք» թերթերի թղթակիցների հաւատութման այն մասին, որ

«Զոլեճին մէջ տնօրինութիւնը ցոյց է տուած, թէ յետին աստիճան կը յարգէ հայ առաքելական ուսանողաց կրօնական զգացումները», եւ «Զոլեճի հայ աշակերտներուն օտարոտի կամ ամերիկեան դաստիարակութիւն մը չէ, որ կը տրուի»:

Ըստ դր. Շ. Ուայթի, «Անատոլիա» քոլեճի աւարտական վկայականը ճանաչուած էր Ամերիկայի համալսարանների եւ այլ բարձրագոյն կրթական հաստատութիւնների կողմից: Դա զոլեճի շրջանաւարտներին հնարաւորութիւնն էր տալիս իրենց ուսումը շարունակել արտասահմանի լաւագոյն համալսարաններում:

Դր. Շ. Ուայթը 1915թ.-ին թուրքական իշխանութիւնների կողմից Մարզուանի հայ համայնքի ոչչացման ականատեսն է եղել, ինչի մասին պահպանուած է նրա գրաւոր վկայութիւնը՝ իր ստորագրութեամբ, յանձնուած Օտարերկրեայ առաքելութիւնների ներկայացուցիչների ամերիկեան խորհրդին (Քամայնընների տուն, Պոսթըն, Մասաչուսեց, թուագրուած է՝ 10-ը ապրիլի, 1918 թ., American Board of Commissioners for Foreign Missions, Congregational House, 14, Beacon street, Boston, Massachusetts), որը վաւերացած է նաեւ յիշեալ խորհրդի արտաքին յարաբերութիւնների քարտուղար ճեյմս Պարթոնի ստորագրութեամբ: Այդ փաստաթուղթը ընդգրկուած է ճեյմս Պարթոնի կազմած՝ «Թուրքական վայրագութիւններ» Ամերիկեան միսիոնարների վկայութիւնները Օսմանեան թուրքիայում քրիստոնեական համայնք-

Ների ոչնչացման մասին, 1915-1917 (Turkish Atrocities, Statements of American Missionaries on the Destruction of Christian Communities in Ottoman Turkey, 1915-1917, by Gomidas Institute Michigan, USA, 1998) հատույում:

1915թ.-ին թուրքական իշխանութիւնների կողմից «Անատոլիա» քոլեճի բոլոր հայ ուսուցիչները եւ աշակերտները աքսորուեցին եւ սպանուեցին աքսորի ճանապարհին: 1916թ.-ին՝ պատճառաբանելով պատերազմը, թուրքական իշխանութիւնները փակեցին քոլեճը եւ դր. ճ. Ուայթին ու միևս ամերիկացիներին ստիպեցին հեռանալ քաղաքից: Բռնագրաւուեց բոլորքական համայնքի ողջ ունեցուածքը: 1917թ.-ին դր. ճ. Ուայթը մեկնեց Սիամական Նահանգներ, ուր անմիջապես ձեռնամուխ եղաւ Եղեռնից վերապրողներին օգնութեան կազմակերպմանը՝ հանգանակելով մեծածաւալ օգնութիւն եւ այս «Հայ-սուրիական ամերիկեան նպաստամատոյց յանձնախումբի» (American Committee for Armenian and Syrian Relief) միջոցով տրամադրելով Սերձաւոր Արեւելքի հայ գաղթականներին ու որբերին: «Անատոլիա» քոլեճը վերաբացուեց 1919թ.-ին, սակայն առանց հայերի: 1922թ. քոլեճը ամբողջովին դադարեցրեց ե իր գործունեութիւնը Թուրքիայում եւ տեղափոխուեց Յունաստան՝ Թեսաղոնիկէ քաղաքը, ուր այս գործում է առ այսօր: Մինչեւ վաստակած հանգստի անցնելը՝ 1933թ., դր. ճ. Ուայթը շարունակեց ղեկավարել այդ հաստատութիւնը:

Նա մինչեւ իր կեանքի աւարտը մնաց հայ ժողովրդի մեծ քարեկամը: Իր բազմաթիւ յուշագրութիւններում դր. ճ. Ուայթը խորին համակրանքով է արտայատուել, իր բառերով ասած՝ «Արեւելքի յանկինների», հայերի մասին:

«Նիւ Եորք Թայմզ, ընթացիկ պատմութիւն» ամսագրի 1917թ. նոյեմբերեան համարում լոյս է տեսել

դր. ճ. Ուայթի վկայութիւնը, իբրեւ Մարզուանում հայ բնակչութեան շարդերի ականատեսի, վերնագրուած՝ «Թուրքերի կողմից կացիններով սպանուած հայեր»: Այն ստորեւ ներկայացնում ենք թարգմանաբար՝ անգլերէնից: Այս յօդուածի անգլերէն բնագիրն ընդգրկուած է՝ The Armenian Genocide - News Accounts from the American Press: 1915-1922, by Richard Klorian, Heritage Publishing, CA, 2005, ժողովածուի մէջ :

ԹՈՒՐՔԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՑԻՆՆԵՐՈՎ ՍՊԱՆՈՒԱԾ ՀԱՅԵՐ

«Անատոլիա» քոլեճի նախագահի սարսափազդու վկայութիւնը
The New York Times
CURRENT HISTORY (A Monthly Magazine)
(Published by New York Times Company,
Times Square, New York)

«Նիւ Եորք Թայմզ»
«Ընթացիկ պատմութիւն» ամսագիր
Նոյեմբեր, 1917 թուական

Փոքր Ասիայի հիւսիսում՝ Մարզուանում⁽³⁾ գտնուող «Անատոլիա» քոլեճի բոլոր հայ ուսուցիչների կոտորածը՝ 1200 այլոց հետ, թուրք եաթաղանաւորների կողմից, որոնց աշխատանքի վարձատրութիւնն իրենց զոհերի հագուստների կողոպուտն էր, նկարագրել է «Անատոլիա» քոլեճի նախագահ, վերապատուելի ճորճ Ե. Ուայթը՝ 1917 թուականի աշնանը Միացեալ Նահանգներ վերադառնալուց յետոյ:

«Կոտորածները գիշերն էին կատարուում՝ թուրքական կառավարութեան իրամանով, ասաց նա, - հայերին մահուան էին դատապարտում հարիւր կամ երկու հարիւր հոգանց խմբերով եւ նրանց մարմինները գլորում էին պատ-





րաստուած գերեզմանափոսերի մէջ»:

«Սեր քոլեճի մի խումբ սաներ թոյլատրութիւն ուզեցին մահուանից առաջ երգելու, նրանք երգեցին «Աւելի մօտ, ՏՇՌ իմ, Դու ես»-ը, ու յետոյ անձնատուր եղան», - ասաց դրկտոր Ուայթը: Սպաննուած հայերի թիւը, որը գնահատուել է Նիւ Եորք քաղաքի Յայ-սուրիական ամերիկեան նպաստամատոյց յանձնախմբի կողմից, 500,000-ից մինչեւ 1,000,000 է, եւս մէկ միլիոնն էլ, որը դեռ ողջ է, շուտափոյթ օգնութեան կարիք ունի:

Դր. Ուայթը, ով Ներկայումս ընակում է Միննեապոլիսում, թուրքական իշխանութիւնների կողմից հրաման էր ստացել հեռանալ Մարզուանից: Նա Վեյվերլիի, որը գտնուում է Այովայում, Եկեղեցական միաբանութեան նախկին վերապատուելին էր:

Իրավիճակն Յայաստանում,- ասաց նա, - չափազանց սրուեց 1915 թուականի գարնանը, երբ թուրքերը որոշեցին վերացնել հայկական հարցը՝ վերացնելով հայերին: Յայկական հարցը ծագել է քաղաքական եւ կրօնական դրդապատճառներից:

Դասալիք գինուրներ, թաքցուած ռումբեր, գենքեր, խօռվարարական գրականութիւն կամ յեղափոխականներ որոնելու պատրուակով՝ թուրքական պաշտօնեաները Մարզուանում ձերբակալեցին մօտ 1200 հայի՝ խուզարկութիւններն ուղեկցելով զարիւրելի վայրագութիւններով: Սեր շրջանում երբեւ յեղափոխականութիւն չէր ել եղել: Գիշերով, հարիւր կամ երկու հարիւր հոգանց խմբերով տղամարդկանց «աքսորում էին»

սարերը, որտեղ գերեզմանափոսեր էին պատրաստուած: Վայրագ գիւղացիներին օգտագործում էին իրականացնելու համար այս, ինչն արւեց, ասում էին՝ ինսայէք փամփուշտները, եւ գործադրում էին իրենց կացինները:

Յետոյ թուրքերն անցնում էին կանանց եւ երեխաներին, ծերունիներին եւ պատանիներին: Սայլերը հաւաքւում էին

իրար մօտ եւ երբ վաղ առաւօտեան նրանք անցնում էին, նրանց անհիւների ճռճռոցն այսպիսի մի յուշ էր թողնում, որից, նոյնիսկ հիմա, արիւնը թանձրանում է մէջ:

Յազարաւոր կանանց եւ երեխաների քշեցին-տարան: Ո՞ւր: Ոչ մի տեղ: Չկար նշուած կամ նախատեսուած ուղղութիւն: Ինչո՞ւ: Պարզապես, որովհետեւ նրանք հայեր էին՝ քրիստոնեաներ, եւ գտնուում էին թուրքերի ձեռքում:

Երիտասարդ կանանց եւ աղջիկները յափշտակուում էին ամէն երթի ժամանակ: Մարզուանում աղջիկներին վաճառում էին երկուսից չորս տոլարով: Տեղեակ եմ, որովհետեւ ես լսեցի մի մարդու խօսակցութիւնը, որն զբաղուում էր այդ առեւտրով: Գիտեմ, որովհետեւ ինձ յաջողութեց փրկագին տալով ազատել երեք աղջկայ, իրաքանչիւրի համար 4,4 տոլար գտով:

Տառապանքները, չարչարանքները, մահապատիժներն աւելին էին, քան թէ բառերն ի զօրու են արտայայտել, աւելին էին, քան թէ միտքն ի զօրու է ըմբռնել: Մերձաւորների կորստեան, ծարաւի, սովի, միայնութեան ու յուսահատութեան մէջ խմբերը նորից ու նորից հեռանում էին մի ճանապարհով, որ նշանակէտ չուներ:

Ես մի գրութիւն ստացայ դեսպան Մորկընթառուից, որ նրանք չեն ներխուժի մէր շենքերը: Յաջորդ օրն առաւօտեան ոստիկանապետն եկաւ զինուրների հետ եւ պահանջեց յանձնել բոլոր հայերին, որոնք քոլեճում են, աղջիկների դպրոցում եւ հիւանդանոցում:

Որպես ամերիկեան քաղաքացիներ՝ մենք պահանջեցինք մեր տարածքը զննելու իրաւունքը: Երկու ժամից աւելի մենք նրանց պահեցինք անելանելի վիճակում: Նրանք էին զիս-լորներ բերեցին եւ դարձեալ պահանջեցին յանձնել հայերին: Ես մերժեցի: Նրանք ինձ մեղադրեցին թուրքական կառավարութեանն ընդդիմանալու մէջ եւ ասացին, որ, եթէ ուրեմն այդպէս է վարում, ապա անմիջապէս մահապատժի է ենթարկում:

Նրանք շարդելով բացեցին մեր դարպասները, ներս բերեցին սայլերը եւ դարձեալ հարցուցին, թէ որտե՞ղ են հայերը: Ես մերժեցի պատասխան տալ: Դուները շարդելով նրանք մտան շենքերը: Մեր հայ ընկերները զգալով, որ հետագայ դիմադրութեան փորձը կարող է աւելի մեծ կորուստների յանգեցնել, քան թէ օգուտ տալ, առաջ եկան՝ ներկայանալով իբրեւ օրինապահ հպատակներ, առաջարկեցին անել այն, ինչ պահանջում է:

Իրաքանչիւր ընտանիքի համար մի սայլ եր յատկացուել՝ ուտելիքի, ծածկուելու եւ հագուստի խղճուկ պաշարով: Մայրը երեխաների հետ նստում էր բեռների վրայ, իսկ հայրը պատրաստում էր քայլել սայլի կողքով: Ես առաջարկեցի աղօթել, յետոյ տխուր թափորը, որը 72 հոգի էր ընդգրկում քոլեճից եւ հիւանդանոցից, շարժուեց:

Ուսուցիչները հեղինակաւոր, կրթուած եւ ընդունակութիւններով օժտուած մարդիկ էին, նրանցից շատերը հիանալի մարդկանց տիպարներ էին՝ եւրոպական եւ ամերիկեան համալսարանների շրջանաւարտներ: Ապահով համատեղ ճամբորդութիւնը տեւում էր մօտ յիսուն մղոն (80 քմ.- «Ա.»): Յետոյ տղամարդկանց բաժանում էին կանանցից, ձեռքերը կապում մէջքերին եւ քշում առաջ: «Անստոլիա» քոլեճի ղեկավար անձնակազմի ութ հայ անդամներ սպաննուածների մէջ էին: Կանանց եւ երեխաներին նորից առաջ էին քշում: Ոչ ոք չգիտեր, թէ՝ ո՞ւր, եւ ոչ ոք չգիտի, թէ՝ նրանցից քանի՞սն են դեռ ողջ:

Կառավարական պաշտօնեաները հերկել տուեցին Մարզուանի հայկական գերեզմանատունը եւ տեղը հացահատիկ ցանել տուեցին՝ ի նշան այն բանի, որ ոչ մի հայ չպէտք է ապրի կամ մահանայ ու թաղուի այստեղ: Ոչ մի հայ աշակերտ կամ ուսուցիչ

չթեց «Անստոլիա» քոլեճը, իսկ քաղաքի բողոքական համայնքի 950 անդամներից աւելի քան 900-ը, իրենց հոգեւոր առաջնորդի հետ, տարուեցին ոչնչացման: Դա համատարած կառավարական գործողութիւն էր, գործողութիւն՝ ուղղուած հայ ժողովրդի դէմ:

Այս դեպքերը բնութագրական են Թուրքական կայսրութեան վեց նահանգներում, որոնք յայտնի են իբրեւ Հայաստան, տեղի ունեցածների համար:

Դայերն արեւելքի յանկիններն են՝ վաճառականներ, արդիւնաբերողներ, դրամատերեր, արհեստաւորներ եւ լաւագոյն ազարակապաններ: Զառորդ միլիոն մարդու միայն յաշողուեց փախչել Ռուսական Կովկաս, եւ նրանց մէջ ամերիկեան ներկայացուցչութիւնները հիանալի աշխատեցին՝ պայքարելով հիւանդութիւնների դէմ, սովեալներին հաց տալով, մերկերին՝ հագուստ, խնամելով որբերին: Հաւանաբար, եւս մէկ միլիոնն էլ անցաւ Սուրբիա եւ Միջագետք, ուր նրանք կախման մէջ են գտնւում ամերիկեան օգնութիւնից, որն այս տառապեալ ժողովրդին օգնում է վերապրել»:

ԴՈԿ. ՌՈԲԵՐՏ ԲԱԽՉԱԶԵԱՆ

Հայկական կենսագրական կենտրոնի նախագահ

Մարսել

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Գտնւում է ներկայիս Թուրքիայի Ամասիայի նահանգում:

2. Դեղինակն այն գեկուցել է 2009թ. մայիսի 15-16-ին Սամսունի համալսարանում կայացած գիտաժողովում, որի նիւթերը զետեղուած են նաեւ համացանցում:

3. Անգլերէնում՝ Marsovan:

ԿԻՒԼԵՆԻԱ ՄԱԹՈՍԵԱՆ- ՓԱՆՈՍԵԱՆԻ ՌԴԻՍԱԿԱՆԸ

Մարինոս Դուկասեանը ծնած է Գարաման, 1888-ին: Գարաման գիւղաքաղաք մըն է, որ Գոնիա քաղաքին 100 քմ. հարաւ կը գտնուի: Գիւղաքաղաքը ունի այգիներ եւ գեղեցիկ պարտեզներ 1915-էն առաջ: Մեծամասնութեամբ հայեր են Գարամանի բնակիչները: Պոլսեն եկող հիմնական շոգեկառքի գիծը Գոնիայէն անցնելով Գարաման կու գար եւ մինչեւ Կիլիկիա կ'երկարեր: Բերրի այգիները հարուստ են զանազան պտուղներով եւ մանաւանդ՝ խաղողով: Անտառներն ու պուրակները ծածկուած են շոճի ծառերով: Զուրը առատ էր եւ պարտեզներն ու այգիները պէտք եղած քանակութեամբ ջուր կը ստանային:

1895-ին, Մարինոսի հայրը ու մայրը անող հիւանդութեան մը պատճառով իրարու ետեւ կը մահանան, իրենց միակ դուստրը որը ձգելով: Իրենց մօտիկ ազգականները՝ Ուղուրլեան ամոլը Մարինոսը կ'որդեգրէ եւ հոգ կը տանի անոր: Մարինոս կը մեծնայ առանց իր որը ըլլալը զգալու: Ուղուրլեանները տասնչորս տարեկանին զայն կ'ամուսնացնեն համաքաղաքացի Պետրոս Մաթոսեանի հետ: 1903-ին Պետրոսն ու Մարինոսը մանչ զաւակով մը կը բախտաւորուին եւ զայն Յարութիւն կը կոչեն: Այս ընտանիքին մէջ 1905-ին երկրորդ զաւակ մը կը ծնի: Չայն կը կոչեն Կիւլենիա: Պետրոս կառավարական պաշտօնեայ մըն էր եւ լաւագոյն կերպով կ'ապահովէր իր ընտանիքին ապրուստը: Ան հօրմէն ժառանգած էր քանի մը այգիներ, որոնց խաղողի բերքը կը վաճառէր: Յարութիւն եւ քոյրը՝ Կիւլենիա իրենց տան մէջ, ծնողքին հոգածութիւնը կը վայելէին: Յարութիւն տեղոյն դպրոցը յաճախած ըլլալով, որոշ զարգացում մը ունէր:

1914-ին կը պայթի Առաջին համաշխար-

իային պատերազմը եւ ամեն ինչ տակնուվոյա

կ'ըլլայ: Ինչպէս բոլորին, այս ընտանիքին հանգստութիւնն ալ կը խանգարուի: Զենքերու հաւաքում, ձերբակալութիւն, ծեծ, խոշտանգում եւ ամեն տեսակ թրքավայել արարքներ ի գործ կը դրուին հայոց դէմ: Պետրոս Մաթոսեան շնորհիւ իր պաշտօնին եւ թուրք բարեկամներու, այս տեսակ չարչարանքներին միշտ ալ ապահով դուրս կու գայ, սակայն տարի մը ետք, 1915-ի ամրան, բռնագաղթէն զերծ չի կրնար մնալ: Ան իր ընտանիքը հաւաքելով՝ բռնագաղթի ճամբան կը բռնէ, սկիզբը շոգեկառքով, բայց քանի մը օր ետք ոտքով: Անոնք կարաւանին հետ կ'ուղղուին դեպի անծանօթ արաբական անապատները: Ճանապարհին յաճախ կը պատահին կողոպուտներ, առեւանգումներ եւ սպանութիւններ: Մարինոս իր դստեր՝ Կիւլենիայի մազերը կարծ կը կտրէ եւ անոր երեսին յաճախ ցեխ կը քսէ, անոր գերեցկութիւնը թաքցնելու եւ առեւանգումէ զերծ պահելու մտօր: Իրենց աչքերուն առջեւ թուրք ոստիկան-զինուրիները գեղեցիկ աղջիկներն ու հարսերը կ'առեւանգեին, կը բռնաբարէին եւ կամ ուրիշ թուրքերու կը վաճառէին:

Ամբողջ Կիւլենիոյ դաշտը եւ Ամանոսի լեռները ոտքով կտրելէ ետք՝ կարաւանը հիւսիսային Սուլիիա կը մտնէ: Անոնք ճանապարհին վրայ հազար տեսակ տանջանքներ կը կրեն: Անօթութիւն, ծարաւ, անարգանք, հիւանդութիւն եւ ծեծ: Թուրքերը կարաւանը երկու մասի կը բաժնեն: Մեկ մասը, որուն մէջ Պետրոս Մաթոսեանն ու անոր ընտանիքը կը գտնուիր, դեպի Յաւրան կը տանին, իսկ միւս մասը Տէր Զօր կը քշեն:


Մաթոսեան ընտանիքին համար Յաւրանի



գաղթակայանի կեանքը դաժան էր: Սովոր ու ծարաւը անպակաս էին, ինչպես նաև հիւանդութիւնները: Ըմպելի շուրջ շատ դժուար գտանելի էր: Մարինոս օրն ի բուն դաշտերէն վայրի խոտեր կը հաւաքէր եւ իր ընտանիքը կը կերակրէր: Յարութիւնն ու Կիւլենիան իրենց մօր օգնականներն էին: Պետրոս հիւանդ կը պառկէր եւ անկարող էր որեւէ ձեւով օգտակար ըլլալու իր ընտանիքին:

Թուրք հրոսակախումբներ յաճախ գաղթակայանին վրայ կը յարձակէին եւ աքսորեալները իրենց ունեցած ոսկիներէն եւ զարդեղներէն կը մերկացնէին: Յաճախակի այս կողոպուտին իբր հետեւանք, գաղթականները կիսամերկ վիճակի մէջ կեանքը քարշ կուտան: Այս տեսակ պայմաններու տակ, Պետրոս Սաթոսեան հիւանդութեան չդիմանալով, կը մահանայ: Մարինոս մօտակայ գիւղի արաքսերուն տուներուն մէջ ծառայելով, իր զաւակներուն առօրեայ հացը կը հոգայ: Յաճախ կը պատահի որ կտոր մը հացի ապահովութիւնն ալ կը զլացուի անոնց: Օր մը Կիւլենիա կը փորձէ փուռի մը կրպակին վրայ շարուած հացերէն նկանակ մը գողնալ եւ ծոցը պահելով կը սկսի փախչիլ: Զանի մը քայլ անդին հացը իր ծոցէն վար սահելով գետին կ'իյնայ եւ ետեւն վագող փռապանը զայն կը վերցնէ ու Կիւլենիան կը ծեծէ: Կեանքը դաժան էր հայ բռնագաղթածներուն համար: Կիւլենիա դառնապէս կու լայ հացին կորուտին համար...: Ան խոտեր հաւաքելու կը վերադառնայ Յարութիւնին հետ:

Սաթոսեան ընտանիքը այս տեսակ դժուարութիւններով եւ տառապանքներով լեցուն կեանք մը կ'ապրին չորս տարի, մինչեւ որ 1918-ի վերջաւորութեան Ա. Աշխարհամարտը կ'աւարտի Թուրքիոյ պարտութեամբ: Յայց մէջ ընդհանուր խանդավառութիւն մը կը տարածուի: Արդէն անոնք լսած էին նոյն տարուան մայիսին Յայաստանի մէջ ազատ



**ՆՄՈՒՅ ՄԸ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱԹՈՍԵԱՆԻ
ՍԱՐԱԵՒՆ ԴՐԿԱԾ ՆԱՄԱԿՆԵՐԻՆ:**

Եւ անկախ պետութեան մը հիմնադրութեան մասին: Օր ըստ օրէ հայոց ուրախութիւնը կը մեծնայ եւ կը տեսչան իրենց ծննդավայրերը վերադառնալ: 1919-ի սկիզբը պարբերաբար աքսորեալ հայերը խումբ առ խումբ իրենց ծննդավայրերը կը սկսին վերադառնալ: Մարինոս իր երկու զաւակները

առած, համաքաղաքիներու խումբով մը Յալեա կը մեկնի եւ հոնկէ շոգեկառը նստելով դեպի Գարաման կ'ուղղուին: Երկար բայց ուրախ ճամբորդութենէ մը ետք խումբը Գարաման կը հասնի: Յարութիւն Սարինոսի հետ միասին իրենց կիսաքանդ տունը կը վերաշինեն: Կիւլենիա անոնց միշտ օգտակար կը դառնայ: Որբահաւաքի դրութենէն օգտուելով, 17 տարեկան Յարութիւնը իր ուսումը շարունակելու նպատակով կը միանայ որբերուն, որոնց մէկ խումբով Ֆրանսա կը մեկնի:

Թեւ Սաթոսեան ընտանիքին հայրը նահատակուած էր, սակայն Մարինոս եւ Կիւլենիա կը յաջողին իրենց ապրուստը ճարել ասեղնագործութիւն աշխատելով Գարամանի մէջ: Սկիզբը կացութիւնը լաւ կը թուեր ըլլալ եւ հայոց յոյսերը մէծ էին: Պոլսոյ մէջ քանի մը շարդարար թուրք պատասխանատուներ իրենց պատիժը ստացած էին:

Գարամանի մէջ Սաթոսեան ընտանիքին ազգականներ եւ բարեկամներ, որոնք նոյնպէս գաղթի անապատներէն վերադարձած էին, կարգադրութիւններ կը տեսնեն եւ Կիւլենիան իր տասնչորս տարեկան հասակին գարամանցի Կարապետ Փանոսեանի հետ կ'ամուսնացնեն: Կարապետ եւ Կիւլենիա Փանոսեաններ Մարինոսը իրենց մօտ կը բերեն եւ միասին կ'ապրին:

Խաղաղութիւնը երկար չի տեւեր: Մթնոլորտը կը մթագնի քեմալական շարժման ծագումով եւ ծաւալումով: Թուրքերը Գարամանի մէջ կրկին գլուխ կը բարձրացնեն: Յու կ'արժ յիշել թթական ոճրային դրուագ մը, որուն

Մարինոս եւ Կիւլենիա ականատես կ'ըլլան: Թուրք զինուորներ Կարապետ Փանոսեանի տան դրացի յոյնի մը դուռը կը բախեն գիշերով: Յոյն մայր մը եւ անոր աղջիկը այդ տան մէջ կ'ապրէին: Կինն ու աղջիկը օդի պատրաստելով եւ վաճառելով իրենց ապրուստը կը վաստկէին: Գիշերուան այդ ժամուն անոնք վախնալով գողերէ, չեն ուզեր դուռը բանալ: Կատղած թուրք զինուորները կը բարկանան եւ դուռը կոտրելով ներս կը մտնեն եւ մայրն ու աղջիկը կը մորթեն...: Այս դեպքը Գարամանի հայութեան վրայ սարսափ կը թողու:

Սարսափի այս մթնոլորտին մէջ, քանի մը օր ետք քեմակալան ուժերը հայ այր մարդիկը կը ձերբակալեն ու կ'աքսորէն: Կարապետ Փանոսեան եւս կը ձերբակալուի եւ անծանօթ ուղղութեամբ կը տարուի:

Կացութիւնը հետզիետէ կը վատթարանայ եւ հայերն ու յոյները կը սկսին փախչիլ Գարամանէն, ճիշդ այն օրերուն որ քեմալակաները Զմիւրնիոյ վրայ կը յարձակին: Մարինոս եւ Կիւլենիա հազար դժուարութիւններով եւ ամեն բան իրենց ետին ծգած կը յաջողին նաւ բարձրանալ եւ Յունաստանի Թորֆու կղզին հասնի գաղթականներու խումբով:

Գաղթակայանին մէջ Մարինոս եւ Կիւլենիա դժուար օրեր կ'անցընեն: Անօթութիւնը, ծարաւը, հիւանդութիւնը եւ զրկանքը անպակաս էին: Մայր ու աղջիկ կրկին ասեղնագործութիւն բանելով իրենց ապրուստը կը ճարէն: Քանի մը ամիս այսաւ ապրելէ ետք՝ յանկարծ իրենց մօտ Կարապետ Փանոսեանը կը յայտնուի: Կարապետ յաջողած էր աքսորականի իր կացութեան փախուստ տալ, նաւ բարձրանալ եւ Թորֆու հասնիլ: Կարապետ Կիւլենիայի եւ Մարինոսի թուրք քեմալական զինուորներուն ի գործ դրած խժդժութիւնները կը պատմէ: Թուրքերը ստիպած էին Կարապետը ուրիշ հայ կալանաւորներու խումբին հետ ուժքով, գիւղէ գիւղ եւ քաղաքէ քաղաք Մուշ հասնիլ: Ճամբուն ընթացքին ծիւներու մէջ մերթ միշրճուելով եւ մերթ իյնալով խեղճ հայերը տաժանակիր ճամբորդութիւն մը կատարած եւ Մուշ հասած էին, ինչ բանտարկուելու համար: Աւելի քան ամիս մը բանտին մէջ մնալէ ետք, թուրքերը զանոնք կրկին ճամբայ հանելով, անծանօթ ուղղու-

թեամբ առաջնորդած էին: Այս անգամ սակայն Կարապետ Փանոսեանը իրեն նման քանի մը քաջ եւ խիզախ հայ կալանաւորներու հետ կը յաջողի փախուստ տալ եւ մօտաւորապես նոյն ճամբէն ընթանալով Միշերկրականի նաւահանգիստներէն մէկը հասնիլ (պատմող Կիւլենիա Փանոսեանը չի յիշեր քաղաքին անունը): Յոնկէ անոնք ապահով կերպով նաւ նստելով Թորֆու հասած էին:

Թորֆուի գաղթակայանին մէջ Կարապետ անմիջապես գործ մը կը ճարէ եւ ընտանիքին ապրուստը կը հոգայ: Սակայն գաղթակայանի դժուարին պայմանները ծանր կը ճնշեն Փանոսեան ընտանիքին վրայ, որ առիթը կը գտնէ եւ նաւով Պէյրութ կը փոխադրուի:

Պէյրութի մէջ, Կարապետ Փանոսեան կօշկակարութիւն կ'ընէ եւ քանի մը տարուան ընթացքին բարեկեցիկ վիճակի մը կը հասնի: Կարապետ եւ Կիւլենիա երկու աղջիկ զաւակներով կը բախտարուուին: Ազատուիի Փանոսեանը՝ մէծ դուստը, Յովիաննես Իսկահատեանի հետ կ'ամուսնանայ: Կրտսեր դուստը՝ Մարգրիտ Փանոսեանը Մարտիրոս Սրուրեանի հետ: Բոլորն ալ Պէյրութ կը հաստատուին:

Պէյրութ գալէ ետք, Մարինոս եւ իր հարազատները Յարութիւննեն նամակ կը ստանան: Մայրը նամակներուն կը պատասխանէ եւ հաղորդակցութիւնը բնական հունի մէջ կը մտնէ: Մարինոս կը փափաքէր որ զաւակը՝ Յարութիւնը Լիբանան հաստատուէր, սակայն վերջինս կը նախընտրէր Մարսէյ մնալ: Ֆրանսայի Մարսէյ քաղաքին մէջ պանդիստութիւնը անողոք հիւանդութեամբ կը հարւածէ Յարութիւնը եւ ան քանութ տարեկան հասակին կը մահանայ օտար հողի վրայ:

Գարաման եւ արտասահման Մէծ Եղեռնի անդունդով բաժնուած էին...:

Գարամանէն դեպի Փարիզ...:

Գարամանէն դեպի Պէյրութ, բռնագաղթի Երկա՞ր ճանապարհ, թափառական հայուն վիճակուած...:

**ՊԱՏՄԵՑ ԿԻՒԼԵՆԻԱ ՓԱՆՈՍԵԱՆ
ԳՐԻ ԱՌԱՐ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԻՍԿԱՎԱՏԵԱՆ**



«Ո՞Վ ՊԻՏԻ ԳՐԵ ՊԱՏՄԱԾՆԵՐՍ»

Մարիամ Եքմեջճեան ծնած է Կարսպազար, 1905-ին: Ատանային դեպի Սիս Երկարող ճամբուն վրայ, Կիլիկիոյ դաշտին (Չուխուր Օվա) Վերջաւորութեան, տակաւին լեռները չքարձրացած, դեպի արեւելը կը գտնուի Կարսպազար աւանը: Ներկայիս թուրքերը Կարսպազարի անունը «Քատիրլի»-ի փոխած են: Գիլաքաղաքը մօտաւորապէս վայսուն գիլերու կերունը եղած է: Շրջանին առեւտուրը Կարսպազարի մէջ տեղի կ'ունենար: Շրջակայքի բարերեր արտերուն շնորհիւ Երկրագործութիւնն ալ լաւ վիճակի մէջ եղած է:

Մարիամին հայրը՝ Յովհաննես Եքմեջճեան ազարակատեր էր: Մայրը նոյնպէս կը կոչուր Մարիամ, որ տան գործերով կը զբաղեր: 1915-ի բռնագաղթի ժամանակ Մարիամին մեծ Եղբայր՝ Պողոս 17 տարեկան էր, իսկ փոքրը՝ Արսենը եօթը տարեկան: Ուսեր նաեւ ծծկեր քոյր մը, որուն անունը չէր յիշեր:

Նախքան 1914-ի Ա. Աշխարհամարտը, Մարիամ բարեկեցիկ եւ բարգաւաճ կեանք մը կ'ապրեր իր ծնողին գուրգուրանքին տակ: Իրենց ազարակին բանուրները թուրքեր եին: Յայերը դրացի թուրքերուն հետ լաւ յարաբերութիւն ունեին: Մարիամ բնաւ դպրոց չէր յաճախած: Գիլաքաղաքին մէջ իգական սերին համար ամօթ կը նկատուէր դպրոց երթալը: Եղբայրը՝ Պողոս որոշ զարգացում մը ուներ: Արսենը նոր սկսած էր դպրոց յաճախել:

Զմեռզ տան մէջ գրեթէ փակուած կը նստէին անունը: Մարիամին մեծ մայրը պատմութիւններ կը պատմէր իրենց: Մարտ ամսուան մէջ ազարակին գործերը կը սկսէին: Անծայրածիր արտերուն մէջ ցորեն, գարի, բամպակ եւ բանշարելին կը ցանէին: Ամրան եղանակին, թէեւ ազարակին գործերը կը շարունակուէին, սակայն Մարիամ ընտանեօթ ամարանց կը մեկնէր, դեպի Ֆեքը (Վահկա): Յոն պտուղներն ու

բանջարեղինները առատ եին, ինչպէս նաեւ՝ կաթը, կարագը եւ մածունը: Կարսպազարցիները ընդհանրապէս գոմեշի կաթ կ'օգտագործեին, կարագի, մածունի եւ պանիրի համար:

Մարիամ զօրաւոր կերպով տպաւորուած էր հաճընցի ճին Թորոսի (Թորոս Տարտաղանեան) անունը: Թեեւ աև 1909-ի դեպքերուն չորս տարեկան էր եւ միայն աղօտ կերպով կը յիշեր Կարսպազարի դիմադրութիւնը թրջական յարձակումներուն դէմ, սակայն իրեն համար ճին Թորոս փրկարար հերոս մըն էր: Արդարեւ, Վերջինը ոստիկան մըն էր, որ Կարսպազարի մէջ կը պաշտօնավարէր: 1909-ի ապրիլի սկիզբը, ճին Թորոս իր մեծաւորէն կ'իմանայ, թէ թուրք խուժանը պատրաստութիւն կը տեսնէ Կարսպազարի հայոց վրայ յարձակելու համար: Ան անմիջապէս կը փութայ լուրը հաղորդել գիլաքաղաքին Երեւելիներուն, որոնք ճին Թորոսի դեկավարութեամբ դիմադրական ուժ մը կազմելով, բոլոր հայերը Եկեղեցին ու դպրոցը կը հաւաքեն եւ երեք շաբաթ կը պայքարին: (Այս մասին տեսնել Զապէլ Եսայեանի «Աւերակներուն Մէջ» գործը, ինչպէս նաեւ՝ Ձելշեանի «Սիս-Մատեան»ը, Յակոբ Թերզեանի «Աղետը Կիլիկիոյ» եւ Ալեյրեաս Գարամանեանի «Տարագրեալի Մը Յուշերը» գիրքերը):

Մարիամի համար անծանօթ պատճառներով հայրը՝ Յովհաննես չէր զինուորագրուած, ոչ ալ մեծ Եղբայրը՝ Պողոս, որ տակաւին 17 տարեկան էր: Բռնագաղթը տեղի կ'ունենայ 1915-ի ամրան սկիզբը: Եքմեջճեան ընտանիքը Եղան սայլով մը բռնի ճամբայ կ'ելլէ: Զանի մը օր Ետք Մարիամի ծծկեր քոյրը կը մահանայ: Զայս ճամբուն Եզրին, ծառի մը տակ, անթաղ կը թողուն եւ կը հեռանան: Աքսորի ճամբան շատ դաժան էր: Անօթութիւն, ծարաւ, սաստիկ յոգնութիւն եւ վերջապէս հիւանդութիւն, որ իր

Երկրորդ զոհը կ'ընտրէ՝ Պօղոսը: Պօղոսն ալ անգերեզման կը մնայ: Ամիս մը ետք անողոք հիւանդութիւնը Արսէնն ալ կը տանի...: Մարիամ իր հօրը եւ մօրը հետ Յալէպի մօտեցած էր, երբ գիւղի մը փողոցներէն մէկուն մէջ, ընտանիքին հայրը գետնի վրայ պառկած մրափի մը կ'առնե՛ սաստիկ յոգնութենեն: Յովիաննես երբեք չարթննար...: Մայր ու աղջիկ իրենց ճամբան կը շարունակեն եւ կը փորձեն Յալէպ քաղաքը մտնել: Այդ շնորհքին չեն արժանանար: Մարիամ իր մօրը հետ Յալէպէն անդին ուրիշ գիւղ մը կը մեկնի կարաւանին հետ միասին: Այդ անձանօթ գիւղին մէջ արաք քրիստոնեաներ հայ գաղթականներու օգնութեան կը փութան, նախ զանոնք կերակրելով, ապա հայ գաղթականները իրենց գիւղի Եկեղեցիին մէջ տեղաւորելով: Երկու մարիամներ՝ մայր ու աղջիկ հանգիստ առնելու առիթ կ'ունենան: Սակայն այս հանգիստը երկար չի տեւեր: Սայրը կը մահանայ եւ Մարիամ առանձինն կը մնայ, իրեն համաքաղաքիններու հոգատարութեան տակ: Եկեղեցիին մէջ շատեր հիւանդութիւններէ կը վարակուին ու կը մեռնին: Մարիամ վայրի խոտեր խաշելով եւ ուտելով կը սնանի: Ան կը յաջողի հիւրընկալ արաքներէ ալիւր ճարել եւ փոխարենը անոնց տուններուն մէջ ծառայութիւն կը մատուցան:

Օր մըն ալ Եկեղեցիի շրջափակին մէջ հաճնցի կառապան մը Մարիամը կը փնտու: Մարիամ Էքմէքնեան կը Ներկայանայ կառապանին, որ Մուսուլէն եկած էր: Մարիամին հօրեղայրը՝ Սկրտիչ Էքմէքնեանը յաջողած էր երկար եւ դժուարին աքսորի ճանապարհներէն անցնելով Մուսուլ հասնիլ: Մուսուլի մէջ, Սկրտիչ անգլիական բանակին մէջ իբր գրագետ կ'աշխատեր: Անոր նիւթական վիճակը բարելաւուած էր եւ լսած էր իր եղբօր եւ ընտանիքին ողբերգութեան մասին: Ուստի, իմանալով որ Մարիամը ողջ է, զայն փնտռելով կ'ուզէր իր մօտ բերել հաճնցի կառապանին միջոցով:

Կառապանը բաւական ճարպիկ անձ մըն էր: Ան Մարիամը իր հետ առնելով գիւղէ գիւղ եւ քաղաքէ քաղաք, ինչպէս նաեւ Տէր Զօրէն անցնելով դեպի Մուսուլ կը ճամբորդէ, թրքական կրակներու մէջնեն: Ճանապարհին, Մարիամ ականատես կ'ըլլայ բազմաթիւ դիակներու, որոնք կամ սպանուած էին եւ կամ ալ՝ հիւանդութենէ մեռած: Տաժանակիր եւ երկար ճամբորդութենէ մը ետք կառապանը Մարիամին հետ Մուսուլ կը հասնի:

Մարիամ իր հօրեղօր գրասենեակը մտնելով կը գրկախառնուի անոր հետ: Ճիշդ այդ պահուն ան իր ծոցէն չորցած հացի կտոր մը հանելով հօրեղբայր Սկրտիչին կը հրամցնէ, որպեսզի ուտէ: Սկրտիչ թէ կը ժպտի եւ թէ կը հեկեկայ...:

Մարիամ իր հօրեղօր տաև մէջ փառաւոր լոգանք մը կ'առնէ: Վպա անոնք սեղան կը նստին եւ Մարիամը կուշտ ու կուր կը ճաշէ: Ան լաւ չի յիշեր թէ որքան ժամանակ Մուսուլի մէջ կը մնան, սակայն Ա. համաշխարհային պատերազմը թուրքերու եւ գերմանացիներու պարտութեամբ վերջացած ըլլալով, Սկրտիչ եւ Մարիամ Ատանա կը վերադառնան, որոց ատեն մը հոն քնակելու համար: Մարիամ տասնչորս տարեկան եղած էր: Քանի մը համաքաղաքացիներ իրարու մօտ կու գան եւ Մարիամը կարսպազարցի երիտասարդի մը՝ Կարապետ Իսկահատեանի հետ կ'ամուսնացնեն: Այդ օրերուն Յաճըն քաղաքը պաշարուած էր թեմալական ուժերու կողմէ: Յաճընցիք հերոսամարտ կը մղէին: Մահու կենաց խնդիր էր: Մեծամասնութեամբ կարսպազարցի երիտասարդներէ կազմուած «ութսուններ»ու գինեալ խումբ մը կը կազմուի եւ կ'ուղղուի դեպի Յաճըն՝ հայոց օգնութեան: Սակայն, ֆրանսական դաւադիր իշխանութիւններ թուրքերուն կ'իմացնեն այս խումբին մասին: «Ութսուններ»-ու խումբին մէջ կը գտնուէր Կարապետին կրոսեր Եղբայր՝ Փանոս Իսկահատեանը, որ թրքական կրակին դէմ կը պայքարի: Թեմալականները Յաճնոյ մօտ, ծորի մը մէջ, «ութսուններ»-ը թակարդի մէջ ծգելով կը ջարդէն: Կը փրկուին քանի մը հոգի միայն, որոնց մէջ էր Փանոս Իսկահատեանը: Աւելի ուշ, ան Պէյրութ կը հաստատուի:

Ընտանիքը՝ Կարապետ եւ Մարիամ Իսկահատեաններ կը մեկնին Աղեքսանտրէթ, ուր քանի մը ամիս կը մնան: Վպա անոնք նաւով ճամբայ կ'ելլեն ու կը հասնին Պէյրութ եւ հոն կը հաստատուին:

Ամէն անգամ որ մէծ մայրս Մարիամ Էքմէքնեան-Իսկահատեանը իր յուշերը կը պատմէր, վերջաւորութեան կ'ըսէր.

- Ո՞վ պիտի գրէ պատմածներս...:

**ՊԱՏՄԵՑ՝
ՄԱՐԻԱՄ ԷԹՄԵԶԵԱՆ-ԻՍԿԱՀԱՏԵԱՆ
ԳՐԻ ԱՌԱՐ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԻՍԿԱԶԱՏԵԱՆ**

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՈՒԽ ԶԻՆՈՒՐԻ ԱԶՔԵՐՈՎ

1914

թ. դեկտեմբերին - 1915 թ. յունուարին Սարիղամիշի ռազմական գործողութեան ընթացքում ռուսական Կովկասեան բանակը գլխովին ջախչախեց ռազմական նախարար Էլսվերի հրամանատարութեան ներքոյ գտնուող օսմանեան 3-րդ բանակին եւ կասեցրեց թուրքերի յառաջիւաղացումը դեպի Կարս: Չարգացնելով յաջողորդիւնը՝ 1915 թ. մարտի վերջին ռուսական բանակը մաքրեց թուրքերից Յարաւային Աճարիան եւ ամբողջ Պաթումի մարզը, իսկ հարաւային ուղղութեամբ առաջ ընթացաւ 100 քմ:

Յաղթական յառաջիւաղացումը դեպի թուրքիայի խորքը, լայնածաւալ տարածքի զբաղեցումը եւ ռազմական փառքի քաղցր զգացողութիւնը տարածուեց ռուսական զօրքերի շարքերում: Թուում էր՝ թուրքական կոմպանիան կարող էր դառնալ Ռուսաստանի պատմութեան երջանիկ էջերից մեկը:

Բայց զուգահեռաբար, ինչ որ տարօրինակ, ինչ որ սարսափելի եւ աներեւակայելի բան էր կատարուում: Կոտորած էր իրականացւում՝ ողջ ժողովրդի անխիղճ ոչնչացում, որը նախաձեռնուել էր Ստամբուլի կողմից: Ամենուրեք ռուսական գինուրը հանդիպում էր կանաց ու երեխաների դիակների եւ ոսկորների մասցորդների:

Ռուս կազակներն ու գինուրները, գնալով նահանջող թուրքական բանակի հետքերով, հանդիպում էին միայն խոշտանգուած դիակների եւ այրուած տների: «Կենդանի մնացած քչերը, - ինչպես իր յուշերում նկարագրում էր Կուրանի կազակական սպայ Ֆիոտոր Ելիսեւը - արցունքները աչքերին համբուրում էին ռուս փրկիչների ծիերի ասպանդակները»:

Առաջին իսկ օրերից ռուս գինուրները եւ

սպաները դարձան թուրքերի եւ քրտերի դաժանութիւնների եւ գազանութիւնների ականատեսները:

Թուրքական ճակատի իրադարձութիւնների մասին ռուս գինուրները պատմում եին իրենց նամակներում՝ մանրամասն նկարագրելով հայ խաղաղ բնակչութեան նկատմամբ թուրքերի իրականացրած սարսափելի տեսարանները: Այդ նամակները թուրքիայում Յայց ցեղասպանութեան ականատեսների առաջին գրաւոր վկայութիւններն եին: Ռուս գինուրներն ամենից շատ ապշեցում եր դաժանութիւնը, որով ոչնչացւում էր հայ բնակչութիւնը:

«Թուրքական ճակատում գտնուելու ժամանակ, սոյն թուականի յունուար ամսից թուրքիայից Պարսկաստան եւ հակառակն արշաւանքների ընթացքում, մի քանի անգամ ստիպուած եղայ տեսնել դժբախտ հայերի տանջանքների սարսափելի պատկերները: Մեր գինուրների հետ մղած մարտերում իր յաճախակի ալյաջողութիւններից գազազած թուրքական բանակը զոհ դարձրեց անպաշտպան հայերին: Եւ թէ ինչպիսի տուայտանքների էին ենթարկում այդ մարդկանց: Յայերի դեմ դաւերի հարցում թուրքերը կանգնեն առնում եւ ոչ մի սարսափելի միջոցի առաջ ենթարկելով նրանց որքան հնարաւոր է մեծ, դանդաղ տառապանքների: Նրանք չեն խղճում ոչ միայն տղամարդկանց եւ կանաց, այլև երեխաներին:

Պատահարար կենդանի մնացած հայուիիները պատմում են հայերին տանշելու հետեւեալ մեթոսների մասին. «Ոչնչացման համար նախասահմանառած ընտանիքին դուրս եին բերում գիւղից, ուր մօր եւ հօր աչքի առաջ կտրում էին իրենց երեխաների մարմնի մասերը եւ դեռ կենդանի երեխաներին գցում

խոր հեղեղատը կամ այրում խարոյկի վրայ: Շատ մայրեր, անկարող լինելով իրենց երեխաների այդպիսի տանջանքների ականատեսը լինել, նետում էին իրենց կրակի մէջ՝ անմեղ զոհերին արագ դուրս քաշելու նպատակով, այրում սեփական ձեռքերն ու դէմքը. այդ մայրերին թուրքերը հենց այդտեղ վառում էին, իսկ ամուսիններին դանդաղ մահուան տանջանքների ենթարկում:

Վանայ լճից արեւմուտք գտնուել է մի հսկայական հեղեղատ՝ լցուած հայերի մերկ դիակներով: Դիակների այս ամբողջ զանգուածի միջից օգնութիւն էր աղաղակում մի վիրաւոր հայուիի, ով չէր կարողանում ազատուել, քանի որ իր ոտքերը մնացել էին իրար վրայ թափուած դիակների տակ: Իսկ երբ կազակներն ազատում են նրան, և առաջին հերթին, նշաններով խնդրում է յագեցնել իր ծարաւը եւ թարգմանչի միջոցով բացատրում, որ այդ հեղեղատում 800 սպաննուած հայ կայ: Շատ կողակներ առանց արցունքների չեին կարողանում լսել հայուիու պատմութիւնը, թէ ինչպիսի պայմաններում էին սպաննում այդ մարդիկ: 1915 թ. մայիսին ռուսական գօրքը մօտեցաւ Վանին: Քաղաքը գրեթէ մէկ ամիս գտնում էր պաշարման մէջ: Քաղաքի հայերը, չցանկանալով իրենց անմեղ սպաննուած հայրենակիցների ճակատագրին արժանանալ, քաղաքի հայկական թաղամասի բոլոր մուտքերը պատեշեցին բարիկադներով եւ յաջողութեամբ հետ մղեցին թուրքական 12,000-անց կանոնաւոր բանակի գրոհը:

Սակայն յուլիսի կեսերին ռուսական բանակը Վանից հանելու մասին որոշում էր ընդունել: Տեղական իշխանութիւնը՝ Արամ Մանուկեանի ղեկավարութեամբ, եւ հայկական կամաւրական ջոկատների հրամանատարները դիմեցին ճակատի հրամանատարութեանը Վանում մնալու եւ բնակչութեանը պաշտպանելու թոյլտուութիւն ստանալու



համար, սակայն մերժում ստացան: Քաղաքի հայ բնակչութիւնը նահանջեց բանակի հետ միասին: Վանը յանձնուեց թուրքերին առանց մարտի:

Այդ օրերին արտաքին գործերի նախարար Ս. Դ. Սագոնվը Պետդումայում նշում է. «Փետրուարի

3-ին ընկաւ Երգրումը: Մեր քաջարի գօրքն առաջ է գնում, յաղթահարելով դժուարին խոչընդուները: Վանից մերոնց նահանջին հետեւելով՝ թուրքերը տասնապատկեցին իրենց դաժանութիւնները հայերի նկատմամբ: Ես արդէն նախկինում յիշատակել եմ այս դժբախտ ժողովրդի անսաելի տանջանքների մասին: Դաշնակից Գերմանիայի բարեհաճ աչքի ներքոյ թուրքերը, ինչպես տեսնում ենք, մտադիր էին իրականացնել մուսուլմանական զանգուածների ազդեցութեանը չենթարկուող եւ այդ կերպ թուրքական կայսրութիւնը տնտեսապես եւ քաղաքականապես իրեն ենթարկելու գերմանական ծրագրերի համար արգելը հանդիսացող հայ բնակչութեան ամբողջական ոչչացման իրենց հեռահար երազանքը:

Չուտով ռուսական բանակը նորից գրաւեց Վանը, որև արդէն դատարկ ու աւերուած քաղաք էր:

Ռուսական բանակի գեներալ Ա. Դ. Կուլեբիակինը Վանի երկորոր գրաւման օրերին գրում է. «Ես Վանում էի 1915 թ. նոյեմբերից մինչեւ 1916 թ. մարտը: Անասելի ծանր տրամադրութիւն է բերում այդ ի սպառ կործանած, մահով յագեցած վայրը...»:

Նամակների եւ յիշողութիւնների հետ մէկտեղ ռուսական բանակի գինուորները թողել են նաեւ լուսանկարներ, որոնք Արեւմտեան Յայաստանի սարսափելի իրադարձութիւնների հազուադեպ լուսանկարային փաստաթղթեր են:

«Կաւկազսկոյն սլովո» ամսագրի 1917 թ. յունուարի 22-ի համարում ներկայացնուած են կովկասեան սակրաւոր գումարտակի հրա-

մանատարներից մեկի՝ գլուխապետ Զ.-ի վկայութիւնները. «Օ. գիւղի մօտ, Մուշ քաղաքի շրջանում, Եփրատի հենց ափով պատահաբար անցնում էի դեռ նախորդ գարևանը եւ ամենեւին չի մտածում, որ երբեւ կ'ընկնեմ այդ վայրերը...»:

«Եւ ես իմացայ սարսափելի իրողութիւն այն մասին, թէ ինչպես թուրքերը շրջապատեցին գրաւած գիւղը, քշեցին բոլոր, տառացիուն բոլոր տղամարդկանց, փոքրիկ տղաներին ներառեալ, կամրջի վրայ՝ ամենամեջտղում, եւ այնուհետեւ հրացանի կոթերով եւ սուլինների հարուածներով սկսեցին նետել այդ դժբախտներին ջրառատ Եփրատը...»:

«... Այդ ժամանակ կանաց ու երեխաների մասին Ս-ում ես այդպես ել ոչինչ չիմացայ: Նրանց ճակատագրի մասին իմացայ չորս ամիս անց, օգոստոսին: Եւ ահա թէ ինչպես. Ս-ում յայտնուեցի այդ ժամանակ արդեն ոչ պատահաբար: Յրամայուած էր այդ գիւղում որոշ ինժեներական աշխատանքներ կատարել: Եւ մենք գործի անցանք: Այլ աշխատանքների թուրմ մենք պետք եւ տարբեր նպատակների համար ամրացնեինք եւ յարմարեցնեինք որոշ մառաններ: Առաջինից, որից ել սկսեցինք, մնացել եին միայն անտաշ քարից պատերը. ոչ պատուիան կար, ոչ դուռ եւ ոչ ել տանիք: Պատերն ունեին 20 քայլ երկարութիւն եւ տասը քայլ լայնութիւն»:

«Յենց որ իմ գինուորները գործի անցան, անմիջապես զարմացան, որ մառանում յատակն անսովոր փիսրուն է, հաստատ վարած...: Սկսեցին փորել... եւ առաջին գանգը, յետոյ միւսը: Երբ ինձ այդ մասին գեկուցեցին, ես հրամայեցի փորել որքան ինարաւոր է զգուշ եւ մեկ երկու օր յետոյ մենք ամբողջ արտաքին շերտը հանեցինք:

«Այս, ինչ մենք տեսանք, այնքան սարսափելի էր, որ ամեն ինչի սովոր գինուորները երկար րոպեներ լուր կանգնած մնացին:

«Պատերի ողջ երկայնքով, մեկը միւսին շատ մօտ մարդկային կմախքներ տեսանք, ծածկուած կիսաքայքայուած, բայց ամեն դեպքում բաւականին պահպանուած հագուստով, այնքան պահպանուած, որ գուստուր զգեստներ հագած կմախքները զարիւրելի տպաւորութիւն թողնեն, թէ իբր հանգուցեալները քսած են տարբեր դիրքերով,

սկսած հանգիստ վիճակից մինչեւ ջղաձգութեան աստիճանի հասնող տառապանքից կոտրուած դիրքի:

«Պարզուեց, որ այդ սարսափելի բեկորները կանաց եւ երեխաների գանգերն ու կմախքներն եին: Ես լուսանկարեցի մեր գտած բոլոր ուկորները...»:

«Ինքը՝ գիւղը, ես արդեն ասել եմ, գտանք կիսաւեր վիճակում: Յայկական եկեղեցին, ամենայն հաւասականութեամբ, բաւարար գեղարուեստական ճարտարապետութեամբ, վերածուած է աղքակոյտի, եւ ժամանակին աղիւսից եւ ցեմենտից կազմուած, որոշներն ել գեղարուեստորն երեսպատուած առանձին քարաբեկորների: Ըսդհանրապես, հայկական տաճարների նկատմամբ թուրքերն առանձնակի բարբարոսական մօտեցում են ցուցաբերում, առանձնայատուկ վայրենութիւն: Եւ դա ամենուրեք է: Մուշում ընդամենը մեկ եկեղեցի էր մնացել եւ որովհետեւ նրանում հանգրուանել էր թուրքական ալիւրի պահեստը: Սրբապատկերներն ամենուրեք եւ միշտ աղտոտուած էին եւ պղծուած ամենաբարբարոսական կերպով: Թուրքը հաստատ ուզում է աշխարհի վրայից մաքրել ամեն հայկականը...»:

Այս յուշերն ու նկարները փաստաթղթերի ու վկայութիւնների ընդամենը մի փոքրիկ մասն են կազմում այն բոլոր սարսափների, որոնց հետ առիթ է ունեցել բախուելու Վրեմտեան Յայաստանում ռուս գինուորը: Տարածքը, որի վրայ հազարամետկներ շարունակ հանգրուանել եւ զարգացել է հայկական քաղաքակրթութիւնը, Առաջին համաշխարհային պատերազմի աւարտին գործնականորեն, ամայացել էր: Մեկուկես միլիոն հայ ծրագրած եւ սառնասրտօրն ոչնչացուեց, իսկ կենդանի մնացած քերը ցրուեցին աշխարհով մեկ: Աշխարհին առաջին անգամ բախուեց մի երեւոյթի հետ, որի համար դեռ անուն չէր յօրինուել եւ որը, արդիւնքում, անւանուեց Ցեղասպանութիւն: Բախուեց, բայց մնաց անտարբեր: Կոչեւում 20-րդ դարն էր, դար, լի այլ ցեղասպանութիւններով:

ՍՈՒՐԵՆ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Պատմական գիտութիւնների թեկնածու

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՍՈՒՐԻԱԿԱՆ «ԱԼ-ԱՖՔԱՐ» ԹԵՐԹԻ ԼՈՅԱՒ ՆԵՐՔՈՅՑ

19-րդ դարու վերջաւորութեան եւ 20-րդ դարու սկիզբը լոյս տեսած սուրիական մամուլը երբեք չէ դադրած հայերու լուրերը եւ հայկական շարդերու մասրամասնութիւնները հաղորդելէ:

Սուրիական սփիւրքի մամուլը, որ ազատ ոճով կը հրապարակւէր, առիթը չէ փախցուցած տպագրելու հակաթօքական բնոյթի յօդուածներ:

Սուրիացի հրապարակախօսներու եւ մտաւորականութեան ուշադրութենեն չէ վրիպած հայկական թեմաները: Օրուան մամուլին մէջ զգալի տեղ յատկացուած է Յայոց ցեղասպանութեան ժամանակ թուրքերու կողմէ կիրարկուած միջոցներու բացայատման:

Այստեղ լուսարձակի տակ կ'առնենք սուրիական սփիւրքի թերթերէն «Ալ-Աֆքար» (Մտքեր) թերթը, որ 1903-Էն Պրազիլի Սան Փաուլո քաղաքին մէջ լոյս կը տեսնէր: «Ալ-Աֆքար»-ը յայտնի եղած էր որպէս «ազատամիտ, արեւելեան հարցեր քննարկող թերթ»: Թերթը լոյս կը տեսնէր շաբաթը երկու անգամ:

«Ալ-Աֆքար»-ի հրապարակումները կարեւոր կը նկատենք, որովհետեւ ան ընդգրկուն եղած է Յայոց ցեղասպանութեան մասին բազմաթիւ լուրերով, վերլուծումներով եւ վկայութիւններով:

Թերթի խմբագիր՝ բժիշկ Սայիդ Ապու



Ժամանակակից դէմք եր բժշկութեան եւ մամուլի ասպարեզն ներս. ան անդամ էր Դամասկոսի Արաբական գիտական խորհուրդին:

1918-ին հրատարակուած թիւերուն մէջ կը հանդիպինք երեսունեն աւելի յօդածներու, ուր կը հաղորդ-

ուին Յայոց ցեղասպանութեան մասրամասնութիւններ եւ այս նիւթով վերլուծութիւններ: Արաւել յիշատակման արժանի է մնայուն եւ կարեւոր խորագիրը՝ «Սուրիայ, Լիբանանի եւ Պաղեստինի լուրերը» եւ այլ խմբագրականներ:

Յայոց ցեղասպանութեան ընթացքին կիրարկուած չարչարանքի միջոցները լուսաբանելու եւ վերլուծումներ հրապարակելու իմաստով «Ալ Աֆքար»-ը իւրայատուկ տեղ կը գրաւէ:

Միւս կողմէ «Ալ-Աֆքար»-ի էջերուն մէջ կը հանդիպինք այն գաղափարին, որ թուրքերը բռնութիւններու առաջին փորձը կատարած են հայերուն հանդեպ, ապա հերթը արաբներուն հասած է, սակայն ազգային ուժերը կը հասնին ու արաբները կը փրկուին, այսինքն՝ եթէ Յիհազի յեղափոխութիւնը չ'ըլլար, արաբները նոյն ճակատագիրը կ'ունենային, ըստ թերթին:

«Ալ-Աֆքար»-ի կարեւոր հիմնակետերէն է նաեւ անոր լուսաբանումները թուրքերու կողմէ տարուած աշխատանքին մասին՝ խլամա-

կան շրջանակներուն մեջ հայերու դեմ թշնամութիւն սերմանելու իմաստով:

Կարեւոր են նաեւ թերթին հրապարակած վերլուծումները՝ Հայոց ցեղասպանութեան պատճառներուն առևնութեամբ, «Ալ-Աֆքար»-ը թուրքերու մոլեռանդութեան կը վերագրէ կատարուած ցեղասպանութեան պատճառը, աւելցնելով թէ «Անոնք հիւանդ էին քաղաքական խելագարութեամբ», քանի որ թուրքերը մոլուկներու եւ ճենկիզ խանի սերունդն կը սերին, ապա հետեւողական ու կրկնուող կոտորածներու ակունքները մոլուկներն կու գան:

«Ալ-Աֆքար»-ը երեւան կը բերէ երիտթուրքերու կողմէ կազմակերպուած եւ երկար ժամանակ տեւած հայերու տեղահանման, կոտորածներու եւ ցեղասպանութեան մասին հրահանգուած եւ կիրարկուած որոշումները: 1194-րդ թիւին մեջ (02.01.1918) «Հայեր Սուրբոյ մեջ» վերնագրին տակ կը տեղեկանանք, թէ Սուրբիայն ստացած լուրերու համաձայն՝ Օսմանեան կառավարութիւնը հրահանգած է հաւաքել Հալեպ նահանգի (Վիլայեթ) հայերը, որոնք պատերազմին առաջ ապաստանած էին այդտեղ եւ զանոնք ուղարկել դեպի ներս, այսինքն՝ սուրբիական անապատ, այնպէս ինչպէս կատարուեցաւ միւս նահանգներուն մեջ. սակայն տեղափոխման որոշուած վայրը տակաւին յայտնի չէ, նաեւ պարզ չէ, եթէ այս հրահանգը կը վերաբերի Հալեպի վիլայեթին թէ ամբողջ սուրբիական վիլայեթներուն, ուրկէ Ալսատողութեան տասնեակ հազարաւոր հայեր ապաստանած էին:

«Ալ-Աֆքար»-ը իր Եջերուն ընդմեջն անդրադած է նաեւ Գերմանիոյ բացասական եւ հրահրոյ դերին, որուն դրումով կամ նոյնիսկ գիտութեամբ է, որ տեղի կ'ունեսար հայերու ցեղասպանութիւնը: Թերթին հրապարակումներուն համաձայն, որուերը խնդրած են, որ Գերմանիա միջամտէ կատեցնելու ջարդերը:

Բազմաթիւ են այս յօդուածները, որոնք մանրամասն նկարագրած են հայերու տառապանքը, իրենց երկրէն տեղահանուելու եւ քշուելու ժամանակ, սովոր միջոցով մահուան դատապարտուելով: Թերթին հրապարակումներուն մեջ համեմատութիւններ կը կատարուին նաեւ հայերու եւ արարքներու տառապանքի միջեւ:

Անդրադառնալով մարդահամարներու տուեալներուն, թերթը 1206-րդ թիւին մեջ

(16.02.1918) կը գրէ. «Պատերազմին առաջ թրքական կառավարութեան իշխանութեան ներքեւ կ'ապրէին 21 միլիոն մարդ, որոնցմէ մեկ ու կես միլիոնը հայեր, այս թիւը շատ պակաս է ներկայ պատերազմին ետք եւ վերջին տարիներուն Օսմանեան կայսրութեան մեջ տեղի ունեցած սովի, համաճարակներու եւ պատերազմի պատճառով»:

Սայիտ Ապու Ժամրան իր յօդուածներուն մեջ իր կարծիքը կը յայտնէ փանթուրանիզմի քաղաքականութեան մասին, ինչպէս նաեւ՝ երիտթուրքերու՝ ոչ իսլամ տարրերու ոչնչացման ծրագիրներուն կապակցութեամբ, ինչ որ իսլամներուն մեջ հայերու դեմ թշնամանքի եւ ոխի զգացումներ կը յառաջացնէ, Վկայակունելով «Իթթիհատ վէ Թերաքիի» 1911-ի որոշումը, ըստ որու ոչ իսլամներուն տրուած եր կրօնը եւ լեզուն պահելու ազատութիւնը:

«Արեւելեան հարցեր. Արաբներու նախատեսած վտանգները» վերնագրին տակ, թերթը իր 1215-րդ թիւին մեջ (20.03.1918), թարգմանաբար հրատարակած է յօդուածը թուրք գրողի մը, ուր վերջինս կը խոստովանի, որ «Ներկայ բռնակալութիւնը կազմակերպուած հիմքի վրայ է... եւ թուրքերը իրենց նպատակին կը հասնին երկու ձեւով՝ շարդերով եւ աքսորով...»: Յօդուածը կը նկարագրէ հայ մանուկներու ճակատագիրը, երբ զանոնք կը բաժնեին թուրք ընտանիքներու մեջ, հայ լեզուն եւ ազգութիւնը բռնի ուժով փոխելու համար: Յեղինակը կը զգուշացնէ արաբները, որ անոնք եւս նոյն բահստին չարժանանան եւ զգօնութեան կոչ կ'ուղղէ, որպէսզի հայերու պատահածը չմոռնան եւ միշտ զգաստ ըլլան:

«Ալ-Աֆքար»-ի Եջերուն վրայ տեղ գտած են նաեւ արաբ ականատեսներու վկայութիւններ, որոնք կ'ապացուցեն Գերմանիոյ մեղսակցութիւնը հայկական շարդերուն, ինչպէս նաեւ թուրքին կիրարկած չարչարանքի ոճը, օրինակ ինչպէս՝ հազարաւոր ծարաւ հայ տղամարդոց, կանաց եւ երեխաներուն ցոյց տալ Հալեպին եկած ջուրի պահեստները եւ անոնց առջեւ ջուրը հոսեցնել աւագի վրայ: «Ալ Աֆքար» կը պարզաբանէ, թէ թերթը նման տեղեկութիւններ եւ յօդուածներ կը հրապարակէ, որպէսզի քաղաքակիրթ աշխարհը իմանայ թուրքերուն կողմէ գործադրուած վայրագութիւնները:

«Ալ-Աֆքար»-ի կողմէ Յայոց ցեղասպանութեան ընթացքին իրականացուած չարչարանքի միջոցները լուսաբանելու համար կարեւոր կը նկատենք 15/06/1918-ին, 1239-րդ թիվին մեջ լոյս տեսած «Թուրքերը ի՞նչպէս կը վերաբերուիեն հայերուն հետ» վերևագրով յօդուածը, ուր ոչ իսլամներու վերաբերմունքին մասին թերթը կը հաստատէ, որ օսմանեան բանակին մեջ հայ զինուորներու ծառայութիւնը կը նկատուեր հայերու դէմ օսմանեան կառավարութեան իրագործած ոչնչացման մէկ այլ ձեւ, քանի որ անոնց կը ստիպէին քալել Սինայի անապատով՝ բոկոտն եւ սոված: Իսկ 1212-րդ թիւով (09.03.1918), հետաքրքրական իր խմբագրականին մեջ, «Ալ Աֆքար» կը յայտնէ թէ ոչ իսլամներու ոչնչացման ծրագրի իրականացման գործին մեջ թուրքերուն օգնած են անոր դաշնակիցները՝ գերմանացիները, եւ որպէս փաստ կը բերէ օսմանեան բանակին մեջ ոչ թուրք զինուորներու հանդեպ վերաբերմունքը, որ նման էր ստրուկներու վերաբերմունքին:

Նկարագրելով շարդերն մազապուրծ փրկուած հայերը, «Ալ Աֆքար»-ը 1239-րդ թիվին մեջ (15.06.1918), «1500 հայեր թուրքերն կը փրկուին» վերևագրով յօդուածին մեջ կը գրէ. «Երուսաղեմին ստացած հեռագրի մը համաձայն՝ անգլիացիները Արիհայի մեջ գտած են 1500 հայեր, որոնք հազարաւոր աքսորեալներն եւ թրքացման քաղաքականութեան զոհերն մազապուրծներն են: Օսմանեան կառավարութիւնը այդ խեղճերը բերաւ Ատանայէն, Մուշէն եւ Այնթապէն քարեր կոտրելու եւ թուրքական բանակի համար ճանապարհներ կառուցելու համար, որու դիմաց պարգեւատրուեցան սովոր ենթարկուելով, կան նաեւ 900 հայեր, որոնց արաբները թուրքերն ազատեցին Մերեալ ծովուն մօտ, սկիբը անոնք 10.000 հոգի կը հաշուիին, սակայն սովը ոչնչացուց զանոնք...»:

Յատուկ ուշադրութեան արժանի է 1241-րդ թիվ (22.06.1918) «Սուլիհան եւ սուլիհացիները» վերևագրով յօդուածը: «Ալ Աֆքար» կը գրէ, թէ թուրքերու շարդերն փրկուած եւ Յալեպ հասած հայերը 250 հազար հոգի են, ու կը հաղորդէ հետեւեալ լուրը. «Թուրքերը հայածեցին հայ ազգի զաւակները, շարդեցին որու որ հանդիպեցան, շատեր փախան Սու-

րիոյ անապատները, ուր պետեւիները ազատեցին զանոնք եւ յանձնեցին Յալեպի մէջ ամերիկեան իհւապատոսարան... Վրաք շեյխերու ղեկավարները յայտարարեցին, որ անոնք հայերը փրկեցին յանուն Աստուծոյ եւ ամերիկեան կառավարութեան ծառայելու համար»: Այստեղ չէ թաքցուած արաք շեյխերու ցուցաբերած օժանդակութիւնը հայերուն, ինչ որ սուլիհական մամուլին մեջ կը լուսաբանուի որպէս պատմական փաստ:

- «Ալ Աֆքար» սուլիհական թերթին հրապարակումներն կը պարզուի նաեւ թերթին վերլուծումը հայերու հանդեպ թուրքերու կողմէ կիրարկուած չարչարանքի միջոցներուն մասին, որոնց մասին թերթը անդրադարձած է շարք մը յօդուածներու ընդմեջէն, եւ կարելի է ներկայացնել հետեւեալ կետերով.

- Ըստ «Ալ Աֆքար»-ի հայերու բնաշնչման եւ ցեղասպանութեան միջոցներէն եղած է 1915-էն ետք կառավարութեան հրամանով Յալեպի մէջ ապաստանած հայերուն սուլիհական անապատ քշելը:

- Օսմանեան բանակին ներս հայ զինուորներու ծառայութեան ընթացքին զանոնք ոչընչացնելը, որովհետեւ անոնց կը ստիպէին քալել ոտարոպիկ ու սոված:

«Ալ Աֆքար»-ի համաձայն՝ հայ կիները եւ երեխաները Եփրատ գետ նետելով զանոնք խեղդամահ ընելը կը նկատուեր թուրքերու կողմէ կիրարկուած մահապատիժի միջոց:

Այսպէս, «Ալ Աֆքար» թերթը կը հանդիսանայ արժեքաւոր աղքիւր մը, որ կը հաստատէ թէ տեղահանութեան եւ բնաշնչման նպատակը ցեղասպանութիւն էր, եւ թէ Յայոց ցեղասպանութիւնը արդիւնք էր ոչ թուրք ժողովուրդները թրքացնելու եւ երիտթուրքերու փանթուրքիզմի քաղաքականութեան:


ԴՈԿՏ. ՆՈՐԱ ԱՐԻՍԵԱՆ

Դամասկոս

ԱՐԲԻՒՐՆԵՐ

1. Ֆիլիփ Թառագի, «Արաբական մամուլի պատմութիւնը», Պէյրութ, 1913, հտ. 4:

2. «Ալ Աֆքար» թերթի հաւաքածոյ:



ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ԿՐԹՈՒԹԻՒՆ

19-րդ դարից սկսած՝ յատկապես Ազգային սահմանադրութեան հաստատումով, արեւմտահայերը ձեռնամուխ եղան իրենց ազգային ներքին կեանքի, այդ թում եւ կրթութեան կանոնակարգման ու զարգացմանը: Այդ գործում խոչընդոտներն ու արգելքները բազմաթիւ եին. 19-րդ դարում Օսմանեան կայսրութիւնում մասնաւրապես հայկական կրթամշակութային հաստատութիւնների կառուցման թոյլտութիւնը (արտօնագիր) ձեռք էր բերում մեծ դժուարութեամբ:

Օսմանեան կայսրութիւնում հայկական առաջին դպրոցները հիմնուել են 1790-ական թթ.՝ Կ. Պոլսում՝ հիմնականում եկեղեցոց ստացուած հասոյթով կամ հայութեան միջոցներով ու նախաձեռնութեամբ: Արդեն 1866 թ. դրութեամբ՝ Կ. Պոլսում գործել է 46 հայկական դպրոց (32 արական, 14 իգական)՝ 4700 աշակերտ, 1472 աշակերտուիհիներով եւ 142 ուսուցիչներով: 19-րդ դարի վեսերից սկսած երկսեռ վարժարաններ են հիմնուել նաեւ Արեւմտեան Հայաստանի բոլոր գաւառական կենտրոններում, ապա նաեւ գիւղերում:

Արեւմտահայ կրթութեան կազմակերպման ու զարգացման գործին մեծապես նպաստել են հիմնականում հայ առաջադիմ երիտասարդների նախաձեռնութեամբ ստեղծուած կրթա-մշակութային մի շարք ընկերութիւններ ու կազմակերպութիւններ,

որոնց գլխաւոր նպատակը հայկական տարբեր գաւառներում դպրոցների ստեղծումն ու կրթութեան, լուսաւորութեան տարածումն էր: Այդ ընկերութիւնների թում էին 1846 թ. Մուրատ-Ռափայելեան սաների նախաձեռնութեամբ հիմնուած «Համազգային Ընկերութիւնը», Էզմիրում՝ «Սիւնեաց Ընկերութիւնը», Կ. Պոլսում՝ «Անձնուեր Ընկերութիւնը», Սեբաստիայում՝ «Սենեքերիմեանը», Պրուսայում՝ «Ուսումնասիրացը», Խարբերդ քաղաքում՝ «Սմբատեան եւ Հոգեսէր», Յիւենիկում, «Անձնուեր», Մեզքեռում՝ «Ուսումնասիրաց» եւ Ազգասիրաց», Զմշկածագում՝ «Վարդանեան», «Վրարատեան Կրթական», «Դպրոցասիրաց Արեւելեան» ընկերութիւնները, Էրզրումում՝ «Արծնեան», «Ուսումնասիրաց», «Ընթերցասիրաց», «Սիսական» ընկերութիւնները եւ այլն:

Արեւմտահայ կրթութեան զարգացմանը զգալիօրեն նպաստել է նաեւ օտարերկեայ միսիոներների մուտքը Թուրքիա, որոնք իրենց գործունեութեան հենց առաջին շրջանում բացել են բազմաթիւ երկսեռ նախակըրթարաններ ու վարժարաններ՝ կրթութեան հարցում այլընտրանք ստեղծելով հայերի համար: Արդինքում 19-րդ դարի վերջերից սկսած բազմաթիւ հայ երիտասարդներ իրենց կրթութիւնը շարունակել են Եւրոպական լաւագոյն համալսարաններում եւ Վերադառնալով՝ ուսուցչութեամբ գրադրուել նորա-

բաց հայկական դպրոցներում:

Ազգային կենտրոնական վարչութեան ուսումնական խորհրդի պատրաստած «Վիճակացոյց»-ի համաձայն՝ 1901-1902 թթ. դրութեամբ Օսմանեան կայսրութեան տարածքում գործել են 803 հայ ազգային վարժարաններ՝ 81208 աշակերտներով եւ 2088 ուսուցիչներով, որից Արեւմտեան Հայաստանի տարածքում՝ 441 վարժարաններ՝ 29371 աշակերտ, 7772 աշակերտուիհիներով եւ 921 ուսուցիչներով: Ընդ որում, բերուած թուերը վերաբերում են միայն հայ առաքելական համայնքին. Վիճակացոյցից դուրս են մնացել

հայ կաթոլիկ եւ բողոքական համայնքներին պատկանող դպրոցներն ու աշակերտները, ինչպես նաև մասնաւոր դպրոցներ ու օտար վարժարաններ յաճախած երկսեռ աշակերտները, որոնք եւս զգալի թիւ են կազմել: Վիճակացոյցում ընդգրկուած չեն նաև Կ. Պոլսի թաղային վարժարանները: Այսպիսով, մինչեւ Առաջին համաշխարհային պատերազմը Օսմանեան կայսրութեան տարածքում գործել են շուրջ 1996 հայկական դպրոցներ՝ 173022 աշակերտներով, որից Արեւմտեան Հայաստանի տարածքում՝ 1251 դպրոցներ՝ շուրջ 76548 աշակերտներով:

ԱՐԵՒՏԱՐԱՅ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՉՆԵՐ

Օսմանեան կայսրութիւնում առաջին հայկական մանկապարտէզը հիմնադրուել է 1888-1889 թթ.¹ Գատը Գիլում (թաղամաս Կ. Պոլսում), Արեւելեան Հայաստանից կայսրութիւն ժամանած մանկավարժուիի Գայեանէ Մատաքերանի նախաձեռնութեամբ: Շուտով վերջինիս յամառ շանքերի շնորհիւ նմանօրինակ բազմաթիւ հաստատութիւններ հիմնադրուեցին ինչպես Կ. Պոլսի այլ վայրերում, այսպես ել Արեւմտեան Հայաստանի եւ Օսմանեան կայսրութեան հայրենակ մի շարք գաւառներում:

20-րդ դարից սկսած Արեւմտեան Հայաստանի գաւառական կենտրոններում, ապա նաև գիլերում գործող գրեթե բոլոր հայկական վարժարաններին կից գործել են նաև մանկապարտէզներ, ուր յաճախել են հիմնականում 5-7 տարեկան երկսեռ երեխաներ: Լաւագոյն օրինակը Խարբերդ քաղաքն է, ուր 20-րդ դարասկզբին բոլոր թաղային վարժարաններում գործել են մանկապարտէզներ՝ որպէս կրթական համակարգի բաղկացուցիչ մաս, իսկ որպէս դաստիարակներ հանդիս են եկել հիմնա-



կանում Սմբատեան իգական, Մեզրէի ազգային վարժարաններն ու Եփրատ քոլեճն աւարտած մանկավարժուիիները:

Այս շրջանում անգամ Հայ ազգային դաստիարակութեան եւ կրթութեան ընդհանուր տեսչութիւնը՝ «Ուսումնական խորհուրդը» լաւագոյն մանկապարտիզպանուիիներին շնորհել է յատուկ վկայագրեր:

1908 թ. Սահմանադրութեան հոչակումը մեծ ոգեւորութիւն առաջացրեց արեւմտահայութեան շրջանում՝ կրթական համակարգի զարգացումը վերածելով մի իւրօինակ շարժման եւ հնարաւորութիւն ընձեռելով նման հաստատութիւնների աւելի համարձակ տարածմանը: Այս գործին մեծապես նպաստել են հիմնականում հայ առաջադիմ երիտասարդների նախաձեռնութեամբ ստեղծուած կրթամշակութային մի շարք ընկերութիւններ ու կազմակերպութիւններ, որոնց գլխաւոր նպատակը հայկական տարբեր գաւառներում մանկապարտէզների, նախակրթարանների ու դպրոցների ստեղծումն էր, կրթութեան, լուսաւորութեան տարածումը: Այդ ընկերու-

ԱՐԵՒՏԱՅԱՅ ԵՐԱԺԾԱՐՈՒԵՍԸ ՄԵԾ ԵՂԵՌԻՑ ԱՌԱՋ

19-րդ դարի սկզբին Օսմանեան բազմատարր հասարակութեան մէջ դեռեւս չէր ձեւաւորուել Երաժշտական-համերգային կանոնակար-

թիւնների թւում էին Կ. Պոլսում՝ «Անձնուեր ընկերութիւնը», Սեբաստիայում՝ «Սենքերիմեանը», Խարբերդում՝ «Սըմբատեան եւ Յոգեսերը», Յուսէյսիկում՝ «Անձնուերը», Մեզրեում՝ «Ուսումսահրաց եւ Ազգասիրացը», Չմշկածագում՝ «Վարդանեանը», «Արարատեան կրթականը», «Դպրոցասիրացը», Երգումում՝ «Արծնեանը», «Ուսումսահրացը», «Ընթերցասիրացը», «Սիսականը», Պրուսայում՝ «Ուսումսահրացը» եւ բազմաթիւ այլ ընկերութիւններ: Գործին զգալիօրէն նպաստել է նաեւ օտարերկրուեայ միսիոնարների մուտքը Թուրքիա, որոնք իրեւոց գործունեութեան առաջին խև շրջանում բացին բազմաթիւ երկսեռ մանկապարտեզներ, նախակըրթարաններ ու վարժարաններ՝ կրթութեան հարցում այլընտրանք ստեղծելով հայերի համար:

Օսմանեան կայսրութիւնում հայկական մանկապարտեզների վերաբերեալ, թեւ վիճակագրական առանձին տեղեկութիւն չի պահպանուել, սակայն հաշվի առնելով, որ դրանք մեծ մասամբ գործել են դպրոցներին ու նախակըրթարաններին կից, ապա կարելի է եզրակացնել, որ դրանք զգալի թիւ են կազմել (շուրջ 100 մանկապարտեզ):

գուած կեանք, չկային արհեստավարժ երգահաններ ու կատարողներ: Երաժշտական բնագաւառում տիրապետողը ժողովրդական ու գուսանական բանաւոր աւանդուող Երաժշտութիւնն էր:

Արեւմտահայ հրականութեան մէջ առաջին Երաժշտական խմբերը ձեւաւորուել են 19-րդ դարի սկզբին կոմպոզիտոր ու դիրիժոր Կարապետ Փափազեանի ջանքերով, ով Կ. Պոլսում հայ առաջին թատերական նուագախըմբի կազմակերպիչն ու ղեկավարն էր: Նրա ներդրումն ու հռչակն այնքան մեծ էր Կ. Պոլսի Երաժշտական կեանքում, որ անգամ հրաւերներ էր ստանում Երոպական Ներկայացումների ժամանակ Երոպացի Երաժիշտներից կազմուած նուագախմբերը ղեկավարելու համար: Փափազեանի գործունեութեան շնորհիւ զգալիօրէն բարձրանում է Երաժշտութեան դերն օսմանեան եւ յատկապես արեւմտահայ հասարակութեան մէջ:

Երաժշտական գիտելիքները տարածելու պահանջը յանգեցնում է նաեւ Երաժշտական պարբերաթերթերի ստեղծմանը: Դրանցից առաջինը «Թնար արեւելեան» պարբերաթերթն էր, որը լոյս տեսաւ 1858 թ-ից: Այս նախածեռնութիւնն ուներ պատմական նշանակութիւն, քանի որ Օսմանեան կայսրութիւնում առաջին անգամ էր հրատարակուում Երաժշտական պարբերաթերթ Երոպական նոտաներով: Դրանով սկիզբ էր դրւում Երոպական նոտագրութեան տարածմանը: 1861 թ. հրատարակուում է նաեւ «Թնար հայկական» հանդեսը, որին յաջորդում է Պոլսում 1862 թ. «Թնար հայկական» Երաժշտական կազմակերպութեան հիմնումը: 1875 թ. մէկ ուրիշ հայ Երաժշտական գործիչ՝ Նիկողոս Թաշճեանս իր եղբօր՝ Յակոբ Թաշճեանի հետ միասին սկսում են հրատարակել «Նուագը օսմանեան» կիսամեայ թերթը՝ տարածելով

արեւելեան եղանակներ՝ գրուած դաշնամուրի եւ այլ գործիքների համար:

Առաջին օպերետներն ու օպերաները, ինչպես նաև երաժշտական թատրոնները Կ. Պոլսում ստեղծուեցին արեւմտահայերի ջանքերով: Դրանք առաջինն էին ամբողջ Մերձաւոր Արեւելքում, ուստի ունեցել են պատմական մեծ նշանակութիւն: Այդ նուիրական գործում առանձնակի դեր ուներ Տիգրան Չուխաչեանը: Կրթութիւն ստանալով Խոտալիայում՝ հայազգի երգահան S. Չուխաչեանը Օսմանեան կայսրութեան առաջին կոմպոզիտորներից էր, ով տիրապետում էր սիմֆոնիկ, կամերային եւ օպերային երաժշտութեան բարդ ժանրերին, բազմաձայնութեան տարբեր ձեւերին, նուագախմբային գորեաձեւին եւ այլն: Անդրադառնալով թուրքական երաժշտական մշակոյթի համար Չուխաչեանի գործունեութեան նշանակութեանը՝ Մահմուդ Ռահիբը նշում է, որ նա առաջին կոմպոզիտորն էր, որ աշխատում էր թուրքական երաժշտութիւնը հաղորդակից դարձնել երոպական արուեստին:

Երաժշտական կեանքի ակտիւացումը նպաստեց Արեւմտեան Հայաստանում եւ Օսմանեան կայսրութեան հայաշատ թևակավայրերում երաժշտական խմբերի ձեւաւոր-

մանը: Հայկական դպրոցներում պարտադիր ուսուցանուող առարկայ դարձաւ երաժշտութիւնը, որի շնորհիւ ասպարեզ եկան բազմաթիւ տաղանդաւոր երաժշտներ:

Արեւմտահայոց մեջ գործում էին ոչ միայն երաժշտ կատարողներ, ստեղծագործողներ ու մանկավարժներ, այլ երաժշտական գործիքներ պատրաստող նշանաւոր վարպետներ: Յատկապես պետք է յիշատակել վարպետ Թերովք Զիլճեանին (1830-1910), որն ուներ ծնծղաների սեփական գործարան եւ մեծ հռչակ է վայելել ողջ աշխարհում: Նրա պատրաստած ծնծղաներն իրենց որակով գերազանցել են եւրոպականներին հնչեղութեան նրբութեամբ եւ դիմացկունութեամբ: Զիլճեաններն իրենց ծնծղաներով մասնակցել են համաշխարհային բազմաթիւ ցուցահանդեսների եւ արժանացել տարբեր մրցանակների:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին երիտթուրքական կառավարութեան կողմից կազմակերպուած եւ իրականացուած Հայոց ցեղասպանութեան արդիւնքում հայ երաժշտարուեստը նոյնպես մեծ կորուստներ ունեցաւ: Շատ յայտնի երաժշտներ զոհ գնացին ցեղասպանութեանը, իսկ երաժշտական խմբերը ցրուեցին:

ԿԸ ԶՈՐԱԿՑԻՆՔ ՀԱՅ ԴԱՏԻ ԱՃԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ՝ ՃԱՆԱՋՈՒՄԵՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ

«Ազդակ»ի բարեկամ մը

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մուտքի խօսք	«Ազդակ»ի խմբագրութիւն-Հայկ Դեմոյեան	1
Հայ դատի ուղղութիւններ եւ ռազմավարական նոր ուրուագծումներ	Ճահան Գանտահարեան	3
Ամբողջական հայրենիքն ու համապարփակ դատը ողջ հայութեան մենաշնորհն են	Ա. Սահսկեան	9
Համազգային տեսչերու համագումար	Սեղա Սարկոսեան-Խոտըշեան	16
«Յորչափ հայ ազգը կայ իր պահանջումներն ալ պիտի մնան եւ օր աւուր աւելի եւս պիտի ծանրանան»	Մարի Ռոզ Աբուսէֆեան	21
Ազգային պահանջատիրութիւնը նոր հորիզոններու դիմաց Դեպի հարիւրամեակ	Խմբագրական «ՀԱՍԿ»-ի Միհրան Քիւրտողլեան	28 32
Արեւմտեան Հայաստանի Եկեղեցիների ու վանքերի բռնազարդուած եւ ոչնչացուած ունեցուածքի հատուցման իրաւական հիմքերը Աւետիս Յարութիւնեան	36	
Ովքե՞ր տիրացան հայերի ունեցուածքին	Այշէ Յիւր	45
Ութ պատկեր, ութ խորհուրդ արդարութեան, անկախութեան եւ գոյատեւման համար	Յովսէփ Պարագեան	54
Դարձեալ ապրիլ...	Թամար Օհանեան	64
Թուրքերը Լիբանանի մէջ	Վ. Աւագեան	66
Մեր յոյսը, մեր նոր սերունդը	Ճահանդուխտ	75
Հայուն հպարտութիւնը	Հրայր ճեպէճեան	77
«Օրօրոցայինը փրկում է երեխային թուրքից»	«Կարմիր խաչի տեղեկագիր»	79
Սեւ կակաչներ	Սուրեն Ասատրեան	80
Վարչապետ Երտողան՝ պատմութիւն նենգափիխող քաղաքագետը	Յովսէփ Յ. Էսկիճեան	91
Թուրքիոյ «Լինչի դատաստան»-ը եւ ժողովրդավարութեան առասպելը	Սալբի Գասպարեան	96
Վատիկան եւ իր գաղտնի արխիւները	Սարգիս Նաճարեան	101
Տեղեկագիր Սուրիոյ տարագիր հայութեան վիճակին մասին	Սոսէ Փիլաւճեան	105

Եղեռնի 100-ամեակի սեմին	Սովուն Ծիրանի 108
Չմիւռնիայի տարագիրների զանգուածային վերաբնակեցումը Յունաստանում	Թեհմինէ Մարտոյեան 111
Ֆրիտիոֆ Նաևսենի գործունեութիւնը հայ գաղթականների Խորհրդային Հայաստան հայրենադարձնելու ուղղութեամբ	Արամ Միրզոյեան 117
Հայ տարագիրների համարկումը Սիրիայի սոցիալ-տնտեսական կեանքում Հայոց ցեղասպանութիւնից յետոյ (1915-1925 թթ.)	Նարինէ Մարգարեան 123
Օսմանեան տիրապետութեան դեմ հայ-յունական համագործակցութեան փորձերը	Գեղրգ Վարդանեան 130
«Մշակութային մոտելները» որպէս ամբոխի վարքի կազմակերպման ազդակներ Հայոց ցեղասպանութեան համաթեքստում	Յասմիկ Գրիգորեան 137
«Հայկական հարցը Օսմանեան պետութեան մէջ 1878-1923»	Աշոտ Մելքոնեան 141
Հայ մանուկներու եւ անչափահասներու ողիսականը Հայոց ցեղասպանութեան տարիներուն	Բժիշկ Կարպիս Հարպոյեան 146
Պիլիստա բժշկուիին	Գեղրգ Աբելեան 156
Հայոց ցեղասպանութեան ականատես-վկան՝ ճորճ Է. Ուայթ. հայ ժողովրդի բարեկամը	Դոկտ. Ռոբերտ Բախչաջեան 159
Կիւլենիա Մաթոսեան-Փանոսեանի ողիսականը	Յարութիւն Իսկահատեան 164
«Ո՞վ պիտի գրէ պատմածներս»	Յարութիւն Իսկահատեան 167
Հայոց ցեղասպանութիւնը ռուս զինուորի աչքերով	Սուրեն Մանուկեան 169
Հայոց ցեղասպանութիւնը սուրիական «Ալ-աֆքար» թերթի լոյսի ներքոյ	Դոկտ. Նորա Արիսեան 172
Արեւմտահայ կրթութիւնը	175
Արեւմտահայ մանկապարտեզներ	176
Արեւմտահայ երաժշտութիւնը Մեծ Եղեռնից առաջ	177

ԵՐԵՎԱՆԸ, 24 ԱՊՐԻԼ 2012

الثلاثاء، ٢٤ نيسان ٢٠١٢

ԱԶԴԱԿ ԲԱՑԱՌԻԿ

عدد خاص

ԱՎԳ 5000 Լ.Ա./ՍՈՒՐԲՎ 200 Ա.Ա.

أزتاڭ جريدة يومية سياسية وأدبية - المديرية المسوؤولة أيفا دروبشيان

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTERAIRE, TEL.: (01) 258526 - Email: aztag@inco.com.lb